

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 11 1892

Ն Ո Յ Ե Ս Բ Ե Ր

1892 № 11

ԶՈՐԴՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԻԱՆՑԻ

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.
1892

Дозволено цензурою. Тифлисъ, 11 Ноября 1892 г.

V SURԻ ՄՈՒՐՃ SURԻ V
”

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

1893

ԹԻՍԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՅԻԱԾ Է

«ՄՈՒՐՃ» ամսագիրը կը հրատարակէի 1893 թւականին նոյն ծրագրով, որպէս և նախկին տարիներում:

«ՄՈՒՐՃ»-ը կը հրատարակէի ամէն ամիս 8 — 10 թերթ մեծութեամբ. աւելին կախած կը լինի բաժանորդների թւից:

«ՄՈՒՐՃ»-ի ցայժմեայ մշտական բաժինները կը մնան նաև 1893 թւականին, այն է 1) Յօդւածներ մեր կեանքի հիմնական խնդիրների մասին (առաջնորդողներ): 2) Յօդւածներ հասարակական կեանքի ընթացիկ խնդիրների և երևոյթների մասին (ներքին Տեսութիւն, Ամսուայ քրոնիկ): 3) Հետազօտութիւններ անտեսական: 4) Յօդւածներ քաղաքական անցքերի և ընդհանուր քաղաքական դրութեան մասին (Քաղաքական Տեսութիւն): 5) Գրական ընդարձակ քննադատութիւններ: 6) Յօդւածներ ընթացիկ գրականութեան վերաբերեալ (Գրախօսութիւն): 7) Ընդհանուր յօդւածներ զիտութիւններից: 8) Յօդւածներ զիտութեան ընթացիկ խնդիրների մասին (Գիտական քրո-

նիկ): 9) Ճանապարհորդական նկարագրութիւններ: 10) Թղթակցութիւններ ուսանող կայսրութեան զանազան տեղերից: 11) Արտասահմանեան քրոնիկ: 12) Վէպեր, վէպիկներ, պատկերներ, 13) Ոտանաւոր բանաստեղծութիւններ: 14) Երաժշտական քրոնիկ: 15) Զանազան լուրեր: 16) Յայտարարութիւններ:

«ՄՈՒՐՃ»-ի ՎԻՊԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ 1893 թւականին կը բաղկանայ թէ ինքնուրոյն և թէ թարգմանական վիպական գրածքներէից: Ինքնուրոյններէ մէջ կարեւորագոյն տեղը կը բռնի՝ «ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ» վէպը, գործ մեր, որ աշխատակից պ. Ալեքսանդր Շիրւանզադէի, որ կըսկսի տպել 1893 թ. առաջին համարից և որ հաւանօրէն կը վերջանայ օգոստոս ամսին:

Թարգմանական մասի մէջ կը լինի շարունակութիւնը Հ. Սենկևիչի «ԱՌԱՅՅ ԴԱԻԱՆԱՆՔԻ» վէպի, այն է երրորդ և վերջին մասը: Նոր բաժանորդները ձրի կը ստանան այդ վէպի առաջին և երկրորդ մասերը:

Բացի դոցանից կը տպեն աւելի մանր վէպեր կամ վէպիկներ, պատկերներ և այլն, թէ ինքնուրոյն և թէ թարգմանական, ինչպէս մինչ այժմ:

«ՄՈՒՐՃ»-ի բաժանորդագինն է 10 ռուբլի: Ուսուցիչները և ուսանողները կարող են վճարել 8 ռուբլի:

ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐԱԵԼՈՒ Համար գիմել կամ Խմբագրատունը՝ (Тифлисъ, Въ Редацію „МУРЧЪ“) կամ մեր գործակալներին (տես «Մուրճ»-ի կազմի հոսի երեսը):

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ

Մի դասակարգ կայ յառաջագիւմ ազգերի մէջ, որ մեզանում գրեթէ գոյութիւն չունի, բայց որից մենք կը սպասէինք ամենամեծ բարիքներ ազգի թէ քաղաքական զարգացման և թէ նորա կոլտուրական յառաջդիմութեան համար: Այդ դասակարգն է, որ ամենից լաւ է կապում գիտութիւնը հողի հետ, երկրագործական դասակարգը՝ ինտելիգէնտ դասակարգի հետ: Դա՝ զիւղատնտեսական ինտելիգենցիան է:

Ազգի յառաջդիմութեան պայմանների ուսումնասիրութեան յետևից ընկած՝ մենք շատ անգամ եկել կանգ ենք առել մի կէտի վերայ, որից աւելի հեռուն դնալու համար մեր կեանքում չենք գտել այն բնական, հասարակական կամուրջը, առանց որի մեր մտքում թուիւքների պէտք է թոյլ տանք. բայց յայտնի է որ կեանքը թուիւքների չի վերառնում:

Ընդունեցէք որպէս հաստատ, որ առանց գիտութիւնների զօրեղ ներգործութեան՝ անհնարին է երեւակայել որ և է յառաջդիմութիւն: Ընդունեցէք նաև որպէս հաստատ, որ յառաջդիմութիւնը ազգի մեծամասնութեան համար է և ոչ միայն փոքրամասնութեան: Գիտութիւնները դնահատելի են մանաւանդ երբ գործադրութեան հող էք գտնում: Արդ, բարեբախտաբար, մեր ազգը զիւ պահպանել է այն դասակարգը, որը ամեն ազգի համար ամենահաստատուն գրաւականն է նորա ոյժի, կենսունակութեան. դա՝ հողագործ դասակարգն է: Առանց մեծ հողագործ դասակարգի՝ մեր ազգային բնաւորութիւնը իսպառ փոխւած կը լինէր. բաւական է ասել որ առանց դորան՝ մենք չէինք ունենալ հայրենիք: Բացի հողագործ դասակարգից՝ բոլոր միւս դասակարգերը վերին աստիճանի շարժա-

կան բնաւորութիւն ունեն. նրանց համար հայրենիքը այնտեղ է՝ որտեղ իրանց համար «տաք» է: Երբէք մի վաճառական և նոյն իսկ արհեստագոր ազգ չեն ապահովել մի ազգի ինքնուրոյնութիւնը. ազգի մարմինը – երկրագործ դասակարգն է: Երկրագործն է, որ, շնորհիւ կաած լինելուն երկրի հողին, իւր վրայ է աւելում այդ երկրի բոլոր բնական պայմանների ազդեցութիւնները և ստեղծագործում մի ինքնուրոյն կեանք, որ կնիք է դնում նաև ամբողջ ազգի կեանքի վերայ: Անհնարին է մի առ մի թուել այն բոլորը, ինչ երկրագործ դասակարգը տալիս է կամ կարող է տալ ազգային լեզւին, բանաստեղծութեանը. մեծ է այդ դասակարգի ազդեցութիւնը մի ազգի ընդհանուր բնաւորութեան վերայ. անհուն է նորա նշանակութիւնը ազգի պահպանման համար. և հէնց նա է, որ իւր անդամներից միշտ թարմ մարդիկ է տալիս բոլոր միւս դասակարգերին:

Սակայն մեր խօսքը այս անգամ իսկապէս հողագործ գիւղացիների կարևորութեան մասին չէ. գոհ լինելով որ այդ՝ մի ազգի համար ամենաանհրաժեշտ դասակարգը գոյութիւն ունի մեզանում, մենք գտնում ենք, որ մեզանում չկայ այն դասակարգը, որը օղակ պէտք է լինէր գիտութեան և գիւղական դասակարգի մէջ: Այնպէս, ինչպէս գիւղական պայմաններն են կազմակերպած մեզանում, գիտութիւնը անմատչելի է այդ դասակարգին: Մենք ունենք գիւղական մեծ դասակարգ, ունենք հողագործութիւն, բայց չունենք հողագործական և առհասարակ գիւղատնտեսական ինտելիգենցիա:

Նոր բառ, նոր խօսք, կը բացականչեն շատերը: Այո, ճշմարիտ է, խօսքը նոր է. մենք լսել ենք՝ գիւղական ինտելիգենցիա, բայց հողագործական ինտելիգենցիա, — այդպիսի խօսք չի եղել:

Բայց այդ նրանից է որ մենք չունենք այն դասակարգը, որին սաղէր մի այդպիսի խօսք: Եւ իրօք, ինչ են հասկանում գիւղական ինտելիգենցիա ասելով:

Գիւղական ինտելիգենցիա ասելով սովորապէս հասկացւում է այն մարդկանց խումբը, որոնք գիւղում ապրելով՝ տարրականից որքան և իցէ բարձր կրթութիւն ունեն. գիւղական վարժապետ, քահանայ, քից շատից կրթած և հասարակական գործերով հետաքրքրւող վաճառականներ, պետական ծառայողներ, եթէ կան և

այլն: Մի խօսքով գիւղական ինտելիգենցիա խօսքի հետ անխզելի կերպով կապւած է որոշ աստիճանից ոչ պակաս ուսում և կրթութիւն այն մարդկանց մէջ, որոնք գիւղումն են ապրում:

Իայց քահանան երկրագործ չէ, ուսուցիչը՝ երկրագործ չէ, վաճառականը՝ երկրագործ չէ և ոչ էլ պետական պաշտօնեաներն են երկրագործներ: Այո, նոքա կարող են կազմել գիւղական ինտելիգենցիա, որովհետեւ գիւղումն են ապրում, երկրագործների հետ են շփուում: Բայց նոքա, երկրագործ չը լինելով, չեն էլ կազմում երկրագործական ինտելիգենցիա:

Իսկ մենք խօսում ենք յատկապէս գիւղատնտեսութիւնով պարագրդ ինտելիգենցիայի մասին, որ մեզանում գոյութիւն չունի, և որը ստեղծելուն ամեն կերպ պէտք է աշխատել:

Գիւղատնտեսական ինտելիգենցիայի մասին խօսելով, մենք կատարում ենք մի խոստովանք, որ տեւ էինք մեր յօդաճաներից մեկում երեք տարի առաջ: Հարկ ենք համարում երեք տարի առաջ ասւածը այստեղ քաղածօրէն առաջ բերել:

«Մեր երկրում, ասում էինք մենք, ամբողջ երկրագործութիւնը և գիւղատնտեսութիւնը գրեթէ միայն և միմիայն գիւղացիների ձեռքումն են, հակառակ միւս շատ երկիրների, որտեղ, բացի գիւղացիներից, գիւղատնտեսութիւնով զբաղւում են նաև կալւածատէրերը և կամ, կալւածատէրերից զատ՝ նաև բազմաթիւ ֆերմերներ, այսինքն մարդիկ, որոնք կապալով են վերցնում ուրիշների հողերը շատ թէ քիչ մեծ չափերով երկրագործութիւն և առհասարակ գիւղատնտեսութիւն վարելու համար:

«Այդ հանգամանքը ցոյց է տալիս մի բան... որ գիւղատնտեսական առաջընթացութիւնը մեր երկրում պէտք է սպասել ոչ բոլորովին նոյն միջոցներից, որոնք գործում են օտար երկիրներում, որովհետեւ այս ևս մի հաստատ իրողութիւն է, որ այդ օտար երկիրներում տնտես կալւածատէրը և ֆերմէրը կենդանի օրինակներ են գիւղական բազմութեան համար: Քանի որ այդ տեսակ անկախ մեծ

անտեսութիւններ չկան մեզանում, (և ոչ էլ ուրիշ միջոցներ կան, կ'աւելացնենք այժմ), քննում է որ տէրութիւնը և հասարակութիւնը մտածեն իսկական ուսումնարանների վերայ, որոնց միջոցով միայն առայժմ կարելի է մեր երկրում ցանկալի առաջդիմութիւնը մտցնել»:

Այդ տողերը մենք վերջացնում էինք այսպէս, թէ՛

«Գորանով մենք խնդիրը չսպառեցինք, միայն շօշափեցինք, մեզ վերապահելով մի այլ ժամանակ նոյն խնդրին վերադառնալ»¹⁾:

Վերադառնալով մեր արծարծած խնդրին, մենք ամենից առաջ պէտք է շեշտենք, որ մեր կեանքում եթէ մի որ և է բան չկայ, այդ դեռ պատճառ չէ, որ մենք չուզենանք որ նա լինի: Հողագործ դասակարգի մասին այս զաղափարն է կազմել թէ իբր նրան պէտք է ղեկավարեն իրանից աւելի բարձր կանգնած դասակարգերը, այն աստիճան հողագործ ու խաւար համանիշ են դառել: Դա մի նախադաշարմունք է. առանց ինտելիգենցիայի առհասարակ դժւար է գործել. բայց ամեն մի դասակարգ պէտք է ունենայ նաեւ, այսպէս ասած, իւր սեպհական ինտելիգենցիան, որով նա կարողանայ շփում պահպանել ամբողջ ազգի և ամբողջ մարդկութեան ինտելիգենցիայի հետ: Այդ ընդհանուր օրէնքից չի կարող խոյս տալ իւր թւով ամենամեծ դասակարգը, որ երկրագործ ու առհասարակ գիւղատնտեսական դասակարգն է: Մարդուն երկրագործ դարձնողը ոչ թէ նորա զիրքի ստորութիւնն է, այլ նորա գործունէութեան տեսակը, բնաւորութիւնը: Իսկ գիւղատնտեսի կամ երկրագործի գործունէութեան բնաւորութիւնը այնպէս է, որ նա շատ լաւ կարող է ունենալ իւր ինտելիգենցիան, առնւազն ոչ պակաս որ և է այլ դասակարգի ինտելիգենցիայից: Գիւղական դասակարգի յառաջդիմութիւնը ամենաէական պայմաններից մէկն է ընդհանուրի յառաջդիմութեան. բայց այդ դասակարգը ունի սեպհական բազմաթիւ խնդիրներ, որոնց լաւ հասկանալ և պաշտպանել կարող է միայն ինքը այդ դասակարգը իւր կրթւած մասի, իւր ինտելիգենցիայի

¹⁾ «Մուրճ» 1889 № 10, մեր չօղածը «Արդիւնահանդէս», էջ 1506--1507:

բերանով և ջանքերով: Պատրաստել մի այդպիսի ինտելիգենցիա— ահա մի խնդիր, որի վերայ պէտք է ջանք գործ դնի ազգի ներկայ ժամանակների ինտելիգենտ մասը:

Բայց արդեօք ինչ տարրերից հնարաւորութիւն կայ կազմել գիւղատնտեսական կամ երկրագործական ինտելիգենցիան մեր երկրում: Գորա պատասխանը արդէն համարեա ամփոփւած է այն քաղաքում, որ մենք վերը առաջ բերինք. այդ ինտելիգենցիան պէտք է մեզ տան մեր երկրում հիմնւած և դեռ հիմնելիք տարական գիւղատնտեսական ուսումնարանները, և միւս կողմից՝ բարձրագոյն գիւղատնտեսական ուսումնարանները, որ դեռ ևս չկան մեր երկրում, բայց արդէն վաղուց գոյութիւն ունեն թէ Ռուսաստանում և թէ Արեւմտեան Նւրոպայում: Գոցա միացնողը ընդհանուր շահերը պաշտպանելու համար պէտք է լինեն գիւղատնտեսական ընկերութիւնները, որոնցից երկուսը նմանապէս գոյութիւն ունեն մեր երկրում, բայց որոնք դեռ ևս գրեթէ միայն անունով են յայտնի, իրանց կոչման համապատասխան գործոն անդամների բաւականաչափ մեծ կոնաինգենտ չունենալով մեր երկրում: Նւ ահա թէ ինչու օրինակ Թիֆլիսում գոյութիւն ունեցող Կովկասեան կայսերական գիւղատնտեսական ընկերութեան անդամները ահազին մեծամասնութեամբ ամենեւին գիւղատնտեսներ չեն: Իսկ այդ այդպէս է նոյնպէս մի գիւղատնտեսական լայնածաւալ ինտելիգենցիայի բացակայութեան պատճառով մեր երկրում:

Այդ գիւղատնտեսական ինտելիգենցիայի գրեթէ կատարեալ բացակայութեան պատճառով մենք այսօր բոլորովին չունենք ինտելիգենտ գիւղացիներ, գրեթէ չունենք ինտելիգենտ մեծ գիւղատնտեսներ յանձին թէ կալւածատէրերի և թէ ֆերմէրների, գէթ այն չափով, որքան այդ հարկաւոր է գիւղատնտեսութեան յառաջգիմութեան համար. չունենք ի հարկէ նաև իրանց կոչմանը ծառայող գիւղատնտեսական ընկերութիւններ:

Բայց եթէ այդ ինտելիգենցիան չկայ, գէթ մենք ունենք մեր երկրում սաղմեր նորան զարգացնելու և կազմակերպելու համար: Ընդհանուրի ուշագրութիւնը դարձնել զարգացող երևոյթի վերայ,

ցոյց տալ այն ուղղութիւնը, որով նա պէտք է զարգանայ ժողովրդին օգտակէտ լինելու համար — ահա առաջադրած խնդիրը:

Հետաքրքրական է, որ գիւղատնտեսական ինտելիգենցիայի առաջին տարրերը սկսել են մեզանում կազմել ոչ թէ ստորին, այլ բարձրին: Զուտ գիւղական երկրագործական ինտելիգենցիա կազմելուց առաջ, որ ամենակարեւորն է շատ տեսակէտներից, մեզանում զոյացաւ մի յայտնի հոսանք դէպի բարձրագոյն գիւղատնտեսական գիտութիւնը: Պա մի երևոյթ է, որ բացատրութեան կարօտ է. և մենք կարծում ենք թէ զորա պատճառների մէջ կայ պատմական-կուլտուրական էլեմէնտ, որ ահա.

Ռուսաստանի այն բարձրագոյն դպրոցներից, ուր երբէք պակաս չեն հայ ուսանողներ, արդէն մի երկու տասնեակ տարիներից ի վեր Պետրոսեան ազրոնոմիական ակադեմիան առաջին տեղերից մէկն է բռնում: Բայց Պետրոսեան ակադեմիայից զատ՝ հայ ուսանողներ գրեթէ միշտ անպակաս են Ռուսաստանի Նովո-Ալեքսանդրիայի, գիւղատնտեսական դպրոցում, ապա Մոնպելիէի և Գրինիոնի Փրանսիական և Հալլէի ու Հոէնհայմի գերմանական գիւղատնտեսական բարձրագոյն դպրոցներում, թերեւ նաև ուրիշ տեղերում:

Այս իրողութիւնը չպէտք է աննկատ անցնի: Այս իրողութիւնը, որ հայ ուսանողական երիտասարդութեան մէջ մի յայտնի ձգտում կայ գիւղատնտեսական բարձր կրթութիւն ստանալու, ըստ երևութին հակառակում է պատմականապէս ստեղծւած զրութեան և հանդամանքների մեր հայրենիքում: Մեր հայրենիքը պատրաստի հող չի ներկայացնում գիւղատնտեսական գործով պարապելու կըրթւած և հետևապէս մեծ պահանջի տէր մարդկանց համար: Միւս կողմից մեր հին սերունդը ոչ մի խրախուսանք չի տւել իւր զաւակներին այդ շաւղով գնալու. ազահ մեծատոկոս շահերի՝ մեր կապիտալիստ դասակարգը երբէք չի մտածել գիւղատնտեսութիւնից այն օգուտներն ստանալ, ինչ նա երազել է թէ կարող է վաճառականութիւնից ստանալ. իսկ այն, ինչ ակնյայտնի շահ չի ներկայացնում՝ յայտնի է որ ոչ մի գին չունի վաճառական դասակարգի համար: Ո՛վ ուրեմն զրդեց, որ Ռուսաստանի և արեւմտեան Եւրոպայի

բարձրագոյն զիւղատնտեսական դպրոցները բաւականին թւով հայ ուսանողներ գրաւեն դէպ իրանց, մինչպե՛ս սոքա, այդ ուսանողները ոչ թէ զիւղատնտեսների որդիք են, այլ այն ծնողների զաւակներն են, որոնք դիւմեարիապէս հակառակ կարծիք ունեն զիւղատնտեսութեան մասին? Սխալմունք էր, սխալ հաշիւ էր այդ արդեօք, և ուրեմն պէտք է արդեօք սպասել որ այսուհետեւ հայութիւնը չպէտք է տայ այդ դպրոցներին ուսանողներ: Այնպէս չէ, հարցնում եմ Զեզ, ընթերցողներ, որ կեանքի պահանջը կարծես հակառակում է ուսանողական հոսանքին:

Կեանքի պահանջ! Բայց ո՞ր կեանքի: Ինչու կեանք է այն, ինչ գոյութիւն ունի, բայց կեանք չհամարել այն, ինչ մեր իղձերի մէջն է: Հին սերունդի նախապաշարմունքը զիւղատնտեսութեան դէմ առհասարակ մի պատմական արդիւնք է:

Հայկական կալւածատէր դասակարգի ջնջւելով, երբ նոցա տեղը բռնեցին թուրք ու քիւրդ բէգերը, մեզանում աւելի ու աւելի պէտք է զօրեղանար վաճառական դասակարգը, այսինքն այն դասակարգը, որը կարող էր հարստութեան հասնել և գէթ դորանով պահպանել որ և է դիրք հասարակութեան մէջ, կալւածատիրութիւնը թողնելով ազնւականներին, որոնց շարքն ընկնելը արդէն գրեթէ անհնարին էր դառել պատմական նոր հանգամանքների մէջ: Հողատիրութիւնը ազնւականութեան հետ էր կապւած, առաջինը վերջինիս յատկանիշն էր: Եւ ահա բոլորը, ինչ զիւղացի-հողագործ չէր ու կամ ով կարողանում էր դուրս գալ զիւղացի-հողագործի դրութիւնից, ձգտում էր վաճառական դառնալ, որը նւաճւած հաջի աչքում նոյնքան պատուաւոր մի դիրք էր, որքան նա ոտոր էր իշխող թուրք ու քիւրդ ազնւականների աչքում: Վաճառականների սուրբանալը բնականօրէն պէտք է զարգացնէր նաև վաճառականական ողին հայերի մէջ, մի հոգի, որը սերունդէ սերունդ սնւելով՝ բնականօրէն պէտք է ստեղծէր այս բնական, բայց և վտանգաւոր կարծիքը զիւղատնտեսութեան մասին, թէ իբր դա՛ պատուաւոր հաջի համար չէ, զիւղատնտեսութիւնը՝ հաջի փեշակ չէ:

Միթէ պարզ չէ, որ այդ ուղղութիւնը պէտք է տանէր հային դէպի այն կէտը, որ նա անընդունակ դառնար հասկանալու թէ

ինչ է գիւղատնտեսութիւնը, էլ չը խօսելով այն բանի մասին, որ նա պէտք է կորցրած լինէր ընդունակութիւնը ըմբռնել հողագործութեան քաղաքական ու սոցիալական նշանակութիւնը ամբողջութեան, ամբողջ ազգի համար:

Ահա թէ ինչու է որ նոյն իսկ այժմեան փոփոխւած պայմաններում, երբ այն խելքը, որ այնքան սրել է այլ և այլ նոյն իսկ խաբեբայական և խարդախ միջոցներով զրոյներ վաստակելու, իւր կեանքը նոյն իսկ մեծամեծ փտանդների ենթարկելու պայմանով, ինչպէս մահմեդական գաւառներից շատերում, նոյն այդ սրած խելքը միանգամայն բթացել է հասկանալու գիւղատնտեսական գործը, ինչպէս որ այդ հասկացում է զարգացած երկիրներում:

Ահա ինչու և ինչ մտքով մենք պնդում ենք թէ զէպի գիւղատնտեսութիւնը մեզանում նախապաշարմունք կար և այժմ էլ դեռ կայ, և պնդում ենք որ պատմականապէս մշակւած ոգին հող չէ պատրաստել կրթւած նոր սերունդների համար գործունէութեան այդ ասպարէզը ուղք կոխելու համար: Եւ որքան էլ գործնական մոտիւններ ղեկավարեն հին սերունդներին հեռու կենալ գիւղատնտեսութիւնից, բայց այդ զգուշութեան պատմական պատճառն իմանալը բաւական է հասկանալու համար, որ հին սերունդի այդ պահանջը կենդանարար կեանքի պահանջ չէ. ամեն բան, հէնց միայն այն պատճառով որ իրականապէս գոյութիւն ունի, չպէտք է համարւի լաւ, խելացի. նորա պահանջը կեանքի պահանջ չի կարող համարւել, որովհետեւ այդ պահանջը ամեն կեանք սպանող պահանջ է: Եւ ով կարող է աւելի լաւ բողոքել արմատացած հին և փնասակար գաղափարների դէմ, քան մատաղ սերունդը, որի ոյժը նմանապէս զօրեղ է, որ նա ընդունակ է համակել իրէականութիւնով և հետեւել բարձր վարդապետութիւնների ազդեցութեամբ արթնացած առողջ բնազդումներին: Այ, իրականութիւնը չէ որ քշել է և քշում է մեր երիտասարդներից շատերին զէպի այն վայրերը, ուր տրւում է մեր հայրենակիցներից արհամարած մի ուսում. իրականութիւնը չէ այդ բանը թելադրողը, այլ գաղափարը ցանկալի կեանքի մասին:

Ես միտք չունեմ ամեն մի գիւղատնտես ուսանողին յատկացնել իղէալական ձգտում. ես միտք չունեմ նաեւ ամեն մի ուսանողին առանձին յատկացնել դիտաւորւած ձգտում մարտնչելու նախապաշարումների դէմ, կուելու իրականութեան դէմ, իրականի պահանջների դէմ. բայց սա պարզ է, որ երևոյթը իրականի պահանջների դէմ է, և այդ երևոյթը, իւր ընդհանրութեամբ, ծնունդ է միանգամայն այլ գաղափարների, քան փայփայել են մեր հայրերը: Դա արտայայտութիւններից մէկն է մտքի առհասարակ, այն մտքի, որը իւր արթնանալու շրջաններում արտայայտւում է նաեւ շատ ուրիշ ձևերով, և արտայայտւել է արդէն բողոքներով շատ ուրիշ հնացած սովորութիւնների և հայեացքների դէմ: Իսկ բողոքներից հզօրագոյնը հէնց ուղղակի կեանքի նոր շաւիղներով գնալն է:

Կեանքի նոր շաւղով գնալու ցանկութիւն ենք տեսնում նաեւ այն իրողութեան մէջ, որ մեզանում մեծ գիւղատնտեսութիւն զոյութիւն չունենալով հանդերձ՝ բազմաթիւ գիւղատնտես ուսանողներ են ուսանում Ռուսաստանի և Արեւմտեան Եւրոպայի գիւղատնտեսական բարձրագոյն դպրոցներում, մարդիկ, որոնց, այսպէս ասած, ոչ ոք չի սպասում իրանց հայրենիքում:

Իրականութեան ներգործութիւնը այնքանն է եղել, որ բարձրագոյն գիւղատնտեսական ուսում ստացածների առկա մեծ մասը մինչ այժմ իւր ապաստանը ստիպւած է եղել որոնել պետական ծառայութեան մէջ, իսկական տնտեսութիւնով զբաղւելը թողնելով աւելի անկախ և համարձակ բնաւորութիւններին: Դոցա միջից, սակայն, սպասելի է որ զուրս դան պիտնէրներ, որոնք անձնատուր կը լինեն երկրիս գիւղական դասակարգի շահերին, սկիզբ դնելով կամ կազմակերպելով այն գիւղատնտեսական ինտելիգենցիան, որ այնքան և այնքան հարկաւոր և կարեւոր ենք համարում մեր խոպանացած կեանքում մի նոր կենդանարար տարր ևս մտցնելու համար:

Ամեն երկում երկրագործ դասը բաղկացած է երկու տարրերից. առաջինը՝ ամենազգլխաւորը բուն գիւղական դասն է, որը ներկայացնում է գիւղատնտեսական մասսան և որի բարօրութիւնից կախւած է ընդհանուր բարօրութիւնը. միւս երկրագործ տարրը՝

անկախ գիւղատնտեսներն են կազմում. սորանից գլխաւորապէս կախ-
ւած է գիւղատնտեսական յառաջադիմութեան նախաձեռնութիւնը:
Մեր աչքում անկասկած առաջինը ամենակարեւորն է, հետեւապէս
նաեւ գիւղատնտեսական ինտելիգենցիան պէտք է կազմէի նոյն իսկ
այդ շրջանում, շնորհիւ այն տարրական և միջնակարգ գիւղատնտե-
սական դպրոցների, որոնք սկսում են հիմնել մեր երկրում: Կոքա
են, որ կոչւած կը լինեն գիւղացիների տնտեսութեան շահերը աւելի
հասկանալու, և հէնց դոքա են որ պէտք է կազմեն գիւղատնտեսա-
կան ինտելիգենցիայի թէև միջին, բայց ուժեղ և իրանց պաշտպա-
նելիք շահերով նաեւ աւելի համակրելի, և թւով ամենակարեւոր գիւ-
ղատնտեսական ինտելիգենցիայի դասակարգը: Կիւղական և մաս-
նաւորապէս գիւղատնտեսական թերթերի գոյութեան կարելիու-
թիւնը մեղանում հէնց նորանով կարող է լինել: Երկրորդը՝ կը կազմէի
անկախ և անհատականապէս աւելի խոշոր տնտեսութիւն վարողներից,
թւով անհամեմատ աւելի քիչ, որոնցից սպասելիք գլխաւոր ծա-
ռայութիւնը պէտք է համարել գիւղատնտեսութեան մէջ մոցնե-
լիք յառաջադիմութեան առաջին օրինակ տուողները կամ նոր մե-
թոյնների առաջին գործադրողները, ինչպէս որ նոքա այդ դերը
կատարում են նաեւ այլ երկիրներում:

Մտցնելով այս հաշւի մէջ ոչ միայն զուտ գիւղական տնտե-
սութիւնը, որը ի հարկէ առաջնակարգ տեղն է բռնում, այլ նաեւ
այսպէս ասած՝ ֆերմէրական տնտեսութիւնը և այդպիսով գիւղա-
տնտեսական ինտելիգենցիան կազմելով այդ երկու տնտեսութիւն-
ների ներկայացուցիչներից, մենք անսլացման կերպով չենք ջատա-
գովում մասնաւոր ֆերմէրական տնտեսութիւնը, որովհետեւ այդ
վերջինը, կարող է նաեւ փնասակար լինել գիւղական, բուն երկրա-
գործ դասակարգի, շահերին, եթէ նա զարգանայ աւելի քան հար-
կաւոր է: Թերևս այն թէև ոչ առաջնակարգ դերը, որ մենք յատ-
կացնում ենք խոշոր տնտեսութիւններին, կարողանան յաջողու-
թեամբ կատարել միմիայն դպրոցական նստառկներով հիմնելիք
ֆերմաները, այսպէս կոչւած ֆերմա-դպրոցները (fermes-
écoles), որոնք մի տեսակ խառն բնաւորութիւն են կրում մասնա-
ւոր խոշոր տնտեսութիւնների և հասարակական հիմնարկութիւն-
ների: Այդ խնդրին կարելի է մի այլ անգամ վերադառնալ, բայց

այժմեանից պէտք է շեշտենք, որ մենք Ֆերմաներ, ինչ տեսակի էլ որ սոքա լինեն, պահանջում ենք ոչ թէ երկրի արդիւնաբերութիւնը շատացնելու տեսակէտից, այլ նոցա դաստիարակչական գերի պատճառով գիւղական մասսայի համար. հետեւապէս այն խնդրում թէ որ տիպի Ֆերմաներ են հարկաւոր մեր երկրում՝ այդ և ոչ ուրիշ տեսակէտներ պէտք է կարեւորութիւն ստանան:

Այն, ինչ մենք այժմ պահանջում ենք՝ դա գիւղատնտեսական ինտելիգենցիայի կազմէն է: Բայց մի դասակարգի ինտելիգենցիա արժանի կը լինի այդ կոչումին, եթէ միայն նորան կողմոյ տարրերը չը հակառակեն գլխաւոր նպատակին, որը է գիւղական դասակարգի յառաջդիմութիւնը և բարօրութիւնը: Հետեւապէս ոչ գիւղացիական, այլ անկախ, ֆերմէրական, ուրեմն և աւելի խոշոր տնտեսութիւնը պէտք է այն տիպը և այն ծաւալն ստանայ, որ գաջ օգնութեան այն լիաւոր նպատակին հասնելու համար:

Միայն այդ պայմանով երկրիս մէջ գիւղատնտեսութիւնով պարապող կրթւած մարդիկ՝ շինական թէ ոչ շինական՝ կարող են ձուլւել ի մի ինտելիգենտ հասարակութիւն, կազմել մի գիւղատնտեսական ինտելիգենցիա»

ԱԻՆՏԻԲ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ:

ԷԼԵԳԻԱՆԵՐ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Բարեկամներին Նա թողեց բարձրանալու համար
Շէշողի. «Երկու վերոնացի ազնւականներ»:

I

Երանի նորան, ով վըշտի ժամին
Վըստահ կարող է գըլուխը թեքել
Իւր բարեկամի բաբախող կըրծքին
Եւ սըրտի զարկը լըռութեամբ լըսել:
Թո՛ղ հոսէ արցունքդ — և հանդիստ եղիր,
Կըրծքիդ տակ զիգւած քո տանջող ցաւին
Ունիս համակից անկեղծ ունկընդիր,
Նորա առաջին
Ողբան յոցսերդդ՝ ջարդ ու փշուր եղած,
Ողբան ըղձերդդ՝ անկատար թողւած.
Եւ արտասուքդ միախառնւելով
Քո բարեկամի արտասուքի հետ
Թո՛ղ հոսէ հանդարտ կըրծքիդ վերայով, —
Խընկելի ժամ է դա երանաւէտ!

II

Բայց վնջ ա՛յն հողուն, երբ ա՛յն էակից,
Որին սիրել է, ինչպէս սըրբութիւն,

Հասնում է նորան յանկարծ սև կըսկիծ
 Եւ ամօթապարտ դաւաճանութիւն!
 Վայ այն հէգ հոգուն, որ իւր փայփայած
 Նախկին ընկերոջ տեսնում է իւր դէմ
 Թըշնամու նըման նենգութեամբ զինւած.
 Օհ, անտանելի, դառն է այդ բուլէն!
 Ի՛նչպէս... այն ձեռքերն, որ շատ տարիներ
 Սեղմում էիր դու բարեկամաբար,
 Պիտի դառնային անզղի ճիրաններ
 Քո թըշառ սիրտը ճանկուելու համար!
 Աղքատին խածեց կառաղած մի շուն.
 Ես չեմ նըզուիլ կառաղած շանը.
 Գազանը չ'ունի բանականութիւն.
 Բայց բարեկամը, բայց բարեկամը...!

III

Ո՛հ խաբէութիւն, այն աղքատ սըրտում,
 Ուր ազնիւ կայծեր չը կան բընաւին,
 Ի՛նչ փայլուն մի սէր էի ես տեսնում,
 Ի՛նչպէս երազում այն սիրոյ մասին:
 Աւաղ, խաբուսիկ, բայց չըքնաղ պատկեր,
 Վաղանցիկ միրաժ ջեռացած օդում,
 Թէ փայլող այգիքան շուտ պիտի մարէր,
 Էլ ինչո՞ւ էիր ինձ երկար խաբում:
 Ափսոս իմ հաւատ քո կեղծ խօսքերին,
 Ափսոս միասին անց կացրած ժամեր.
 Ահա ընդհանուր մեր այն թըշնամին
 Այսօր քո գըրկում, քո մօտիկ ընկեր!
 Օհ, ինչից դըրդւած դարձար դաւաճան.
 Շահասիրութիւն — ազնիւ հասակում...
 Դորան ի՛նչ անուն արդեօք պիտի տամ —
 Անասնի բընազդ եւ ըստոր անկում!

IV

Նիւթապաշտութեան բիրտ տարիներում
 Թէպէտ շատ յաճախ բարեկամները
 Խաբում են իրար և դաւաճանում
 Եւ մոռանում են վաղեմի սէրը,
 Սակայն ում սըրտում չէ մարած իսպառ-
 Բարեկամական ազնիւ ըզգացում,
 Նախկին սիրելի ընկերոջ համար
 Նա երկար տանջւում, հոգւոյ է հանում:
 Բայց դու, դու, օ թոյլ, գըծու՛ծ արարած,
 Ընկերոջդ պատիւն ոտի՝ տակ տըւիր
 Եւ մեր թըշնամու առաջին կանգնած՝
 Քո բարեկամին վաստաբանեցիր:
 Օ՛, շարունակիր... և այն անէժքներն,
 Որ թափել եմ ես նորա պիղծ գըլխին,
 Եւ իմ հեղնութիւն, ծաղր ու գանգատներն—
 Բոլորը կըրկնիր նորա առաջին!
 Յայտնիր դու և այն, որ նա իմ աչքում
 Չազիր ախար է սընափառութեան,
 Անխըտիր, ըստոր իւր միջոցներում,
 Կեղծիք ու դիմակ ճակատի վերան!

V

Օ՛ մի՛ փորձիլ իզուր նորից վառել իմ մէջ
 Նախկին եղբայրութեան մեր ջերմ յարգանք և սէր:
 Այն հուրը, որ երկար կարծում էի անշէջ,
 Արդէն ընդ միշտ հանգաւ—էլ չե՛ն ցայտիլ կայծեր:
 Ել մի՛ պըտուիր սիրոյ ժըպիտ իմ շըրթունքին,
 Ել մի՛ սպասիր ինձնից սիրոյ քաղցրիկ հընչիւն,—
 Այսուհետեւ հըպարտ իմ մըռայլ գէմքին
 Դու կը կարդաս միայն դաժան մի լըռութիւն:
 Բայց իմ սըրտում թէ՛ և դու դառ լեղի դարձար,
 Եւ վէրք բացիր իմ մէջ դու թըշնամու նըման,

Թէպէտ և քէն ու ղի ինձ միշտ կը մնան օտար,
 Եւ չեմ յայտնիլ մարդկանց ես քո անունն անգամ, —
 Բայց իմ տըխուր հայեացքն՝ անշարժ գետնին յառած
 Եւ անմըռունչ շըրթունքն իմ տըխրամած դէմքին,
 Որպէս մշուալ ուրու՝ գերեզմանից ելած,
 Երկար պիտի տանջեն, ընկեր իմ, քո հոգին!

Էջմիածին, 1892 թ.:

Կ Ա Ս Կ Ա Տ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

Ո՞վ ես չար ոգի, որ դու իմ սրտում
Այսպիսի անխիղճ վճիռ ես կարդում։—
— «Խղճալի, նոյն իսկ ան շրթունքները,
Որ համբուրում ես կախարդած մտքով,
Կը ծաղրեն մի օր քո անբիծ սերը,
Որ փայփայում ես այդքան խնամքով»։

ԶԻԱՐՃԱՑՐԵՑ ԱՂԱՆԵՐԻՆ

ԳԼԵԲ ՈՒՍՊԵՆՍԿՈՒ

I

Զմեռւայ գիշեր ժամը երկուսին երեք պարոններ մտան Պետերբուրգի ռեստորաններից մէկը և վերցրին մի առանձնասենեակ: Արդէն այնքան ուշ էր որ ռեստորանում սկսել էին նւագացնել լուսաւորութիւնը, ծառայողները կիսաքուն էին, թմրած, հոգնած և նոյն իսկ առանձնասենեակը բռնողներ հիւրերն էլ չէին արտայայտում մի առանձին կենդանութիւն:

Հիւրերը իրաւ որ հոգնած մարդիկ էին. նրանց հոգնեցրեց և Պետերբուրգի ժամանակակից օրը իւր բոլոր երեակայական լնտերեսներով, հոգնեցրեց նրանց (աւելի ուղիղն է նրանցից երկուսին, որովհետեւ երրորդը դեռ մի շատ երիտասարդ պարոն էր) և անցկացրած ամբողջ կեանքը: Երկուսը քառասունի մօտ էին, մի բան էլ աւելի: Նրանցից մէկը մի լրագրի երգւեալ քրօնիկէօր էր, հասարակութեանը անյայտ և իզրեկ ¹⁾ ստորագրւող, միւսը—գեմեց ²⁾ էր: Երբեմն նրանք դասընկեր էին և երիտասարդ, այնուհետեւ երկար ժամանակով բաժանւեցին ջոկ-ջոկ ճանապարհներին. մէկին բռնադատեց լրագրական աշխատանքը, միւսը իրան նւիրեց գեմետօի գործունէութեան: Եւ ահա մօտ օրերս նրանք իրար պատահեցին կիսաձերմակած մազերով, հոգնած, հիասթափւած և կար-

¹⁾ Բառացի նշանակում է լոնական ի (y) աղղղէս է կոչւում Քրանսիական ալբուրենի տառերից մէկը:

²⁾ Զեմետօ բառից, և նշանակում է գաւառական վարչութեան գործիչ:

ծես — զուր, ապարդիւն տանջւած: Զեմեցը Պետերբուրգ էր գալիս «Թարման ալու», խօսակցելու, տեղեկանալու՝ «վերջապէս երբ» և առհասարակ «խկի նոր բան չը կայ», — որովհետեւ այնտեղ, իրանց մօտ, զեմետուի զործունէութեան խորքում տիրում է դժոխային մի ձանձրոյթ, մի անմիա ունայնութիւն, խաւարամոլութիւն, զիշակերութիւն և ուր առհասարակ «շունչ քաշելու բան չը կայ»:

Որքան էր սակայն սրա զարմանքը, երբ որ, Պետերբուրգ հասնելուն պէս և հին ծանօթների հետ տեսնելուց յետոյ, սրանց թուում նաւ. քրոնիկեօրի հետ, նա իմացաւ որ և այստեղ — Պետերբուրգում ոչնչից ոչինչ չը կայ, որ այստեղ էլ տանջւում են, որ այստեղ էլ կենսատու հոսանքի բացակայութիւն է, կեանքի նեղութիւն և շաբլոնական զրականութիւն և այլն: Քրոնիկեօրը, պատահելով իւր վաղեմի ընկերոջ, նմանապէս յոյս ունէր նրանից «Թարմեցուցիչ» մի բան լսել, — չէ որ նա զեմետուի մարդ է, չի նեղւած լրագրական զրախօսութեամբ, չէ որ նա այնտեղ կեանքի «արմատները» մօտ է, այո, կեանքի մօտ և ոչ թանաքամանի, — բաց, աւաղ — մենք տեսանք արդէն որ զեմեցը նրան ոչնչով չ'ուրախացրեց, այլ ընդհակառակն, փչեց նրա վրա ցուրտը՝ մի տանջւած և ամայացած հոգու նոյն կերպով ինչպէս որ ցրտութեան արձագանք տւեց և քրոնիկեօրի հոգին: Նրանք իրար պատահեցին տենդային ուրախութեամբ, զրկաբաց, — բաց, թերեւ նոյն իսկ բոլէում զգացին, որ իրանց մէջ բացակայ է նիւթը որով կարելի լինէր լցնել իրանց լայն բացւած սրտերը: Եւ արդէն մի տասը բոլէ շատ էլ ոչ կենդանի որքան բարձրաձայն խօսակցութիւնից յետոյ ընկերները զգացին մի պահանջ մի որ և է տեղ գնալ այն սենեակի միջից ուր իրար պատահեցին, և իրաւ գնացին նախաճաշելու, թէև ոչ մէկը և ոչ էլ միւսը այդ բանում իսկի կարիք չունէին:

Այդպէս էլ շարունակեց. նախաճաշելով, ճաշելով և ընթրիք անելով և երբեմն միայն ընդմիջելով ամենաչնչին զործերի ետեւից ընկնելու, որպէսզի նախաճաշին, ճաշին ու ընթրիքին իրար նորից պատահեն — բարեկամները սկսեցին ժամանակ անցկացնել — լուելով ճաշին, հաւաչելով, կուելով, վրդովւելով, նորից հաւաչելով, հազիւ հազ աշխուժանալով պատանեկան յիշողութիւններ մտաբերելիս և նորից հաւաչելով հէնց որ խօսակցութիւնը հասնում էր ներկայ օրին, այսինքն:

հէնց որ դէմ էր ընկնում բռնած անկիւնի: Նրանք չը կորցրին հաւատը դէպի այն, ինչի որ հաւատում էին, և շարունակում էին յոյս տածել դէպի այն ինչի որ յոյս ունէին և առաջ, բայց թէ նրանց թէ հաւատը և թէ յոյսը արդէն տանջւած էր, տձև էր ու չէր պատճառում ոչ մի զւարճութիւն: Այս ձևով արդէն քանի օր է, որ նրանք ժամանակ անցկացրին, տուն վերադառնալով զիշերւայ ժամը երեքին-չորսին, և ծանր քայլերով ու կտրւող շնչառութեամբ բարձրանում Պետերբուրգի բարձր սանդուխքներով:

Գալով երիտասարդին, որը եկել էր զեմեցի և քրոնիկեօրի հետ, նա թէև դեռ չէր հիասթափւել և ոչ մի բանում, թէև նա դեռ թարմ և ջահիլ էր, — բայց «ռեֆորմների մարդկանց» ընկած սերունդը, որին պատկանում էին զեմեցը և քրոնիկեօրը և որի շրջանում առհասարակ ժամանակակից երիտասարդները ստիպւած են որոնելու «ուղեցոյցներ» և առաջնորդողներ — այդ ընկած սերունդը արդէն ժամանակ ունեցաւ նրա վրա քնածոյ և վայրիվերոյ ներգործութիւն անելու: Ընկած սերունդը նրան ոչ մի ուղղակի պատասխան չէր տալիս այն հարցին թէ՛ ինչ անել: Ոմանք ասում են. «գնա հերկիր, ձեռքերիդ արպեամբ ապրիր», իսկ իրանք չեն գնում, միւսները ասում են — «իսկի հարկաւոր չէ հերկելը, — սովորիր զիտութիւն — ահա զլիսաւորը»¹⁾ երրորդները ասում են՝ «ժամանակակից հասարակութեան կազմակերպութեան մէջ չը կայ ոչ մի արատ, նա է այնպէս — ինչպիսին որ պէտք է լինի, անխտիր գործի կանգնիր, արա այն ինչ որ կը հասնի — բայց պահպանիր հոգիդ և բանջարեղէն կերակրով կերակրւիր: Երրորդները յամուսնայէս ապացուցանում են չարիքին չը դիմադրել, իսկ չորրորդները նոյնքան լաւ համոզում են զիմադրութեան անհրաժեշտութիւնը: Բայց միևնոյն ժամանակ ջահիլ այրի ելինա Անդրէևնան, որի հետ նա ծանօթացաւ համալսարանական երեկոյթին, նրան հիպոստահարում է իւր բիւստով և խորհուրդ տալիս օպերա մտնելու, և միևնոյն ժամանակ — կուրսիստոհիները նրան երեկոյթի են կանչում, և միևնոյն ժամանակ — զեմեցը նրան Պալկին ¹⁾ է քարշում, և միևնոյն ժամանակ, ծանապարհ զղելով մազամ Բուլիլինային — հաւեր է ստանում անպատճառ զալ իւր

¹⁾ Պետերբուրգի ռեստորաններէց մին:

մօտ մի լուրջ գործի մասին խօսակցելու: Եւ վերջապէս — վիճակադրութիւնը: Վիճակադրութեամբ պէտք է լուրջ կերպով պարապել — սա ամենասազական, չէզոք և ազնիւ մի աշխատանք է:

Մօտաւորապէս այս է և ընդամին — ամենաընդհանուր գծերով զծաղրած այն բազմատեսակ ազդեցութիւնները ժամանակակից միջնադարի, ուր երիտասարդը պատասխան պիտի որոնի այն հարցին թէ — ի՞նչ անել: «Կերթամ», մտածում էր նա բոլորովին անկեղծ, նման քրոնիկեօրին և զեմեցին, առաւօտեան ժամը չորսին տուն դառնալիս:

«Կերթամ», մտածում էր նա մութ խուցի մէջ լուցկի որոնելով:

«Պէտք է փախչել», մտածում էր նա քունը տանելիս:

Բայց առաւօտեան էլի հարկ էր լինում մտղամ բուլկինայի հետ խօսակցելու. նա շտապ հագնւում էր և գնում մօտը, բայց ճանապարհին պատահեց զեմեցը որը և նախաճաշի հրաւիրեց: — Իսկ Մաղամ Բոլկինան: — Մաղամ Բոլկինան նմանապէս կարող է գալ մեզ հետ նախաճաշելու:

— «Հիանալի»: Մաղամ Բոլկինայի՝ քրոնիկեօրի և զեմեցի հետ նախաճաշը տեւեց մի չորս հինգ ժամ և ինչ ասել կուզի որ էլի լիէր — «չարին ոչ դիմադրութեամբ», «դիմադրութեամբ չարին», «լուրջ գործով», ներկայ րոպէն ջարդ ու փշուր անելու մասին «ամեն տեսակէտից», հառաչանքով, ծիծաղով, էլի հառաչանքով և վերջապէս. —

— «Եկէք մի արօցկա վերցնենք»:

— «Հիանալի»:

Եւ ահա կղզիները, մի ինչ որ է «Պոպմեյ»:

Ահա այսպէս էլ գնում է: Հէնց այն էր որ նստեց վիճակադրութեամբ պարապելու — միտն է գալիս բիւստը, մտադրւեց թէ չէ խօսելու «լուրջ խնդրի» մասին — մին էլ տեսար Պոպմեյումն է, կամ մի երեկոյթի, ուր իւր ձայնի բոլոր ոյժով «Կուբինուշկան» է երգում:

Իսկ առաւօտեան ժամը չորսին՝ տուն հասցնելուց յետոյ m-me ¹⁾ Ձիժովային, (որը հրաւիրեց անպատճառ իւր մօտ անցնել այս քանի օրերս, որովհետեւ ասելու բան ունէր) տուն վերադառնալիս — ինքն իրան էլի մտածում էր. «Կը փախչեմ, չէ — պէտք է փախչել», այսպէս

¹⁾ Madame=տիկին:

մոռածում էր ու էլի այն դռան չէր մոտենում, որին որ հարկ էր:

Այսպիսով բոլոր երեք հիւրերը իրաւ որ հագնած մարդիկ էին. քրոնիկեօրը և զեմեցը ապրածի ապարդիւնաւորութիւնից, պատանին—որոշ և պարզ պերսպեկաիւայի բացակայութիւնից, իսկ ամենքը միասին ներկայ օրւայ ձանձրացնող, աղօտ, մռայլ, ամեն մի պարզ ու կենդանի հոսանքից զուրկ ժամանակից:

II

Առանձին սենեակ բռնելուց յետոյ մի առժամանակ հիւրերը մոլորւած մնացին թէ իսկապէս իրանք ինչու համար էին այդտեղ գտնւում: Իրանք հէնց նոր էին ծանօթների մօտ, ուր կուշտ ձանձրացել էին, կուշտ կերել ու խմել և ահա մի ինչ որ սատանայ նրանց նորից մի վանդակ դցեց՝ ձանձրանալու, ուտել և խմելու համար: Իսկապէս ոչ ոք ոչինչ չէր ուզում. պէտք էր գնալ պառկել քնել. բայց միթէ կարելի էր այդպիսով վերջացնել օրը: Չէ որ անցաւ ամբողջ օրը, բայց կարծես նրանից ոչինչ էական բան չը դուրս եկաւ. թւում էր թէ չափազանց ձանձրալի ու ծանր էր այդ օրը առանց վախճանի թողնել: Նւ ահա պէտք էր մի կերպ վերջ տալ:

—Պէտք է զանգակ տալ, չէ, — արտասանեց ձանձրացած կերպով զեմեցը:

—Այո, բարբանջեց նիրհող քրոնիկեօրը, զահաւորակի վրա փռւած. մէկն ու մէկը զանդահարեցէք:

—Ախր, զանգակը կողքիդ է... Ձեռք մին մեկնիր...

—Հա, է!

Քրոնիկեօրը մեկնեց իւր ձեռքը զահաւորակի վրայով, որոնեց զանգակը և գտնելով կոճակը՝ մատը վրան դրեց:

Երևաց քնաթաթախ, հոգնած, թմրած լակէջը: Սրա տանջւած ամբողջ դէմքի վրա կարծես ծանրացել էր մի ամբողջ դար կերուխումի աւանդութիւններով այն հիմնարկութեան, ուր սա ծառայում էր, — հիմնարկութեան—որի հարիւրամեակը նոր էր տօնւել: Լակէջի դէմքը արտացոլում էր ահապին հոգնածութիւն և թւում էր թէ նա հոգնած է այս անվերջ հարիւր տարի չը դադարող ծառայու-

Թիւնից կրթւած ուսն հասարակութեանը, որը նոյն իսկ ուտելում չի ուզում կարգին ուտել և որից ոչ մի կարգին բան չի դուրս գալիս: Ծառացի երեւալը աւելի ևս շշմեցրեց հիւրերին: Նա լուռ սպասում էր սրանց կարգադրու թիւններին, բայց սրանցից ոչ մէկի գլխով բան չէր գալիս:—Ուրեմն, — ասաց զեմեցը, աշխատելով կայտառ ձևանալ, — ուտենք թէ ի՞նչ անենք:

—Վալլահ, չը գիտեմ, կիսաքուն մըթմըթաց քրօնիկեօրը:

—Իսկ զո՞ւք, Խարիտոնով:

—Ինձ համար դիւի մէկ է:

—Այդ ի՞նչպէս թէ դիւի մէկ է: Ո՞ւտելու էք թէ չէ:

—Ի՞նչ արած, դէ, լաւ... կուտեմ:

—Ապա տուր կերակուրների ցանկի թուղթը: Լակէյը մեկնեց գներ պարունակող զրքոյկը կերակուրների և գինիների վերաբերեալ և այդ զրքոյկը երկար ձեռքէ ձեռք անցաւ, առանց որ և է արդիւնքի: Զեմեցը թերթոտելով այդ զրքոյկը, տողէ տող կարդալով, արձակեց իւր ժիլետի կոճակները, կարծելով որ ստամոքսը՝ իրան քիչ ազատ զրութեան մէջ տեսնելով, ինքը որ և է կերակուր կը պահանջի, բայց թէ ստամոքսը լուռ էր մնում և ոչնչից ոչինչ չէր ուզում:

—Լաւ, լսւ, յետոյ, ասաց վերջապէս զեմեցը, զրքոյկը քրօնիկեօրին յանձնելով:

Բայց թէ սա էլ իսկի չը գիտէր թէ իրան ինչ է հարկաւոր, ուստի զրքոյկը թերթելուց յետոյ դրեց սեղանի վրա ու ասաց.

—Ստաման է խաբար... չը գիտեմ!

—Դո՞ւք — Խարիտոնով:

—Նս գուցէ մի բիժտեկս ուտեմ:

—Այ քեզ ստամոքս! բիժտեկս.

Խարիտոնովը միմիայն հռհռաց:

—Այ ջահելութիւն... Իսկ մենք. բայց չէ որ ուշ է. խում այսպէս չի կարելի — մի բան պէտք է...

—Աստուած վկայ որ դիւի մէկ է ինձ համար:

—Ստաման գիտի թէ ինչ է սա... Ապա ցանկի թուղթը տուր:

Լակէյը, որը շարունակ համբերութեամբ սպասում էր հրամանի և յենւում էր կամ մի կամ միւս ոտի վրա, երևի որ խղճաց

«աղաների» անօգնական դրութեան. նա թեքեց քաղաքավարի կերպով դէպի զեմեցի կողմը և պառաւ դայեակի հոգատարութեամբ արտասանեց.

— Արդեօք չէիք ցանկանալ նաւագա ձկնից... Բոլորովին նոր է ստացւել:

— Իրաւ որ, վաղուց է որ ես նաւագա չեմ կերել, ուրախալի բացականչեց զեմեցը: Հիանալի բան է, ինձ համար նաւագա բեր:

— Ֆրիտ-ս ¹⁾, հարցրեց լակէյը նոյն հոգատարութեամբ իւր ձայնի մէջ:

— Ի՞նչ:

— Տեղեկացնում եմ թէ ինչպէսն էք հրամայում. տապակած, թէ...

— Դէ ի հօրիկէ տապակած: Բայց թէ ինչո՞ւ դու «Ֆրիտ» ես ասում և ոչ թէ պարզ կերպով—տապակած նաւագա:

Այս խօսքերը զեմեցը արտասանեց առանց որ և է կարիքի և միմիայն նրա համար որ ուրախ էր դառել. իսկ աւելի ուրախ էր դառել առաջին անգամ պատճառով, որ սիրտը նաւագա ուզեց, իսկ երկրորդ անգամ պատճառով, որ նրա վրա շատ լաւ տպաւորութիւն արեց պառաւ ճորտ դայեակի հոգացող ուշադրութիւնը դէպի աղայի երես տաած որդին ²⁾, մի ուշադրութիւն, որը լսելի էր ձայնի մէջ ու երեւում նաև լակէյի աչքերում և շարժողութիւններում, անց լակէյի, որը հոգս տարեց իւր աղային դժուար դրութիւնից ազատելու: Աղաների որդիքը, թէկուզ ռեֆորմների ժամանակակիցներ են, թէկուզ զեմեցներ են, բայց էլի սիրում են, շատ են սիրում մինչև այժմս էլ հոգատարութիւնը դէպի իրանց անձը այս նւիրւած ծառայողների կողմից և իրանց ուրախ են զգում երես տաած երեխաների դրութիւնով:

— Պարզ, մեր՝ ռսի ձեռով, ասէիր—տապակած, շարունակում էր կատակներ անել և դուրս տալ ինչ որ մոքին էր գալիս քառասունամեայ երես տաած աղայի որդին, — բայց չէ, մի ինչ որ է Ֆրիտ... Ինչո՞ւ Ֆրիտ, ինչո՞ւ:

¹⁾ Ֆրիտ ֆրանսերէն նշանակում է տապակած, վերջին ձալը—ստապակարութիւն է, որի համեմատ ասում է՝ դաս, նէտս, ալոս և այլն:

²⁾ Борчукъ.

—Նրա համար է Ֆրիտ կոչւում, ժպտալով նոյն հոգացող ժպտով խօսք առաւ լակէյը, որ Ֆրիտ բառը համատարած է: Չէ որ աշխարհիս երեսին ամեն տեսակ ազգ շատ կայ—գերմանացիք, ֆրանսիացիք, հայեր, պերսեանցը ¹⁾—քիչ կան... Ամեն մէկը ամեն մի բանի մի անուն է տալիս... Օրինակի համար, ասենք թէ կայ ժամբոն անունը: Իսկ—ասածը ի՞նչ է: Թէ որ քննենք, կ'երևայ որ դա պարզ ի պարզոյ խոգապուտ է ²⁾ ուրիշ ոչինչ: Բայց թէ որ ամեն մի օտար երկրացի իւր գիտեցածովը բան ուզէր—իսկի բան չէր կարելի հասկանալ... Այ, հէնց այդ պատճառով է որ բոլոր սեղերի համար ընդունւում է—զիցուք Ֆրիտ, օմէտ, կամ թէ՛ բեօֆ, շատորիան, կիւլոտ...

Ձանձրացող քաղաքացիները այս մենախօսութեան ամեն մի բառից յետոյ, յայտնի չէ թէ ինչու, իրանք իրանց աւելի ուրախ և աւելի թեթեւացած էին զգում: Հաւանական էլ է, որ սրա պատճառը լինէր խօսակցութեան անսպասելի թեման, մի թեմա, որը ոչ մի առնչութիւն չունէր ժամանակակից, չափազանց ձանձրացնող թեմաների հետ, թեմաների, որոնք անասելի կերպով զգւեցրել են մեր ձանձրացնողներին և որոնցից որ, այնու ամենայիւ, նրանք չէին կարողացել ազատուել: Մեր ձանձրացող քաղաքացիները, տանջող օրւայ մէջ սպառելուց յետոյ խօսակցութեան այս բոլոր հոգնեցնող թեմաները և համոզելով որ վերջինիս ապարդիւնութեանը անհրաժեշտ է վերջ տալ մի որ և է վճռական բանով, ինչպէս օրինակի համար, մի ընթրիքով, երբ որ սկի ախորժակ էլ չը կայ բան ուտելու,—ուրախացան որ հոգնեցնող թեմաներից զուրս,—որոնք կարծես միանգամայն սպառում լինէին կեանքի բոլոր խնդիրները—զոյութիւն ունին ինչ որ է չը նախատեսւած ու խորհրդածութեան արժանի թեմաներ:

—Այո, հանաք անելով—լուրջ արտասանեց զեմեցը: Բհը, ուրեմն, այ թէ ինչ բան է Ֆրիտը: Լաւ, իսկ կիւլոտ ի՞նչ ասել է:

—Պարզ ասած—տաւարի միս:

—Այո, բայց թէ ինչպէսը, որտեղիներ:

¹⁾ Գռեհկական խօսք—փոխանակ պերսեանէ,=պարսիկներ:

²⁾ Ветчина, որը սակալն ոչ թէ արեւում է չորացնում, այլ կախ տաւած գիրքով ծովսի ենթարկում մի մութ սենեակում:

Լակէյը թերեւս քաշուում էր պատասխանելուց։

—Այսինքն... ինչպէս ասեմ... միս էլի!

—Հա, էլի — միս, բայց թէ ինչ տեսակի...-

Այ, դիցուէք, անտռեկոտը մի տեսակ է, իսկ կիւլոտը...

Լակէյը խոնարհեցրեց իւր աչքերը և ինչ որ տխուր մի զիծ դժւեց նրա դէմքի վրա։

—Այդ մէկը, ներողութիւն արէք, արտասանեց նա քաշելով, այդ բոլորը մենք չենք կարող իմանալ։

—Ապա ինչպէս ես կարողանում ծառայել։

—Ի՞նչպէս եմ կարողանում։ Անունները գիտենք, բայց թէ մանրամասն իմանանք — դա մեզ անկարելի է։ Աստուած ենք կանչում որ պատուիրածի անունը չը մոռանանք ու մինչև խոհանոց հասնելը չը շփոթենք. երբեմն պատահում է՝ սպասաւորում ես երեքին, չորսին, երկու առանձնասենեակներում — Աստուած տայ որ միայն այդքանը մարդ մոքում պահի։ Իսկ թէ որ այդ ամենը մանրամասնաբար տակիցը գիտենանք — այդ խոմ մեր ոյժերից վեր է։

—Միթոմ թէ։

—Հաւատացէք... Ինքներդ դատեցէք. միայն բեօժը քսանուհինգ տեսակի է, տոմատով ու ֆինգերբով սօւսաները, կամ թէ դինները ու լիկեօրները։ Դեռ գինիները, էլի մի բան է — նումբերներ կան... իսկ լիկեօրները, օրինակի համար. գոցնը մէկ է, իսկ համը ջոկ։ Մէկը պահանջում է «ժինժեր», միւսը Բենեգլիկաին։ Ինչ էք հրամայում. մարդուս զլուխը հէնց նրանից միայն պտոյտ կը գաց մինչև որ նա մտքումը պահի թէ որ տակառինն է այս ու այն լիկեօրի շիշը! Մեզ երբեմն պատահում է հիւրեր ճանապարհ գցել առաւօտուայ ժամը վեցին, իսկ իննին էլի ոտքի վրա ենք... Ինչպէս ենք կարող բոլորը գիտենալ։ Փառք Ասածոյ որ դեռ զների ցուցակը անսխալ անգիր եմ արել, ապա մին նայեցէք այս գրքոյցը — տակէ տակ պէտք է անգիր իմանանք...

Տրակաիրի լակէյը, սկսելով այս ամենահասարակ խօսակցութիւնը, շարունակելով հոգացող դայեակի պարզասիրտ և հանաքավարի եղանակով — իւր վերջին խօսքերի արտասանած ժամանակ այդ սովորական մարդը ամենքի համար մի անսպասելի կերպով մեր ձանձրացող ազաներին հանդիսացաւ իբր ամենահասարակ, պարզասիրտ գիւղացի

մոլեխիկի մէկը, աշխատաւորի, մշակ դատապարտւածի մէկը, որը իւր հացն է վատտակում քրտինքը երեսին: Մէկը նրան Ֆռակ է հազցրել, սովորեցրել նրան իրան լակէցավարի պահել, հրամայել իւր զէմքով զւարճութիւն արտայայտել ուտող ու խմող աղաների առաջ, անգիր անել աւեց ինչ որ է հարիւր բառեր, որոնք, ով գիտէ, ինչ են նշանակում, մի խօսքով դիմակաւորեց և ծածուկ դարձրեց սրա իսկական մարդկային էութիւնը—և ահա այս էութիւնը, դառն ու դատապարտւած գոյութիւնը հասարակ աշխատաւոր մարդու, որը ոչ բաւարար չափով քնում է ու ոչ կերակրւում, չանկարժ լսելի եղաւ նրա մենախօսութեան մէջ լիկեօրների և Ֆինգերբների մասին և այնքան պարզ և այնքան տխրալի, որ ձանձրացող աղաները չը համարձակեցան շարունակել իրանց հանաքները:

—Ի հարկէ, շարունակեց լակէցը արդէն ոչ իբրև լակէց, այլ իբրև դատապարտւած մի մշակ, ի հարկէ, ով որ, օրինակի համար, գիտէ օտար լեզու ու ազատ ժամանակ էլ ունի, դէ ի հարկէ հեշտ կը լինի մոքումը պահի, բայց թէ մեզպէս մոլեխիկի համար դա շատ ու շատ դժւար է: Մնւած օրիցս չիմացայ թէ աշխարհիս երեսին ինչ ասել է «ազատ ժամանակ»... Տասը տարեկան էի որ ինձ գիւղից Պետերբուրգ հասցրին... Մեր Եարոսլաւի նահանգում խալիսը գործի է գնում—կամ Մոսկւա է զալիս—տրակտիրներում ծառայելու, կամ գործարաններում... հայրս գործարանում մեռաւ, մնացինք մայրս, երկու փոքրիկ քոյրերս, ու ես՝ տասը տարեկան: Մայրս գործարան մտաւ, իսկ ինձ Պիտեր տարան: Մեզ, Եարոսլաւի տղերանցս, Պետերբուրգ տանում են հորթերի պէս: Այդպիսի մոլեխիկներ կան—մի տասը տղերք կը հաւաքի ու իւր հաշուով Մոսկւա կամ Պիտեր բերելով այս ու այն տրակտիրներում ու կաբակներում կը ցրւի: Դէ ի հարկէ օգուտ ունի այդ բանից: Տասը տարեկան էի որ ինձ զետեղեցին Սեննայա հրապարակի վրայ գոնւող ամենաստոր տրակտիրներից մինի մէջ: Գիշեր ցերեկ առուտուր կար, կառապանի էր: Երկու տարի «գաստօցկայի» ետև կանգնած ամաններ էի լւանում: Իսկ թէ ինչքան ծեծ կերայ. ապտակներ էին ու գլխիս ու ծոծրակիս հարւածներ: Էլ ասել չի լինիլ թէ ինչքան համբերեցի մինչև որ Աստուած շնորհք տւեց Սեննայի աւազակաբունից մի ռեստորանի հասնել: Ինչ խօսք որ բարի մարդիկ օգնեցին ու սովորեց ըին ամեն բան:

—Այդտեղ ինչ սովորեցնելու բան կայ:

—Ինչպէս չէ. որ հիմա հարսանիքներին ո՞ճիւրդիւմ են հրաւիրում. պէտք է ամեն բան դիտենալ—օռչադ, լիմոնադ և այլ կարգ ու նշանները: Ինչպէս չէ, սարսափելի բաներ են: Այ, օրինակի համար թէ ինչպէս համեցէք անել ու վարել իմանալ... Ապա հիւրերից մինի վրա սօուս թափիր... Իսկոյն դուրս կ'անեն... ինչպէս է կարելի... է քունը շատ է պակաս... դժուար է: Մարդ հանգստութիւն չունի ոչ ցերեկը ոչ գիշերը: Ամենազլխաւորն այն է որ մեր պաշտօնում քունը շատ է պակաս... դէ այսպիսի կեանքի մէջ էլ ուր մնաց որ մարդս ամեն բան իմանալ կարողանայ—Աստուած տայ որ մարդուս յիշողութիւնը իրան չը խաբի. այ, այս գների ցուցակը ես հազիւ հազ երեք ամսում դիշերները սերտում էի մինչև որ անգիր անել կարողացայ: Աստուած եմ կանչում որ չը շփոթեմ: Ու, բացի այդ, պէտք է հիւրի հետ վարել իմանալ, համեցէք անել, երբեմն էլ այնպիսի խռովարար մէկն է պատահում, որ տրակտիր է գալիս միայն սկանդալներ սարքելու համար: Երբեմն էլ պատահում է, որ խոհանոցում կամ քիչ են տապակում կամ թէ շատ են տապակում. չէ որ բոլորի համար յիշոցներ լսողները մենք ենք, ասիւր: Այնպիսի չար հիւր էլ է պատահում երբեմն - որ հէնց այն է ուզում որ ամանը ուղիղ չպրտի. այնպիսի մէկի համար, թէ որ նեղացած էլ է լինում, շատ սովորական բան է Ֆռակից քաշքշուտելը, ճղելը, սօուս վեր ածելը, — բայց թէ Ֆռակը, ինչ էլ որ անես, ամենապակասը մի իննը ուռբլի արժի: Զէ. մեր պաշտօնը ծանր պաշտօն է: Խօսք չկայ՝ օգուտի համար ենք չալիշ գալիս, թէ չէ, այս կեանքին ո՞վ կը համաձայնէր...:

—Լաւ, իսկ քո ճաշակով ո՞ր կեանքը քեզ աւելի կը լինէր հաճելի: Լակէյի հոգնած, աշխատաւոր դէմքը փայլեց մի ակնթարթում:

—Գիւղական կեանքին աշխարհիս երեսին չի հասնիլ ոչ մի կեանք, ասաց նա մանկական ուրախութեամբ: Հէնց դա է իմ ամենահիանալի երազներիցս մէկը—մարդ ապրի դիւղում իւր տնտեսութիւնով: Այիտոս չի... Ինչպիսի տեղեր կան մեզանում: Զիով առաւօտը որ դուրս չես գալիս—օդը հէնց դիտենաս բուրում է, արոմատ է, շրջակայքը տասնուհինգ վերտոի վրա երևում են, լաւ եղանակին կարելի է քսան գիւղ համբել: Փառք քեզ Աստուած, էնէնց լաւ է որ... Մին երկու տարի էլ կը չարչարեմ ու կերթամ իմ տեղս...

Ի՞նչ էք հրամայում... համեմատել կը լինի՞ր սեփական տա-
ւար, սեփական բանջարանոց, ազգականներ, քոյրեր, կնիկ, մայրիկ,
ամենը ուզածիդ պէս, ոչ ոք քեզ հրամաններ չի տալիս, չի սով-
պում,—ինչ համեմատութիւն: Միայն զիւղի համար է որ ես սուտ
ու զորդ խօսքերով կուում եմ:

—Սուտ էլ...

—Ուղիղ էք հրամայում. թէ որ մեզ նման չքաւոր մէկը ճշմար-
տութեամբ ապրի—երբէք չի կարելի որ նա լոյս աշխարհ ընկ-
նի: Ասուած վկայ: Ինքս էլ մտածել եմ թէ ինչպէս ապրեմ
առանց խարդախութեան: Բայց թէ տեսնում եմ,—իսկի հնար
չը կայ: Այ, օրինակի համար, պատկէլ եմ, ուղիղն ասեմ խաբէու-
թեամբ եմ պատկէլ: Կատարեալ խարդախութիւն գործեցի:

—Խարդախութիւն:

—Այո, կեղծութիւն. ինքս ինձ հարուստի տեղ կեղծեցի—ու
պսակեցին: Կնիկս, ինչ ասեմ, ոչ մի բանի չի կարելի նմանեցնել, ու—
մի ուրիշ տեսակի բան է: Թէ որ ինձ ու նրան զուրս անեն մի
դատարկ, անմտչելի տեղ, մի անապատ տեղ, ու առանց կոպէկ
փողի,—նրա հետ կորչել չի լինիլ, ու հէնց այն բոպէին հետը համ
տաք կը լինի, համ ուրախ, համ հիանալի: Երեք հատ ծեղից
իրան համար պատասխարեւոյ տեղ կը շինի—այ ինչպիսին է նա:
Գիւղումը, մի երեկոյթի, կապրիլի ժամանակ հէնց որ հետը ծա-
նօթացայ (ինչ խօսք որ ես Փռակով էի, իսկ նա—տիկնոջ նման,
շլէյֆով ու ամեն բանը կարգին), հէնց որ ծանօթացանք իրար հետ
ու իրար առաջին անգամից զուր եկանք—եւ նրան ասացի. ինչ—
եւ, Մաշա, կարծում օրինաւոր պսակադրութեան մասին:—Ձի
տալ, ասում է, ծնողս, որովհետեւ զու չքաւոր ես, իսկ մեր ընտա-
նիքը—հարուստ մուժիկներ են:

Եւ իրաւ որ հարուստ մուժիկներ են, հին աւանդութիւնների
լուրջ մի տուն...

—«Բաս, ասում եմ, ինչպէս անենք»: Մտածիր, ասում է, մի
տարի էլ կը սպասեմ, ոչ ոքի չեմ գնալ, իսկ մի տարուց աւելի չեն
թոյլ տալ որ ապասեմ (ի հարկէ, կասկած չը ցարուցանելու համար
իրան հովհարում է իւր հովհարով): Ի՞նչ արած: Ես խում այնպիսի բնա-
ւորութիւն չունիմ, որ քանակ վերցնեմ ու այնպէս գնամ փող վաճ-

տակեմ: Ետ եկաց Պետերբուրգ, կարօտից մեռնում եմ, տանջւում եմ, ու չը գիտեմ թէ ինչ անեմ: Մեր ռեստորանի շէնյցարը ինձ հարց ու փորձ արեց ու բանին տեղեկանալուց յետոյ ահա թէ ինչպիսի խորհուրդ տւեց: Մեծ դարդ է, չէ, ասում է, միթո՞ւմ թէ սկի ճար չը կայ, գնաց, ասում է, վիճակախաղի հին տոմսակներ ու յայտարարութիւններ առ—այ քեզ փող: Զէ որ այդ սև խալիսը տղէտ է ու խաւար, նա բան չի հասկանալ: Եւ ի՞նչ էք կարծում: Նս էլ թուլթունի դուքանից դուքան ընկայ. «արդեօք հին տոմսակներ չունիք» — «Ինչպէս չէ» ու կամաց կամաց երեք ռուբլու այդ զիբիլից երկու հարիւր հատ առաց, աւիւծները վրան, մի տուն, մի արծաթի սամովար, սերւիզ, սարսափելի հարստութիւններ: Իսկ շէնյցարը, Աստուած նրան կեանք տայ, ասում է. «Այ տղայ, սպասիր, ասում է, մինն էլ ճարեմ քեզ համար: Նս, ասում է, մի բանկիրային գրասենեակում էի ծառայում, որը յայտարարութիւններ էր հրատարակում, որոնք որ փողի շատ նման էին»: Իւր սունդուկը քրքրեց ու այնտեղից մի այնպիսի ծրար հանեց այդ յայտարարութիւնների — դրուստ «վրիզրիշնի» տոմսակներ: Դիփ շրջաններով, սատղերով, զանազան գոյների, ու էլի 200 հազար, եօթանասուն հինգ հազար, հինգ հարիւր, հարիւր... Թւանշանները այնպէս էին, որ մի վերստից էլ երևում էին: — Առ, ասում է, մեր տղայ, գնաց բանըդ տես: Բարի սհաթին լինի: Հոգի էր, հոգի այդ շէնյցարը, ինքը դւարդէեց — Աստուած նրան ջան տալ: Այ, այդ ձևով դրամազուլաներ հաւաքեցի, մի դրամակիր-բումաժ-նիկ էլ առաց ամենալայներից, այնպէս լցրի որ երևաց ու փողի էլ նման լինի — ու դէպի գիւղ: Այդ դրամազուլաները չէ որ մի ամբողջ տարի էի աշխատում: Եկաց զիւղ, տեսնեցայ Մարեայի հետ, դադտիքը նրան չեմ բաց անում — մոռածում եմ՝ չք լինի նա նեղանաց խաբէութեան համար, աղօթք արեցի, ու զնացի ծնողների մօտը... Ելի մի երեկոյթ էր: Նստած եմ հօրը մօտ, ինքս ինձ անփոցթ պահում, կարծես մի ազա լինեմ, բառ չեմ ասում, ու մին մին բաց եմ անում բումաժնիկս ու մէջից այնպէս եմ պապիրոս հանում որ միլիոններս քթին դիպւն: Յամառ ծերուկ էր, բաց փողի համար ազահ: Աչքերը գցեց բումաժնիկիս վրա... Այդ մէկը ես նկատեցի ու մի ուրիշ անգամ էլ որ եկաց ու էն զիբիլը մէջ ու մէջ արի իսկական փողի հետ (մի յիսուն ռուբլի փող ունէի, այ-

սինքն իսկական փող) — իրար հետ խառնեցի ու ինձ համար հանգիստ նստած եմ: Ելի մի պապիրոս հանեցի ու դիտմամբ բռնաժանիկ վեր գցեցի, իսկ միլլիոններս յատակի վրա որ չը փռւեցին... Մերով երկու ձեռքով բռնոտում է ու տեսնում թէ իսկական փող է ու էն զիբիլն էլ նրան փող երեաց... Տեսնում եմ — չէ, սրա աչքերը վառւել են... Մին, երկու, երեք էլ որ նրան նոյն ձևով տաքացրի թէ չէ, յետոյ էլ ասում եմ. — «Էսէնց ու էսէնց» ձեր աղջիկն եմ ուզում, Մաշան, տուն պիտի շինեմ, զուքան պիտի դնեմ, փողեր ունիմ: Ու ծերուկն էլ կակղեց: «Համաձայն եմ» ասում է: Ու հինգ հարիւր ռուբլի ես նրանից գժլեցի, իբրեւ բաժինք, բացի խուրդաց մուրդացից...

Այս բոլորը աչքան երեխայական ուրախութեամբ ասեց, որ ճիշդ երեխայաբար ուրախացան նոյն իսկ ձանձրացող աղա հիւրերը:

— Ու այդ փողերով տուն էլ առաց, կով էլ: Մօրս, քոյրերիս, կնոջս բնակեցրի, մի խօսքով՝ հիմք դրի տանս համար, ու յետոյ գնացի աներոջս սոնները ընկալ ու ներդրութիւն խնդրեցի... Ամա, իմն հասաւ ինձ: Բայց թէ ինչ պատմեմ: Շատ հարկաւ որս է... Հիմա հաշուել ենք, երբ որ տեսն իմ աշխատութիւնս ու հոգատարութիւնս: Իսկ Մաշան այդ բանի համար ինձ աջնդէս գնահատեց — որ աւելին չի կարելի... Հէնց որ պսակեցինք, ես նրան ասեցի. «Գիտես, ասում եմ, Մաշուկա, պէտք է զորդը իմանաս»: Ու պատմեցի. Կարծեցի թէ կը նեղանայ, խաբեբայ կը համարի, իսկ նա մտածեց ու մտածեց ու «էդէնց մի խելօքին, ասում է, զեռ չեմ տեսել, ոնց որ դուն, Միշա, ասում է, ինձ խելդիր: Այ, խելօք»: Գլուխս շոյում ու խօսք չի գտնում ինձ գովաբանելու... Ու շէշցարն էլ ուրախ էր, ուրախ: Երբոր պատմեցի ու նա էլ իմացաւ, քիչ էր մնում երկուսս էլ ծիծաղից մեռնէինք: Այդ օրը խմեց ու ինձ էլ խմացրեց (առաջին անգամն էր կեանքիս մէջ որ խմեցի) իւր փողով... «Տուր ինձ, ասում է, այդ միլլիոնները — ես էլի մէկին չօգնեմ: Ես էլ նրան յանձնեցի բոլոր կարողութիւնս... Այ, տեսնում էք! Իսկ թէ որ չը խմէի: Մայրս խոմ աշխատելուց հօգին կը զուրս դար, քոյրերս էլ գործարանից չէին ազատուիլ, իսկ հիմա, փառք Աստծոյ, իրանք իրանց տէր են, ու սիրով ապրում: Ձէ որ մարդս ուզում է մարդավարի ապրել: Հիմա էլ որ չը կայ — ես ամեն մի չնչին բան տուն

եմ ուղարկում: Մի տասնը կը հաւաքւի թէ չէ—գիւղ: Երեք հաստանոց ձեռս ընկաւ—էլի այնտեղ: Մենակ ունեցած ֆռակներինցս տասնու-վեցը այնտեղ եմ ուղարկել:

Այս խօսքերը ականայից ծիծաղից սպանեցին ունկնդիրներին:

—Տաճարումեց ֆռակ, հարցրեց զեմեցը ճիշդ աղավարի մի ծի-ծաղով: Գիւղը: Ախր, ինչ բանի են նրանք այնտեղ պէտք:

—Գիւղումը: Ի՛նչ էք հրամայում. գիւղումը ամենաչնչին բանը հարկաւոր է գալիս, միայն թէ նա այնտեղ շատ է կերպա-րանափոխւած լինում... Պետերբուրգում, օրինակի համար, ֆռակը հարկաւոր է տղամարդուն, զիցուք մեզ, ծառաներիս, կամ թէ աղաներին, իսկ գիւղում—ֆռակը փառաւորապէս կերպարանափոխ-ւում է բաբաների ¹⁾ համար:

—Ֆռակը:

—Այո, ֆռակը: Հրամանքդ ուշադրութիւն դարձրէք որ թէկուզ մահուդը մաշւած է լինում, բայց թէ էլի նա ամուր է, թէ որ շուռ տուի—հէնց գիտենաս նոր լինի: Ես ունենում եմ մին-մին շատ պատւական տեսակի ֆռակներ. մի ֆռակ մեռելի վրայից էի առել—նա դեռ հիմա էլ չի մաշւել:

—Ո՞նց թէ մեռելի վրայից:

—Այստեղ, կլուբի ծառայողներից մէկը մեռաւ, կիին էլ ֆռակ հագցրեց նրան,—իսկ ֆռակը նւիրովի էր մի կոմսից: Պագաղում դրեց թէ չէ, սկսեց ափսոսալ խեղճ կնիկը. «Թէ որ, ասում է, ծախէի ու մի հնաւունը առնէի, էլի ինձ մի բան կը մնար»: Ես էլ փոխեցի, իմ հինս տւի, հինգ ռուբլի էլ վրան, ու նորը հանեցի մեռելի վրայից, լաւ մաքրեցի, չորացրի, սպիրտով էլ մաքրեցի ու երեք տարի էլ ինքս նրան թաշախուստի հագայ... հիմա երկրորդ տարին է, ինչ որ նա գիւղումն է բանում:

—Չէ, դու էն ասա, թէ ի՞նչպէս են ձեր բաբաները ֆռակներ-րում ման գալիս:

—Ֆռակը մեղանում այնպէս է կերպարանափոխւում, որ սկի նրա հոտն էլ չի մնում: Մարդու միտն էլ չի գալիս թէ էն ֆռակը ինչ ձևի էր: Իսկ դուք կարծում էք թէ մեր բարերը ֆռակներով են ման

¹⁾ Баба==ուռա գիւղացի կնամարդ:

գալիս: Ես հիմա այնտեղ կին ունեմ ու երկու օրիորդ քոյրեր: Մէկին ուզում եմ մարդու տամ, որ մուժիկին էլ տուն բերենք: Մեր տնտեսութիւնը կաթնային է. չորս կով և հորթեր: Հորթերին խմացնում ենք ու ծախում: Այդ տնտեսութեան մէջ է որ Փռակներս հարկաւոր եկան. օրինակի համար, ձմեռ է ու գիշերը պէտք է վերկենալ, կթել, խմացնել, կերակրել, ու այս բանի համար մեր բաբեօնկաները Փռակներից դիպլուպատ շորերի յարմար մի բան շինեցին. կրճքի այս տեղերը ծալած են (իւր Փռակի վրա նա ցոյց տւեց թէ ինչպէս), ասել է թէ կուրճքը տաք կը լինի, իսկ այստեղերը, ասել է, երեք Փռակներից Փալպերը կտրւած են, վեց Փալպերից մի իւյբկա է դուրս գալիս, իրար կարած են, տալն էլ բամբակ, ի հարկէ — ասել է թէ տաք կը լինի, ու երեք չորս չորս հերիք կանի. բայց թէ որ թուրքին ծախես — մի ռուբլուց աւելի չի տալ: Իսկ այն Փռակները, որոնք որ անՖալը մնացին — նրանցից էլ կոֆտաներ են շինել, մէկը մօրս համար, տալն էլ նապաստակի մորթի — շատ է մրտոզ դառել, պառաւը, ու այնքան էլ չը մրսիլ այդ կոֆտայում: Եհ, ինչ էք հրամայում: Գիւղումը: Գիւղումը ամեն մի բան կերպարանափոխում է մեր ձեռով ու մուժիկավարի դառնում:

Բայց թէ դա հիանալի է, զղրդացրեց ամբողջ սենեակը հըրձած զեմեցը իւր բարձր ծիծաղով:

— Դէ, ի հարկէ, հիանալի է, շարունակեց լակէյը, աւելի ևս ուրախացած քան զեմեցը: Եւ լակէյը շարունակեց, փայլը երեսին. դէ, ի հարկէ, հիանալի է: Տունս համարեա թէ կարգին է, քոյրս մարդու կը տամ, թերեւ կարելի լինի նաև մի քիչ հող ուզեմ: Իսկ ինքս, թէ որ Աստուած համբերութիւն տւեց, մի երջու տարի էլ կը չարչարեմ, ու ես էլ այնտեղ կ'երթամ դէպի սեփական կտուրի տակը: Ու մի լաւ կը հանգստանամ այս իմ բոլոր չարքաշութիւններիս փոխարէն: Ու Մաշայի հետ կ'ապրենք շիտակ, ազնիւ, մեր սեփական աշխատանքով: Իսկ թէ մեր տեղերը ինչպէսն են՝ փառք քեզ Աստուած...

— Դէ, դա խոմ հիանալի է, հռհռում էր զեմեցը:

Եւ ամենքը ուրախացան:

— Ուրեմն «նաւագա» էք հրամայում, իւր պարտաւորութիւն-

ները յիշելով, ասաց լակէյը, վերադառնալով իւր պաշտօնին և իւր ձեռքին:

— Նաւազա: Ֆրիտ: Բեր, բեր, հիւանալի բան եղաւ, ախորժակ էլ եկաւ. բեր նաւազան:

— Ինչ որ է ես էլ եմ ուզում ուտել, միմիջաց քրոնիկեօրը: Ինձ... ինչպէս էր անուներ... Կիւլլոտ բեր:

— Հրամանքս:

Լակէյը գնաց, իսկ քիչ առաջ ձանձրացող ընկերները սկսեցին իրար հետ աղմկալի խօսակցել ամեն տեսակ այրւող թեմաների վրա: Սկսեցին խօսել ու վիճել ժողովրդի մասին, ինտելլիգենցիայի մասին, Ռուսաստանի և Եւրոպայի մասին: «Այնտեղ է, այնտեղ կենդանի լարը» բղաւում էր զեմեցը: Այնտեղ է, այնտեղ կենդանի ցանկութիւնը ապրելու, այո, ապրելու, այո, անպատճառ լոյս աշխարհում, և ոչ սև, ոչ էլ սև գիշերով և անպատճառ «շիտակ և ագնիւ»! Անպատճառ—«ագնիւ» իւր ազատ կամքով, գիւղացիավարի... Այո, այնտեղ, այնտեղ! իսկ մե՞նք, մե՞նք, մե՞նք, մե՞նք...

Մի խօսքով, նոյն թեմաները, որոնք դեռ բոլորովին սպառնալէին երևում և բացի հոգնածութիւնից և ապարդիւն ձանձրոյթից ուրիշ բան չէին ներկայացնում, նորից անսպառ երևացին, նորից կենդանացրին անվերջանալի երկար խօսելու և անվերջանալի երկար ուտելու սովորութիւնը:

— «Ձեռվեկ» ¹⁾, լսւում էր տմեն բոլոր աղմկալի առանձնասենեակից. ընկերները ուտում էին, խմում, խմում էին և ուտում ու երկար ոչ մի կարիք չէին զգում առանձնասենեակից հեռանալու:

III

Առաւօտուայ ժամը մօտ վեցին, նրանք ամենքը, որորւելով և բռնելով մոլթ սանդուխքի սուրաններից, ծանր քայլերով ուղեորւում էին դէպի իրանց բնակարանները և նրանցից ամեն մէկը մտածում էր թէ—գիփ կորած չէ, որ այնտեղ ինչ որ է կենդանի բան կայ, և որ «առհասարակ պէտք է հեռանալ» շուտ այստեղից:

¹⁾ = ուտելիք՝ մարդ, ախտեղ սպասաւորի մտքով:

—Սա ինքն է որ կայ, շիտակ, ազնիւ. ինքն է որ կայ, ասում էր նաև տաքացած Խարխտոնով պատանին իւր խուցի մթուժեան մէջ, վրայից հանելով մոռշտակի հետ սիւրտուկը, կօշիկների հետ կալոշները: Նա է որ կայ... և, շիտակ և ազնիւ... ընդա... Անպատճառ կըսէիւմ... պէտք է անպատճառ փախչել, դա է զլխուսըրը... Փախչել: Միայն թէ m-me Զիժովի մօտ կ'երթամ և... վերջացաւ: Է՛յ, սիրելիք, բղաւեց նա ընդհանուր լուծեան և հիւրանոցի մեռած քնի մէջ—ինքն իրան մի փառաւոր տրօցկաի վրա երևակայելով:

Բայց ուշքի գալով և իւր չորս կողմը նայելուց յետոյ հանդարտ կերպով անկողին մտաւ, հառաչեց ու ինքն իրան մի անգամ ևս «և կ'երթամ» ասելուց յետոյ, խաղաղ կերպով փակեց իւր հոգնած արտևանուէնքները:

Ահա մի երես էլ «մի կտոր հողի» մասին: Լոկ միտքը սրա մասին միանգամից կենդանացրեց և փայլեցրեց տրակտիրային լակէյի ծանր աշխատանքով տանջւած հոգին—դարձնելով նրան իսկական մարդ, և աղաների մօտ էլ զարթեցրեց... ուտելու ախորժակ:

Տ Ե Ն Զ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

Մէկն էլ այն է հոգու անթիւ տենչերի
Որ իմ աչքով տեսնեմ յոյզը ջրերի—
Աչեկոծւող ովկիանոսի մի տաղնապ,
Ահեղագոչ ալիքները լեռնաչափ
Բարձրանային իրար վերայ անդադար
Եւ մրրիկը նրանց վրայ սաստկանար...
Եւ զիտէի ժայռի գլխին ես կանգնած,
Երբ հողմակոծ կոհակները մոլեգնած
Մինչև երկինք փրփուր ու ջուր ցայտէին
Եւ ոռնալով բարձր ափերին զարկէին,
Եւ խորտակւած, օրհասական հեծճանքով,
Հեռանային խաղաղացած յորձանքով,
Եւ, խլաճայն մռնչալով, նորից նոր
Բարձրանային աղջամղջում հեռաւոր,
Նոր յարձակմունք, անհաշտ կռիւ զայրագնած...
Եւ նայէի ժայռի գլխին ես կանգնած:

ԱՌԱՆՑ ԴԱԻԱՆԱՆՔԻ

ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկևիչի

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Շարունակութիւն 1)

28 ապրիլի.

Արտիցկու նամակները այն աստիճան ճնշող ազդեցութիւն զործեցին ինձ վրայ, որ ստացած տպաւորութիւնս մինչև այժմ շարունակում է: Իրաւ է՝ Անելկայի դէմ անհիմն զայրոյթս անցնում է.—որքան աւելի եմ զգում, որ անիրաւացի էր նրա հետ այն աստիճան կոպիտ վարւելս, այնքան աւելի եմ զղջում արածիս համար և այնքան աւելի քնքշութեամբ եմ մտածում նրա մասին: Բայց միւս կողմից քանի գնում՝ աւելի ու աւելի պարզ եմ տեսնում, թէ ինչպէս անողորմ կերպով միաւորում է նրանց նոյն իսկ փակտերի ոյժը: Երէկանից այդ մտածմունքի ճիւղաններումն եմ և այդ պատճառով այսօր չը գնացի Պլոշով: Այնտեղ պէտք է միշտ ուշքս վրաս պահեմ, պէտք է հանգիստ լինեմ կամ հանգիստ ձեւանամ. այժմ այդ իմ ոյժիցը վեր է: Ինչ որ կայ—չը կայ մէջս՝ մի՛տք, զգացմունք, տպաւորութիւն,—բոլորը խառնել է իրար ու ոտքի կանգնել կատարւած իրողութեան դէմ: Զը գիտեմ կարո՞ղ է

1) Տես «Մուրճ» 1892 թ. №№ 1, 2, 3, 4, 5, 6, 7—8, 10:

արդեօք լինել աւելի դառն դրութիւն քան այն, երբ մարդ չի հաշտուում մի որ և է բանի հետ, բողոքում է իւր ուղեղի ու սրտի իւրաքանչիւր մասնիկով և միւսնոյն ժամանակը կատարած իրողութեան առաջ իրան անգոր է զգում: Այն էլ եմ լաւ հասկանում, որ այդ միայն «սկիզբն է երկանց»: Այինչ չեմ կարող անել, ոչինչ: Մարդու է գնացել, պանի Կրոմիցկա է դարձել, պատկանում է Կրոմիցկուն և միշտ պատկանելու է նրան, իսկ ես, որ չեմ կարող այդ բանի հետ հաշտուել, որովհետեւ եթէ հաշտեմ՝ չեմ կարող ապրել — պէտք է հաշտեմ: Նոյնչափ հետեւանք կ'ունենայ բողոքս իրերի այն կարգի դէմ, որի շնորհիւ մարդու գնացած կինը պատկանում է իւր մարդուն, որչափ եթէ բողոքէի երկրի ձգողական ոյժի դէմ: Արեմն ի՞նչ: Հաշտեմ ապա կարգի հետ: Ի՞նչ օգուտ «հաշտում եմ» դատարկ, ողորմելի ու անմիտ խօսքից, երբ որ էութեանս մէջ հաշտութեան հիւլէ անգամ չը կայ: Երբեմն սիրտս ասում է զլուսս առնեմ գնամ այստեղից, բայց շատ լաւ գիտեմ, որ աշխարհքս առանց այդ կնոջ՝ ինձ համար նոյնքան նշանակութիւն ունի որքան մահը, այսինքն այնքան որքան չքութիւնը, և որ աւելի է, ասածուց գիտեմ, որ չեմ գնալ, որովհետեւ մէջս այնքան ոյժ չի գտնւիլ: Յաճախ դրեթէ բոլորովին պարզել է գիտակցութեանս համար, որ մարդկային թշաւութիւնը կարող է աւելի մեծ լինել քան մարդկային զաղափարը նրա մասին և որ կարող է այնպիսի դրութիւն լինել, երբ թշաւութեան վերաբերեալ մոտածմունքները վերջանում են, իսկ թշաւութիւնը ինքը ծովի նման սփռւում է հեռու և հեռու: Այժմ ինձ թւում է թէ նաւում եմ այդ ծովում:

Եւ սակայն՝ ո՛չ: Կայ մի բան, որ դեռ մնում է ինձ: Մի ժամանակ կարդացել եմ Ամելյոյի յիշատակարանում, որ գործը՝ թանձրացած ու այգալիսով նիւթեղէն դրութեան հասցրած միտք է: Բայց միտքը կարող է մնալ վերացական դրութեան մէջ, իսկ զգացմունքը՝ ո՛չ: Տեսականորէն այդ առաջ էլ գիտէի, սակայն միմիայն այժմ ինձ վրայ ստուգեցի այդ ճշմարտութիւնը: Պոշով վերադառնալու ժամանակից մինչև այս բոլէն ոչ մի անգամ պարզ ու որոշ չեմ ասել ինքս ինձ, թէ փափագում եմ գրաւել Անեկայի փոխադարձ սէրը, բայց այդ միմիայն խօսքերի հարց է եղել: Իսկապէս գիտէի, որ ուզում էի և ուզում եմ այդ: Իւրաքանչիւր հայեացքս, իւրաքան-

չիւր խօսքս, բոլոր վարմունքներս միմիայն այդ նպատակին էին ձգտում: Այն զգացմունքը, որ հոմանիշ է բաղձանքի ու գործի հետ— ոչինչ է: Թող ուրեմն այդ խօսքը արտասանւի— ուզում եմ: Ուզում եմ Անեկայի համար դառնալ ամենացանկալի ու ամենասիրելի էակ ինչպէս որ նա է ինձ համար. ուզում եմ տիրանալ նրա սէրին, նրա բոլոր մտածմունքներին, նրա հոգուն, և միտք չունիմ սահման դնել ցանկութիւններին. ինչ թելադրի սիրտս կ'անեմ և կ'օգտուեմ ամեն տեսակ միջոցներից, որ իմ խելքս ազդու կը համարի, որպէս զի գրաւեմ նրա սէրը: Կրօնից կու ձեռքից կը խլեմ Անեկայի այնքան մասը՝ որքան կը կարողանամ և ամբողջապէս կը խլեմ, եթէ Անեկան ինքը համաձայն լինի: Այդպիսով այսուհետեւ նպատակ կ'ունենամ կեանքումս, կ'իմանամ թէ ինչու եմ զարթնում առաւօտեան, ինչու եմ ուտում ցերեկով, ինչու եմ կազդուրւում քնով: Կատարելապէս բախտաւոր չեմ լինիլ, որովհետեւ դրա համար հարկաւոր կը լինէր ոչ միայն ամբողջապէս տիրանալ Անեկային, այլ և վրէժ հանել Կրօնիցից, որ մի ժամանակ տէր է եղել նրան, — սակայն մի բան կը լինի, որով կարող կը լինեմ ապրել: Իմ փրկութիւնը նրանումն է: Եւ այդ՝ այս բոլորիս կացացրած վճիռ չէ, այլ միմիայն բառացի սահմանումն այն բոլոր ոյժերի, որոնք իրար են զալիս մէջս, այն կամքի ու այն բաղձանքների, որոնք ինձ տոգորող զգացմունքի բնութեան մէջ կան ու նրա էութեան անբաժան մասն են կազմում:

Թող ուր ուզում է կորչի նախապաշարւած, մանրակրկիտ խղճմանաբա: Վախս, թէ Անեկան կ'անբախտանայ՝ եթէ ինձ սիրի, պէտք է տեղի տայ այն ճշմարտութեանը, — աշխարհքի չափ մեծ ճշմարտութեանը, որ հէնց միմիայն սիրոյ գոյութիւնը մարդուս սրտում բոլորովին լիացնում է կեանքը, սնունդ է տալիս կեանքին և միլլիոնապատիկ աւելի գին ունի քան կենսական դատարկութիւնն ու չքութիւնը:

Սրանից արդէն հազար տարի առաջ յայտնի է եղել աշխարհին, որ բարի ու բարոյական է միմիայն այն, ինչ որ պահպանում՝ զօրացնում է կեանքը, իսկ դատարկութիւնն ու չքութիւնը չարի թագաւորութեան մէջ են գտնուում: Այն բոլորին, երբ այդ ազիզ գլուխը դէմ առնի կրծքին, երբ այդ քաղցրիկ շրթունքները հանգ-

չեն իմ շրթունքների վրայ, —բարի և ճշմարիտ գործ կը կատարուի։ Ուղեղս սքողող կասկածների մէջ միմիայն այդ ճշմարտութիւնն է պայծառ փայլում, —միմիայն դրա վերաբերմամբ կարող եմ ասել՝ հաւատում եմ, որ այդպէս է։ Վերջապէս կեանքումս մի հաւատի բան գտայ։ Լաւ գիտեմ ինչ ահագին տարբերութիւն կայ այդ իմ հաւատի և այն գորշանոց պայմանական բարոյագիտութեան մէջ, որ յօրինւած է մարդկանց մեծամասնութեան առօրեայ գործածութեան համար։ Ղիտեմ որ Անեկայի համար էլ այդ՝ օտար ու սարսափելի աշխարհ կը լինի, բայց կը բռնեմ ձեռիցը ու կը տանեմ նրան այդ աշխարհը, որովհետեւ կը կարողանամ անկեղծ համոզմունքով ասել նրան՝ այնտեղ է բարին և ճշմարիտը։

Այդ տեսակ մտածմունքները ոյժ են տալիս ինձ։ Սակայն օրուայ մեծ մասը ինձ համար վատ անցաւ, որովհետեւ զգում էի, որ անգոր եմ այն պայմանների առաջ, որոնց մէջ գտնւում ենք ես ու Անեկան։ Մտքովս մինչև անգամ այն էլ էր անցնում, թէ զուցէ նա սիրում է Կրոմիցկուն։ Բարեբախտաբար կէսօրից չետոյ բժշկի Խլաստովսկին եկաւ և ընդհատեց այդ ենթադրութիւններն ընթացքը։ Նա Պլոշովից եկել էր խորհուրդ անելու զլսաւոր բժշկի հետ, որ առաջ հրաւիրւած է եղել պանի Յելինային այցելելու, և այժմ Պլոշով վերադառնալուց առաջ եկել էր ինձ տեսութեան։ Ասաց, որ պանի Յելինան էլի այնպէս է ինչպէս առաջ, բայց պանի Կրոմիցկայի զլուխը առաւօտեանից սաստիկ ցաւելիս է եղել, այնպէս որ նա առաւօտեան թէյին դուրս չի եկել։

Վերջը սկսեց երկար ու բարակ խօսել Անեկայի մասին և ես ուրախութեամբ ականջ էի դնում նրան, որովհետեւ այդ ինձ համար մասամբ փոխարինում էր Անեկայի ներկայութիւնը։ Ասեմք՝ նա խօսում էր թէպէտ երիտասարդ, բայց խելացի մարդու պէս։ Ասաց որ ինքը առհասարակ թերահաւատութեամբ է վերաբերում մարդկանց, ոչ այն պատճառով, որ այդ տեսակէտը միակ իրաւացին է համարում, այլ որովհետեւ կարծում է թէ այդպիսով մարդ աւելի ապահով կարող է լինել։ Բայց գալով պանի Կրոմիցկային կարծում է, որ կարող է ամենայն վստահութեամբ դասել նրան ամեն տեսակէտից բարձր բնաւորութիւնների շարքը։ Անեկայի մասին այնքան ոգևորւած էր խօսում, որ մի րոպէ մտքովս անցաւ,

Թէ, սրտի խորքում դէպի նա հիացմունքից աւելի բան է զգում:

Այդ ենթադրութիւնը ինձ ամենեւին տհաճութիւն չը պատճառեց, երևի այն պատճառով, որ գիտէի Թէ ինչ ահագին տարածութիւն է բաժանում այդ երէկեան ուսանողին ու Անելկային: Բնդհակառակը սրտումս շնորհակալ էի նրանից, որ այդպէս լաւ հասկացել է Անելկային ու աւելի երկար պահեցի նրան ինձ մօտ, որովհետեւ բացի այդ նրա հետ խօսելս ինձ չէր թողնում տխուր մտածմունքների մէջ ընկնել: Խօսակցութեան մէջ հարցրեցի նրանից, ի՞նչ է մտադիր անել ապագայում: Պատասխանեց, Թէ նախ և առաջ պէտք է մի քիչ փող յետ քցի արտասահման գնալու ու այնտեղի հիւանդանոցներում պարապելու համար, յետոյ կը վերադառնայ ու կը հաստատուի Վարչաւայում:

— Ի՞նչ էք հասկանում Վարչաւայում հաստատուել ասելով:

— Գիտնական պարապմունք մի որ և է հիւանդանոցում և, եթէ հնարաւոր լինի, մասնաւոր պրակտիկա:

— Երևի կը պսակէք էլ:

— Դրա ժամանակն էլ կը գայ, բայց ոչ իսկոյն և եթէ:

— Այո՛, ոչ իսկոյն, այլ երբ որ սէր զարթնի սրտներումդ ու գերի դարձնի ձեր կամքը: Դուք իբրեւ բժիշկ գիտէք ի հարկէ, որ սէրը Ֆիզիոլոգիական պահանջ է:

Սակայն, ինչպէս երևում էր, պան Խաւստովսկին ուզում էր մարդկային թուլութիւններից բարձր և լուրջ ու կորովամիտ մարդ համարել, ուստի Թափ տւեց լայն ուսերքը, ձեռքով սղալեց տակնը՝ հանց խուզած մազերը ու ասաց.

— Ընդունում եմ որ պահանջ է, բայց պէտք եղածից աւելի նշանակութիւն չեմ ուզում տալ նրան: Չը կայ այնպիսի պահանջ, որ անկարելի լինէր զսպել:

Այդ ասելով նա յաղթական կերպով ժպտաց, բայց ես լուրջ պատասխանեցի նրան.

— Եթէ մի քիչ աւելի խորը նայելու լինենք այդ հարցի վրայ, Թերեւս գտնէք այն եզրակացութեան, որ բացի սէրից չը կայ մի ուրիշ բան, որի համար արժէր ապրել:

Խաւստովսկին մի բոպէ միտք արեց.

— Ո՛չ. շատ ուրիշ բաներ կան, մի Թէկուզ գիտութիւնը, Թէ-

կուզ հասարակական պարտականութիւնները: Պսակելու դէմ խօսք չունեմ,—մարդ պէտք է պսակւի թէ իւր համար, թէ զաւակ ունենալու համար,—որովհետեւ այդ էլ հասարակական պարտականութիւն է: Բայց ամուսնութիւնը ուրիշ բան է, անվերջ սիրահարութիւնը՝ ուրիշ:

—Այսինքն ի՞նչ էք ուզում ասել:

—Այն, որ մենք միջիւնանոց շինող միջիւններ ենք: Մենք, աշխատաւոր մարդիկս, ժամանակ չունենք կեանքներիս մեծ մասը կանանց ու սիրահարութեան նւիրելու: Այդ լաւ է այն մարդկանց համար, որոնք կարող են ոչինչ չ'անել կամ որոնք ուրիշ ոչինչ չեն ուզում անել:

Այդ ասելով նա նայեց ինձ վրայ իբրեւ այնպիսի մարդ, որ խօսում է ազգի ամենակորովի անդամների անունից և խօսում է թէ զօրաւոր կերպով թէ խելացի: Մի տեսակ զւարճութեամբ էր նայում մարդկային ցեղի այդ առողջ օրինակի վրայ և խոստովանում եմ՝ որ, եթէ չը հաշւենք մի քիչ պատանեկական, զրեթէ աշակերտական անձնապատասխանութիւնը, նրա ասածը բոլորովին յիմար բան չէր: Ճիշտ է, որ կինը և սէրը ոչ միայն այս աստիճան ահագին, այլ և սրա կէսի չափ դեր չեն խաղում աշխատաւոր մարդկանց կամ լուրջ ծրագիրներ, լուրջ նպատակներ ունեցող մարդկանց կեանքում: Գիւղացին պսակւում է, որպէս զի կին ունենայ ու տուն ու տեղ դնի: Խկապէս նա քիչ է ընդունակ խոր զգացմունքներով զգացւելու, թէև բանաստեղծներն ու վիպասանները հաւատացնում են թէ ընդհակառակն է: Գիտնականը, պետական մարդը, զօրավարը, քաղաքական գործիչը իրանց կեանքի ամենաչնչին մասն են նւիրում կնոջ: Միայն արտիստներն են բացառութիւն կազմում: Սիրելը նրանց արհեստն է, որովհետեւ եթէ սէրն ու կինը չը լինէին՝ գեղարւեստ էլ չէր լինել: Խսկ ընդհանրապէս կինը բացարձակ իշխում է միմիայն հարուստների շրջաններում, ուր լիքն են այնպիսի մարդիկ, որոնք փախչում են աշխատանքից: Նա կատարելապէս լիացնում է այդպիսիների կեանքը. — իշխում է նրանց բոլոր մտածմունքներին, դառնում է նրանց բոլոր վարմունքների շարժաւիթը, ձգտումների միակ նպատակը: Եւ այլապէս չի կարող լինել: Մէկը հէնց ես: Ինձ շրջապատողները ճիշտ

է շատ էլ հարուստ չեն, բայց ես անձամբ բաւական ունեւոր մարդ եմ: Սակայն ինչպէս եմ օգտուել հարստութիւնիցս, — երբէք ոչ մի բան չեմ արել, այնպէս որ կեանքումս որոշեալ նպատակ ոչ ունեցել եմ, ոչ էլ ունեւոր Գուցէ այդպէս չը լինէր եթէ որ Անգլիացի կամ Գերմանացի ծնւած լինէի, բայց ինձ վրայ, բացի այդ, ծանրանում էր այն նախնական մեղքը, որ կոչւում է՝ «l'improductivité slave»: Արդի քաղաքակրթութեան քաղաքիչ գործոններից ոչ մէկը չէր զբաւում ինձ ու չէր լիացնում հոգիս այն հասարակ պատճառով, որ այդ քաղաքակրթութիւնը ուժասպառ ու սկեպտիկականութեամբ սողորւած քաղաքակրթութիւն է: Եթէ նա ինքը զգում է, որ իւր վերջն եկել է, և կասկածով է վերաբերւում ինքն իրան, դժւար է պահանջել, որ ես հաւատ զգամ դէպի նա ու կեանքս նւիրեմ նրան: Այդպիսով ընդհանրապէս ապրել եմ իբրեւ օդում անկախ դրութեան մէջ գտնուող մարդ, որովհետեւ չեմ կարողացել կաշել գետնից: Եթէ որ չոր ու ցամաք մարդ լինէի ու գորտի արիւն ունենայի կամ թէ շատ չիմար ու անասնաման զգայասէր լինէի, կը սահմանափակէի կեանքս բուսական գոյութեամբ կամ անասնական պահանջների բաւարարութեամբ և մի կերպ կ'ապրէի, բայց բոլորովին հակառակը եղաւ: Հետո աշխարհք եմ բերել աշխոյժ միտք, անգուսպ բնաւորութիւն և արտակարգ կենսական ոյժեր: Այդ ոյժերը պէտք է մի ելք գտնէին և կարող էին գտնել միմիայն սիրոյ մէջ: Ուրիշ ոչինչ չէր մնում ինձ: Գիտակցում եմ այդ և հպատակւում եմ, որովհետեւ զուր կը լինէր կուել այդ ոյժի զէմ: Սէր դէպի կինը — ահա իմ կեանքի միակ «raison-d'être»-ը, միակ հիմքը: Իմ անբախտութիւնս ամբողջապէս նրանումն է կայանում, որ իբրեւ հիւանդոտ քաղաքակրթութեան զաւակ՝ ծուռ եմ մեծացել, — իմ զգացած սէրն էլ ի հարկէ չէր կարող ծուռը չը լինել:

Գաղափարների պարզութիւնը ինձ բախտաւորութիւն կը տար, բայց չ'արժի դրա մասին խօսել: Իւրաքանչիւր կուզ մարդ կը կամենար ազատուել իւր կուզից, բայց չի կարող, որովհետեւ կուզ է եղել արդէն մօր արգանդում: Այդպէս էլ իմ կուզերս յառաջացրել է ինձ աշխարհ բերող դարի ու քաղաքակրթութեան արգանդը: Իսկ ծուռ թէ դուզ՝ միւսնոյն է, պէտք է սիրեմ և ուզում եմ սիրել:

4 մալիսի.

Խեղճս բոլորովին ծառայ է դառնել զգացմունքիս և արդէն
այն կառապանի գերն է խաղում, որի հոգսը միմիայն այն է թէ
կառքը ջարդ ու փշուր չը լինի։ Մի քանի օր է Պոլշովումն եմ և
ինչ որ խօսում ու անում եմ՝ բոլորը միմիայն սիրոյ տակափկա է։
Բժիշկ Խաասովսկին շատ խելօք բան է արել, որ Անելկային պատ-
ւիրել է առողջութեան համար զբօսնել պարտէզում։ Նս պատահեցի
նրան այնտեղ այս առաւօտ։ Լինում են բոպէներ, երբ մարդուս
սրտում տարածւող սէրը, թէկուզ բոլորովին գիտակցական սէրը,
արտայայտւում է արտասովոր բուռն կերպով և գրեթէ սարսափ է
ազդում իւր սաստկութեամբ։ Այդպիսի բոպէ էր այսօր այն բոպէն,
երբ որ ծառուղու պտուտանքում տեսայ Անելկային։ Նրբէք նա ինձ
աւելի զեղեցիկ, աւելի տենչալի, աւելի անկասկած ինձ վիճակած
չէր թւացել։ Պա է որ կայ այն՝ աշխարհիս երեսին մի միակ կինը,
որին՝ խորհրդաւոր, գիտնականօրէն դեռ ևս չ'ուսումնասիրւած ոյ-
ժերի զօրութեամբ նախասահմանւած է իրան քաշել ինձ այնպէս
ինչպէս մագնիսը իրան է քաշում երկաթը, զրաւել ինձ, կապել
իրարից, դառնալ ինձ համար միակ նպատակ և բովանդակութիւն
տալ կեանքիս։ Նրա ձայնը, նրա կերպարանքը, հայեացքը զմայ-
լեցնում են հոգիս։ Այսօր որ մօտեցայ նրան՝ ինձ թւում էր թէ նա
իւր մէջ կրում է ոչ միայն իւր սեփական հրապոյրը, այլ և այդ
առաւօտուայ, այդ գարնան, այդ պայծառ եղանակի, այն ճնճղուկ-
ների ու բոցների հրճւանքի հրապոյրը, ուստի և նա ինձ համար
կնոջից աւելի բան է, որովհետեւ բացի այդ՝ ամբողջ բնութեան
զեղեցիկութեան հրապոյրի ու քաղցրութեան մարմնացումն է։ Նւ
մտածեցի ինձ ու ինձ, թէ՛ եթէ բնութիւնը նրան այնպէս է
տեղծել, որ նա ինձ վրայ աւելի սաստիկ է ներգործում քան որ
և է ուրիշ տղամարդու վրայ, կը նշանակի նրան ինձ է նախասահ-
մանել, — և թէ՛ նրա ամուսնութիւնը ոտնակոխ է արել իմ այդ
իրաւունքը։ Ով գիտի, թերեւ աշխարհիս բոլոր անարդարութիւն-
ներն էլ այդպիսի իրաւունքների զանցաւումից են ծագում և այդ
է կեանքի անկատարութեան պատճառը։

Մարդիկ զուր են սէրը՝ աչքերը կապած երեւակացում։ Ընդ-
հակառակը, սիրոյ աչքից չի խուսափում ոչ մի բան, ոչ մի ամե-

նաչնչին մանրամասնութիւն. նա իւր սիրած էակի ամեն բանը տեսնում, նկատում է, միայն թէ այդ բոլոր տեսած ու նկատածը իւր կրակով հալում՝ դարձնում է մի մեծ ու պարզ «սիրում եմ»:

Անելիային մօտենալիս նկատեցի որ՝ աչքերը քնից նոր վեր կացած մարդու աչքերի նման փայլում են, որ՝ նրա դէմքի ու բաց-գոյն չթէ շորի վրայ ընկնում է մատղաշ նշգարիների տերևների միջով թափանցող ճառագայթների զեղնաւուն—կանաչ շողքը. բացի այդ նկատեցի որ՝ մազերը անհոգ կերպով են կապած, որ՝ լայն-արձակ բլուզը աննկարագրելի գրաւիչ կերպով է զծագրում՝ նրա գեղեցիկ իրանն ու ուսերքը, որ նրա հագուստի ու սանրաւածքի մէջ առաւօտան անհոգութիւն և միւնոյն ժամանակը մի տեսակ թարմութիւն կայ, որ հազարապատիկ աւելացնում է նրա հրապուրը: Ուշադրութիւնիցս չը խուսափեց և այն, որ՝ այդ բարձր նշգարիների ծառուղիում նրա կերպարանքը (фигура) սովորականից աւելի փոքր է երևում և այնքան ջանէլ, կարծես երեխայի կերպարանք լինի,—մի խօսքով աչքիցս ոչինչ չը փախաւ, բայց բոլոր զիտածներս ի մի ձուլեցին ու դարձան դժի պէս սիրող մարդու յափշտակութիւն:

«Բարի լոյս» — իս շփոթւած պատասխանեց: Մի քանի օր է ինչ ինձնից վախենում է, որովհետեւ իւրաքանչիւր հայեացքովս հիպոսահար եմ անում նրան: Միտքը արդէն սկսել է պտտուել, խմորը թափանցել է հոգին: Ձէր կարող չը նկատել, որ ես սիրում եմ իրան, բայց միւնոյն ժամանակը պարզ տեսնում եմ, որ կը մեռնի ու մինչև անգամ ինքն իրան չի խոստովանել, թէ այդպիսի բան է անցնում մտքովը: Երբեմն-երբեմն այնպիսի տպաւորութիւն եմ կրում, կարծես ձեռումս աղաւնի բռնած լինեմ ու մատներիս տակին զգալիս լինեմ նրա ահաբեկւած սրտի անհանգիստ բաբախումը: Առաջ էինք գնում այլայլած ու լուռ և ես զիտմամբ չէի ընդհատում լուրթիւնը: Գիտեմ որ այդպիսի այլայլութիւնները նրա համար շատ ծանր են, բայց նրան մատամբ ինձ մեղսակից են դարձնում ու ինձ մօտեցնում են նպատակիս: Մեր շուրջը տիրող խաղաղութեան մէջ լսում էինք միայն մեր ոտների տակի աւազի խշխշոցը ու ամեն ծառ ու թուփի միջից հնչող՝ սարեկների ուրախ շուշուրոցը: Վերջապէս խօսակցութիւն բաց արեցի: Ինչ ուղղութիւն ու-

զուժ էի՝ տալիս էի խօսակցութեանը, որովհետև թէև միտքս անմատոյց էր զգացածիս հետ կապ չունեցող արտաքին ազդեցութիւնների համար, սակայն միւս կողմից սէրիս սահմաններում գրեթէ կրկնապատիկ յուշառ էի ու այնքան սրախոհ, որքան լինում են մագնիսական քուն մտած մարդիկ, որոնք որոշեալ ուղղութեամբ աւելի պարզ են տեսնում քան կանոնաւոր մարդիկ: Շատ շուտով անցանք անձնական խնդիրների: Իմ մասին խօսում էի այն մտերմական վստահութեան տոնով, որով մարդ առհասարակ խօսում է ամենասրտակից հակի հետ, որը միակ ամբողջ աշխարհում իրաւունք ունի գիտէնալ ամեն ինչ: Այդպիսով մեր մէջ ծագում էր համախոհութեան ու համերաշխութեան մի ամբողջ աշխարհ, որ միմիայն մեր-երկուսիս էր պատկանում: Իսկ քանի որ այդպիսի կապ պէտք է, ամոսնութեան պատճառով, գոյութիւն ունենար միմիայն նրա ու իւր մարդու մէջ, կը նշանակի զբանով ես նրան աննկատելի մանր քայլերով տանում էի դէպի հոգեկան անհաւատարմութիւն:

Սակայն Անելիայի նուրբ հոգին բնազդմամբ զգում էր, որ ինչ որ անսովոր ճանապարհով ենք գնում: Կարծես ձեռիցը բռնած քիչ-քիչ առաջ էի տանում, բայց տանելիս զգում էի մի տեսակ բարոյական դիմադրութիւն: Շատ լաւ հասկանում էի և այն, որ հենց որ աւելի ուժեղ ձգէի նրան կամ հենց որ վտանգները զադարէին այդ աստիճան աննշմարելի լինելուց՝ դիմադրութիւնը խկոյն կը սաստկանար: Բայց պարզ տեսնում էի, որ առաւելութիւնն իմ կողմս է և ուր ուղեմ՝ կամաց-կամաց կը տանեմ նրան:

Այդ միջոցին ես դիտմամբ խօսում էի անցեալի մասին:

— Յիշում ես, — ասացի, — ինչպէս այն երանելի ժամանակները մի օր հարցնում էիր ինձնից, ինչու հայրենիքում չեմ ապրում ու թողնում եմ զուր կորչեն այն ընդունակութիւնները, որ իմ մէջ տեսնում են մարդիկ: Գալով ինձ, ես յիշում եմ քո բոլոր խօսքերը: Այդ այն օրն էր, երբ ես ուշ վերադարձայ քաղաքից, իսկ դու ապաստում էիր իմ վերադարձին.... Ասել չեմ կարող, թէ որքան մեծ ազդեցութիւն ունէիր դու ինձ վրայ: Չը կարողացայ խկոյն մի գործի կ'պչել, որովհետև պէտք է գնայի այստեղից, իսկ չեմ ոչ հալըս մեռաւ.... Բայց քո խօսքերը տպաւորւել էին սրբաւոր և անկեղծօրէն պէտք է ասեմ քեզ, որ և թէ վերադարձայ,

եթէ մտադիր եմ ընդ միշտ բնակութիւն հաստատել այստեղ ու մի գործով պարապել, եթէ վերջապէս մի բան անեմ,—քո ազդեցութեամբն է ու քո արժանիքն է համարւելու....

Բաւական ժամանակ լռութիւն էր տիրում մեր մէջ,—լսում էր միայն սարեկների անվերջ շըշըտը: Անելկան, երևում էր, պատասխան էր փնտռում: Վերջապէս նա ասաց.

—Հաւատալու բան չէ, որ քեզ պէս մարդը այն բոլորն անելու ուրիշ՝ աւելի կարեւոր շարժառիթ չ'ունենար: Դու ինքդ շատ լաւ գիտես, որ այդ՝ ամեենքիս պարտականութիւնն է, իսկ անցանցած-գնացած բան է, այժմ ամեն ինչ փոխւել է:

—Համ փոխւել է՝ համ չի փոխւել,—պատասխանեցի ես: Գուցէ երբ որ սկսեմ մի գործով պարապել, ժամանակով տաքսնամ գործիս վրայ, սիրեմ պարապմունքս, բայց ինձ նման մարդը, որ չը նայելով քո ասածին, երբէք պարտականութիւն չի զգացել մի որ և է գործով պարապելու, պէտք է որ և է անձնական շարժառիթ ունենայ, որպէսզի հիմնովին փոխի իւր կեանքը.... Եւ ինչքան դաւը լինի բախտը, այնքան աւելի անհրաժեշտ է նրան այդպիսի անձնական շարժառիթ.... Ինչո՞ւ պէտք է քո տուջ ստեմ.... Ես ամենևին բախտաւոր չեմ.... Հասարակական պարտականութիւններ զգալը շատ լաւ բան է, դժբախտաբար ես զուրկ եմ այդ զգացմունքից: Դու, որ ինձնից հազար անգամ բարձր ու ազնիւ ես, կարող էիր ինձ սովորեցնել այդ պարտականութիւնները զգալ.... բայց բանը ուրիշ կերպ գնաց.... Սակայն հենց այժմ էլ, եթէ մի որ և է գործ կատարելու լինիմ, այդ միմիայն քո շնորհիւ է լինելու, միմիայն անցնի բանի շնորհիւ է լինելու, որ չիշում եմ, թէ դու մի ժամանակ ինձնից գործ էիր պահանջում:

Անելկան քայլերն արագացրեց, կարծես ուզում էր իսկոյն յետ դառնալ սուն, և պատասխանեց ինձ գրէթէ շըշնջալով.

—Այդպէս մի խօսիլ, Աճօն, խնդրում եմ, այդպէս մի խօսիլ: Դու ինքդ պէտք է լաւ իմանաս, որ այդպիսի զիտումներ ես ընդունել չեմ կարող:

—Ինչո՞ւ չես կարող: Ասածս սխալ ես հասկանում: Դու ինձ համար ամենասիրելի քոյր ես ու քոյր էլ կը մնաս միշտ: Ասածս միայն այդ էր:

Անելկան գրեթէ տենդային կերպով մեկնեց ինձ ձեռքը, որ ես կամաց ու ամենախորին ակնածութեամբ մօտեցրի շրթունքներին:

— Հնա, կը մնամ, միշտ կը մնամ, — շտապով պատասխանեց նա: Տեսայ, որ հենց իմանաս մի ահագին քար գլորեց կրճքի վրայիցը, — ան աստիճան հանգստացրեց, գրաւեց սիրտը ու յուզեց մի «քոյր» խօսքը: Դրա շնորհիւ ինձ էլ յաջողեց խելքս գլուխս հաւաքել, թէ չէ առաջին թուական, երբ շրթունքներս կպան նրա քաղցր ձեռքին, աչքերս համարեա շաղկեցին և սիրտս ասում էր գրկէի նրան, սեղմէի կրճքիս ու ինչ կայ՝ չըկայ՝ ճիշդը յայտնէի:

Մինչ այդ՝ Անելկայի դէմքը սպարզեց ու զւարթացաւ: Քանի մօտենում էինք տանը, նրա անհանգստութիւնը անցնում էր, իսկ ես տեսնելով որ այդպիսով նրա սիրտը սաստիկ գրաւում եմ, շարունակեցի հանդարտ ու սովորական խօսակցութեան տոնով:

— Չը գիտես, քոյրիկս. իմ շուրջը ամացութիւն է տիրում: Հայրըս կենդանի չէ, հօրաքոյրս սուրբ կին է, բայց մենք զժւար կարող ենք իրար հասկանալ, որովհետեւ նա ոչ նոր ժամանակի ոգին է հասկանում, ոչ նոր մարդկանց: Նրա զաղափարները բոլորովին տարբեր են իմ զաղափարներից: Ես երբէք չեմ սլսակելու, մտածիր՝ տես, որքան միայնակ եմ ես: Չորս կողմն ոչ ոք չը կայ: Ո՛չ ոք, որին կարողանայի հաղորդել մտքերս, զիտաւորութիւններս, որին պատմէի զարդերս... Ամայի անապատ ու դառարկութիւն... Այժմ՝ ինքդ ասա, ինչ զարմանալու բան կայ, որ համակրութիւն եմ փնտռում այնտեղ, ուր կարող եմ դանել... Անդամայոյժ աղքատի նման մի բան եմ, որ դռան մօտ կանգնած սպասում է, թէ զուցէ մէկը դուրս գայ ու մի սև գրօշ տայ իրան: Այժմ այդ աղքատը, այդ ողորմեցիկ աղքատը կանգնած է քո պատուհանի տակ և աղաչում, խնդրում է քեզնից մի փոքր բարեացակամութիւն, մի տերմութիւն ու գութ: Նրա մոքումը բացի ողորմութիւնից ոչինչ չը կայ և դու ի հարկէ չես մերժիլ նրա խնդիրքը, ճանապարհ չես դնիլ առանց ողորմութեան, չէ:

— Ո՛չ, չեմ մերժիլ, Լէօն, — պատասխանեց Անելկան, — չեմ մերժիլ. մանաւանդ որ, եթէ այդքան դառն է դրութիւնդ...

Այդ խօսքի վրայ ձայնը խեղդեց բզումը ու շրթունքները սկսեցին դողալ: Ղարձեալ պէտք է բոլոր ոյժերս լարէի, որպէսզի զսպէի ինձ ու չ'ընկնէի նրա ոտները: Նրան նայելով այն աստիճան յուզեցի, որ իմ բուգս էլ սկսեց խեղդել կարծես արտասուքից:

— Անելկա, Անելկա, — բացագանչեցի ես, չ'իմանալով ինչ ասէի նրան:

Բայց նա սկսեց ձեռքերը թափ տալ, կարծես ուզում էր ինձ հեռացնել իրանից ու յետոյ լացակրկնած ասաց.

— Այս ըոպէիս, այս ըոպէիս.... կը հանգստանամ: Ձեմ՝ կարող այսպէս նեքսե գնալ.... թող երթամ...

Ու արագ-արագ հեռացաւ:

— Ներիր ինձ, Անելկա, — ձայն տւեցի յետեւից:

Սկիզբն ուղեցի վազել՝ յետեւիցն հասնել, բայց յետոյ մտածեցի՝ տեսայ, որ պէտք է նրան մենակ թողնել, ու միայն հայեացքովս հետեւեցի նրան: Նա շտապ-շտապ յետ դարձաւ այն ծառուղին, ուր մենք առաջ զբօսնում էինք, յետոյ ծռեց ճանապարհը:

Նրբեմն թաւուտը ծածկում էր նրան, երբեմն նրա բացգոյն հագուստը նորից երևում էր ծառերի արանքում՝ արևի առաջին վառ փայլելով: Հեռւից տեսնում էի, ինչպէս անդադար բաց ու խուփ էր անում հովանոցը, ականբեւաբար ցանկանալով այդ Փիզիկական զբաղմունքով փարատել սրտի յուզմունքը: Այդ ժամանակ ես նրա զլխին թափում էի հազար ու մի քաղցր խօսքեր, — խօսքեր, որ թելադրում էր ինձ սէրը: Զը կարողացայ յաղթել ինձ ու հեռանալ, մինչև որ մէկ էլ չը տեսայ նրա երեսը, սակայն դրա համար ստիպւած եղայ երկար սպասել: Վերջապէս վերադարձաւ, բայց իմ կողքովը շատ արագ-արագ անցաւ, կարծես վախենալով, որ նորից յուզւի: Միայն՝ անցնելիս նայեց ինձ ու հրեշտակային մտերմութեամբ ու քաղցրութեամբ ժպտալով ասաց.

— Այժմ լաւ եմ, լաւ եմ:

Արդարև՝ արագ ման գալուց կարմրած երեսին արտասուք չէր երևում:

Մենակ մնացի և յանկարծ խենթի ուրախութիւն եկաւ վրաս, սիրտս լցւեց յոյսով, զլխումս միայն մի միտք էր մնացել, — նա

ինձ սիրում է.—պաշտպանում է, զիմադրում է ինքն իրան խաբում է, բայց սիրում է: Երբեմն բոլորովին խեղճ զլիսն մարդն էլ բուռն զգացմունքի ներքոյ զրեթէ խելագարութեան սահմանումն է լինում, իսկ ես այնքան մօտ էի այդ սահմանին, որ քիչ էր մնում վաղ տալի պարտէզի խորքը, թաւալէի խոտի վրայ ու բարձրաձայն աղաղակէի, թէ նա ինձ սիրում է:

Այժմ որ հանգիստ սրտով միտք եմ անում այդ ուրախութեան վրայ, տեսնում եմ, որ նա՝ Աստուած միայն գիտէ թէ որքան տարրերից է բաղկացած: Ի միջի այլոց կար և հրճանք արեւսաագէտի, որ զգում է թէ իւր գլուխ-գործոցը գլուխ է գալիս, կար թերեւ և զւարճութիւն սարդի, որ հաւատացած է, թէ ճանճը կ'ընկնի իւր ոտայնը, բայց կար և՛ բարեհոգութիւն և՛ գութ և՛ գորով և՛ այն ամենը, որ տեսնելով, ինչպէս ապում է բանաստեղծը, հրեշտակները երկնքում ուրախանում են: Խեղճս գալիս էր, որ այդ անգէն խեղճ կինը պէտք է ընկնէր իմ ձեռքս ու միւսնոյն ժամանակը այդ խղճալս աւելի սաստկացնում էր սէրս և հետեւեալ Անեկային տիրապետելու ցանկութիւնս. միաժամանակ թէ խղճահարւում էի, որ նրան խաբում եմ և թէ զգում էի, որ կեանքումն երբեք այդ աստիճան անկեղծ ու սրտիս խորքից չեմ խօսացել:

Ես հօ նրան չէի խաբում, որ համակրութիւնն ու մտերմութիւնն էի խնդրում: Այդ էլ ինձ առողջութեան պէս անհրաժեշտ է: Միայն թէ բոլոր ցանկութիւններս չը յայտնեցի, որովհետեւ դեռ դրա ժամանակը չի եկել. ճշմարտութիւնը ամբողջովին չը յայտնեցի որպէսզի չը սարսափեցնէի այդ քաղցր, բայց վախկոտ սիրտը: Ինչ և իցէ զիմում եմ դէպի իմ ու նրա երջանկութիւնը այն ճանապարհով, որ ամենաուղիղ կերպով է տանում հասցնում այդ երջանկութեանը:

10 մալխի.

Դրսւել արեւ-արեքայութիւն է, արեւ-արեքայութիւն է և իմ ու Անեկայի մէջ: Անեկան հանգիստ է և երջանիկ: Խորին կերպով հաւատացել է իմ այն խօսքերին, թէ իմ զգացածս միայն եղբայրական սէր է, և քանի որ խիղճը թոյլ է տալիս նրան սիրել

ինձ իբրև քոյր, սրտին ազատութիւն է տւել: Ես զիտեմ, որ այդ միմիայն՝ ինքն իրան ու մարդուն խաբելու ազնիւ ձև է, որովհետև այդ քոյր սիրոյ դիմակի տակ թաղնւած է ու աճում է բոլորովին ուրիշ զգացմունք. բայց ի հարկէ ես նրա աչքը բաց չեմ անիլ՝ մինչև որ այդ զգացմունքը անդիմադրելի չը դառնայ... Շուտով նրա սիրտը կը բորբոքւի սիրոյ բոցով, որ չեն կարողանալ հանգցնել ոչ կամքի ոյժը, ոչ պարտականութեան զգացմունքը, ոչ էլ այդ աղանանման մաքուր կնոջ ամօթխածութիւնը: Իսկ մինչ այդ՝ ես էլ ինձ լաւ եմ զգում, այնքան լաւ, որ երբեմն ինձ թւում է, թէ կարող եմ էլ ոչինչ փափագ չունենալ՝ միայն այն պայմանով, որ ոչ ոք ոչ մի իրաւունք չունենայ նրա վրայ: Գլխիցս սկի չի հեռանում այն միտքը, թէ քանի որ ես ամենքից աւելի եմ սիրում նրան, կը նշանակի իմ իրաւունքս նրա վրայ՝ բոլորի իրաւունքից բարձր է: Դրանից էլ աւելի տրամաբանական ու արդարացի ինչ կարող է լինել: Զէ որ բոլոր ազգերի ու բոլոր կրօնների բարոյագիտութեան մէջ այդ ու կնոջ փոխադարձ պատկանումը հիմնւում է սիրոյ զգացմունքի վրայ:

Բայց այսօր ես այնքան անդորր ու երջանիկ եմ, որ ուզում եմ միայն զգալ, չեմ ուզում խորհրդածել: Այժմ մեր մէջ վերին աստիճանի սրտագին, ազատ ու մտերիմ յարաբերութիւն է հաստատուել: Սակայն ինչ աստիճան մենք իրար համար ենք ստեղծւած եղել, ինչպէս մեր հուլիւնները ձգտում են մէկը զէպի միւսը, ինչպէս խեղճը տաքանում ու հրճւում է եղբայրական զգացմունքների այդ հրապուրիչ ջերմութեան մէջ: Ինչ արտասահմանից վերադարձել եմ՝ երբէք նրան այսքան ուրախ չեմ տեսել: Առաջ նրան նայելիս յաճախ մտաբերում էի Շեքսպիրի «Poor Tom»-ին ¹⁾: Անելկայի բնաւորութիւնը այնպիսի բնաւորութիւն է, որի համար սէրը այնքան անհրաժեշտ է որքան օդը մարդու համար, իսկ սպեկուլացիաներով զրաււած Կրոմվիլին այնքան չի սիրում նրան, որքան պէտք է, և ընդունակ էլ չէ սիրելու: Անելկան իրաւամբ կարող էր դանդատուել ու կրկնել Շեքսպիրի խօսքերը՝ «Խեղճիկ Տոմը մրսում է»: Այդ որ մտքովս անցնում է չեմ կարո-

¹⁾ «Արքայ Լիր» դրամայից:

ղանում՝ զսպել խոնդաղատանքս և սրտումս խոստանում՝ եմ՝ նրան, որ քանի ես կենդանի եմ՝ նա ցուրտ չի զգալ:

Եթէ որ մեր սէրը վատ բան լինէր, մեր սիրտը այսքան հանգիստ չէր լինիլ: Իսկ թէ Անելկան ղեռ ինքն իրան չի ասել՝ թէ սիրում է, այդ ոչինչ նշանակութիւն չունի, այնուամենայնիւ այդ զգացմունքը կայ նրա սրտումը: Այսօրւայ ամբողջ օրը մեզ համար իդիլիայի պէս անցաւ: Մինչև այժմ՝ կիրակի օրերը չէի սիրում, բայց հիմա տեսնում եմ, որ կիրակին առաւօտից մինչև երեկոյ կարող է մի անընդհատ պօէմա լինել՝ մանաւանդ զիւղում: Թէչից յետոյ իսկոյն գնացինք եկեղեցի՝ թիւ պատարագի: Հօրաքոյրս էլ հետներս եկաւ. մեզ հետ էր մինչև անգամ և պանի Յելինան, որ օգտուելով հրաշալի եղանակից՝ պատուիրեց, որ իրան բազկաթուով տանեն եկեղեցի: Ժողովուրդ քիչ կար, որովհետև ժամաւորները աւելի հաւաքւում են ձայնաւոր պատարագի ժամանակ: Նստարանի վրայ Անելկայի կողքին նստած ժամանակս ինձ թւում էր, թէ իմ նշանածիս կողքին եմ նստած, և ես ինձ երջանիկ էի զգում: Երբեմն-երբեմն նայում էի նրա քաղցր, անպին երեսին, նայում էի ձեռներին, որ դրել էր առաջի նստարանի վրայ, և այն կտարոնացումը, որ երևում էր նրա դէմքից ու բռնած զիւրքից, ակամայ ինձ էլ էր հաղորդում: Կրքերս լռեցին, խորհուրդներս մաքրեցին և այդ րոպէին ես նրան սիրում էի կատարելապէս իդէալական սիրով, որովհետև զգում էի այնպէս՝ ինչպէս երբեք չէի զգացել, որ միանգամայն տարբերում է այն բոլոր կանանցից, որոնց մինչև այդ ժամանակ պատահել էի, որ նա նրանցից հազար անգամ լաւ է ու մաքուր:

Վաղուց չէի զգացել այնպիսի տպաւորութիւններ ինչպէս այդ զիւղական եկեղեցում: Դրա պատճառը շատ բարդ էր, — այդտեղ նշանակութիւն ունէր և՛ Անելկայի ներկայութիւնը, և՛ եկեղեցական հանդիսաւորութիւնը, և՛ ճրագների մեղմ՝ փայլփլոցը սեղանի մթութեան մէջ, և՛ պատուհաններից ներս թափանցող լոյսի գոյն-զգոյն շերտերը, և՛ ճնճղուկների ճռուղիւնը, և՛ խաղաղ ժամասացութիւնը: Այդ բոլորի մէջ ղեռ կար մի տեսակ առաւօտեան քնաթաթախութիւն և բացի դրանից՝ այդ բոլորը քաղցր դրութիւն էր բերում մարդու վրայ: Սրախ խորհուրդները սկսեցին այնպիսի խա-

շաղ ու հանգիստ ընթացք ստանալ ինչպէս սեղանի առջևի բուր-
վառների ծուխը: Սրտումս զարթնեց անձնագոհութեան ցանկու-
թեան նման մի բան և ներքին ձայնը սկսեց ինձ ասել. «Մի պղտո-
րիլ այդ պարզ ջուրը, յարգիր նրա խտակութիւնը»:

Մինչ այդ՝ պատարագը վերջացաւ և մենք դուրս եկանք եկե-
ղեցուց: Ժամի դռանը ես զարմացմամբ տեսայ, որ Նատիշ ծերունի
ու պառաւը գեանին նստած ու փայտէ թասերը բռնած ողորմու-
թիւն են խնդրում: Հօրաքոյրս գիտէր, որ ես նրանց փող եմ տւել
և սաստիկ բարկացաւ ու սկսեց նրանց նախատել, բայց պառաւը,
թասը դէպի մեզ մեկնած պահելով, հանգիստ պատասխանեց.

— Աղան ուզում էր, որ մենք տուն ու տեղ ունենանք, Աստ-
ւած իրան իրա սրտովը տայ, համա Աստծու կամքին հակառակ
չը պէտք է գնալ: Աստւած որ հրամայել է, որ մենք այստեղ նըս-
տենք, մենք պէտք է նստենք ու կը մնանք այստեղ յաւիտեանս
յաւիտենից, ամէն:

Այդպէս մտածողի հետ վիճել չէր կարելի: Եւ մանաւանդ այդ
«յաւիտեանս յաւիտենից ամէն»-ը ինձ վրայ այն աստիճան ազդեց,
որ ողորմութիւն տւեցի հէնց միայն այդ հայեացքի բնուրոյնու-
թեան համար: Հասարակ ժողովուրդը իսկապէս հաւատում է նա-
խասահմանութեանը: Նա կուրօրէն հպատակում է ճակատագրին,
միայն թէ ճակատագրի զաղափարը իւր հասկացողութեամբ քրիս-
տոնէացնում է: Այդ լստիչները ինձնից հազար երկու հարիւր բուբլի
են ստացել ու այժմ աւելի հարուստ են քան երբ և իցէ եղել են,
և սակայն ժամի դռան նստած ողորմութիւն են խնդրում, համոզ-
ւած լինելով, որ այդպէս է որոշել ճակատագիրը, որին պառաւը
Աստծու կամք անունն է տալիս:

Վերադառնում էինք տուն: Մեծ-պատարագի զանգերը տալիս
էին: Տղամարդկանց ու կանանց ահագին բազմութիւն էր գնում
ճանապարհով: Հեռաւոր ագարակների գիւղացիք զալիս էին ար-
տերի միջով, որոնք ծածկւած էին թէև զեռւեւ կանաչ, բայց բա-
ւական բարձրացած հասկերով: Ինչքան տեղ մարդու աչք կտրում
էր, օդեղէն պարզ տարածութեան մէջ երևում էին գիւղացի աղ-
ջկերանց վառ-դագոյն գլխաշորերը, որոնք կանաչում բուսած խաշ-
խաշի գոյնզգոյն ծաղիկների նմանութիւն էին տալիս: Ի միջի այլոց

ասած՝ ամբողջ Եւրոպայում ոչ մի տեղ չը կան անգլիսի ընդարձակ օդեղէն տարածութիւններ, ինչպէս մեզնում: Բացի դրանից իմ ուշադրութիւնը առանձնապէս զրաւեց և ան խիստ աչքի ընկնող տօնային բնաւորութիւնը, որ երևում էր թէ մարդկանց վրայ, թէ արտաքին բնութեան մէջ: Ճիշտ է՝ հրաշալի եղանակ էր, բայց թւում էր, թէ քամին չի փչում նրա համար, որ կիրակի է, արտերը չեն ալէծփում և բարդիները տերեւները չեն երերում նրա համար, որ կիրակի է, որ կողմը նայում էիր՝ տեսնում էիր ուրախ ու զւարթ անդորրութիւն, խաղաղութիւն, տօնօրեայ հագուստներ ու անչափ լոյս:

Անեկային բացատրեցի գեղարեստի տեսակէտից թի ամբողջ տեսարանի և թէ օդի կապուտակ երանգով դաշնակաւորւած այդ գոյնզգոյն բծերի գեղեցկութիւնները: Յետոյ սկսեցինք խօսել գիւղացոց մասին: Պէտք է խոստովանեմ, որ ես նրանց վրայ նայում էի իբրեւ բազմաթիւ աւել կամ պակաս գեղարեստական մոդէլների հաւաքածուի վրայ: Բայց Անեկան բոլորովին այլապէս էր վերաբերւում նրանց: Նա շատ ուրախ ու տխրալի բնորոշ բաներ պատմեց նրանց մասին, խօսելուց և ման դալուց սաստիկ զւարթացաւ ու այն աստիճան զրաւիչ էր այդ միջոցին, որ ականջ սկսեցի, նրա վրայ նայելով, կրկնել վերջին չորս տողերը համալսարանում եղած ժամանակս զրած պօեմայիս, որի մնացեալ մասը բոլորովին մոռացել եմ.

Զարմանում եմ, մանուկ չքնաղ ու սիրուն,

Դու իմ դրախտ ու զարուն,

Որ չեն բնում քո քնքուշիկ ոտքի տակ

Վարդ ու շուշան անուշակ ¹⁾

Խօսքը դարձեալ անցաւ լատիշների կամ աւելի ճիշտ՝ պառաւ լատիշուհու վրայ, որի գաղտնիութիւնների վրայ վերջը բաւական ծիծաղեցինք: Նա սկսեցի պառաւի խօսքերը ինձ սողացնել: Հորաքոյրս մեզնից մի քանի քայլ յետ էր ընկել ու գալիս էր պանի

¹⁾ Այդ ոտանաւորը պ. Ա. Մատուրեանն է թարգմանել:

Ման. թարգմ.

Յելինայի հետ, որին ծառան բաղկաթուով բերում էր յետևից, այնպէս որ ազատ կարող էի խօսել մեր վերջին զբօսանքի մասին:

—Վերջերքս, ասացի, ես քեզնից ողորմութիւն խնդրեցի ու դու ինձ տւեցիր: Այժմ տեսնում եմ, որ այդ ինձ ամենեւին չի պարտաւորեցնում և ես կարող եմ դնալ՝ ժամի դռանը մուրացկանութիւն անել:

—Օհօ, պատասխանեց Անեկան, և ուրիշ՝ ողորմած սիրտ ունեցողից նոյն բանը խնդրել: Հօրաքոյրն ուզում է այդպիսի մի հոգեւորի վաղը Պլոշով հրաւիրել, հասկանում եմ, հասկանում:

Ես ի պատասխան ասացի, որ օրիորդ Հիլտը շատ մեծ է, այնպէս որ մի սիրտ նրան տեղ չի անիլ և պէտք է ամենաքիչը երեք հոգի միասին նրա վրայ սիրահարւեն, բայց Անեկան էլի իւր ասածը շարունակում էր և մատը վրաս թափ տալով՝ կրկնում էր.

—Այդտեղ մի բան կայ, ես կասկածում եմ:

—Այս անգամ բոլորովին անհիմն կերպով, պատասխանեցի ես, որովհետեւ իմ սիրտը միմիայն եղբայրական զգացմունքների պահետ է և նրա մէջ բացարձակ տիրապետում է այն չարասիրտ էակը, որ այժմ ինձ տանջում է:

Անեկան դադարեց մատը թափ տալուց և ծիծաղելուց, բայց ոտը կախ գցեց, այնպէս որ մի քանի րոպէ անցած մերոնք հաւասարեցին մեզ: Սակայն այնուհետեւ էլ իրար հետ շատ լաւ էինք և ամբողջ օրը այնքան ուրախ անցկացրինք, որ յաճախ ինձ թւում էր, թէ ես դեռ գիմնադիստ եմ: Երաւ է՝ աչքերովս ասում էի նրան, որ նրան սիրում եմ, բայց ցանկութիւնը լռել էր իմ մէջ: Այսօր նա այնքան թանկ էր իմ սրտի համար, որ չէի կարող ցանկանալու աչքով նայել նրան: Հօրաքոյրս նախաձաշից յետոյ խնդրեց զնաց Վարչաւա. ես օրւայ մնադած մասը պանի Յելինայի մօտ նստած բարձր ձայնով կարդում էի նրա համար Մոնտալամբերի նամակները, որի հետ հաջրս մի ժամանակ նամակագրութիւն է ունեցել: Այդ նամակները ինձ աստիկ կը ձանձրացնէին, եթէ որ Անեկան էլ մեզ հետ միասին չը լինէր: Գրքիցը աչքերս բարձրացնելով հանդիպում էի նրա հացեացքին, որ սիրտս լցնում էր ուրախութեամբ, որովհետեւ կամ ես խելքս բոլորովին կորցրել եմ կամ թէ չէ՝ նա նայում էր ինձ այնպէս, ինչպէս կարող է նայել անմեղ ու

մաքուր, բայց անզիտակցաբար ի բոլոր սրտէ սիրող կինը: Ինչ քաղցր օր էր այսօր: Հօրաքոյրս երեկոյեան վերադարձաւ ու յայտնեց, որ վաղը հիւր կը գան Մեհառինսկիներն ու Կլաշան:

Արդէն շատ ուշ է, բայց չեմ ուզում քնել, որովհետեւ աստիճանաբար եմ բաժանել այսօրուայ տպաւորութիւններից: Երազը նրանցից քաղցր չի կարող լինել: Բացի այդ՝ պարտէզը թնդում է սոխակների գեղգեղանքներից, իսկ իմ մէջ գեռ կենդանի է հին ռոմանտիկը: Յերեկին յաջորդեց նոյնքան հրաշալի գիշեր: Երկինքը լիքն է աստղերով: Մտածում էի Անեկայի մասին ու մտքումս նրան «բարի գիշեր» էի ասում: Այդ խօսքերը ես մի հարիւր անգամ կրկնեցի: Ինչպէս տեսնում եմ, իմ մէջ բացի «l'improductivité slave»-ից՝ մի տեսակ բացառապէս լեհական սենտիմենտալիզմ էլ կայ: Այդ կողմից մինչեւ այժմ ինքս ինձ չէի ճանաչում: Սակայն այդ ինչ փնաս ունի՝ որ... Շատ-շատ եմ սիրում Անեկային:

(Կը՛շարունակւի)

*
* *

1. Ե Ռ Ե Ն Ց Ի

Բուռն զգացումները եռում, փրփրում են
Իմ ցաւած սրտում,
Սև տըխրութիւնը և տարակուսանքն են
Նըրան խոցոտում:
Տըւէք ինձ հանգիստ, դժբ, ով իմ երգեր
Թէ բուռն, թէ մեղմիկ,
Որ մոռացութիւնն հոգու բազմովէր
Տայ նինջ հանդարտիկ.
Որ մարդի՛նքից խոյս տալով արագ,
Գնամ վայր մենաւոր
Եւ բնութեան դրկում, թռչնի ձայնի տակ
Դայ իմ վերջին օր:

Բայց եթէ պէտք է դեռ ինձ խռովեցնէ
Ազմուկն աշխարհի,
Մարդկան դառն կեանքըն իմ ծագեցնէ
Զայրոյթ վշտալի.
Եթէ տանջանքից խորին ու վրդով՝
Մաշլած կեանքըս սև
Դեռ պէտք է քարշ դայ, որպէս չար հողմով
Քըշլած մի տերև, —
Այն ժամ կռւելու ուժով անսասան,
Սիրո, ինձ զւարթացուր,
Եթէ ոչ, — ո՛վ թոյն, փրկող պալատան,
Հանգիստ դու ինձ տուր:

ՆԱԽԹԱՇՈՋԱՆԻ ԲԱՆԻՈՐՆԵՐԸ

ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿՆԵԱՆԻ

II

Ա. ԲԱՆԻՈՐՆԵՐԸ ՆԱԽԹԱՇՈՐԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Գործիք և մեքենայ—ահա միևնույն հասկացողութեան զանազան աստիճանները: Գործիքը, եթէ կարելի է այսպէս ասել, մեքենայի երկխայական զրութիւնն է: Երկուսն էլ ծառայում են իբրև միջոցներ մարդու ձեռքում մի գործ կատարելու ժամանակ: Աւելի զարգացած լեզուների մէջ «գործիք» (орудіе) խօսքն ընդհանուր հասկացողութիւն է արտայայտում, այդ մոքով մեքենան ևս գործիք է: Բայց մեր լեզւի մէջ, չը կարողացանք զանել (զուցէ կայ) «գործիք» խօսքի մասնաւոր, նեղ արտայայտութիւնը, ինչպէս, օրինակ, եւրոպական լեզուներում «ինստրումենտ» բառը ¹⁾:

Արդիւնաբերական և արդիւնագործական աշխատում ոչ մի բան չի կատարում առանց գործիքների և մեքենաների: Սկսած ամենավաղների ազգերից մինչև ամենաքաղաքակիրթ ժողովուրդները անուսական բոլոր գործերը կատարում են դրանց օգնութիւնով:

¹⁾ Մենք գործ ենք ածում գործի և գործիք բառերը, որոնցից առաջինը՝ միջոցի, ինստրումենտի մոքով: Իւր կազմութիւնով իսկ գործի բառը աւելի պարզ է, ինչպէս որ աւելի պարզ է ինստրումենտի զաղափարը, համեմատութեամբ գործիք բառի հետ, որի լոգնակի ձևն արդէն ցոյց է տալիս իրի բարդութիւնը:

Ձանազանութիւնը ոչ թէ սկզբունքի գործիքներ և մեքենաներ գործածելու մէջն է, այլ միայն նրանց բարդութեան կամ պարզութեան, շատութեան կամ քչութեան մէջ: Մի տեղ գործ է ածուում մանգաղ կամ գերանդի, միւս տեղ հնձող մեքենայ. մի տեղ հոր փորելու համար բանեցնում են հասարակ կացիւններ, բահեր ու բրիչներ, միւս տեղում դուր, լայնացնող բուր և այլն: Արքան ժողովուրդը կուլտուրայի մէջ առաջ է, այնքան նրա գործիքներն ու մեքենաներն աւելի բարդ, աւելի մեծ ոյժ պարունակող և աւելի դժւարամատչելի են առանձին անհատների համար. այնքան աւելի քիչ աշխատող ձեռքեր են հարկաւոր շատ գործեր կատարելու համար այդ մեքենաներով: Ընդհակառակը, որքան աւելի քիչ կուլտուրական է ժողովուրդը, այնքան մեքենաները և գործիքները պարզ են, նոյնքան քիչ ոյժ են փոխարինում նրանք: Բայց բոլոր ազգերի, բոլոր կուլտուրական աստիճանների մէջ գործիքները և մեքենաները ոչինչ են, եթէ մարդու կառավարող խելքն ու աշխատող ձեռքը օգնութեան չեն հասնում նրանց: Այստեղ ևս զանազանութիւնը միայն չափի և գործածութեան ձևի մէջն է. զարգացած ազգերի մէջ աւելի խելք, քիչ Ֆիզիկական ոյժ, ուրեմն և քիչ մարդիկ, չը զարգացածների մէջ քիչ խելք, շատ ոյժ և շատ մարդիկ: Բանը նրանումն է, որ կուլտուրական ազգերը զիտեն օգտուել բնութեան ոյժերից, նրա առարկաների մէջ թագնաւած էներգիայից. զիտեն այն էներգիան, օրինակ, քարածուխի, նաւթի կամ ջրի միջից աղատել, լցնել մեքենաների մէջ և ծառայեցնել այնպէս, ինչպէս յարմար է, ինչպէս ձեռննտու է իրանց համար: Իսկ ոչ-կուլտուրական ժողովուրդն այդ չի իմանում. նրա գործերում զլիւաւոր տեղը բռնում է այն ոյժը, որ անմիջապէս ենթարկւում է իւր կամքին, այսինքն իւր միանների զօրութեանը միայն. նա չը գիտէ տիրել կառավարել բնութեան ոյժերից գոնէ միքանիսին:

Այս բոլորից յետոյ պարզ է ուրեմն, որ աշխատող ձեռքերն ունենալու են անշուշտ իրանց աչքի ընկնող տեղը նաւթային գործերում, չը նայելով, որ այդտեղ գործ են ածուում բազմաթիւ մեքենաներ ու գործիքներ: Այնչէն չը շողշարժները, եթէ բանւորը չի կանոնաւորում նրա շարժումները, ջուր և վառելիք չի մատակարարում և այլն:

Աշխատող ձեռքերն են փորելու գործիքները պաււրաստողն ու կառավարողը, նոյն ձեռքերն են ցեխն ու ջուրը, նաւթն ու աւազը քաշելու օգնողը և այլն և այլն: Մի խօսքով իւրաքանչիւր քայլափոխում բանւոր մարդու ձեռքերն են ամեն տեսակ գործի ու շարժողութեան զրդիչ պատճառը, առանց այդ ձեռքերի — մեռելութիւն և անշարժութիւն:

*
* *

1. Բանւորները փորելո՝ գործո՝

Ամեն մի հոր փորել սխելու օրից մինչև նաւթի հասնելու օրը հարկաւոր են հետևեալ մարդիկ. փորող վարպետն (обыкновенный мастеръ) իւր օգնականներով (լինում են կամ մէկ կամ երկու հոգի) և 4—5 բանւորներ: Փորող վարպետն ու իւր օգնականները բաժանում են իրանց մէջ աշխատանքն այսպէս. մէկը գիշերը, միւսները կամ միւսը ցերեկը, իսկ հասարակ բանւորներից 4—6 հոգի ցերեկը, նոյնքան էլ գիշերը: Այնպէս որ ամեն մի հորի համար փորելու ժամանակ հարկաւոր է լինում 10—14 մարդ, որ հնար լինի անխաղար—ցերեկ ու գիշեր — քանդել:

Փորող վարպետն այստեղ միայն հրամայող, կառավարող է, որին փոխարինում է բացակայութեան ժամանակ իւր օգնականը: Այդ երկուսն էլ չունին մաս ֆիզիկական աշխատանքից. ամբողջ աշխատանքն ընկնում է 4—6 բանւորների վրայ, որոնց պարտականութիւնների առաջին կէտն է «լսել վարպետին և օգնականին»: Թէև այս բանւորների մէջ աշխատանքը բաժանւած է, բայց այդ խիստ բաժանումը շատ քիչ դէպքերում է գործադրւում, որովհետև շուտ-շուտ են պատահում խմբական աշխատանք պահանջող գործեր և իրար փոխարինելու դէպքեր: Հորի բերանի մեծ փոսը (շախտա) փորում են նրանք խմբով, խողովակները քաշ տալիս, տեղը դնում, մի կտորը միւսի մէջ անցկացնում և մեխում (заклепать) կրկին նրանք, բաղմաթիւ գործիքների պատրաստողը, մաքրողը, այս ու այն կողմ քարշ տալով նոյնպէս սրանք են: Այդ և ուրիշ դրանց նման բաղմաթիւ աշխատանքներ կատարում են նրանք խմբով, իսկ հորը փորելու գործողութեան ընթացքում, երբ արտակարգ

մի պահանջ չը կայ, նրանք անուժ են իրանց համար արգէն որոշ-
ւած գործերը. այնպէս որ մի երկուսի աշխատելու ժամանակ միւս-
ները կանգնած հանգստանում են:

Այդ 4—6 բանւորներից մէկի պարտականութիւնն է մեքենային ըն-
թացք տալ և կանգնեցնել, հարկ եղած ժամանակն էլ օգնել միւսներին,
երկրորդի պարտականութիւնն է բարձրանալ բուրգի (ВЫШКА) ներսի
կողմից 5—6 սաժէն բարձրութեան վրայ շինած պատշգամբը և այն տե-
ղից կապել ձողերի (շտանգ) վերին ծալերը շողեմեքենայի հետ հաղոր-
դակցութիւն ունեցող պարանի ծալից, որ չետոլ հորն իջեցնեն: Երրորդի
պարտականութիւնն է հորի բերանի մօտ կանգնել, ջոկել այն ձողի ներ-
քնի ծալը, որի վերի ծալն արգէն կապած է պարանից, առաջ բերել
այդ ծալը մի մեծ երկաթէ բանալու միջոցով և կանգնեցնել ուղիղ
հորի բերանի վրայ: Առաջուց արգէն հորի մէջ կախ տւած է լինում հար-
կաւոր գործիքը. բերում է երրորդ բանւորը ձողի ծալը և չորրորդ բան-
ւորի օգնութիւնով սկսում են հագցնել երկու ծալերն իրար մէջ և ամ-
րացնել: Այդ կատարում են երկաթէ բանալիների միջոցով, զրա համար
էլ այդ բանւորներից մէկը կոչւում է բանալեպան (աշտուչի-КЛЮЧНИКЪ):

Բոլորովին նոյն ձևի միայն հակառակ գործողութիւններ են
անում բանւորները գործիքները բարձրացնելու ժամանակ: Ամեն
բան առաջ է գնում մեծ դանդաղութիւնով ու երկար աշխատան-
քով: Երբեմն հարկաւոր է լինում մի քանի տասնեակ միայն ձողեր
կապել և քանդել, ուր մնաց դեռ միւս աշխատանքները:

Քանի դեռ նաւթի արդիւնաբերութիւնը չէր զրաւել եւրոպա-
ցիների ուշադրութիւնը, հորերը եղել են շատ ցած, փորել են
առանց դժւարութեան, իսկ այժմ, քանի գնում, ցածրանում է նաւ-
թի մակերևոյթը: Սրանից մի 4—5 տարի առաջ հորերի խորու-
թիւնը եղել է սովորաբար 35—60 սաժէն, իսկ այժմ հասնում է
մինչև 200 և աւել սաժէնների (կայ մի հոր 205 սաժէն խորու-
թեան) ¹⁾:

Փորող բանւորների գործի գլխաւոր դժւարութիւնը նրանումն
է, որ միշտ պէտք է կանգնած լինեն բոլոր գործի ժամանակ: Երե-
ւակայեցէք. տեղը խոնաւ, ցեխոտ, միշտ քամիները վզվզում են

¹⁾ Համոմատէք պ. Պ. Ալիլպէնկեանի լուսածը «Մուրճ» 1891, № 9,
էջ 1070—1071, ծանօթութեան մէջ առաջ բերած աղիւսակը:

փայտէ շինւածքի ճեղքերից ու դռներից... Ձը գիտեմ աշնան և ձմեռայ օրերից որ և է մէկում արդեօք այդ հորերի մօտ աշխատող բանւորներն զգացել են մի մարդավարի տաքութիւն, թէ միշտ խոնաւութեան ու քամիների ձեռքից չեն իմացել, թէ ո՛ր փախչեն:

Իրանք բանւորները մի շատ զարմանալի լեզուով են խօսում. երեք չորս լեզու խառնուրդ, հայերէն, թուրքերէն, ռուսերէն ու նոյն իսկ դադսաանի լեզուից բառեր: Հեռաքրքրութեան համար այստեղ առաջ կը բերեմ միայն այդ 4—6 փոքր բանւորների անունները.

1) Նասրախչի. սա մեր յիշած չորրորդ բանւորն է: Մաքրում է գործիքները և օգնում ձողերի հազցնելուն և քանդելուն: 2) Շտանգչի—վերևից ձողեր տուղը: 3) Շտանգալթի—ներքևից ձողերն ընդունողը և կապողը: 4) Աչառչի կամ կլիւնիկ և 5 լեբեռչի—այս երկուսի աշխատանքները շատ նման են իրար:

Փոքր բանւորների աշխատութեան ակողութիւնը օրւայ մէջ ուղիղ 12 ժամ է: Այդ 12 ժամը նրանք լրացնում են 6 ժամ ցերեկը և 6 ժամ գիշերը բանելով կամ առաւօտեան 6-ից մինչև երեկոյեան 6-ը և երեկոյեան 6-ից մինչև առաւօտեան 6-ը բանելով: Ամբողջ 12 ժամւայ ընթացքում երբէք չը նստել, միշտ այս ու այն կողմ գնալ, միշտ ոտի վրայ լինել...

Անմիջական նաւթային գործում ամենաշատ աշխատանք կայ փորելու գործի մէջ: Ոչ քաշողների գործը, ոչ մաքրողների գործը չեն կարող հաւասարել սրանց: Այստեղ ֆիզիքական զրկանքները հասնում են իրանց գաղաթնակէտին: Դժւար է երեւակայել այնպիսի ակողջութիւն, որ մի քանի տարի դիմանայ այս աշխատանքին. ոսկրացաւը, խոնաւութեան այս անմիջական ծնունդը, անշուշտ կը բռնի հորի մօտ աշխատող բանւորին, եթէ մի քանի տարի աշխատի և չը վնասի ուրիշ պատճառներից: Իսկ այդ «ուրիշ պատճառները» շատ շատ են և շատ էլ հաւանական, ինչպէս մենք յետոյ կը տեսնենք:

Փոքր բանւորները բոլորն էլ վարձուում են ամսով. նրանք անհրաժեշտ մարդիկ են հոր փորելու համար: Ձի կարելի օրավարձով պահել այդ պաշտօնների մարդկանց, որովհետև այդտեղ ևս հարկաւոր է որոշ չափով գործի ծանօթութիւն, փորձաժութիւն: Դացի դրանից կարող է պատահել, որ ուղած ժամանակ չը գտնւի

օրավարձով ծառայող յարմարաւոր բաներոյ: Զը հաշուելով փորող վարպետին և իր օգնականին, միւս բոլոր փորող բանորների ռոճկի մէջ մի աւելի ընկնող անհաւասարութիւն չը կայ, եթէ բոլորն էլ միևնոյն տեղում են ծառայում: Զանազանութիւն կայ այս կամ այն հանքում ծառայողների մէջ. կան ֆիրմաներ, որ աւելի են վարձատրում և կան էլ, որ պակաս են վարձատրում: Շատ քիչ զանազանութիւն են դնում երկար ժամանակ ծառայողի և նոր սկսողի մէջ: Ամսավճարը կարող է 15-ից մինչև 22 և նոյն իսկ 25 ռուբլու հասնել միևնոյն մարդու համար զանազան ֆիրմաներում և ծառայութեան զանազան ժամանակներում: Իսկ միևնոյն ֆիրմայում կարող է զանազանութիւնը լինել միայն ամսական 2 ռուբլու մէջ. 15 — 17 կամ 20 — 22 ռուբլի ամսավճար փորող բանւորների համար, ահա բաւականին տարածւած նորման:

2. Բանորները նաև Կաշելու գործում:

Քաշելու գործում ծառայող բանւորների աշխատանքը շատ թեթեւ է ֆիզիկական կողմից համեմատելով փորողների աշխատանքի հետ: Այստեղի միակ պահանջն է լարւած ուշադրութիւն և փորձ: Քաշող բանւորներն էլ փորողների պէս վարձու են միշտ ամսով և աւելի հազւագիւտ են լաւ, վարժ քաշողները, քան վարժ փորողները: Փորելու գործը պահանջում է, ինչպէս ասացինք, բաւականին զգալի ֆիզիկական աշխատանք և, որ գլխաւորն է, ստատանայական համբերութիւն, իսկ քաշելու գործը զգուշութիւն և միայն զգուշութիւն:

Քաշող բանւորների թիւը շատ քիչ է, համեմատելով փորողների թւի հետ, և ամեն տեղ միևնոյնը: Ամեն մի հորից նախ հանելու համար հարկաւոր է ընդամենը չորս հոգի. երկուսը ցերեկը, երկուսն էլ գիշերն աշխատելու համար:

Երկու բանւորներից առաջինն է հարողը (тарталыщик, սիւքեանչի) իսկ երկրորդը վեդրաչին (ведерщик¹⁾):

¹⁾ Առհասարակ նախալին գործում գործ են անում թուրքերէն, ռուսերէն և գերմաներէն բառեր, որոնց հալացնելը շատ դժւար է և երբեմն էլ անկարելի:

Հարողի միակ պաշտօնն է ընթացք տալ շոգեմեքենային և կանգնեցնել: Նա ալդ բանն անում է մի փոքրիկ անխի միջոցով, որը թելերով միացրած է մեքենայի շոգետար խողովակներից մէկի հետ. երբ ալդ խողովակի ղռնակը բաց է անում, շոգին ազատ դուրս է գնում բուրձի պատերի միջով և ցնդում օդի մէջ, որից և մեքենան կանգ է առնում կամ շատ թույլ գործում, իսկ երբ փակում է ալդ խողովակի ղռնակը՝ մեքենան սկսում է աւելի արագ գործել, պարտոցները գլանը, փաթաթել պարանը գլանի վրայ և դուրս նորից հանել նաւթով լիքը: Գույլը մնում է կախած, մինչև որ վեդրաչին առաջ է քշում սողնակը, դուրս նաւթը թափում և էլի վետ տանում սողնակն արագութիւնով ու, մեքենային հակառակ ընթացք տալով, հարողը դուրս իջեցնում է հորը: Այս է իսկապէս քաշող բանդորների գործը զլիսաւոր մասը: Պատահում են շատ լաճախ և ուրիշ գործեր, ինչոյն ցելստուած հորը մաքրել, որի ժամանակ վեդրաչու պաշտօնն արդէն բաւականին զժարանում է. նա պէտք է ցելս հանող ամբրիկական դուրս հորի բերանի տակաւի վրայից մի կողմ քաշի, ցելսը թափի և նորից հորի բերանի ուղղութիւնովը պահի, որ հարողն սկսի, մեքենային հակառակ ընթացք տալով, իջեցնել հորի մէջ. նա պէտք է բարձրանալ, լինի դա անձրևի, ձիւնի, սարսափելի քամիների ժամանակ (որ պարտեղում շատ սովորական է) 10 սաժէն բարձրութիւն ունեցող բուրջի վրոյն, որ քաշող անւի (ТАРТАЛЬНЫЙ ШЕВЪ) վրայից դուրս թռած պարանը տեղը քցի: Վաղ նրան, եթէ մի փոքր անզոյլ է եղաւ, եթէ ուր մի քիչ սալթաքեյ՝ ողջ տեղը ականջը կը մնալ:

Ասացինք, որ սրանց գործը պահանջում է ամենախիստ զգուշութիւն և ահա, թէ ինչու. հարողը մի քիչ անզոյլ է եղաւ, մեքենան կը տանի 2—5 սաժէննոց դուրս կը հասցնի քաշող անւին, կը ծալի շորի նման և նաւթը 10 սաժէն բարձրութիւնից կը թափէ քաշողների գլխին: Կարող է և բուրջի վերին մասերը կոտորել ու թափել քաշողների գլխին, նոյն իսկ սպանել: Նոյնպէս անզգուշութեան հետեանք է, որ երբեմն դուրս բարձրանում և սկսում է ցնցւել, տարուբերւել, բուրջի պատերին խփել. եթէ պատահի, որ կաշի քաշողներից մէկին, հոգոյն ասւած կը լինի:

Հարողների և վեդրաչիների աշխատանքի տեղութիւնն էլ օրական ուղիղ 12 ժամ է: Այդ 18 ժամն առհասարակ դասաւորւում է այսպէս՝ 12 ժամ գործ 6 ժամ հանգիստ, նորից 6 ժամ գործ և 18 ժամ հանգիստ: Այս տեսակ դասաւորութիւնը շատ առաւելութիւն ունի 12 և 12 ժամ դասաւորութիւնից, նրանով, որ կարող է 18 ժամը դասաւորել այնպէս ինչպէս իր ցանկութիւնն է:

Հարողն ստանում է ամսական 15—22 ռուբլի ամսավճար, իսկ վեդրաչիները 12—16 ռուբլի: Ամեն մարդ կարող է կատարել վեդրաչու պարտականութիւնը, բայց հարողինը— ոչ: Առաջին համար մի քիչ զգուշութիւն և ուրիշ ոչինչ, իսկ երկրորդի համար գիտենալ վարւել մեքենայի հետ, ամենաթեթեւ շարժումներ անել սալ յետ ու առաջ և, որ զլխաւորն է, ծանօթ լինել գործին:

Ուշադրութեան արժանի երևոյթն այն է, որ այդ երկու պաշտօններն առաջ մի մարդ է եղել կատարելիս, իսկ այժմ, փորձից խրատւած, թողել են այդ սովորութիւնը. մի մարդ չի կարող ուշադրութիւնն այնքան լարել, որ հսկի համ մեքենայի վրայ, համ էլ սողնակի վրայ: Բացի դրանից մենակ մարդն աւելի հեշտութիւնով կարող է քնել և դործը կանգնեցնել, իսկ երկուսը միասին եղած ժամանակ աւելի դժւար է այդ. յիսուել, ծիծաղել, հանաքներ անել— լանք քնելու դէմ կարելի է գործ դնել իբրև միջոցներ:

3. Օրավարչ Բան-որներ.

Նաւթային բոլոր գործերում աչքի են ընկնում երկու տեսակ բանւորներ. ա. ամսավարձ բանւորներ և բ. օրավարձ բանւորներ:

Օրավարձ ծառայողներն են հասարակ մշակները (чёрнорабочий): Սրանց ամենամեծ տոկոսը կազմում են պարսկահայատակները և ռուսները: Հայեր և լեզգիներ առհասարակ շատ քիչ կը պատահեն ձեզ հասարակ մշակների բաղմաթիւ խմբերի մէջ: Պարսկահայատակներն ունեն իրանց որոշ ժամանակը մեր կողմերը գործելու գալու. դա նրանց քաղի և ցանքսի միջի ժամանակն է: Երբ այդ ժամանակը լրանում է, նրանք գնում են հայրենիք, ցանում կամ հնձում և ապա յետ գալիս: Եթէ մի տան մէջ աշխատող ձեռքերի թիւը շատ է, մի երկուսը մնում են տանը, միւսները գալիս են աշխատելու երկար ժամանակով: Ուրիշ երևոյթ են ներկայացնում ռուս բանւորները. սրանցից արդէն մի որոշ մշտական քանակութիւն կայ, որ օր աւուր աւելանում է թւով. բացի դրանից, նրանց քանակութիւնը առհասարակ ենթակայ է մշտական փոփոխութիւնների: Ռուսաստանի այս կամ այն ներքին նահանգի կամ գաւառի ժամանակաւոր բայց յաճախ կրկնող աղէտները (երաշտ,

անյաջող հունձ և այլն) միշտ քշում են ղէպի Բագու ահագին թւով գործաւորներ, որոնք, կարիքից ստիպւած լինելով, համաձայնում են երբեմն շատ չնչին օրավարձով ծառայելու: Այդ տեսակ երեւոյթներինց ամենամեծն 1891/92 Ռուսաստանի ներքին նահանգների սոփն արտադրեց: Արդէն 1891 թւի ամառանից սկսել էին լցնել Բագու, Բալխանի և Սև-Քաղաքի փողոցները: Աշնանն այդ լցուղիների թիւն արդէն անոտանելի էր: Բոլորովին կը հեղեղէին Բագուն, եթէ իր ժամանակին կառավարութիւնը միջոցներ ձեռք չ'առնէր կանգնեցնելու այդ աւերիչ տեղափոխութիւնը: Սարսափելի դրութիւն էր 1891-ի աշնանը և 1892-ի ձմռան ժամանակ այդ սովեալների դրութիւնը Բագում: Կանայք և երեխաները փողոցներում ընկած մուրալիս, իսկ տղամարդիկ ամենատղորմելի դրութեան մէջ աշխատելիս:

Թէ Բալխանի-Սաբունչեան նաւթահորերի շրջանում և թէ Սև-Քաղաքում աշխատանքի ամենածանր մասը սրանց վրայ է ընկնում: Նաւթի բազմաթիւ և ահագին ամբարներ փորել, որ կարողանան տանել 100 — 400 հազար փութ նաւթ, ճանապարհներ, փոքրիկ առուներ փորել նաւթի համար, որ հոսի ամեն կողմերից ամբարների կամ փոսերի մէջ. շատուանի նաւթի համար շինել ահագին լճեր, շրջապատելով հաստ և երկար հողէ պատերով, որոնց մէջ հնար լինի տեղաւորել միլիոնաւոր փթերով նաւթ. ամենածանր առարկաները, բեռներն ու ապրանքները տեղափոխել, ամեն բոպէ պատրաստ լինել օգնելու գործի մէջ վարպետներին կամ նրանց օգնականներին, կատարել նրանց ամեն մի հրամանը և այլն. մի խօսքով ամենածանր հողային աշխատանքներից սկսած մինչև ամենաթեթեւ հասարակ գործերը կատարել — ահա օրավարձ ծառայող մշակ-բանւորի գործը: Որոշ ոչ մի պաշտօն չունի մշակ-բանւորը. նա պէտք է կատարէ այն բազմաթիւ գործերը, որ անպակաս են միշտ գործարանների և նաւթահորերի շրջականներում: Փիղիկական մեծ աշխատանք և ուրիշ ոչինչ: Նաւթային գործերում ոչ մի աշխատանք այնքան անհամաչափ կերպով չի վարձատրւում, որքան սրանց, այս ողորմելի դասակարգի, աշխատանքը:

Կան գործարաններ և հանքեր, որոնք մշակ-բանւորներից ևս վարձում են աֆսով, իրանց մշտական գործերը կատարելու համար,

բայց այդպիսիների թիւը շատ քիչ է: Առհասարակ այդ տեսակ «սեւ աշխատանքների» օրավարձը հաշվւում է 40 — 60 կոպէկ, չը նայելով, որ ահագին պահանջ կայ օրով բանող ձեռքերի: Թէև օրով բանողների աշխատութեան վարձն արդէն հասնում է ամենաչնչին չափի, թէև այդ տեսակ աշխատանքի համար ահագին պահանջ կայ նաւթային գործերում, բայց էլի աշխատող ձեռքերի առաջարկութիւնն աւել է, քան պահանջը, որի հետևանքն է այն, որ արդէն բաւականին թւով անհատներ այդ դասակարգից մնացել են և միշտ մնում են պարբերաբար անգործ, այսինքն արտադրւում, տոեղծւում են «աւելորդ մարդիկ» — պրոլետարիատ: Մի փոքրիկ անյաջողութիւն նաւթային գործերում (ինչպէս 91 թւի կրիզիսը) և այդ «աւելորդ մարդկանց» թիւն արագ կերպով սկսում է աճել: Նոյն իսկ եթէ մի գործարանի կամ նաւթանքի գործերը վատ են զնում, մշակ-բանւորներից մի քանի հոգի իսկոյն լնկնում են «աւելորդ մարդկանց» շարքը:

Մշակ բանւորների վարձելու գործում այժմ սկսել է երևալ հետևեալ տղեղ երևոյթը: Բանը նրանումն է, որ լոյս են ընկել երբորդ անձնաւորութիւններ, որոնք կատարում են մի տեսակ միջնորդի դեր գործաւորի և գործ կատարողների մէջ, ստանալով որոշ օգուտ: Այդ անձնաւորութիւններն յայտնի են երբեմն կապալառու, երբեմն խմբապետ (арте́льщикъ) անունով: Սրանք վերցնում են որ և է աշխատանք կապալով և կատարել են տալիս իրանց վարձած մշակ-բանւորներին օրավարձով: Իրանք պարտք են համարում միայն հսկել, ոչ թէ աշխատել մշակների հետ, այնպէս որ ներկայանում են իբրև փոքրիկ գրամատէրեր կամ բուրժուաներ: Դրանց աշխատանքը, ինչ ասել կուզէ, որ տնտեսաբար աւելի շատ է, քան բանւորի օրական 40 — 60 կոպէկը:

Հորերը փորելու նկարագրութեան ժամանակ մենք ասացինք, որ «հասնում են նաւթային շերտին, դարձիքները դուրս հանում ու սկսում քաշել»: Այդ աղբիւս է, եթէ նաւթի հոսանքը փոքր է կամ թույլ է, և կամ հոսանք չէ, ալ մի լճացած շերտ և ալէն, իսկ եթէ լինի մի արագ հոսանք, մի մեծ լիճ, չըջապատւած հանքային-երկրաբանական զանազան պալմաններով, եթէ ալ լճի մակերևութին սառտիկ զօրութիւնով ճնշելիս լինի նաւթային զաղը, կամ ալէ նաւթի հոսանքի սկիզբը լինի աւելի բարձր տեղերում, քան նաւթաղաշտի մակերևութին է, բնական է, որ

պէտք է հորի բերանից բարձրանալ և շատրւանի նման խփի դէպի վեր նաւթը: Այդպէս էլ պատահում է շատ անգամ, խփում է մի ժամից սկսած մինչև $1\frac{1}{2}$, 2 տարի շարունակ, կանգնում, կրկին խփում, խողովակների բերանն աւազով ծածկում խցանի նման, մաքրում են, էլի խփում և ալէն: Շատրւանի ստացւիլն առհասարակ դժւար է գուշակել, դրա համար էլ շատ թէ քիչ հարուստ ֆիրմաները, նոր հոր սկսելու ժամանակ, սկսում են պատրաստութիւններ տեսնել, որ շատրւան խփած ժամանակ, չը կորցնեն նաւթի հոսանքները: սկսում են պատրաստել լճերի տեղեր, ամբարներ, նաւթ մղող գործիքներ, որ հաւաքւածը խփեն ալս կամ ալն տեղ և ալէն: Հին փոսերը կարկատել տալ, եթէ կալ որ և է պակասութիւն: Մշակ բանւորների ամենաողորմելի ժամանակը շատրւանի խփելու ժամանակն է. 30—60—100 բանւոր-մշակներ (նախելով շատրւանի չափին) թիփն ու բանքը ձեռքերին, անդրաւարտիկները վեր քաշած, թեքերը վտ ծալած, մտնում են նաւթի առւակների մէջ և անդադար դուրս տալիս միջի աւազը, նոր ճանապարհներ բաց անում, նոր փոսեր շինում, եղածների պատերն աւելի ամրացնում, չը նաւելով, որ անդադար տեղում է նաւթալին անձրեւ և թրջում նրանց, բառի բուն նշանակութեամբ: Շատրւանները երբեմն խփում են շատ կատաղի կերպով. եթէ նրանց հոսանքի դէմ, 5—6 սաժէն բարձրութեան վրալ չը դնեն 40—70 փութ ծանրութիւն ունեցող մի սրտուար, նա կը կտորատէ բուրջի գլուխը և կը խփէ շատ բարձր, կը դառնալ մի օղիանման անձրեւ ու կը թափի վաչր: Այդ ժամանակ արդէն բանւորները դառնում են իսկ «ջուրն ընկած». ալն զանազանութիւնով միայն, որ ջրի տեղը նաւթ է ալս դէպքում:

Գործը վերջացնում, դուրս են գալիս ծնկները նաւթով ու ցելսով կուլւելւած, բոլոր հագուստներն ու մազերը նաւթաշաղախ, թրջւած—հնար չը կալ մաքրելու. փող չունեն, որ բաղանիս գնան, չոր չունեն, որ փոխեն, մէկը չունին, որ զարդերն ասեն ու մի սրտանց էլէ ան քաշեն, հանգստանան...

Եթէ շատրւանը խփում է երկար ժամանակ, նրա վրալ ալս ևս ուշադրութիւն չեն դարձնում. ամեն բան կարգի բերելուց վտու, դնում են մի հսկող մշակ և ապահով կերպով զիմում հողի մի ուրիշ կտորի գլխին նոյն խաղը խաղալու: Այդ մի մշակն հսկում է երբեմն մի աջնայիս շատրւանի վրալ, որ օրական կարող է տալ 100—200 հազար փութ նաւթ (սկիզբներում երբեմն շատրւանները տալիս են մինչև $\frac{1}{2}$ միլիօն—400 հազար փութ, իսկ ջնտղ սկսում են նաւելիլ) և հանքատէրն, առանց խղճահարւելու, տալիս է նրան օրական 40—60 կոպէկ, (?Նմր.) իսկ մնացած հազարները փառաւորապէս ծաւում, իր անշատակ գրպանը գլրում ինքնաբաւական կերպով, որ ալիպիսի «մեծ գործ» է կատարել:

Մշակ-բանւորների ժամանակամիջոցը 12 ժամ է (առաւօտեան

6-ից մինչև երեկոցեան 6-ը), հաշվելով դրա մէջ 1 ժամ ճաշելու և հանգստանալու համար: Ուրեմն մշակներն իսկապէս աշխատում են 11 ժամ օրական: Ուղիղ ժամը 12-ին դադարեցնում են գործելը, ճաշում, մի քիչ հանգստանում և յետոյ ժամը 1-ին էլի սկսում:

Մշակ-բանւորների օրավարձը զանազան է զանազան ազգութիւնների համար, որովհետև զանազան են և ազգութիւնները գործ կատարելու մէջ: Ռուս մշակն աշխատում է արագ և եռանդով, նրա աշխատանքի մէջ կայ ոյժ, իսկ թուրք կամ պարսկահայ պատակ բանւորը ծոյլ է, դանդաղ, նրա աշխատանքը ուժով չի առաջ գնում: Գրա համար էլ ռուս մշակին վարձում են օրական 50—60 կոպէկով, իսկ թուրք կամ ուրիշ պարսիկ «համշարուն» 40—45 կոպէկով: Սակայն պէտք է նկատել, որ դժար գործերը տալիս են թուրք կամ պարսիկ բանւորին, չընայելով նրա ծուլութեանը. ռուս բանւորը կ'անի ամեն մի գործ արագ ու եռանդով, բայց օրինակ նա չի դիմանայ մի խոր ամբար փորելուն. այստեղ հարկաւոր է դանդաղ զիմացկանութիւն:

Նաւթահանքերի մէջ անմիջապէս նաւթը երկրից հանելուն նպաստող բանւորները սրանք էին: Կան և գործակատարներ, ապրանքի վրայ հսկողներ, նաւթ բաց թողնողներ և այլն, բայց դրանք մեզ չեն հաւրելք: Մեզ հետաքրքրող նաւթահորերի գործաւորների մէջ մնում է մի դասակարգ՝ արհեստաւորներ, որոնց մասին խօսելը թողնում ենք «օժանդակ արհեստների» բաժնում: Նաւթային գործի մէջ պահանջում են շատ տեսակ արհեստների վերաբերող գործիքներ, առարկաներ և նիւթեր: Այդ պահանջն այնքան շատ է և այնքան շուտ շուտ պատահող, որ եթէ բոլոր կարիքները լրացնելու համար զիմեն գործարաններին, պէտք է, նախ՝ ահազին փող ծախսեն և երկրորդ—մի երկու մարդ ունենան, որ միշտ նաւթահանքից արհեստանոցներ և գործարաններ վազվզի, ձի, սալ կամ մշակներ հետը տանելով: Այս անհրաժեշտ կարիքն ստիպում է բոլոր քչից շատից կանոնաւոր ֆիրմաներին ունենալ իրան հանքատեղում մի փոքրիկ կամ մեծ արհեստանոց: Կան մի երկու ֆիրմաներ, որ, ահազին գործերի պատճառով, ունին բաւականին մեծ գործարաններ միայն իրանց գործերը կատարելու համար: Այդ-

պէս է Նորել եղբայրներինը, մասամբ Ծատուրեան և ընկ.-ը ¹⁾ և այլն: Իսկ միւս Ֆիրմաները պահում են մի արհեստանոց փականագործական, ճախարակագործական (слесарное, токарное) և զարբնական բաժիններով: Արտեղ կան շոգեկաթսաններ, այնտեղ հեշտ է և ճախարակներ շուր տալ, դարբնոցի փքսերը փշել շոգու միջոցով: Իսկ որտեղ շոգու համար յարմարութիւններ չըկան, այնտեղ մի երկու արհեստաւոր և մի երկու մշակ բանւոր «եօլա» են տանում գործերը:

4. Բանորները շոգի պարտաւելու և նաւի մղելու գործում:

Շոգեկաթսանները բոլորովին նման են մեր վերևում նկարադրած Նաւթակաթսաններին: Նրանց մէջ ածուում է որոշ չափով հում նաւթ գոլորչիացնելու համար, սրանց մէջ ածուում է ջուր (ոչ բոլորովին լիքը) նոնյպէս շոգիացնելու համար: Այնտեղի գոլորչիները գնում էին զխտեղատ դառնալու համար, ալտեղի շոգիները գնում են մարդու ծառայելու, դառնալով շարժողութիւն: Երկու դէպքում էլ մարդը, իւր խելքի շնորհով, օգտուում է բնութեան ուժերից. բաց է անում նրանց, հանում թագնած տեղերից և ծառայեցնում իրան:

Բոլոր նաւթհաններն ունեն իրանց մի կամ երկու (կա՛մ աւել) շոգեկաթսանները, որոնց շոգին կառավարում, շարժում է բոլոր մեքենաները: Այդ կաթսանները կառավարելու համար նշանակում են մի մարդ, որ վաւելիքը և քամին կաթսայի տակ միշտ կանոնաւորէ. այդ մարդը կոչւում է հնոցապան (качегарь), իսկ այն տնակը, որի միջ տեղաւորւում է շոգեկաթսան, կոչւում է հնոցատուն (качегарка):

Բազմաթիւ են այդ տեսակի փոքրիկ փոքրիկ հնոցատներ նաւթադաշտի բոլոր անկիւններում. ամեն մի նաւթհանը, ամեն մի ջրաբուլիս հիմնարկութիւն (водоканал), ամեն մի նաւթ մզոդ կայարան ունեն իրանց համար սեփական շոգեկաթսաներ: Աւելացրէք սրանց եղած ու օր աւուր նոր նոր լոյս ընկնող բաւականին թուով փոքրիկ երկաթագործական գործարանների կաթսանները և կը տեսնէք, որ նաւթադաշտի շոգեկաթսանների թիւը ճշմարիտ, որ «բազմաթիւ» է:

Ա. Հնոցապաններն պաշտօնն այնքան միանների ոյժ չի պահանջում. բաւական է ծանօթ լինել գործին և կարելի է այդ

¹⁾ Որ ալժմ Մանթաշեան և ընկ.:

Ծան. Խմբ.

պաշտօնը վարել: Բայց Ֆիդիկական տանջանքի տեղ այստեղ կայ մի ուրիշ տանջանք՝ ծայրայեղ զգուշութիւն և վախ: Ամեն բոլոր պէտք է լարել ուշադրութիւնը, որ կաթսաների շոգին շատ չը զօրեղանայ: Պէտք է միշտ շոգեցոյց սլաքին նայել, որ կաթսայի ոցիից վեր կամ պահանջածից աւել-պակաս չը լինի միջի շոգին, պէտք է համարեա միշտ ոտի վրայ լինել, մանաւանդ, եթէ կաթսաները շատ են: Հապա հնոցների արձակած մշտական տաքութիւնը, հապա նոյն հնոցների առաջացրած «անցնող» (сезонной) քամիները, հապա կեղտն ու կաթսայի տրաքելու երկիւղը, հապա անուշադրութիւնից առաջացած սխալի համար նշանակւելու տուգանքները... Տեսնում էք չը սպասւած տեղից որքան զրգռող, տանջանք պատճառող զգացմունքներ ու երեւոյթներ են երևում, երբ մի քիչ նեղութիւն ենք պատճառում մեր ուղեղին մտածելու բանւոր մարդու, այդ մարդկային ցեղի «խորթ որդիների» մասին:

Սրանց աշխատութեան տեղութիւնը ևս, ինչպէս միւս ամսով վարձուող բանւորներինն է, հաւասար է 12 ժամի: Այդ 12 ժամը բաժանւում է առհասարակ այսպէս. մի օրում 18 ժամ, հանգիստ 6 ժամ, միւս օրում 6 ժամ, հանգիստ 18 ժամ. իսկ եթէ ուղեւան, կարող են բաժանել և այսպէս՝ 12 ժամ, հանգիստ նոյնպէս 12, բաց այս վերջին զէպքում մէկի աշխատանքն ընկնում է միշտ զիշերով, միւսինը ցերեկով, որ շատ անյարմարութիւններ ունի, դեռ չը հաշւելով միւս, վերելը չիշած, անյարմարութիւնները:

Հնոցապանները վարձւում են միշտ ամսով և լինում են միշտ երկու հոգի, որ կարողանան իրար փոխարինել աշխատանքները չը դադարեցնելու համար: Նայելով ծառայած տեղին և վարձուողի փորձածութեանը, ամսավճարը լինում է 18-ից մինչև 25 ռուբլի: Քիչ մարդու կարելի է հաւատալ այդ պատասխանատու պաշտօնը, որի պատճառով կարող է զործը դադարել մի կամ մի քանի օրով, կարող է ահազին փնաս հասնել կաթսայի տրաքելով կամ տակը փոս ընկնելով:

Բ. Մեքենայաններ (машинники): Որտեղ կան մեքենաներ և մղիչներ, այնտեղ անհրաժեշտ է ունենալ և մեքենապան: Ինչպէս արդէն անունն էլ ցոյց է տալիս, սրա զործը մեքենաների վրայ հակելն է, նրանց մաքրելը, պտոցա եկող, շարժող մասերի

վրայ իւղ ածելն է: Չը պէտք է սրանց խառնել մեքենավարների (МАШИНИСТЫ) հետ. մեքենավարի գործն է շինել, քանդել, շարժել մեքենաները—այսինքն մի արհեստի, տեխնիքայի գործ, իսկ սրանցը միայն հսկելու, աշխատելու պաշտօն, որ կարող են կատարել նոյն իսկ պատանիները (15—20 տարեկան): Մեքենապանների թիւը լինում է մի տեղում 2, մէկը գիշերւայ, միւսը ցերեկւայ համար: Սրանք կարող են իրանց ժամանակը բաժանել ճիշտ այնպէս, ինչպէս հնոցապանները: Տևողութիւնը լինելու է 12 ժամ աշխատանք, ոչ աւել: Այս գործն անհամեմատ աւելի հեշտ, աւելի հանգիստ է, քան հնոցապանինը, եթէ, բացի մեքենաների վրայ հսկելը, ուրիշ գործեր չը յանձնեն: Բայց առհասարակ բոլոր ծառայողներին յանձնում են ուրիշ գործեր էլ, եթէ տեսնում են նրան ազատ:

Մեքենապաններն էլ վարձւում են միշտ ամսով, ամսական 10—18 ռուբլի վարձով:

Բացի յիշած բանւորներից նաւթ մղող կայարաններում կան և «ընդունող» գործակատարներ (приёмщики), որոնց պարտականութիւնն է պահեստառողների մէջ նաւթ ընդունել զանազան հանգրից, չափել ընդունած նաւթը և յանձնել թւերը գրասենեակին: Սրանց գործը (առհասարակ այդ կայարանների բոլոր գործերը, բացի յիշած երկուսից) նպատում է սաստիկ ծուլութեան. օրւայ մէջ 2—4 ժամ նաւթ ընդունել և մնացած ժամանակը թէք ընկնել կողքին... Նաւթ ընդունողներն էլ ընդհանրապէս լինում են ցերեկւայ և գիշերւայ համար առանձին, եթէ կայարանի կառավարիչները չեն աշխատում տիրոջ «լուր գալու» համար տանջել միայն մի մարդու: Վարձւում են ամսով, ամսական 25—40 ռուբլի ռոճկով:

Աւելորդ է խօսել հասարակ տնային ծառաների և աղախիների համար, որովհետև իրանց կատարելու գործն ու աշխատանքը բոլորին յայտնի է: Միայն հարկաւոր է այսքանն ասել, որ բաւական բազմաթիւ է այդ դասակարգը:

Բ. ԲԱՆԻՈՐՆԵՐՆ ԱՐԿԻԻՆԱԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Նոյն ամսով վարձւող, նոյն օրով վարձւող, նոյն հնոցական, մեքենական և այլն բանւորները դուք կը տեսնէք և այստեղ—Սև-

քաղաքում: Աշխատանքները նոյնը, դրութիւնները նոյնը, մարդիկ նոյնը—եթէ վերցնենք նրանց իբրեւ ամբօխ: Կաշխատենք այստեղ ներկայացնել միայն աշխատանքների զանազանութիւնը, իբրեւ լրացնող նախընթաց նկարագրութիւնների: Այստեղ ևս բանւորները մի քանի տեսակի են բաժանւում և կրում զանազան անուններ, ինչպէս և նաւթադաշտի գործերում:

Ամսավարձ բանւորներ. 1. Հնոցապաններ: Սրանց գործը ճիշտ այն է, ինչ նաւթադաշտում եղածներինն է, միայն այն զանազանութիւնով, որ այստեղ հնոցապանն առհասարակ հըսկում է շատ կաթսաների վրայ, իսկ այնտեղ մի կամ երկու երեք կաթսաների վրայ: Ուրեմն այստեղի հնոցապանի գործն աւելի ևս դժւար է: Դժւարութիւնն էլ աւելի սաստկանում է, երբ աչքի առաջ ենք ունենում, որ նաւթը բոլորովին գոլորշիացնելու համար հարկաւոր է 800—3000 տաքութիւն Յէլսեուսի ջերմաչափով և այդ տաքութեան առաջ միշտ ման է գալիս (օրը 12 ժամ) հնոցապանը: Նաւթադաշտում կաթսաները առհասարակ փակ շինութիւնների մէջ են դրւած լինում, իսկ այստեղ—ոչ: Հնոցապանը ման է գալիս հնոցների առաջ, բաց օդում, ենթակայ ամեն տեսակ կլիմայական փոփոխութիւնների (քամի, անձրեւ, արեւ և այլն), որի հետեանքը լինում է շատ շուտ կրկնող հիւանդութիւն: Ռոճկի չափը նոյնն է. 18—25 ուրբի: 2. Մեքենապաններ: Սև-Քաղաքում մեքենապանների թիւն անհամեմատ աւելի է և մեքենապանի գործն աւելի շատ է, քան նաւթադաշտում. այստեղի բազմաթիւ մղիչները (насосы) և շոգեշարժները պահանջում են աւելի աշխատանք և աւելի թիւ աշխատող ձեռքերի: Պաշտօնը բոլորովին նոյնն է, ռոճիկը նոյնպէս, ժամանակը նոյնպէս:

3. Նաւթաբաշխներ (сгонщики): Նաւթագործարանի «ընդունարան» կոչւած բաժնում դրւած է 3 բաժանմունքներից բաղկացած մի արկղ, որ խողովակներով միացած է նաւթի փոքրիկ պահեստների (րեզերւուար) հետ, իսկ կաթսաների շոգեատար խողովակներն, անցնելով սառնարանների միջով, ուր գոլորշիները հեղուկ են դառնում, դալիս—բացւում է ընդունարանում, այդ արկղների վրայ: Նաւթաբաշխը պէտք է հսկէ միայն այդ խողովակից հոսող դիստիլատի վրայ, որ չը լինի թէ գազոլինը (թէթև նաւթը), կե-

րոտինը և ծանր իւղերն իրար խառնւեն: Մի առանձին աշխատանք չը կայ. պահանջւում է միայն միշտ լարւած մնալ: Եթէ պատահեց, որ նաւթաբաշխը սխալեց ու գազովինը կամ ծանր իւղերը խառնեց կերոսինի դիստիլատի հետ, նա կամ կը վռնուի գործարանից, կամ տուգանքի կ'ենթարկուի: Ամեն մարդու չեն յանձնում այդ պաշտօնը. քչերը կարող են շոգիներից ճանաչել, թէ ինչ է հոսելու խողովակից: Հարկաւոր է բաւականին փորձւած լինել, որ կարելի լինի լաւ նաւթաբաշխութիւն անել: Աշխատանքի ժամանակը կրկին 12 ժամ է և բաժանւած ճիշդ աշնայէս, ինչպէս հնոցապաւններինը, բայց ոռճիկն աշն չէ ինչ նրանցը, որոնք ստանում են ամսական 18—30 ուլբլի ոռճիկ: Այս պաշտօնը կազմում է մի տեսակ անցողական երևոյթ հասարակ բանւորների և ինտելիգէնտ աշխատաւորների մէջ:

Օրավարձ բանւորներ: Օրավարձ ծառայողները մշակբանւորներն են (սնմիջական նաւթային գործում). արդէն որ մի անգամ մշակ բանւորի կատարելու գործերը մասամբ թւած է վերելում, մեզ մնում է աւելացնել միայն այս, որ նոյն աշխատանքները, դեռ մի քանիսն էլ վրան աւելացած, կատարւում են այստեղ: Հողացին աշխատանքները և տեղափոխութիւնները միշտ կազմում են բանւոր-մշակի աշխատանքների գլխաւոր մասերը: Բանելու ժամանակը և օրավարձը բոլորովին նոյնն է, ինչ նաւթադաշտում: Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել. եթէ նաւթադաշտում վարձադինն աւելի լինէր, Սև-Քաղաքից կառնէին մի կտոր հաց և խմբով կը ծանապարհէին դէպի նաւթահորերը. ծուխ չեն ունենալ այդ դէպքում. ընդամենը 10—12 վերստ տարածութիւն է: Այնքան կը լցւէին վարձագնի բարձր տեղը, որ միւս օրն իսկ կ'ընկնէր և կը հաւասարէր Սև-Քաղաքի վարձագնին: Այ ինչ ասել է պահանջ և առաջարկութիւն աշխատող ձեռքերի:

Կան մի քանի տեսակ ուրիշ աշխատանքներ ևս, որոնք փոքր գործարաններում անուս կամ թերուս մարդկանց ձեռքին են լինում, իսկ մեծ գործարաններում դարձնւում են արդէն որոշ գիտութեան, ցենզի տէր մարդկանց գործ: Որովհետև այդ աշխատանքների մէջ ֆիզիկական տանջանքներ, մկանների աշխատանք չի պահանջւում և, բացի դրանից, վարձագինն անհամեմատ աւելի է, քան հասարակ բանւորներինը, դրա համար

էլ մենք թողնում ենք այդ վարպետներին, մեքենագործներին և քիմիկոսներին (չառ դէպքերում միայն Աստած քիմիկոս համարէ) իբրեւ ինտելիգէնտ աշխատաւորներին:

*
* *

Նաւթային գործերում եղած բանւորների զրութիւնով հետաքրքրուողի աչքից չի կարող փախչել մի բաւականին հետաքրքրական և խրատական երևոյթ. բանւորներ վարձելու ժամանակ խտրութիւն է դրւում ազգութիւնների մէջ: Ամսական վարձի տրուող գործերում, ուր, ի հարկէ, աւելի պատասխանատուութիւն կայ բանւորի վրայ, քան օրավարձի գործերում, շատ դժւարութիւնով են վարձում ռուս բանւորին: Քիչ կը պատահի տեսնել ռուս հնոցապան, նաւթաբաշխ, հարող և այլն: Այդ պաշտօնները տրւում են առհասարակ հայերին, գերմանացիներին, լեզգիներին և, մասամբ, թուրքերին: Այդ երևոյթի պատճառը այն է, որ քիչ կը պատահեն ռուս բանւորներ, որ ամսական 2—3 անգամ մի լաւ կը կոնծաբանեն: Հայ բանւորը դեռ պահում է իւր զիւղական բարք ու վարքի մաքուր կողմերի մեծ մասը: Հայ բանւորը երկար չի մնում նաւթային գործերում. գալիս է, մի քանի (ռուբլի) հաւաքում, գնում, այնպէս որ միշտ հայ բանւոր դասակարգը թարմանում է նոր, զիւղական հոսանքներով. ուղարկելով մի քիչ «քաղաքակրթածնեւրին» զիւղ: Ով երկար մնում է, նա ենթարկւում է կեանքի ազդեցութեանը. ընդունում է և վատ և լաւ կողմերը: Ինչ ասել կուզի, որ Մահամէզի անդրդւելի հետեւողները չեն իմանում ոչ զինի, ոչ արաղ. գոնէ աշխարայ երբէք չեն հարբում:

Հարբեցողութիւնը այդ պատասխանատու պաշտօններում կարող է հասցնել իսկապէս սարսափելի հետեւանքների. դուք կարող է բարձրանալ մինչև անիւր, խիւլ սրան-հրան, չոգեկաթտան կարող է տրաքել և ալլն: Հապա նիւթական փնտները, դիստիլատները կարող են խառնել իրար, հարած հարողը կարող է քնել և նաւթ չը քաշել, մեքենապանը իւղը փչացնել, միջինները անմաքուր պահել և ալլն և ալլն, որ մէկը թւո՛ւ:

Ուրիշ է օրավարձի գործերում: Այստեղ լիակատար առաւելութիւնն ընկնում է ռուս բանւորի կողմը: Ինչպէս ասացինք արդէն, օրավարձի գործերում հայեր և լեզգիներ համարեն չը կան. ասպարէզը մնում է պարսկահպատակ թուրքերին և ռուսներին: Բոլոր

գործերում (չը հաշված շատ ծանր գործերը) ուրախութիւնով ուսումնասիրին կը տան օրական 60 կոպէկ, քան թուրքին 40—46 կ.։ Հարբեց ուսումնասիրը, կարող են այդ օրը չը հաշվել, հեռացնել ամսով չի վարձեալ, որ դժուար լինի, պատասխանատուութիւն չկայ, որ վախենան։ Այս երեւոյթը շատ տարածեալ է։

Մի ուրիշ խտրութիւն ևս. կան մի քանի գործարաններ, ուր ականքը խտրութիւն են դնում ազգութիւնների մէջ, ոչ այնպէս ինչպէս յիշեալ է, ոչ։ Հայ գործարանատէրն ընդունում է իր գործարանում ամեն ազգի պաշկանող մարդկանց, իսկ ուսումնասիրները (իսկայէս ոչ գործարանատէրները, այլ կառավարիչները) չեն ընդունում իրանց գործարանում հայ բանւորներ։ Սա շինծու բան չէ, սա ֆակտ է։ Օրինակները բազմաթիւ են և ամենօրեայ—կասկածել չի կարելի։ Հապա մեր դրացի թուրքերը, բոլոր ինտելիգենտ աշխատաւորները թուրք գործարաններում հայեր կամ ուսման են, իսկ հասարակ գործերում—ոչ մի հայ, ոչ մի ուսման, բոլորն էլ մահմէդականներ։ Խտրութիւնը ականքը է։

(Կը շարունակւի)

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽԵԼՔՆ ՈՒ ՍԻՐՏԸ

ՍԱՄՈՒԷԼ ԲԱԼԱԳԵԱՆԻ

I

Յառաջաբան: Ամեօբա: Մրջիւնների հասարակական կազմակերպութիւնը: Մրջիւնների կռիւր: Մրջնանոցի պահապանները: Մրջիւնները տորովներ են պահում: Ստրկապահութեան հետեանքը: Մրջիւնների ընտանի կենդանիները: Մրջիւնները կթում են ոջիւններին: Մրջիւնների ալգիւնները: Մըրջիւնները իրար հաղորդում են իրանց միտքը:

Անդառնալի կերպով անցան այն ժամանակները, երբ մարդ զոռոզաբար համարում էր իրան ստեղծագործութեան առանձին գործողութեան արդիւնք: Այն դարերում մարդ կարծում էր թէ անանցնելի անդունդ կայ իր և կենդանիների մէջ: Այդ համոզմունքի ամենագլխաւոր ապացոյցներից մէկը համարւում էր այն, որ «մարդը բանական արարած է, նա ունի խելք, գիտակցութիւն, բարոյականութիւն, մինչդեռ կենդանիները այդ բոլորից զուրկ են»:

Մինչդեռ այդպէս էր դատում ամբօսը, առանձին հանճարեղ մարդիկ ժամանակ առ ժամանակ կասկած էին յայտնում այդ դատողութիւնների վերաբերմամբ: Բայց այն ժամանակները բնագիտութիւնը զարգացած չը լինելու պատճառով՝ նրանք չէին կարողանում փաստեր առաջ բերել իրանց միտքը ապացուցանելու համար:

Չարմանալի է իսկապէս, որ մարդիկ անուշադիր էին թողնում այն նշանաւոր հանդամանքը, որ կենդանիները մարդկանց նման ունին ուղեղ և առհասարակ ջղաջին սխտամ: Չէ՞ որ մարդիկ ընդունակ են մտածելու, զգալու հէնց այն պատճառով, որ ունին ջղային սխտամ, որը հիմք է բոլոր հոգեկան երևոյթների:

Եթէ կենդանիները չունին խելք և զգայութիւն, կը նշանակի որ նրանց ուղեղը, նրանց ջղերը բոլորովին աւելորդ և աննպատակ օրգաններ են, իսկ այդ ենթադրութիւնը բոլորովին անհաւանական է:

Վերջին ժամանակները բազմաթիւ գիտնականներ սկսել են ուսումնասիրել կենդանիների սովորութիւնները, բարբ ու վարքը: Այդ հետազոտութիւնները ունեցան վերին աստիճանի հետաքրքրական հետեւանքներ, որոնց հետ ցանկանում եմ ծանօթացնել ընթերցողին: Անհատին է այս տեսակ յօդաւորում առաջ բերել բոլոր փակտերը, որոնք այժմ յայտնի են այդ հարցի վերաբերմամբ. նրանք այնքան բազմաթիւ են, որ նրանցից կարելի է տանտեակ հատորներ կազմել: Ես մատնացոյց կանեմ միայն ամենանշանաւոր փաստերի վերայ, որոնք վերաբերում են կենդանիների սովորութիւններին:

Խաղաղ ջրերում ապրում է մի փոքրիկ-միլրոսկոպական կենդանի, որին ուսումնականները անւանում են «Ամէօբա»: Դա աշխարհիս ամենացածր կազմակերպութիւնը կենդանիների թւին է պատկանում: «Ամէօբան» բաղկացած է մի կաթիլ թանձր հեղուկային նիւթից—ահա այդ է նրա մարմնի բոլոր կազմաւածքը. ոչ բերան, ոչ ստամոքս, ոչ ուղեղ կամ ջղեր—մի խօսքով ոչ մի օրգան չէք գտնիլ նրա մարմնում: Նա անդադար շուռ է գալիս, և երբ պատահմամբ նրան զիպչում է կերակուրի մի փշրանք, նրա մարմինը ձեղքւում է և ներս ձգում այդ փշրանքը: Կերակուրի փշրանքները կարող են Ամէօբա՛ի մարմնի ամեն մի կէտում ձեղքուածք առաջացնել զիպչելով և մանել մարմնի (կաթիլի) ներսը, ուր մի քանի ժամանակից յետոյ կերակուրը մարսւում է:

Այդ հարցին, թէ արդեօք Ամէօբան ղեկավարւում է երբ և իցէ խելքով, ունի նա արդեօք խելք, դժւար չէ պատասխանել: Եւ պատասխանը, ակներև է, կը լինի բացասական: Ամէօբան և նրա նման ցածր կենդանիները չունեն խելքի նշոյլ անդամ:

Եթէ բարձրանանք այդ ցածր էակներից և նայենք մի կամ երկու աստիճան նրանցից բարձր կանգնած կենդանիներին (օրինակ պոլիպներին) մենք նոյնը կը գտնենք. նրանց շարժումների և դործողութիւնների մէջ խելք չը կ'սկսի, խելքը բոլորովին բացակայ է:

Խեղճի նշոյններ երևում են միայն սկսած կակղամարմիններից (մոլլիւսկ), բայց նրանց զործողութիւնների մէջ խեղճը այնքան թոյլ կերպով է արտայայտուում, որ նրանց վերայ ես կանգ չեմ առնիլ, այլ կ'անցնեմ մրջիւններին:

Այս վերջինները ապրում են խմբովին գետնի մէջ շինած բնւրում: Մրջիւնների խումբը անկանոն չէ, այլ նա կազմում է մի իսկական հասարակութիւն, բաղկացած զանազան դասակարգերից: Մրջնանոցում կան զարգացած էգեր, որոնց միակ զործը՝ ձու ածելը, նոր սերունդներ առաջացնելն է, բացի դրանից նրանք ոչ մի բանի մասին չեն հոգում: Համարեա նոյնպէս են իրանց պահում մրջնանոցում և ուրձերը: Հասարակական ամենածանր աշխատանքները կատարում են բանւորները, որոնք թէև էգեր են, բայց ընդունակ չեն ձու ածելու—բազմանալու, այդ նրանց զործն էլ չէ: Նրանց կեանքի նպատակն է աշխատել, անվերջ աշխատել. նրանք են զլիաւորապէս կառուցանում հասարակաց շինութիւններ, որոնք բաղկացած են լինում բազմաթիւ սենեակներից: Բացի դրանից բանւորները հոգս են տանում ձւանների մասին, կերակրում և պահպանում են զիմակաւորներին (личинки)¹⁾, կերակուր են բերում, ամբարում մրջնանոցում ձմեռաց համար և այլն:

Կան մրջիւնների այնպիսի տեսակներ, որոնց հասարակութիւնը պարունակում է իւր մէջ բացի էգերից, որձերից և բանւորներից՝ չորրորդ տեսակ անհատներ, որոնք հեշտ ջոկում են միւսներից իրանց ահագին գլուխներով և կզակներով: Դոքա մրջնանոցի զինւորներն են. նրանց զործն է միայն պաշտպանել հասարակութիւնը բազմաթիւ թշնամիներից:

Պէտք է աւելացնել, որ մրջիւնները քիչ թշնամիներ չունին. դէպի մի որ և է մրջնանոցի հասարակութեանը թշնամաբար են վերաբերւում համարեա բոլոր ուրիշ հասարակութիւնները: Իսկ զանազան տեսակներին պատկանող հասարակութիւնները իրար տանել չեն կարող:

Այդ պատճառով շատ անգամ զանազան հասարակութիւնների

¹⁾ Մրջիւնների ձագերն են:

մէջ կռիւներ են պատահում, որոնք յաղթածների համար ունենում են շատ ավուր հետևանք:

Սակաւ չէ պատահում, որ մի մրջնանոցի հասարակութիւն արշաւանք է ձեռնարկում թշնամի հասարակութեանց դէմ: Արշաւանքը սկսելուց առաջ մրջնանոցից մի քանի մրջիւններ ուղարկւում են թշնամիների բունը դռնելու. դրանք լրտեսներն են:

Գտնելով բունը և ծանօթանալով ճանապարհի լրտեսները յետ են դառնում իրանց բունը: Մի փոքր ժամանակից յետոյ մըրջնանոցից դուրս են թափւում զինւորները ահագին քանակութեամբ և կարգին շարւում, կազմւում է նրանցից կանոնաւոր զօրք, որի մէջ լինում են 600—800 կամ էլ ավելի մրջիւն: Արշաւանքը սկսւում է.

Զօրքը կամաց-կամաց առաջ է ընթանում յայտնի ճանապարհով: Իսկ եթէ ճանապարհը լաւ չէ իմանում, այն էամանակ առաջի գունդերը մերթ գնում են, մերթ կանգնում, հոտոտում, որպէս զի թշնամի մրջիւնների հետքը դռնեն:

Լեւսպետի ¹⁾ ասելով՝ *Formica rufescens* տեսակին պատկանող մրջիւնները աշնանը յաճախ յարձակումներ են անում *Formica cunicularia* տեսակի մրջնանոցի վերայ: Թէև այս վերջինները արիաքար կուռւում են, բայց յաղթութիւնը տանում է միշտ *Formica rufescens* շնորհիւ իր ոյժին: *Formica rufescens* զորով մտնում են իրանց թշնամիների բունը, խլում են նրանց դիմակաւորներին ու թրթուրներին (*рыкозая*), յետոյ դուրս են փախչում, իսկ նրանց ետեւից վազում են *Formica cunicularia* և աշխատում յետ խլել իրանց ձագերին:

Յաղթողները տակնուվրայ են անում իրանց թշնամու մրջնանոցը ու յետոյ վերադառնում իրանց բունը՝ բերելով իրանց յետ հարուստ աւար: Ամեն մի պատերազմից յետոյ պատերազմի դաշտում լինում են թափւած մեծ քանակութեամբ մրջիւնների տեսակներ:

Շատ անգամ կռիւը հասցնում է կուռողներին մինչև կատա-

¹⁾ Տես Զորջ Ռոմէնս.—Կենդանիների խելքը, անգլերէնից ռուսերէն թարգմանութեան էջ 19:

զուլթեան. այստեղ, ինչպէս և մարդկային պատերազմների ժամանակ, զինւորները յաճախ քարասիրտ կերպով են վարւում յաղթւածների հետ: Պատահում է օրինակ, որ յաղթողներից մի քանիսը ճանկում են իրանց թշնամիներից մէկին, որին միանգամից չեն սպանում, այլ առաջ պոկում են թշնամու ոտը, յետոյ բեկները, յետոյ մնացած ոտերը, կամ թէ կծում են ուղղակի թշնամու գլուխը ու այնպէս գցում գիակը:

Այդպէս ուրեմն ամեն մի մրջնանոց միշտ վտանգի մէջ է. ամեն րոպէ թշնամիները կարող են յանկարծ վրա տալ և ամեն բան քարուքանդ անել:

Այդ պատճառով այն հասարակութիւնները, որոնք ամենից շատ են ենթարկւում յարձակումների, առանձին պահապաններ են դնում մրջնանոցի մուտքերի մօտ:

Յայտնի բնադէտ ֆոլերը ասում է, *Colobopsis truncata* տեսակի մրջիւնները, որոնց բունը ունենում է երկու կամ երեք մուտք, դնում են մուտքերի մօտ պահապան-զինւորներ, «որոնց հաստ գլանաձև գլուխները կողսում են մուտքերը այնպէս, ինչպէս խցանը կողսում է շիշի բերանը» ¹⁾: *Componotus* տեսակի պահապանները իրանց գլուխները դուրս են հանում մրջնանոցի ծակերից և այդպէս «պասում թշնամիներին. երբ այս վերջինները գալիս են, պահապանները կամ պինդ խփում են նրանց իրանց գլուխներով կամ թէ կծում են:

Casius տեսակի մրջիւնները բարրիկապներ (պատնէշ) են շինում, երբ թշնամին յարձակում է զործում: Մրջնանոցի ամեն մի անցք, ամեն մի մուտք մրջնանոցի նրանք ամուր կողսում են և «մինչդեռ մի մասը (մրջիւնների) պաշտպանում է մուտքերը, միւսը մրջնանոցի քամակից փորում է ստորերկրեայ անցքեր, որպէս զի մըրջնանոցի բնակիչները կարողանան փախչել, եթէ կարիքը պահանջէ»:

Ես արդէն վերև ասացի, որ յաղթողները անմիջապէս մանում են յաղթւածների բունը և խլում են նրանց դիմակաւորներին (ձագերին) ու տանում իրանց մրջնանոցը: Ուրիշ մրջնանոցների ձագերին խլելու ձգտումը այնքան մեծ է, որ մրջիւնները շատ անգամ արշաւանքներ են ձեռնարկում միայն նրա համար, որ զողանան կամ խլեն ուրիշ մրջիւնների ձագերին:

Ի՞նչ են անում մրջիւնները ուրիշների ձագերի հետ: Հուբերի, Դարւինի, Ֆորելի, Լեոպէսի և ուրիշ յայտնի գիտնականների դիտողութիւնով արդէն վճռւած է այդ հարցը ¹⁾: Բերելով իրանց բռնը թշնամիների ձագերին, մրջիւնները հոգս են տանում այդ վերջինների համար մինչև որ նրանք բոլորովին կը զարգանան: Այնուհետև զրանք դառնում են չաղթողների ստրուկները և կատարում են իրանց թշնամի հասարակութեան տնային աշխատանքները: *Formica sanguinea* տեսակի մրջիւնները շատ խիստ են պահում իրանց ստրուկներին, չեն թողնում, որ նրանք դուրս գան մրջնանոցից: *Formica rufescens* ընդհակառակը յանձնում է ստրուկներին համարեա բոլոր հասարակական աշխատանքները, ստրուկները կատարում են տնային զործերը, գնում են հեռու տեղերից կերակուր բերում իրանց աղաների համար... Զարմանալի է, որ ստրուկները այնքան ընտելանում են իրանց աղաներին, որ չեն փախչում, երբ նրանց ուղարկում են կերակուր բերելու համար:

Յայտնի է, որ ստրուկների պահելը միշտ վատ է ազդել մարդկային ցեղերի զարգացման վերայ: Այն տեղերը, որոնք սովորութիւն են ունեցել ստրուկներ պահել և նրանց յանձնել իրանց բոլոր աշխատանքները, միշտ յետադիմել են, միշտ քայքայւել են բարոյապէս:

Միևնոյն պատճառը (ստրուկներ պահելը) միևնոյն հետևանքն է արտադրել և մրջիւնների հասարակութեանց մէջ:

Մրջիւնները նոյնպէս մի քանի քայլ յետ են գնացել ստրուկներ պահելու պատճառով: Ռեդրէսը (յետադիմութիւնը) աւելի սաստիկ է եղել մրջիւնների այն տեսակներում, որոնք իրանք ոչինչ չանելով՝ իրանց բոլոր զործերը և աշխատանքները յանձնել են ստրուկներին:

Իբրև օրինակ կարելի է բերել *Polyergus rufescens*-ին: Այդ տեսակի մրջիւնները ստրկապահութեան պատճառով կորցրել են շիւնութիւններ կառուցանելու ընդունակութիւնը, նրանք էլ չեն կարողանում հոգալ ու պահպանել իրանց ձագերին, մի խօսքով նրանք կորցրել են ընդունակութիւն գէպի որ և է զործ, աշխատանք:

¹⁾ Զմն Ռամէնո.—Նենդանիների խելքը. անգլիերէնից սուսերէն թարգմանութեան էջ 78.

Այդ դեռ բաւական չէ. *Polyergus rufescens*՝ը կորցրել է նոյն իսկ կերակուր ուտելու ընդունակութիւնը: Այդ տեսակի մըրջիւններին կերակրում են նրանց ստրուկները:

Հուլիսը մի անգամ վերցրեց 30 հատ *Polyergus rufescens*, նրանց մօտ դրեց բաւական կերակուր, իսկ ստրուկներին բոլորովին հեռացրեց: Այդ մըջիւնները՝ չը նայած որ նրանց մօտ բաւական կերակուր կար, չէին կարողանում օգտել կերակուրով, նրանց կէսը կոտորեց սովածութիւնից, միա կէսն էլ կը կոտորէր՝ եթէ Հուլիսը ներս չը թողնէր նրանց մօտ մի քանի ստրուկներ, Վերջիւնները՝ ներս մտնելով *Polyergus rufescens* մօտ, սկսեցին վեր առնել կերակուրից և կերակրել իրանց կիսակենդան աղաներին և աղապէս նրանց մահից ազատեցին:

Պատահում է, որ *Polyergus rufescens*՝ի հասարակութիւնը փոխում է իւր բնակարանը. թողնելով իրանց հին մըջնանոցը. նրանք բռն են դնում մի ուրիշ տեղ: Հին մըջնանոցից նորը անցնելու ժամանակ *Polyergus rufescens* իրանք չեն դնում ոտով, այլ նրանց տանում են ստրուկները իրանց մէջքի վերայ:

Անցնենք մըջիւնների մի ուրիշ՝ վերին աստիճանի հետաքրքրական սովորութեանը: Խօսքս մըջիւնների ընտանի կենդանիների մասին է: Վաղուց ի վեր յայտնի էր, որ յաճախ մըջնանոցներում, բացի մըջիւններից, լինում է մի տեսակ միջատ, որը անւանում է բոյսերի ոջիլ (*травяная тля*): Խնչ կապ կարող է լինել այդ միջատների և մըջիւնների մէջ: Աւելի ևս սկսեց հետաքրքրել այդ հարցը երբ իմացան, որ բոյսերի ոջիլները պատահամբ չեն լինում մըջիւնների բներում, այլ երկար ժամանակի ընթացքում, ամիսներով, նոյն իսկ տարիներով, ապրում են մըջնանոցում:

Կան մըջնանոցներ, որոնց մէջ այդ ոջիլներից լինում է մօտ հազար կամ էլ աւելի: Հետաքրքիր է, որ մըջիւնները առհասարակ չեն սիրում, որ իրանց բներում լինեն կողմնակի կենդանիներ. եթէ պատահամբ նրանց բռնը մոռնէ մի ուրիշ՝ նրանց հասարակութեանը չը պատկանող մըջիւն, նրան իսկոյն կը խռկեն մըջնանոցից: Մինչդեռ միևնոյն մըջիւնները ոչ միայն թոյլ են տալիս ոջիլներին ազատ ապրել իրանց բներում, այլ և շատ քնքշաբար են վարում նրանց հետ:

Վիտելով ոջիլներին՝ զխոնականները տեսան, որ մըջիւնները ժամանակ առ ժամանակ մօտենում են ոջիլներին և սկսում են շո-

յեւ նրանց մարմինը իրանց բեխերով: Այդ գործողութեան ազդեցութեան տակ՝ ոջիւնների մարմնից արտաթորւում է մի ինչ որ թանձր և քաղցր հեղուկի կաթիլներ, որոնց անմիջապէս լպստում-ուտում են շոյող մրջիւնները: Դրանից յետոյ մի առժամանակ հանգիստ են թողնում այդ ոջիւններին, յետոյ նորից շոյում են և նորից լեզում նրանցից դուրս եկող հեղուկը:

Այս երևույթը ասպցուցել են Դարւիլը և ուրիշ յայտնի գիտնականներ:

Ուրեմն ակներև է, որ մրջիւնները պահում-պահպանում են ոջիւններին միայն նրա համար, որ նրանց կթեն ու կերակրւեն նրանց «մեղրով»: Մրջիւնները, ասում է երևելի գիտնական Ջոն Լեօբբովը, բառիս բուն նշանակութեամբ կթում են ոջիւններին, որովհետև, ինչպէս ցոյց տւին Դարւիլը և միւսները, ոջիւնները առհասարակ չեն արտաթորում իրանց հեղուկը մինչև որ մրջիւնները պատրաստ չը լինեն ընդունելու նրան (հեղուկը)՝ ¹⁾:

Վերին աստիճանի հետաքրքիր է, որ յաճախ մրջիւնները հաւաքում բերում են իրանց բունը ոջիւնների ձուերը, նրանց համար այնպէս հոգս են տանում՝ ինչպէս իրանցների, երբ նրանցից դուրս են գալիս փոքրիկ ոջիւններ, նրանց խնամում են, պահպանում քնքշաբար մինչև որ նրանք կը մեծանան ու յետոյ կթում են...

Ելի մի երևույթ մրջիւնների կեանքից:

Կայ մի բոցս, որի սերմը սաստիկ սիրում են մրջիւնները — դա «մրջիւնների բրինձն» է, ինչպէս նրան անւանում են:

Այդ բոցսը մեծ քանակութեամբ բուսնում է մրջիւնների բների մօտ: Մի քանի տեսակ մրջիւններ օգուտ են քաղում դրանից այսպէս՝ նրանք ընտրում են մրջնանոցի շուրջը բաւական մեծ տարածութիւն, որտեղից կրճոտելով հեռացնում են բոլոր անպէտք խոտերը և թողնում են միայն «մրջիւնների բրինձը» ազատ բուսնելու համար:

Այդ՝ մրջիւնների այգին է, որի համար քիչ չեն հոգում մրջիւնները: Ամեն անգամ, երբ այդ այգում նորից սկսում են զար-

¹⁾ Սըր Ջոն Լեօբբով.—Մրջիւնները, մեղունները և պիճակները անգլիէից ռուսերէն թարգմանութեան էջ 68:

գանալ անպէտք բոյսեր, մրջիւնները շտապում են կրճոտել-պոկոտել նրանց, որպէս զի նրանք չը խանդարեն իրանց համար թանկագին «բրինձին»:

Երբ «բրինձը» բոլորովին հասնում է, մրջիւնները սկսում են հաւաքել «բրինձի» հատիկները և ածել իրանց ամբարների մէջ...

Առաջ քան վերջացնեմ խօսքս մրջիւնների մասին, աւելորդ է լինիլ մի փոքր կանգ առնել այն հարցի վերայ թէ արդեօք մրջիւնները ընդունակ են հաղորդել իրար՝ իրանց մտքերը, թէ ոչ: Այս հարցը վճռելու համար Ջոն Լեօբբոկը շատ փորձեր առաւ:

Մի անգամ նա բռնեց մի մրջիւն և նշան արաւ նրա վրայ (կարմիր թանաքով մի կէտ զրեց նրա մէջքին), աջնակս որ այդ մրջիւնին հնչոյ կարելի էր չսկիւ միւսներին: Յետոյ նշան արած մրջիւնին նա բաւականին հեռացրեց մրջնանոցից և նրա առաջ զրեց տախտակի մի փոքրիկ կտոր, որին ամուր կպցրել էր քորոցով մի մեծ ճանձ: Մրջիւնը շատ աշխատեց որ պոկի ճանձին, բայց չը կարողացաւ: Մի քանի անգամ էլ փորձելուց լիտոյ նա, խնչակս երեւի համոզւեցաւ, որ իրա ուժերից վեր է պոկել ճանձին և վաղից իրա մրջնանոցը, չանցաւ մի բոպէ և աջնակից զուգս եկան 12 մրջիւններ և ուղեւորւեցան դէպի այն կողմը, ուր գտնուում էր ճանձը, իսկ նրանց առաջ վազելով ճանապարհը ցոյց էր տալիս նշան արած մրջիւնը: Պէտք է աւելացնեմ, որ ճանձը բաւական հեռու էր և աջնակս տեղ էր գրւած, որ նրան չէր կարելի նկատել մրջնանոցի մօտերէն: Այնուամենայնիւ բոլոր մրջիւնները վազում են դէպի ճանձը: Ամենից առաջ ճանձին հառաւ նշան արած մրջիւնը, նրանից լիտոյ եկան ընկերները և սկսեցին միասին աշխատել, որպէս զի պոկեն ճանձը: Այդ ժամանակ Ջոն Լեօբբոկը քորոցը հանեց և մրջիւնները առան ճանձը ու վազելով տարան իրանց բունը:

Շատ անգամ կրկնեց Ջոն Լեօբբոկը այդ փորձը և միշտ միևնույն հետևանքն տեսցան. ամեն անգամ նշան արած մրջիւնները վազում էին իրանց բունը և աջնակից բերում բաւական ընկերներ, որպէս զի ընդհանուր ուժերով կարողանան պոկել ճանձը ու տուն տանել:

Այնեքեւ է, որ նշան արած մրջիւնները՝ գալով մրջնանոցը, հաղորդում էին իրանց ընկերներին ճանձի գիւտի մասին:

«Այս փորձերը, ասում է Ջոն Լեօբբոկը, խնայեալ ցոյց են տալիս, որ մրջիւնները ունին մի ինչ որ լեզուի պէս բան...»¹⁾: Մի փոքր չետոյ Լեօբբոկը աւելացնում է՝ «Երբ մենք տեսնում ենք մի մրջնանոց,

¹⁾ Ջոն Լեօբբոկ, Նոյն զիրք էջ 178:

ուր ապրում են հազարաւոր աշխատասէր բնակիչներ, որոնք կառուցանում են շինութիւններ, շինում են տոններ, ճանապարհներ, պահպանում են տունը, հաւաքում են կերակուր, կերակրում են իրանց ձագերին, հոգում են իրանց ընտանի կենդանիների համար—և ամեն մէկը կատարում է իր զործը աշխատասիրութեամբ ու առանց շփոթւելու--ի նկատի ունենալով այդ բոլորը, չժւար է ընդունել այն միտքը, թէ յոքա զրկւած են խելքից և զիտակցութիւնից: Վերև բերած զիտողութիւնները, ընդհակառակը, աւելի հաստատում են այն միտքը, թէ մըջիւնների մտաւոր ընդունակութիւնները զանազանւում են մարդկային մտաւոր ընդունակութիւններից ոչ այնքան էութեամբ, ինչքան աստիճանով»¹⁾:

Ինչպէս մարդկային ցեղերը, այնպէս և մըջիւնների տեսակները զանազանւում են իրարից մտաւոր զարգացումով: *Formica fusca* տեսակը ապրում է որսորդութեամբ, «թէև այդ տեսակի մըջիւնները մասամբ կերակրւում են ոջիլների քաղցր հիւթով, բայց նրանք չեն ընտանացրել ոջիլներին... Նրան նման են մարդկութեան ցածր ցեղերին, որոնք ապրում են որսորդութեամբ: Վերջինների նման այդ մըջիւնները թրև են գալիս անտառներում, ապրում են փոքրիկ խմբերով և նրանցում քիչ է զարգացած համերաշխ գործունէութեան բնազդումը...» *Lasius flavus* տեսակի մըջիւնները աւելի բարձր են. նրանք ընտելացրել են մի քանի տեսակ ոջիլներ, աւելի լաւ են կառուցանում շինութիւններ, ընդհանուր ոյժերով, «նրանց կարելի է համեմատել մարդկութեան այն ցեղերի հետ, որոնք ապրում են անասնապահութեամբ...» «Վերջապէս մարդկութեան երկրագործական ցեղերը կարող են համեմատւել հնձող մըջիւնների հետ (որոնք պահում են բրինձի այգիներ)»²⁾:

Առաջ բերած ֆակտերը կարծեմ, բաւական են ցոյց տալու համար: Թէ մտաւոր զարգացման որքան բարձր աստիճանին են հասել այդ փոքրիկ արարածները:

1) Նոյն տեղ էջ 179:

2) Նոյն տեղ, էջ 89—90:

II

Թուշունները, նրանց վիշոգութիւնը, հետաքրքրութիւնը, Սէրը թուշունների բջանում: Մալրական սէր: Թուշունները սիրում են ցոյց տալ իրանց զարդերը: Թուշունների էստետիքական զարդացումը: Թուշունները ընդունակ են գնահատել նաև մուզիկան:

Մեծ խելք է նկատուում նաև սարդերի զործերի մէջ. նրանց աստացնը համարում է մի իսկական հրաշալիք, նրանց բռնելու հնարներում նկատուում է ճարպիկութիւն, խելք, սրամտութիւն: Սակայն սարդերի մասին երկար խօսելը մեզ շատ հեռու կը տանէր, այդ պատճառով ես ուղղակի կ'անցնեմ մեզ համար աւելի հետաքրքրական կենդանիներին — թուշուններին:

Թուշունները ունեն մեծ յիշողութիւն: Յայտնի է որ ձմեռը գալուն պէս շատ թուշուններ թողնում են իրանց բները ու թըռչում աւելի տաք երկիրներ, շատ անգամ նրանք սրտահոգում են ճանապարհին ահագին ծովերի, թուշում են անցնում այդ ծովերի վրայով: Զը նայեա՞ծ այդ հեռաւորութեանը, երբ դարունը սկսում է, նոյն թուշունները նորից վերադառնում են նոյն ճանապարհով իրանց հին բները: Հասկանալի բան է որ ճանապարհին զոնեող բազմութիւ երկիրները մոքում սրահելու համար ահագին յիշողութիւն է հարկաւոր ունենալ:

Իբրև օրինակ կարելի է բերել և թութակներին, որոնք ընդունակ են բերան անել ամբողջ նախադասութիւններ և նրանց մոքումը պահել երկար ժամանակի ընթացքում:

Մի գիտնական իւր թութակի տուաջ երգեց մի ինչ որ մեկոդիա, կարճ ժամանակից չետոյ թութակը սկսեց փորձեր անել երգելու նոյն մեկոդիան սկզբում նա վատ էր երգում, բայց նա աչնքան երկար կրկնեց իր դատը, որ երկու երեք օրից չետոյ նրան չաջողեց վերջապէս լաւ երգել ալլ երգը:

Նթէ երկար ժամանակի ընթացքում թութակը չի կրկնում մի որ և է նախադասութիւն, նա մոռանում է, բայց բաւական է նրան յիշեցնել նախադասութեան առաջին խօսքը, և նա կը մտաբերի ու կ'արտասանի ամբողջ նախադասութիւնը:

Այս երևոյթը վերին աստիճանի հետաքրքրական է, որովհետև

նա ցոյց է տալիս, որ թռչունների ուղեղը մարդկանց ուղեղի նման ընդունակ է կազմել ասոցիացիաներ:

Առհասարակ պէտք է տեսնել, որ թռչունները լինելով բարձր իրանց մտաւոր զարգացմամբ, նրանց հոգեկան երևոյթները վերին աստիճանի բարդ են. նրանցում գոյութիւն ունեն համարեա բոլոր մարդկային զգացմունքները:

Ահա մի օրինակ, որը ցոյց է տալիս, թէ թռչունները ընդունակ են երկար ժամանակ մտքումը պահել իրանց հասցրած վիրաւորանքը և բարեպատեհ բոսկում վրէժը հանել:

Մի թութակ բարկացել էր կառւի վերայ ալն պատճառով, որ վերջինս թափել էր ավաէից թութակի կերակուրը: Մի ժամից չնոց թութակը սկսեց ցոյց տալ, թէ իբր բոլորովին հաշտել է կառւի հետ և քնքով ձայնով սկսեց կանչել «կիս, կիս, կիս, եկ էտեղ, եկ կիս»: Նրբ կատուն մօտեցաւ, թութակը իր կտուցով բռնեց կաթով լիքը ավաէն և ալնպէս չուռ տեց, որ բոլոր կաթը թափեց կառւի վերայ: Մինչև որ խեղճ կատուն իրան մաքրում էր, թութակը բարձրաձայն ծիծաղում էր նրա անբաղդութեան վերայ ¹⁾:

Թռչունները աստիկ հետաքրքրւում են ամեն մի բանով, որ նոր է նրանց համար: Օրինակ երբ մարդիկ առաջին անգամ ոտք էին դնում այնպիսի կղզիների վերայ, ուր նրանցից առաջ ոչ ոք (մարդկանցից) չէր եղել, այդ կղզիների թռչունները առանց վախենալու մօտենում էին նրանց և սկսում հետաքրքրութեամբ դիտել: Միմիայն աւելի ուշ, երբ թռչունները տեսան, որ այդ տեսակ հետաքրքրութիւնը նրանց շատ թանկ է նստում, նրանք սկսեցին փախչել մարդուն տեսնելուն պէս:

Անթիւ ֆակտերով կարելի է ապացուցանել, որ թռչունները օժտւած են ամենաքնքրոյշ և ամենանուրբ զգացմունքներով:

Պարիզի Jardin des Plantes-ում (որ կենդանաբանական մեծ աղբի է) ապրում էր մի զուգ ջալամ (սորաուս). նրանցից մէկը (էգը) մի ինչ որ պատճառից մեռաւ. ալը հանդամանքը ալնպէս ներդրեց նրա խեղճ ամուսնու վերայ, որ նա էլ կարճ ժամանակից չնոց վախճանեց:

Ահա մի օրինակ էլ:

Աղանիները մի ալգում, որտեղ սերմած էր սխուռ, ահալին վնաս-

¹⁾ Զորջ Ռոմէնո, նոյնտեղ, էջ 283:

Ներ էին տալիս ալգեթիրոջը, աշխատեալ որ վերջինս տախտակի վրայ պահապան ըլնել, ալգիւն պահպանելու համար:

Իսկ պահապանը, տեսնելով որ նրանից ազատուելու հնար չը կա, հրացանի օգնութեամբ սպանեց նրանցից մէկին: Հէնց որ ալգ պատահեց՝ սպանւածի անուիրն մի ակնթարթում թռաւ ներքեւ ու «սկսեց ամենաազդու կերպով տրտալատել իր ցաւը»: Ալգ զեւ բաւական չէ: Երբ նոյն պահապանը միւս ազաւաններին վախեցնելու համար կապեց սպանւած աղաւանու զետիկը ալգիւն ցցած փաշտի ծալից, ալգ բռնեց լեռն նրա ամուսինը ամբողջ օրերը անց էր կացնում ցցած փաշտի մօտ, և միայն աշն ժամանակ հեռացաւ փաշտից, երբ վերջրին և հեռացրին ալգից աղաւանու զետիկը ¹⁾:

Հետեւեալ խնդիր ցոյց է տալիս, որ թուշուները ընդունակ են ոչ միայն խորին կերպով սիրել, այլ և զարմանալի կերպով հաւատարիմ լինել զէջի տախտակները:

Պր. Բիլի թուշանոցից մի գիշեր գողացան որձ-բաղին: «Ջրկեւով ամուսնուց, նրա անբաղի կինը ընկաւ չուսահատութեան մէջ. նա կուշ եկաւ մի անկիւնում, ոչ ուտում էր ոչ խմում... Ալգ ժամանակ մի ուրիշ որձ բաղ սկսեց մտերմանալու նրա հետ, բայց ալգի կողմից ոչ մի համակրութիւն չը գտաւ: Իսկ երբ գողացած բաղը գտնուեցաւ և բերեցաւ իր առաջաւ տեղը, նրա կինը տխրութեանը փոխարինեց անասելի ուրախութիւն»:

Յայտնի բան է, որ այդ տեսակ «բարոյականութեամբ» չեն կարող պարծենալ բոլոր թուշուները. կան նրանց մէջ և այնպիսիները, որոնք շատ թեթեւ կերպով են վերաբերում գէյի ամուսնական ինդիքը, այդ բանում էլ յետ չը մնալով մարդկանցից:

Այն հանգամանքը, որ շատ թուշուներ՝ կորցնելով իրանց ամուսիններին երկար ժամանակ (կամ նոյն իսկ ընդ միշտ) մնում են ալգի՝ չը ցանկանալով նոր ամուսիններ ընտրել, հետաքրքիր է նրանով, որ ցոյց է տալի, թէ թուշուների երեւակացութիւնը ընդունակ է երկար ժամանակ պահել իր մէջ «սիրւած ամուսնու պատկերը», ինչպէս ասում է Բոմենսը:

Թէև այդ տեսակ փաստեր անվերջ կարելի էր առաջ բերել, բայց բաւականա՞նք նրանով, ինչ որ ասել ենք այդ բանի մասին, որովհետև միւս փաստերն էլ միևնոյն եզրակացութեանն են բերում,

¹⁾ Ջ. Բոմենս, նոյնտեղ, էջ 277:

այն է, որ թուշունները ընդունակ են արտայայտել ամենախոր կերպով համակրանք և սէր, մինչև այն աստիճան, որ կարող են նոյն իսկ իրանց անձը զոհել այդ զգացմունքի համար:

Թուշունների կեանքում արտայայտուում է մի ուրիշ խորը զգացմունք էլ—սէր դէպի իրանց ձաղերը: Մայրական զգացմունքը այնքան ուժեղ է, որ ստիպում է թուշուններին համարեա մոռանալ իրանց անհատական բախտը: Քանի քանի անգամ թուշունը իր կեանքը վտանգի է ենթարկում, որպէս զի իւր ձաղերը չը վնասեն: Բայց այդ տեսակ փաստերը հանրաժանօթ են:

Ամենքը գիտեն, որ կան շատ թուշուններ զարդարած գոյնգոյն փետուրներով: Բանից դուրս է զալիս, որ ըստ մեծի մասին լինում են շքեղ զարդարած որձերը, մինչդեռ էգերը ընդհակառակը ունենում են շատ հասարակ փետուրներ: Ինչ է նշանակում այդ երևոյթը: Ինչո՞ւ որձերը աւելի են զարդարած:

Ահա մի քանի դիտողութիւններ, որոնք լոյս ես ձգում այդ հարցի վերայ Polyplectron (սիրամարգ) թուշունի որձը ունի հիանալի փետուրներ: Երբ նա սկսում է սիրային ցոյցեր անել, ամենից առաջ նա բաց է անում իր սքանչելի թևերը էգի առաջ: Գիտնականները պատմում են որ Polyplectron-ը այդ գործողութիւնը կատարում է առանձին աշխատանքով, որձը այնպէս է դասաւորում իր փետուրները, որ էգի առաջ երևան դաջ նրա բոլոր գեղեցկութիւնը:

Ազաւնու կրծքի փետուրները ինչպէս յայտնի է բաւական գեղեցիկ են և «ամենքը՝ յայտնի բան է, տեսած կը լինեն, թէ ինչպէս որձը փքում է իր կուրծքը սիրային ցոյցեր անելու ժամանակ, որպէս զի երևան դաջ այդ փետուրների բոլոր գեղեցկութիւնը», ասում է Դարւինը:

Մի ուրիշ տեսակ ազաւնի (Աւստրալիացի) ունի շատ գեղեցիկ թևեր և համեմատ այդ հանդամանքներին՝ էգի առաջ նա չէ փքում իր կուրծքը (որը գեղեցիկ չէ), այլ հովհարի նման բաց է անում շքեղ թևերը:

Ունենալով բազմաթիւ այդ տեսակ փաստեր աչքի առաջ՝ Դարւինը և շատ ուրիշ գիտնականներ եկան այն համոզմունքին, որ թուշունների զարդարանքը կապ ունի նրանց սիրոյ զգացմունքի հետ:

Ահա Դարւինի խօսքերը:

«Ամեն տեսակ զարդարանքները՝ թէ մշտական և թէ ժամանակուոր՝ ցոյց են տրում որձերի կողմից կոկետաբար և ինչպէս երևի նրանք (զարդարանքները) ծառայում են նրա համար, որ դուռեն, զմայլեն կամ հիացնեն էգերին» ¹⁾։

Օղիւբոնը, որը հիանալի կերպով ուսումնասիրել է թռչունների սովորութիւնները, ասում է նոյնպէս, որ թռչունների որձերը զանազան հնարներ են գործ դնում էգերին զմայլելու համար ²⁾։

Մի քանի տեսակ թռչուններ կազմելով խմբեր հաւաքւում են մի որոշ տեղ։ Ամեն մի խմբում լինում են միայն երկու երեք էգեր, մնացածը լինում են որձեր։ Էգերը կանգնում են խի որձերը սկսում են «պարել»։ Նրանք կամ թռչկոտում են, կամ վազում են բարձր պահելով իրանց գլուխները, կամ յանկարծ բաց են անում իրանց թևերը, մի խօսքով ինչ ընդունակութիւն ունեն ցոյց են տալի էգերին։ Երբ մէկը նշանց տալով իր «հունարները» վերջացնում է, դուրս է գալի շրջանից, իսկ նրա տեղը զալիս է մի ուրիշ որձ, որը խաղում է նոյն խաղերը մինչև որ կը հոգնի, այդ ժամանակ նա դադարում է, իսկ նրա տեղը բռնում է մի երրորդը և այլն։

Այդպիսով թռչունները կատարում են միևնոյն բանը, ինչ որ անում էին առաջ ասպետները, որոնք ժողովելով մի տեղ աշխատում էին՝ իրար գերազանցել ճարպկութեամբ, ոյժով, գեղեցկութեամբ։ Միևնոյն շարժառիթը (ցանկութիւն դուր գալ գեղեցիկ սեռին) միևնոյն երևոյթն է արտադրում մարդկանց և թռչունների շրջանում։

Այս փաստերից մի ուրիշ եզրակացութիւն էլ կարելի է դուրս բերել—եզրակացութիւն, որի նշանակութիւնը մեծ է։

Եթէ որձերը ամեն անգամ աշխատում են բաց անելով իրանց թևերը «կոկետաբար» ցոյց տալ իրանց փետուրների գեղեցկութիւնը, եթէ միւս կողմից էգերը խորին ուշադրութեամբ դիտում են որ-

¹⁾ Չ. Գարլին,—Մարդու ծագումը, անգլ. ուսերէն թարգմանութեան հատ II, էջ 95։

²⁾ Միւս կողմից այն թռչունները, որոնք չունեն զարդարանքներ, երբեք բաց չեն անում իրանց թևերը էգերին դուր գալու դիտաւորութեամբ, նրանք կարծես զգում են որ չեն զարմացնի իրանց հասարակ հագուստով։

ձերի շքեղ զարդարանքները, կը նշանակի, որ եզերը ընդունակ են զնահատել այդ զարդարանքների գեղեցկութիւնը, նրանք ունեն ճաշակ զնահատելու գեղեցկութիւնը:

Կան մի քանի փաստեր թռչունների կեանքին, որոնք աւելի ևս պարզ կերպով ապացուցանում են, որ թռչունները իրօք ունեն յայտնի էստետիքական զարգացում:

Մի աւտարալիական թռչուն—*Chlamydera maculata*, որը սովորութիւն ունի չինել իւր բունը ծառի վերայ, բայց բնից, գետնի վերայ կառուցանում է ճիւղերից վրանի պէս մի շինութիւն դորձ գնելով ահագին աշխատանք: Նրբ շինութիւնը պատրաստ է որձերը սկսում են նրան զարդարել զանազան փալուն առարկաներով, նրանք հաւաքում են գեղեցիկ փետուրներ, դոնդղոն խնցի մորթեր (РАКОВИНЫ), սպիտակ ոսկորների կտորներ և զրանց ամրացնում են շինութեան պատերի վերայ կամ թէ զարդարում են մուտքը:

Չարդարելու ցանկութիւնը ամենքան մեծ է, որ շատանգամ թռչունները չը գտնելով գեղեցիկ առարկաներ իրանց վրանի մօտերքում, բերում են աղպիսիները հեռու տեղերից:

Մի տեսակ թռչուն զարդարել էր իւր վրանը «կապուտ, կարմիր և սև պտուղներով, որոնք երբ գեւ թաքմ են, սատարիկ գեղեցիկ տեսք են տալի վրանին: Բայց զրանից վրանում կալին շատ թաքմ տերեւներ վարդագոյն ճիւղերի հետ, և այդ բոլորը միասին ցոյց էր տալի, որ այդ թռչունը անկասկած ունի ճաշակ գէպի գեղեցիկը»¹⁾:

Վրանը շինելուց և զարդարելուց լետուց, նրա մէջ ժողովում են երկու սեռի անհասները (վրանը լինում է շատ մեծ) և սկսում իրանց անվերջ զարթոնքիւնները ու սիրահարական խաղերը:

Խօսելով թռչունների ճաշակի մասին Դարւինը աւելի ևս հեռու է գնում. ապացուցանելով, որ թռչունները անկասկած ունեն ճաշակ գէպի գեղեցիկը, նա մի շարք փակտերի վերայ չենվելով ցոյց է տալիս, որ հէնց նոյն էսթետիքական զգացմունքն է արուսդրել թռչունների շքեղ զարդերը: Սիրելով գեղեցկութիւնը՝ թռչունների էզերը երկար տարիների ընթացքում ընտրելիս են եղել իրանց համար իբրև ամուսիններ ըստ մեծի մասին աւելի շքեղ զարդարւած որձերին: Այդպիսով զխաւորապէս գեղեցիկ անհատներին է վիճակւած եղել գտնել իրանց համար կին և առաջացնել նոր սերունդներ:

¹⁾ Դարւին.—Մարդու ծագումը:

Հասկանալի բան է, որ այս պայմաններում պէտք է առաջանային որձեր աւելի ու աւելի շքեղ զարդարւած, մինչդեռ էգերը, որոնցից չէին ընտրվում ամենազեղեցիկները. պէտք է մնային աւելի անփոփոխ, միակերպ, չը զարդարւած:

Ուրեմն միւս կողմից թռչունների հիանալի զարդարանքները կողմնակի ասպնոցներ են, որ թռչունները ունեն մեծ էստետիկական զգացմունք, որովհետեւ եթէ չէր եղել այդ զգացմունքը այդ ճաշակը, երբէք չէին կարող առաջանալ թռչունների զարդարանքները:

Այս երևութների հետ կապ ունի թռչունների երգեստութիւնը:

«Թռչունների ձայնը, ասում է Վարլինը, ծառայում է արտայայտելու համար զանազան հոգեկան շարժումներ, օրինակ անհանդստութեան երկիւղ, զայրոյթ, ուրախութիւն...»¹⁾ Իսկ ինչ վերաբերում է թռչունների երգին, նա ծառայում է էգերին գմայելելու համար:

Դրանով է բացատրւում որ որձերը աւելի լաւ են երգում քան թէ էգ թռչունները: Միւս կողմից հետաքրքիր է և այն, որ թռչունները երգում են գլխաւորապէս «սիրոյ» ժամանակամիջոցում, երբ կազմում են նրանցից զոյգեր:

Բեխշտեյնը ասում է, որ դեղձանիկի (кашаеїка) էգը ընտրում է միշտ այն օրձին, որը ամենից լաւ է երգում: Առհասարակ թռչունները լսում են երգերը խորին ուշադրութեամբ:

Երբ մի անգամ բերան մի լաւ երգող թռչուն մի սկսեակ, ուր ևս թռչուններ կային, և երբ նա սկսեց իւր սիրուն երգերը, միւս թռչունները, հաւաքւելով նրա շուրջը, սկսեցին մեծ ուշադրութեամբ լսել նրան:

Վիտտղու-Թիւնները ցոյց տւին, որ թէև երգելու գլխաւոր շարժառիթը «սէրն» է, բայց պատահում է յաճախ, որ թռչունները երգում են լոկ իրանց զւարճութեան համար:

Շատ անգամ թռչուններին ստիպում է երգել նախանձը: Երբ մի տեղ հաւաքւում են շատ թռչուններ և մէկը նրանցից սկսում է երգել, միւսերը նախանձից դրդւած նոյնպէս երգում են, այդպիսով առաջանում է թռչունների մէջ մրցում:

¹⁾ Վարլին. — նույն տեղ, էջ 57:

Այդ խկապէս միւսնոցն երեւոյթն է, որը նկատուում է մեր աշուղների շրջանում, որոնք, ժողովւելով մի տեղ, ճգնում են իրար գերազանցել երգերով և խաղով:

Յայտնի է, որ յաճախ երբ մի աշուղ յաղթւում է, նա իւր առջը զետնին է խփում ու փշրում:

Մրցումը թուշուններին այնքան է զրգսում, որ նրանք երգում են երկար ժամանակ առանց հանգստանալու մինչև ոյժերի սպառումը: Քիչ է պատահում, որ մրցման ժամանակ երգիչներից մի քանիսը ընկնում են անշնչացած:

Այդպէս ուրեմն թուշունները ընդունակ են ոչ միայն զնահատել արտաքին զեղեցիկ թիւներ, այլ և զմայլել աջնպիսի մի նուրբ բանով, որպիսին է մուզիկան:

(Ար չարունափի)

ՆԱՏՈՒՐԱԼԻՍՄԸ ԵՒ ԶՈՒԱՆ

ԷԴՄՈՆ ԵՒ ԺԻՒԼ ԴԵ ԳՈՆԿՈՒՐՆԵՐ

(Edmond et Jules de Goncourt)

ՖԵԼԻՔՍԻ

(Շարունակութիւն ¹⁾)

Un romancier n'est au fond qu'un historien des gens qui n'ont pas d'histoire.

Մեր ամբողջ գործը հիմնած է նեարդային հիւանդութեան վրա:

E. de Goncourt.

Էդմոն ու Ժիւլ դը Գոնկուրները գործը:—Միջավայրի նշանակութիւնը Բալզակի ու Ֆլոբերի բռնաներում:—Դը Գոնկուրների հալեացքը ալլո մասին:—Նրանք նկարիչներ ու կուլիկցիոնիստներ են:—Նրանց դիւրազգացութիւնը:—Նրանց համաշխատութիւնը:—«Յամզանիս եղբայրներ» բռնումը:—Միջավայր և մարդ Գոնկուրների հասկացողութիւնով:—Նախ քողարկումն:—Տիկին Ժիրմէզէն իբրեւ օրինակ միջավայրի ազդեցութեան մարդու վրա:—Նրանց նկարչական հանճարը (երկու օրինակներ):—Գոնկուրների նկարագրած դասակարգերը:—Գուր Ֆլեմմեր ու Ժերմինի Լասերտիօն:—Անձնատրութիւնների ընտրութիւնը:—Գոնկուրների լեզուն: Ամփոփումն:

¹⁾ Տես «Մուրճ» № 7—8:

I

Անտարակոյս, զը Վորկուր եղբայրների երկերը այն յեղափոխութիւնը չ'արեցին Ֆրանսիական ռոմանի ուղղութեան մէջ, ինչ որ արեց անմահ Ֆլոբերի Տիկին Բովարին: Ընթերցող ժողովուրդը երկար միջոց անուշադիր մնաց դէպի այս վիպասանների անզուգական տաղանդը, ժամանակակիցները չը հասկացան նրանց և նոյն իսկ մեր օրերում զը Վոնկուրների մեծ վիպագրական գործը գուցէ արժանապէս չի գնահատած:

Այն ինչ հեղինակաւոր կրիտիկոսները վաղուց արդէն բարձրացրել են այս գրողներին Ֆլոբերի և Զոլայի փառքի աստիճանին. այն ինչ սրանց կարծիքով զը Վոնկուր եղբայրները յետագայ նատուրալիստների անմիջական ուսուցիչներն են:

Երկու եղբայրների երկերի բացառիկ նշանակութիւնը արդի նատուրալիստ շիլլիի զարգացման մէջ ակներև անելով հանդերձ, կրիտիկոսները դժւարանում են մի որոշ տեղ տալ, այսպէս ասած՝ ընդեզրել նրան:

Բալզակը և Ֆլոբերը իրանց անւանական կնիքը դրոշմեցին նատուրալիստ դպրոցի շէնքի վրա, այնպէս որ հմուտ աչքը, զիտելով այդ շէնքը, կարող է մատնացոյց անել սրան պատկանող մասերին: Այն ինչ թէ մեր այժմ ուսումնասիրելիք հեղինակների և թէ նրանց յաջորդների մանրակրկիտ աշխատանքի պտուղը երկար ուսումնասիրութիւնից յետոյ միայն նկատելի է լինում: Պատճառը գուցէ պէտք է որոնել այն հանգամանքում, որ Բալզակը և Ֆլոբերը, ռոմանտիսմի ահռելի կառուցւածքը տապալելով, նատուրալիսմի շէնքը բարձրացրին, իսկ Վոնկուրները և յետագայ մեծ գրողները միայն քանդակեցին, նրբացրին շէնքի պատերը և կահաւորեցին ու զարդարեցին պալատի ներսը:

Սակայն մեր այս էտիւդների նպատակն է բնորոշել նատուրալիստ մեծ գրողների երկերը, իւրաքանչիւր ռոմանիստին իր տեղը որոշել, և ցոյց տալ բոլոր գլխաւոր գործիչների իրար հետ ունեցած կապը: Մեր նպատակն է նոյնպէս, որքան թոյլ են տալիս մեզ այս հետազոտութիւնների ծաւալը և մեր հմտութիւնը, մատնանիչ անել այն պայմանների վրա, որոնք բնորոշում են մի գրողի գրականական ուղղութիւնը:

II

Բալզակն առաջինն եղաւ, որ Թափ տւեց իր վրայից բոման-տիսմի Թմրութիւնը և սկսեց լուրջ աչքով նայել կեանքի վրա: Նա մեզ տւեց մի երկար շարք «Կեանքի նկարագրեր», որոնք (ինչպէս նա յոյս ունէր) պիտի իսկական կեանքը մացնէին վէպի մէջ: Մենք տեսանք, ինչ մեծ և նշանաւոր տեղ էր բռնում նրա վէպերում միջավայրի ուսումնասիրութիւնը:

Բայց մեծ Բալզակի ուղեղը չը կարողացաւ բոլորովին հեռու պահել նրան այն յակումներից, որոնք ժամանակակից գրականութեանը մի առանձին զոյն էին տալիս, և ճշգրիտ մնալով միջավայրի նկարագրութեան մէջ, Նատուրալիսմի հայրը զիջեց Թալաուորոզ գրականական ուղղութեանը, ստեղծելով բացառիկ, վիթխարի, շէքսպիրեան անձնաւորութիւններ:

Ֆլորբերին էր վիճակած մանրացնել (ինչպէս մենք ասել ենք) գործող անձերին, որոնք նրա գրչի տակ զարմանալի ճշտութիւնով երևան են գալիս, իբրև կենդանի, բնական մահկանացուներ, միջին մարդկային յատկութիւններով և հասկանալի հոգեբանական հիւսուածքով:

Սակայն բոմանտիկ մթնոլորտում ապրող Ֆլորբերն էլ զերծ չը մնաց տիրապետող գրականական ուղղութեան ազդեցութիւնից, որը պարզ արտայայտում է Սալամբոի մէջ:

Այսպէս, Բալզակը և Ֆլորբերը ձգտեցին հերոսներին միջավայրին հպատակեցնել, այսինքն մարդուն, իր հոգեբանութիւնով, ենթարկել շրջապատող հանգամանքների ազդեցութեանը, սրանց արդիւնք դարձնել:

Այս նպատակին հասնելու համար, պարզ է որ անհրաժեշտ էր ուսումնասիրել այն շրջավայրը, որի մէջ զրուում էր հերոսը: Եւ այս վիպասանները շրջավայրը ուղղակի լուսանկարում էին բնականից: Ֆլորբերը իբրև զխոնական է ուսումնասիրում միջնավայրը, աշխատելով ինքը չեզօք մնալ, որպէս զի իր անձնական տրամադրութիւնը տոն չը տայ նկարագրութեանը:

Դը Գոնկուր եղբայրների իզծը, ձգտումները նոյնն էին, ինչ որ նրանց մեծ ուսուցիչներին, Բալզակի ու Ֆլորբերի:

Դը Գոնկուրները նոյնպէս աշխատեցին մարդուն շրջափայրի պտուղ դարձնել և այս ձգտումը, որը Բալզակին չը յաջողեց և որը Ֆլորբերի Տիկին Բովարիի մէջ իրագործման էր մօտենում, արտայայտուում է երկու եղբայրների բոլոր բոժանների մէջ:

Միջափայրի նկարագրութեան մէջ դը Գոնկուրները ճշմարիտ որ կատարեալ վարպետներ են և այդ նկարագրութեան պահանջը նրանց մէջ այնչափ անսանձ է, որ երբեմն մոռացնել է տալիս նրանց բոմանի ինտրիգը և ամբողջ գիրքը նւիրուում է կարծես շրջանի ուսումնասիրութեանը:

Սակայն, չը նայելով նկարագրութեան չափազանցութեանը, գործող անձերի հոգեբանութիւնը երբէք չի մոռացուում: Ընդհակառակը նկարագրութիւնը մի միջոց է դառնում այդ հոգեբանութիւնը պարզաբանելու: Եւ ճշմարիտ որ մի որ և է շրջան, մի որ և է պէջգաժ նկարագրելիս, այս բոմանիստները միշտ աչքի առաջ ունեն այն ազդեցութիւնը, որը այդ պէջգաժը գործում է գիտողի վրա:

Այս կէտերը մանրամասն քննադատութեան արժանի են, բայց դը Գոնկուրների գրականական ուղղութիւնը, որի վրա պիտի կանգ առնենք մենք, արգասիք է երկու եղբայրների հոգեբանական առանձնացատկութիւնների:

Ելմոն և ժիւլ դը Գոնկուրները ամբողջապէս իրանց բոմաններումն են և ուրեմն, սրանց երկերը հասկանալու համար, կարևոր է ծանօթանալ նրանց անձնաւորութեան հետ:

III

Ելմոն ու ժիւլ դը Գոնկուրների անունները այնպէս սերտ կապւած են միմեանց հետ, որ թւում է թէ այս երկուսը մի անձնաւորութիւն են կազմում: Եւ, ճշմարիտ, քանի որ ժիւլը դեռ կենդանի էր, երկուսն էլ միասին էին գրում իրանց բոմանները, այնպէս որ Ելմոն և ժիւլ ստորագրած վէպերի մէջ երկուսի տաղանդներն էլ խառնւած են և այսօր անկարելի է ասել, թէ ինչն է պատկանում մէկին և ինչը միւսին:

Դը Գոնկուր եղբայրները նկարիչներ և ժողովածուներ հաւաքողներ էին (կոլեկցիոնիստներ): Կրիտիկոսների նկատմամբ, դը Գոնկուրների այս գեղարւեստասէր հոգին և կոլեկցիոնիստի ճաշակը

մի առանձին գոյն են տալիս նրանց հեղինակութիւններին: Մինչև 1850 թականը նրանք գեղարւեստով էին պարապել, նրանք ճանապարհորդում էին Իտալիայում, սքանչանալով շքեղ բնութիւնով, ուսումնասիրելով հռոմէական ասլշեցնող գեղարւեստը և վերածննդեան դարի (Renaissance) յափշտակող յիշատակները: Պէտք է կարդալ նրանց Տիկին Ժերվէզէն (Madame Gervaisais): Ամբողջ գիրքը նւիրւած է Հռոմի նկարագրութեանը, իր Վատիկանով և եկեղեցիներով, իր վիթխարի հնադարեան շէնքերով և հրաշակերտ արկաներով. — հռոմայական և իտալական քաղաքներ, մի խառնուրդ դիւցաբանական յիշատակների և քրիստոնէական դարերի գեղարւեստի պտուղներին. — Պոմպէյը և Վատիկանը, Ֆորումը ու Պօղոս-Պետրոսի եկեղեցին, Վենետիկն և Մադոնան!!

Թէ որչափ հետաքրքրուում են դը Քոնկլոնները գեղարւեստներով, ակներև է այն բանից, որ նրանց բոմանների կէսը վերցրած է կամ գեղարւեստաւորների կեանքից կամ բոմանի հիւսւածը մի առիթ է գեղարւեստական նկարագրեր տալու:

IV

Իտալիաի և մասնաւորապէս Հռոմի գեղարւեստական աշխարհի ազդեցութիւնը ահագին է եղել երկու դը Քոնկլոնների վրա, նրանց յափշտակելու բնական թուլութիւնը ածում է, նրանք զաւնում են վերին աստիճանի դիւրագգաց մարդիկ, որոնց վրա ցաւեցնելու չափ ազդում են աւօրեայ երևոյթները:

Եւ, իրօք, վիպասանները իրանք նկատում են այս հիւանդական դիւրագրգռութեան ածումն գեղարւեստի, թատրոնի, երաժշտութեան ազդեցութեան ներքոյ: Յաճախ գանգաւուում են նրանք, թէ իրանց ներդերը գնալով թուլանում են:

Տիկին Ժերվէզէի բերանով նրանք անտարակոյս իրանց հոգեբանութիւնն են նկարագրում:

«Նրան (Տիկին Ժերվէզէին) հարւածում էր, ասում են դը Քոնկլոնները «Տիկին Ժերվէզէ» բոմանի մէջ, — տալաւորութիւնների այն նրբացումն, որը առաջ էր եկել Հռոմ գալու օրերից, ինչպէս առաջ էր եկել և զգացողութեան մի առանձին սրութիւն: Նա մտածում էր, չը լինի թէ այն ազգերի հոգին որոնք մօտ են արեւին,

աւելի զգայուն է, քան թէ ուրիշ երկրներում բնակողներին: Չը լինի թէ նրանք աւելի ընդունակ են ճաշակել ու յափշտակել հասարակ բնական բաներով:—Մի շառաւիղով, մի որ և է գոյնով, մի գեղեցիկ փնջով, սիրուն երկնքով, վերջապէս բնութեան ձրիապէս բաշխած երջանկութեան աղբիւրներով: Նրա բոլոր զգայարանները նրբանում էին, դիւրագրգիռ և բանաստեղծական էին զառնում:»

«Քանի մարդ մօտ է ուսումնասիրում իրան, նա, փոխանակ ամրապնդւելու, աւելի և աւելի զգայուն ու հիւանդոտ է դառնում, ասում են նրանք մի ուրիշ տեղ: Բուրժէի խօսքով, նրանք գրում են Զոլան. «Մի մոռանաք, որ մեր ամբողջ գործը հիմնւած է ներդաշին հիւանդութեան վրա, և այս է նրա առանձնայատկութիւնը»:

«Մի հիւանդութիւն նկարագրելիս, մերն ենք նկարագրում, ասում է Էդմոն:

Մի ուրիշ գիծ զը Գոնկոլներին հոգեբանութիւնից, այդ նրանց առանձին սէրն է դէպի հաւաքածուներ, որոնցով լցրել էին իրանց բնակարանը:

Ահա զը Գոնկոլներին հոգեբանութեան այս երկու կողմերը—սէր դէպի գեղարեւոյթ և սէր դէպի ժողովածուներ,—հասկանալի են զարմնում մեզ նրանց բոմաններին երկու առանձնայատկութիւնները.—հեռոսներին հիւանդական զգայնութիւնը և ձանձրացնելու չափ մանրակրկիտ նկարագրութիւնները, որոնց մէջ միշտ երևում է պոէտը և նկարիչը:

Կրիտիկոսներին հետևելով, մենք այս էտիւզի մէջ միշտ աչքի առաջ կ'ունենանք զը Գոնկոլներին այս երկու հոգեբանական յատկութիւնները:

V

Իրանց գրականական գործունէութեան սկզբին, զը Գոնկոլ եղբայրները նւիրեցին իրանց տաղանդը պատմական հետազոտութիւններին, խրելով անցեալում, ուսումնասիրելով տասնութերորդ դարի կեանքը. յետոյ գրեցին մի երկու անյաջող պիեսներ և միայն աւելի ուշ, 1860 թւականին (եթէ չեմ սխալւում) նրանց տաղանդը գտնում է վերջապէս իւր ծաւալելու իսկական ասպարէզը—բոմանը: Էդմոն և Ժիւլ զը Գոնկոլները միասին գրել են վեց բոման-

ներ, որոնք են. Soeur Philomène, Charles Demailly, Germinie Lacerteux, Renée Mauperin, Manette Salomon և Madame Gervaisais.

Երկու եղբայրների տաղանդների ձուլումն, իւրաքանչիւրի սեփական աճնաւորութեան անհետանումն ընդհանուր գործի մէջ, մի սրտաշարժ երևոյթ է:

Եղբայրն ու Ժիւլը, ճշմարիտ որ ձուլած էին իրանց բոմանների մէջ. նրանց տաղանդների միացումն տւել է մեզ մի շարք գրքեր, որոնց մէջ հոգեկան փոխադարձ ներգործութեան օրէնքին համաձայն՝ երկու անձնաւորութիւնների բարոյական ոյժերը մի աւելերպւում են: Այսպիսի հանգամանքներում, երկար համակեցութեան մէջ, երբ երկու անձնաւորութիւնները մի հոգեկան աշխարհում են ապրում, ուր իւրաքանչիւրի եւսը քողարկւում է և, միմեանց լրացներով, միմեանց բարոյական աշխարհը փոփոխելով, համակեացները տարիների ընթացքում, աննկատելի կերպով, բարոյապէս և քիչ էլ չիզիկապէս, մի անձնաւորութիւն են կազմում:

Նրանց հայեացքները, նրանց ձգտումները, նրանց ամբողջ հոգեբանութիւնը մի զարմանալի նմանութեան են հասնում:

Գը Գոնկուր եղբայրները, մի հոգի և մի ուղեղ դառած, աշխատում էին միասին և իրանց հիանալի բոմանները լոյս ընծայում: Սեղանի երկու ծայրին նստած նրանք նախ գրում էին բոմանի նախապէս որոշած մի մասը, յետոյ ամեն մէկը կարդում էր իւր գրածը և այս երկու էջերը ձուլւում էին ու մէկ կազմում: Այսպէս է պատմում Զոլան: Այսպէս, երկու եղբայրները այն աստիճան ընտելացած էին միմեանց, այնպէս նրանք իրար լրացնում էին, որ երբ կրտսերը, Ժիւլը, մեռաւ, Էդմոնը, կարծես, իւր ուղեղի կէսը կորցրեց և երկար ժամանակ չէր կարողանում գրիչ վերցնել:

Եղբայրն նկարագրում է իւր հոգեկան զրութիւնը Ժիւլի մահից յետոյ գրած Յամգաննօ եղբայրներ վէպի մէջ, որը մի վարպետական հոգեբանական էութիւն է: Յամգաննօ եղբայրները ցիրկի կլօւններ են. նրանք զղրկեցնում են Պարիզը իրանց հնարագէտ գիմնաստիկայով: Յիրկի դահլիճը ամեն երեկոյ լիքն է լինում և բաւօնեւրին վերջ չկայ: Երկու եղբայրների հօշակը գնալով ածում է և ամեն օր նոր խաղեր են հնարում նրանք:

Բայց եղբայրներից փոքրը մի երեկոյ, մի սարսափելի վտանգաւոր խաղի մէջ, ջարդուժ է իւր ոտերը:

Այստեղ սկսուժ է երկու եղբայրների հոգեբանական էութեղը. երկուսն էլ այժմ անգործութեան մէջ են. կրտսերը անդամալոյծ պառկած, մեծը—ցիրկից հեռացած, որպէսզի եղբօրը խնամի: Սակայն երկուսի մէջ ևս վառ է մնացել սէրը զէպի բեմը, որը նրանց կեանքի միակ նպատակն էր, և որին հոգով նւիրւած էին, և այն միտքը, թէ ուրիշները այժմ նրանց տեղն են անցնում, թէ նրանց անունը կամաց կամաց մոռացութեան է տրոււմ, հանգիստ չի տալիս նրանց:

Մէկ օր մեծ եղբայրը չի երևում, հիւանդի սիրտը կասկած է ընկնում: Նա անդամալոյծի նման վայր է իջնում սանդուխտներից և չոքէ չոք մօտենում է ամբարի դռան, ուր քաշում էր նրան մի ինչոր ձայն: Մօտենալով դռան, նա յանկարծ կանգ է առնում: Մեծ եղբայրը մի տրապեցիա էր կախել օձորքից ու եղբօրից զաղտուկ դիմնաստիկայով պարապում...

Կրտսերի մահից յետոյ, Էդմոնը շարունակում է գրել նոյն ուղղութիւնով, նոյն ոճով, նոյն ոգով—կարծես մեռած եղբայրը գերեզմանի միջից շարունակում լինէր աշխատակցել:

V I

Գոնկուրների բոմանները զարմանալի են ինտրիգայի պարզութիւնով: Այս բոմանիստները վերցնում են յաճախ երկու—երեք, անձնաւորութիւններ, քցում են մի որոշեալ շրջավայրի մէջ, կապելով նրանց մի թեթեւ ինտրիգայով—և սկսում են անխնայաբար քրքրել այդ միջավայրը. նկարագրութիւնը այնպիսի մի ահագին տեղ է բանում բոմանի մէջ, այնպիսի ողևորութիւնով և սիրով են վերաբերւում նրան հեղինակները, որ մեղ թւում է, թէ այս նկարագրութիւնները տալու համար են ստեղծել հեղինակները իրանց հերոսներին:

Եւ այդ հասկանալի է: Դը Գոնկուրների աչքին մարդը շրջանի պատու է, նա ինքնուրոյնութիւն չունի, նա գերի է շրջապատող հանգամանքների: Բալզակը, Վ. Հիւգօն, Շէքսպիրը, Ստենդալը բարձրացրել էին մարդուն հերոսների աստիճանը, տալով նրանց

բուն կրքեր, տոկուն բնաւորութիւն: Ֆլորերը ընտրեց հասարակ մահկանացուներ, իսկ դը Գոնկուրներ ըմբռնում մարդը աւելի ևս փոքրանում է, կորցնելով իւր եսը: Մի որոշեալ երկրում, մի որոշեալ հագուստի տակ, այս զրոյներ ի կարծիքով, միայն որոշեալ ֆիզիկական և հոգեբանական մարդը կարող էր գոյութիւն ունենալ: Իրանց նպատակ ընտրելով ուսումնասիրել ժամանակակից բարք ու վարքը, երկու եղբայրները հաւաքում էին բազմաթիւ մանր-մունր ֆակտեր այս ինչ շրջանի կենցաղաւարութեան վերաբերմամբ, յետոյ դասաւորում էին նրանց և ուսումնասիրում, մոցնելով այսպիսով կոլլեկցիոնիստների կերքը զրականութեան մէջ: Եւ այս տաժանելի աշխատանքով հաւաքած կոյտերի մէջ մարդ էլ կարծես մի իր է դառնում և խառնում այն հազար ու մէկ մանրութիւնների (bagatelle) հետ:

Մարդու բարոյական ես-ը դը Գոնկուրների ձեռին մի խաղալիք է դառնում. նա թեքում է ամեն բոլե արտաքին ազդումների առաջ:

Եւ ինչպէս յեղափոխում է հերոսների ամբողջ հոգեբանական հիւսւածքը արտաքին հանգամանքների ազդեցութեան ներքոյ: Որչափ մեծ հոգեգիտութիւն էր հարկաւոր այս պոէտներից որ յանդգնեն արհամարհել մարդու եսը:

Անտարակոյս, այս միջավայրի բռնաբարող ազդեցութեան թէօրիան մի յուսահատեցնող թէօրիա է. — մարդը առանց կամքի, մարդը մակոյկի նման կեանքի ծովի մակերևոյթի վրա, մարդը քամիների դէմ մի փետուր դառած: Այս էր գուցէ նատուրալիստի չափազանցումն, որի դէմ բողոքում են այժմ նոր գրականական հայեացքները:

Ֆրանսիայում հոգեբանական ըմբռնը վաղուց արդէն, Ստենդալից ի վեր դատաւարտում է այս հայեացքը մարդու մասին: Նոր — նատուրալիստները, նոր գրականական հոգեբանները, վերջապէս նորագոյն դեկադանների (décadents) շիլան պիտի խլէին մարդուն այս ստրկութիւնից և մի համեմատաբար անսասան պատւանդանի վրա կանգնեցնէին:

Այս խնդրի ուսումնասիրութիւնը կարող էր մի գեղեցիկ էջ կազմել մեր դարավերջի հոգեբանական հայեացքների պատմութեան մէջ:

V II

Սակայն մեղադրել դը Գոնկուրներին այս չափազանցութեան մէջ ներելի է միայն նրան, ով լաւ էի ըմբռնել նրանց գործի ոգին: Այստեղ մեզ պէտք է գալիս վերեւ առաջ բերած տեղեկութիւնները դը Գոնկուրների դիւրագրաց բնաւորութեան մասին: Անդադար շըրջապատող իրերի ու երեւոյթների ազդեցութեան ներքոյ, անդադար չուզած ու յափշտակած, նրանք չէին կարող իրանց բովանդակի հերոսներին այս ազդեցութիւններից անկախ դուրս բերել: Նրանց կարծիքով, մարդ էի կարող չը սքանչանալ մի արձանի, մի սիրուն շէնքի, մի գեղեցիկ աղջկաց տեսքով: Նրանց հերոսները չունեն կամք, զուրկ են այն դիմադրական ոյժից, որը հողերանութեան մէջ արգելաօգէ է անւանում և որի շնորհով մենք ընդունակ ենք զսպել մեր զղացմունքները: Եւ քանի որ շըջափայրի ազդեցութիւնը մարդու վրա այսչափ զօրեղ է, հերոսի կենցաղավարութեան ձեւը, նրա արտաքինը յայտնի հոգեբանութեան արտայայտիչ են: Այս ինչ տան մէջ ապրող, կամ այս ինչ վարտիկ հազնող մարդը անպատճառ այս ինչ հոգեկան յատկութիւններ պիտի ունենայ: Բայց այդ բաւական չէ: Եթէ մի որոշեալ շըջանում քրոշեալ ազդեցութիւնների տակ ապրած մարդը մի ուրիշ շըջան և ուրիշ ազդեցութիւնների տակ ընկնի, նրա հողերանական աշխարհը պիտի հիմնօրէն փոխուի: Ահա թէօրիան:

Տիկին Ժերվէզէն մի թերահաւատ կին է, բախտը զցում է նրան Հում, կաթոլիկութեան այս հնոցը, որտեղ նա շարունակ տաճարների, եկեղեցական ծիսակատարութիւնների ազդեցութեան ներքոյ է գտնուում, անդադար շնչում է կաթոլիկ կղերականութեան արբեցնող օդը: Եւ կամաց-կամաց այդ ազատամիտ կինը, անդադար հիսնոսւած, անդադար ներշնչման ներքոյ, տեսնում է, որ իր այսքան տարի սնուցած գաղափարները մի առ մի ցրում են ու ինքը անկարողէ դիմադրել, անկարող է սլաշտպանել իր հայեացքների փլատակումից: Տիկին Ժերվէզէն վերջ ի վերջոյ յաղթած՝ հաւատացող է դառնում այն աստիճան, որ Հումի պապի ընդունարանի շէնքին աւանդում է հողին:

Անկասկած, Տիկին Ժերվէզէն շըջափայրի ազդեցութեան ամենաբարդ արտայայտութիւնն է: Գոնկուրները այս բովանդակի մէջ իրանց

Թէօրիան են պաշտպանում: Եւ այս անհաւատ կնոջը հաւատացնել տալու համար հարկ եղաւ մի ամբողջ զիրք նկարագրութիւն տալ:

VIII

Գանկուրների բռնաններում շրջափայլը չոր ու ցամաք բառերով չի նկարագրւում: Զգայուն նկարիչների ձեռին գրելը խկապէս մի վրձին է գառնում: Մանօթ գոյների խաղերին ու կոնտրաստներին, որովհետեւ նրանք նկարիչներ էին, այս հռչակաւոր գրողները շրջափայլին մի առանձին բանաստեղծական ոգի էին ներշնչում: Նրանց նկարագրած իրերը կենդանանում էին մարդուս առաջին, ինչպէս ասում է Զոլան: Եւ, ճշմարիտ որ, ընթերցողը տեսնում, շօշափում, հոտոտում, ճաշակում է նրանց նկարագրած առարկաները: Նա առնում է ծաղիկների բուրմունքը, զգում է արևի ճառագայթների ջերմութիւնը:

«Նա նստած էր մէջքը դէպի ձմեռւան արևի այս ղթառատ ճառագայթները, որոնք կարծես մեղքանում են խեղճերի մրսելու վրա»: Պէտք է կարդալ նրանց երկար նկարագրութիւնները, որոնք մէկ մէկ հրաշալի ձիթանկարներ են: Մարդ չափշտակւում է, երբեմն մղւում է, ընկնելով նկարագրութեան կախարդանքի մէջ:

Նրանք իրանք ևս գեղարւեստի մէջ որոնում էին ոգի, պահանջում էին, որ նկարը խօսէ նրանց սրտին, ինչպէս ասում են Ֆրանսիացիք:

Մանե տ Սալոմոն բռնանում նկարագրւում է Կորիոլիս-ի նկարած պատկերը: Անտարակոյս այս նկարագրութեան մէջ հեղինակները բացատրում են իրանց գեղարւեստի վրա կազմած պաշարները: Այս պատկերը ներկայացնում էր մի ծերունի ու մի ջահել աղջիկ մի սիրոյ առաւօտ:

«Մի մատաղահաս աղջիկ մերկ անկողնու եզրին, նրա վրա կռացած է, ցանկութեան թւերը պարզած, ծերունու տրփանքը: Մի կողմից լոյս, մարմնի առաւօտ, կազմաճքի առաջին անմեղութիւն իր սպիտակ չքնաղութիւնով, կիսածաղկած կուրծք, վարդագոյն ծնկներ, որոնք կարծես նոր էին չոքել վարդերի վրա, շլացում կուսական արշալոյսից, կանացի այն սքանչելի պատասնեկութիւններից մէկը, որը կարծես ստեղծել էր Աստած, հաւաքելով

բոլոր գեղեցկութիւնները և բոլոր անբիծութիւնները, որպէս զի միացնէ նրան մի ուրիշ պատանեկութեան հետ: Միւս կողմից, երեւակայեցէք ձեզ տգեղութիւն, տգեղութիւն բարոյական, տգեղութիւն ստակի, տգեղութիւն ստոր տենչանքների և զգուլի հեռքերի, կնճռած, ջաղջախած, զազրելի տգեղութիւն. — այն, ինչոր միլիոնները դրոշմում են ծերութեան դէմքի վրա, ինչ որ մեր ժամանակի Ֆիզիոլոգիական կարիկատուրը այսպէս լաւ ըմբռնել է ու վրձինի ոչ ժով բարձրացրել է մինչև մեծութիւն, համարեա մինչև սարսափը: Մարդ տեսնում էր այդ ծերունու մէջ անսառակութիւն, ծերութեան հասակի պոռնկութիւն, զգացմունքների վախճանի կատաղի ախորժակները, ճաշակ դէպի այնպիսի սէր, որը դատարան է տալիս — ելեքտրիստմին ծերունու տարփանքի, արնալից աչքեր արտեւանունքի տակ, անստամ ու թաց բերանի կիսաբացումն, սարսափելի ու այլանդակ մերկութեան կտորներ: (Manette Salomon):

Ամէն ինչ կենդանանում է այս վարպետների վրձինի տակ, ամենահաւատարակ նկարագրութեան մէջ երեւում է նկարիչը և բանաստեղծը: Միմիայն Գոնկուրների զօրեղ վրձինը կարող էր մեզ այս ստիճան վարպետութեն նկարել այնպիսի մի անհետաքրքրական բան, ինչպէս է կոխրուած մի ճանապարհ:

Նկարագրում է Պարիզից Վենսէնի անտառը տանող ուղին:

«Նեղ ուղիներ, — կոխրուած, կարծրացրած, խաղիւզած, ոտի հեռքերով ծածկած գետնի ժապավեններ, — խաչխչուած էին ամէն ուղղութիւնով: Այս մանր ոտուղիներից ազատ մնացած գետնի կտորները տեղ տեղ ծածկւած էին կանաչով, բայց մի ջարդւած, չորացած, դեղնած ու մեռած և ախոռի չատակի չարդի պէս գետին փռւած կանաչով, որի չարդագոյն ձողերը (brin) ամէն կողմից փաթաթւում էին մացառի հետ, եղիճի տախտկալի կանաչութեան մէջ... Ծառերը անջրպետուում էին միմեանցից, ծռմռած և նիհարած, — մանր կնճիններ (ormes) իրանց գորշագոյն կոճղերով, որոնք աղտոտուում էին գեղին բորոտութիւնով, մարդի հոսակի բարձրութեան ճիւղահաւած, հիւսնդոտ, թրթուրից կտրատած կաղնիներ, որոնց տերեւներից միայն ներդերն էին մնացել: Գետնի կանաչը ողորմելի, տկար ու թափանցիկ, օդի միջի տերեւկանաչը բոլորովին բարակացած, վատաոչ, ճխմրուած, այրւած այն աստիճան, որ

հազիւ կանաչ բծեր էր գցում երկնքի յստակութեան վրա: Մի ողորմելի և նիհար բուսականութիւն, որը ոտի տակ է տւած ու ալլ ևս չի շնչում. Պարիզի շրջականների տխրեցնող կանաչ: Այստեղ, կարծես, բնութիւնը քարուղիի միջից էր դուրս գալիս: Ոչ թռչունի երգ տերևների մէջ, ոչ մի միջատ գեանի երեսին, սալերի ձայնը խլացնում էր թռչուններին, երգիւնները (orgue) լռեցնում էին լռութիւնը և անտառի սառսուռը, փողոցը երգելով անցնում էր այստեղով:

Նս առաջ եմ բերում այս երկու պատկերները առանց ընտրողութեան: Գոնկուրների գրքերը լիքն են այնպիսի նկարներով, որոնց երբեմն անկարելի է հայերէն թարգմանել: Նս աշխատել եմ համարեա բառացի թարգմանել, պահպանելով (որքան կարելի էր) բառերի իմաստը և այդ արել եմ Գոնկուրների զօրեղ, ինքնուրոյն եզակի ոճին նմուշ տալու համար: Գոնկուրների այս զօրեղ գրիչը, նրանց նկարագրութիւնների կատարելութիւնը, միանգամայն տիրապետում են ընթերցողի ամբողջ հոգեկան աշխարհը: Մարդ զգացւում է, յուզւում, ինչպէս մի հրաշալի պատկերի առաջ և բառերի մեղօղիայով գուրգուրւած՝ յափշտակւում է հոգով և յանկարծ նրա հոգեկան աշխարհը լցւում է բուռն զգացողութիւնով:

IX

Իր գործադ անձերին Գոնկուրները վերցրեցին սկզբում հասարակ դասից. Ժեռմիւսի Վասերտիօ վէպի առաջաբանում նրանք բացատրում են իրանց նպատակը:

Միթէ, մտածում էինք մենք, ասում են նրանք, հեղինակի ու ընթերցողի համար մեր ժամանակի հաւասարութեան մէջ, դեռ կարող են գոյութիւն ունենալ այնպիսի դասակարգեր, որոնք կարող են անարժան լինել ուսումնասիրելու համար: Միթէ այնպիսի մի երկրում, որտեղ օրէնքով ալլ ևս գոյութիւն չունեն ոչ դասակարգեր, ոչ ազնւականներ, ստորների ու խեղճերի անբախտութիւնները չը պէտք է հետաքրքրեն, չը պէտք է յուզեն մեզ ու շարժեն մեր կարեկցութիւնը նոյն չափով, ինչ չափով որ այդ անում են հարուստների և մեծերի անբախտութիւնները: Մի խօսքով, մենք կամեցանք իմանալ, թէ ներքեւում թափած արտասուքները

չէ՞ն կարող արդեօք մեզ լացացնել, ինչպէս լացացնում են մեզ վերևից թափածները:

«Այս մտքերը մեզ վստահութիւն տւեցին գրել մեր նսեմ ըմանը «Քոյր Ֆիլոմենը» 1861 թ.—նրանք մեզ հրատարակել են տալիս այսօր Ժերմինի Լասերոիօն» (1864 թ.):

Այսպէս, Գոնկարները իրանց գրականայան ասպարէզի սկզբին ուսումնասիրում էին սոփրին հասարակութիւնը:

Քոյր Ֆելոմէն է՛ն ը մի զթութեան քոյր է, որ նւիրել է իր անձը հիւանդանոցում հիւանդներին խնամելու սուրբ դործին, բայց խեղճ աղջկան վիճակած չէր անդորրութեան մէջ թաղել իր մարմինը և նա սիրահարւում է հիւանդանոց յաճախող մի բժշկական ուսանողի վրա: Այս ա՛մբողջ գիրքը նւիրւած է հիւանդանոցի նկարագրութեանը:

Ժեյմս ինի Լասերոիօն մի համարեա տգեղ աղջիկ է, որին բալորը գցում է Պարիզ 15 տարեկան հասակում: Քոյրերից անպաշտպան, նա ենթարկւում է մի օր մի հասակաւոր մարդի բռնաբարութեան և այնուհետև սկսում է զգանք զգալ դէպի տղամարդը: Տիկին դը Վարանդեօլի մօտ աղախին ու խոհարարուհի է, այստեղ նա սիրահարւում է մի իրանից փոքր պատանու վրա, զոհում է նրան իր անձը, իր ետ ղցած գումարը, պարտքեր է անում և այն աստիճան ինքնամոռացութեան է հասնում, որ մի օր մի ոսկի է զողանում իր բարերարուհուց: Յետոյ, երբ, համարեա պառաւած ու բոլորովին սնանկացած, նա մերժւում է իր սիրականից, նա իրան ուրիշի է նւիրում և, աւելի ու աւելի ցած ընկնելով, վերջ ի վերջոյ մեռնում է հիւանդանոցում, թողնելով իր զառամած բարերարուհուն պարտատէրների ձեռը:

Կարծեմ, Գոնկարներից առաջ ոչ ոք չէր վստահացել մի ամբողջ գիրք նւիրել մի աղախնու, կամ մի զթութեան քրոջ: Այսպիսի սիւժէները անարժան էին համարւում ըմանտիկ գրողներին ու նոյն իսկ Բալզակին:

Թէև ըմանտիկ վէպը միշտ չէր խորշում հասարակ դասերից վերցնել իր գործող անձերին, բայց նրանց, ինչպէս և Բալզակի, ստեղծւած անձնաւորութիւնները կատարեալ հոգեբանական տիպեր են, բռն ու անսանձ կրքերով, որոնց վրա ազդեցութիւն չունին,

կամ շատ քիչ են ազդում շրջապատող հանգամանքները և սորանով միանգամայն տարբերում են Գոնկուրների ստեղծած անձնաւորութիւններից:

X

Գոնկուրները Ֆլորերի նման հռետեմներ են (պեսսիմիստներ). նրանց ստեղծած անձնաւորութիւնները նոյն *raté*-ներն են, որոնց իդէալը անհասնելի է մնում միշտ:

Մենք չենք ուզում երկար կանգ առնել Գոնկուրների այս ուղղութեան վրա:

Քոյր Ֆելիմէնի, Բընէ Մօպըրէի կեանքը մի երկար հոգեւարք է, ժերմիւնի Լասերտեօն իր ամբողջ կեանքը սէր է որոնում ու չի գտնում:

Կարիօլիսը «Մանէտ Սալոմոնի» մէջ իր նկարչական իդէալին չի մօտենում երբէք և կամաց կամաց իր սիրուհու սպանիչ ազդեցութեան ներքոյ կորցնում է իր տաղանդը և նսեմանում է մինչև բանւոր նկարչի աստիճանը: Եւ բոլոր հերոսները վերին աստիճանի յափշտակող անձնաւորութիւններ են: Սրանց դժգոհութիւնը կեանքից յառաջանում է աշխարհիս իրերի անհաստատութիւնից: Քանի որ իրերը փոխւում են, և քանի որ հերոսների հոգեկան դրութիւնն էլ փոփոխւում է իրերի հետ, — հասկանալի է բախտի անհաստատութիւնը: Այսպէս, իւրաքանչիւր յեղափոխութիւն կեանքի մէջ մի մասն խլում է դործող անձերի տոկունութիւնից, իսկ այսպիսի յեղափոխութիւնների կրկնելը միանգամայն յուսահատութեան և վհատման է հասցնում:

Գոնկուրների ստեղծած հերոսները, տարբեր ազդեցութիւնների ներքոյ, թէև կորցնում են ոյժը և տոկունութիւնը, սակայն բոլորովին չեն մոռանում իրանց կրքերը, որոնք երբեմն բզխում են իբրև երկար արգելւած մի շաուրան:

Այս կէտը աւելի զարգացած է Էդմոն Գոնկուրի բովանդակում, օր. «Եղբայր Յամզանօ» և «L. Faustin» վէպերում:

Այս վերջին բովանդակում մի սարսափելի տեսարան կայ, որը մի բուռն կրքի արտայայտութեան օրինակ է:

Ժիւլիէտ Գոստէն մի հուշակաւոր տրագիկոհ է: Նա թողնում

է՛ բեմը ու գնում է Խալիա իր հարուստ սիրականի հետ ապրելու, բայց երբէք չի մոռանում թատրոնը, որտեղ նա թագաւորում էր: Ուխիլիամսը, նրա սիրականը, հիւանդանում է և ընկնում հոգեւարքի մէջ և նրա դէմքի զծաղրութիւնները ծռմուռում են տանջանքից: Ժիւլէտը կռանում է նրա վրա ու սկսում է ընդօրինակել մեանողի դէմքի մկանների ցնցումները՝...

Զոլան աւելի խոր պիտի մշակէր գեղարւեստական կրքի տոկունութիւնը և իր l'Oeuvre բոմանի մէջ դուրս բերէր մի նկարչի, որը իր միակ որդու դիակը տեսնելիս վազում է իր արհեստանոցը և, աչքերը չոր, մոռանալով ամեն ինչ, սկսում է նկարել դիակը, ինչպէս մի գեղեցիկ պէյզաժ:

XI

Գոնկուր եղբայրների լեզուն կրում է նոյն զգայնութեան կնիքը: Գիւրազդաց հոգին վերացական լեզուով է խօսում: Այս գրողների ֆրազի կազմութիւնը, բառերի դասաւորութիւնը, ածականների ու գոյականների կցորդման եղանակը մի որոշեալ կնիք են դնում նրանց լեզուի վրա: Ոչ ոք, բացի Ստենդալից, չէր մշակել այն աստիճան հոգեբանական լեզուն, ինչքան Գոնկուրները: Դժուար է բառերով բնորոշել այդ լեզուն, որի առանձնաշատկութիւնների մասին մի մօտաւոր գաղափար կարող են տալ մեր վերև առաջ բերած երկու հատուածները: Ժամանակակիցները սկզբում խորշում էին այդ օտարոտի լեզուից, բայց կամաց կամաց, երբ ըմբռնեցին նրա մելոդիան և դարձածքների իմաստի նրբութիւնը, իրանք էլ սկսեցին նոյն լեզուով գրել: Դոդէն, Գիւլյի դը Մոպասանը, Զոլան, Ֆեոյլէն, Բուրժէն ու հոգեբանները աւելի ևս պիտի ճոխացնէին ֆրանսիական բոմանի լեզուն...

XII

Ահա Գոնկուրների պատկառելի զործը:

Բարձրացնել աւելի ևս (քան թէ արել էին Բալզակը ու Ֆլոբերը) միջավայրի ազդեցութիւնը մարդու վրա, պահանջել, որ մարդ կռանայ արտաքին աշխարհի պահանջների առաջ ու կռանայ իր ամբողջ հոգեբանութիւնով: Չափազանցութիւն, այո՛! Բայց չափա-

զանցութիւն մի անվիճելի ճշմարտութեան: Այո՛, մարդը իր ծննդեան առաջին օրից մինչև իր կեանքի վերջին օրը ենթարկւում է ներշնչման թէ շրջապատող անձերի և թէ շրջապատող իրերի կողմից: Այո՛, առանց այդ անդադար ներշնչումների, մարդու ուղեղը, նրա զգացողութիւնը, և հետևաբար նրա զգացմունքները ու նրա խելքը չէին կարող զարգանալ: Այո՛, մարդկային ամբողջ գոյութիւնը մի շարք հիպնոսումներ են, որոնցից իւրաքանչիւրը իր անջնջելի կնիքը դրոշմում է մեր ներգային ըմբռնողութեան վրա:

Ուսկիցն Գոնկուրների այս հայեացքների մէջ չափազանցութիւն կար: Հեղինակների հիւանդական դիւրագգայութիւնն էր այդ չափազանցման պատճառը: Միւս կողմից էլ բանաստեղծը ու նկարիչը պէտք է ներգային արարածներ լինեն, որովհետև զգացմունքների միակողմանի արտասովոր զարգացումն մի հիւանդական երևոյթ է:

«Մի որ և զրւածքին մեղմութիւն և մաղձութիւն տալու համար, մարդու սրտի ու հոգու միջից արտասովոր ու գեղեցիկ ֆանտազիաներ բղխեցնելու համար, արտիստը պիտի մի ինչ որ հիւանդական ոգի ունենայ» (Պօլ Բուրժէ):

Այս հիւանդական ոգին էր, որ աւելց մեզ մի շարք հրաշալի բոմաններ:

Դը Գոնկուրները բոմանի գաղափարը գիտութեան զաղափարին խառնեցին: Բոմանը նրանց աչքին գրականական մի ձև է, որի միջոցով հեղինակը գիտնական ճիշտ տեղեկութիւններ պիտի արծարծի թէ շրջավայրի և թէ մարդու մասին: Խտրիզան նրանց հասկացողութիւնով մի թեզան է, մի կանւա է, որի վրա պիտի հիւսւի միջավայրի նկարագիրը: «Բոմանը — պատմութիւն է», ասում է Էդմոնը: Այսպիսով նրանք պատկանում են այն դպրոցին, որը մարդին ընդունում է, իբրև արգիւնք «կլիմայի, հողի և շրջապատող հանգամանքների»: Հետևաբար պէտք է գիտնականօրէն ուսումնասիրել այս անհրաժեշտ գիտելիքները:

Այս բոմանիստների տւած իւրաքանչիւր պատկերը այս ինչ հերոսի հոգեկան դրութեան համապատասխան ոգին է ստանում: Ուրիշ խօսքերով, գործող անձի հոգեկան դրութիւնը արգասիք է շրջապատող միջավայրի, եթէ կարելի է այսպէս ասել, ընդհանուր տրամադրութեանը: Գոնէ հեղինակները կը ցանկացին, որ այսպէս լինէր:

Գործող անձերի այս չափազանցրած փոքրացումն և նւազելն լոգիկական հետեանք է նկարարագրութեան այն սխառմին, որը մեծացրել է միջավայրի նշանակութիւնը:

Դը Գոնկուր եղբայրները, ըստ իրանց զգացնութեան, աւելի տրամադրւած էին ըմբռնտիկ ուղղութեան հետեւելու: Սակայն, բարեխտաբար, նրանց նկարչական և հաւաքչական կիրքը քցեցին նրանց Նատուրալիսմի գիրկը:

Եւմոն ու Ժիւլ դը Գոնկուրները անունները պիտի պարծանքով յիշեն Նատուրալիստ ըմբռնի փառաւոր պատմութեան մէջ: Առանց այս մեծ գրողների զօրեղ տաղանդին՝ Ֆրանսիական Նատուրալիստ ըմբռնը այս անլսելի ճոխութեան հասած չէր լինի այսօր:

ԱԶԳԻ ԵՐԳԻՉԸ

ԵՂԻՇԷ ՄԱՐԱԹԵԱՆԻ

Le peuple—c'est ma muse.
Béranger.

IV

Գամառ-Քաթիպան մեր գրականութեան ամենաօրիգինալ ներկայացուցիչն է: Զը ծառայելով որ և է կանխակալ գրական կամ հասարակական տենդենցիօզ վարդապետութեան, նա հակառակ մեր միւս գրողներին՝ անձնատուր է լինում իր նուրբ գեղարւեստական բնազդութիւններին և այդ պատճառով իր գրածքների ձևերի և բովանդակութեան մէջ՝ ինչպէս հայելիի մէջ ցոլացնում է բոլոր ուղղութիւնները կտոր-կտոր և ոչ մէկը ամբողջապէս: Եթէ Պաշեանի մասին կարելի է ասել, որ իր գրութեան ձևերով մօտենում է Սբոկեանին, իսկ իր հասարակական դադափարներով Աղաբէգեանին, եթէ միւսին տեսակէտից Նալբանդեանին կարելի է անւանել Նազարեանցի ընկեր ու աշակերտ և Բաֆֆիին՝ «Մշակ»-ի դպրոցի մարդ,—Գամառ-Քաթիպայի մասին կարելի է ասել որ նա պատկանում է բոլոր ուղղութիւններին և միւսին ժամանակ ոչ մէկին: Ահա ինչու ոչ-ոք չի վստահանում նրա անունը կայնել յատկապէս որ և է ուղղութեան և միւսին ժամանակ ամեն մէկը կը կամենար իր ուղղութեան մարդ համարել նրան: Բանն այն է որ մեր գրողներից ոչ ոքի գործունէութեան մէջ այնքան որոշ և պայծառ չի

1) Տէս «Մուրճ» № 10:

մարմնանում ազգային հայ բանաստեղծի իդէալը, որքան Գամառ-Փաթիպայի գործունէութեան մէջ: Եւ եթէ վէճ ծագի Գամառ-Փաթիպայի ուղղութեան մասին, ազգային բանաստեղծ կուտայ կարող է հաշտեցնել ամենքին: Եւ իրաւի, մեր բանաստեղծներին ոչոքին աւելի մեծ իրաւունքով չի կարելի անւանել այդպէս: Սակայն ունի նա արդեօք այն ամենը, ինչ պահանջում է մի ճշմարիտ ազգային բանաստեղծ լինելու համար — ահա խնդիրը:

Այդ խնդիրը վճռելու համար մեզ հարկաւոր է որոշել թէ ինչ ենք հասկանում «ազգայնութիւն» և «ազգային բանաստեղծ» տառով: Ազգայնութեան խնդիրը գիտնական և հրապարակաստական գրականութեան վիճելի խնդիրներից մէկն է, մի խնդիր, որ մինչև օրս չի ստացել իր վերջնական լուծումը: Ազգայնութեան խնդրում մեր կարծիքով ճշմարտութեան ամենից աւելի մտեցողը այն թէօրիան է, որ ազգայնութեան մէջ տեսնում է մի այնպիսի կուլտուրական գրուպայ, որ գիտակցում է իր տարբերութիւնը ուրիշ գրուպայներից և իր միութիւնը: Բնութիւնը ստեղծել է մարդկային ցեղեր, լեզուներ և կուլտուրան՝ ռասաներ և կուլտուրական գրուպաներ, միայն մարդուս ներքին զգացումն է ստեղծում ազգայնութիւն (национальность), ասում է պրոֆ. Կարէև: Մարդիկ կարող են ունենալ մի լեզու, մի դիցաբանութիւն, մի տեսակ սովորութիւններ, կենցաղավարութեան միատեսակ ձևեր և դրանով առարկայաբար (объективно) կազմել մի կուլտուրական գրուպայ, բայց միևնույն ժամանակ չը լինել ազգայնութիւն, եթէ դեռ չեն հասել իրանց ոգեկան միութեան գիտակցութեան, եթէ ենթակայաբար (субъективно) նրանք մի չեն: Հետևելով ազգայնութեան գաղափարի այս որոշման, ազգային կ'անւանենք մենք այն բանաստեղծին, որի գրածներում լիովին ցոլանայ այն ներքին զգացումը, որ մի կուլտուրական գրուպայի ցրած անդամներին կապակցում է ի մի: Կան արդեօք հայերիս մէջ այդ ներքին զգացումը Կասկած չը կայ որ այդ գիտակցութիւնը մեզնում բաւականաչափ զօրեղ չէ: Այդ գիտակցութեան թուլութեան պատճառները շատ են. այդտեղ գործում է և՛ հայութեան բաղկացուցիչ տարրերի հեռաւորութիւնը, և՛ մեր ղապակարգերի մէջ տիրող փոխադարձ խորթութիւնը, և՛

մեր աղքատ մուսոր կեանքի զարգացման պատահական բնաւորութիւնը և մեր աղքատ և անմշակ գրական լեզուն իր երկուութեամբ և այլ աւելի հիմնական իրողութիւններ: Այդ կողմից շաղկապութեամբ կարող են դեր կատարել մանաւանդ մամուլի և գրականութեան ներկայացուցիչները և մասնաւորապէս բանաստեղծները՝ թէ՛ այն պատճառով որ սրանք, որպէս աւելի զգայուն և տպաւորւող գրողներ, աւելի ընդունակ են իրանց ձգտումները ընդհանուր ձգտումների հետ ձուլելու և թէ՛ այն որ սրանց ձեռին է գտնուում ամբողջ դիւթելու ամենահեշտ գործին՝ հանրամատչելի, թեթեւ, դիւրեկան, պատկերաւոր և երաժշտական լեզուն... Ղրա համար անհրաժեշտ է միայն, որ բանաստեղծը չը կղզիանայ իր նեղ անձնական կամ կուսակցական և դասակարգային ինտերէսները շրջանում, այլ զուրս դա՛յ այդ հեղձուկ մթնոլորտից ընդհանուր ազգային շահերի լայն և ազատ աշխարհը, տողորւի հասարակական շահերով, ուշադիր լինի դէպի ազգային կեանքի իւրաքանչիւր զարկերակը, ապրի ազգի հետ, մի խօսքով՝ լինի իր ժամանակի և իր հայրենիքի հարազատ և ընտիր որդին: Իսկ երբ բանաստեղծը իր հայրենիքի ընտիր որդին լինի, երբ նա ձեռք վերցնի նեղ անձնական, կուսակցական և դասակարգային շահերից, երբ նա տողորւի ազգային ոգւով, երբ նա ըմբռնի ու հասկանայ իր հայրենիքի թշաւաութեան իսկական պատճառները, — նա չի կարող չը որոնել և յարմարաւոր բովանդակութիւն և յարմարաւոր ձևեր՝ ազգային միութեան զիտակցութիւնը զօրացնելու, ազգային ինքնաճանաչութիւն զարթոննելու: Եւ որքան աւելի լայն շրջանի սրտից խօսեն այդ բովանդակութիւնն ու ձևերը, որքան աւելի տարածւեն ու ներգործեն նրանք, այնքան աւելի կը մօտենայ պօռն ազգային բանաստեղծի կատարելատիպին: Այս տեսակէտից նայելով Քամառ-Քաթիպայի կեանքի զլիսաւոր գծերի և նրա բանաստեղծութիւնների բովանդակութեան ու ձևերի վրայ՝ մենք ցոյց կը տանք թէ, որքան էր նա պատրաստաժ և որքան կարողացաւ իրագործել ազգային հայ բանաստեղծի իդէալը:

V

Ռափայէլ Պատկանեանը, որին մինչև այժմ մենք անանում էինք իր ամենաժողովրդական «Գամառ-Քաթիպա» կեղծ անունով,

ծագում է այն նշանաւոր Պատկանեան տանից որ ներկայ դարում մի քանի պիտանի գործիչներ տւաւ հայ հասարակութեան: Ռափայէլի պապը ¹⁾ Կ. Պոլսեցի Սերովբէ Վարժապետ Պատկանեանն էր, որ Դաւթի և Դանիէլի յարուցած երկպառակութիւնների ժամանակ, երկրորդի ջերմ կողմնակիցն էր և զրականութեան մէջ յայտնի է առաջնի դէմ գրած մի ընդարձակ ոտանաւոր բողոքով: Ռափայէլի հայրը՝ Տէր Գաբրիէլ քահանայ Պատկանեանը Ներսէս (1832 թ. արքեպիսկոպոս) Աշտարակեցու ձեռնադրածն էր և մեր ընտիր, եւանդուն և ուսումնասէր հոգևորականներից մէկը: Բացի սարկաւազութիւնից, քահանայագործութիւնից և այլ և այլ գործերից՝ որ նա վարում էր իր տաղնապալից կեանքի ընթացքում մերթ Հաշտարխանում որպէս ուսուցիչ և կոնսիստորիայի ատենադպիր, մերթ Նոր-Նախիջևանում, որպէս մասնաւոր դասատու ²⁾, մերթ Թիֆլիս՝ որպէս Ներսիսեան Դպրանոցի տեսուչ, — Պատկանեան հայրը պարապում էր և զրականութիւնով: 1845 թ.ին նա «Վովկաս» լրագրի աշխատակից էր, իսկ 1849—51 թ.ականներին «Արարտ» շաբաթագրի խմբագիր: Բացի զրանից նրա գրչին են պատկանում և մի շարք ինքնուրոյն և թարգմանական, արձակ և ոտանաւոր գրածներ: Մեր բանասէրներին անցալո չէ օրինակ՝ նրա կազմած «Հայոց Պատմութիւնը» որ հրատարակած է «Վերջը կիմանաք» կեղծ անունով, իսկ ոտանաւորներից բաւական է յիշել «Յուլունսն Շամիրամայ» զոդորիկ գրածը, որտեղ նա փորձում է վերարտադրել Դոդթան բամբուռն հնչիւնները: Ռափայէլի հօրեղբօրորդին՝ Պետերբուրգի համալսարանի Արևելեան բաժանմունքի հանգուցեալ պրոֆէսոր Քերովբէ Պատկանեանը չափազանց լաւ է յայտնի, որպէս զի հարկ լինէր այստեղ երկարաբանել նրա մասին:

Ինքը մեր բանաստեղծը ծնւեց Նոր-Նախիջևանում 1830 թ. նոյեմբերի 8-ին: Մինչև տասը տարին կրթւելով հօր առաջնորդութեամբ և ուսանելով մայրենի լեզւի և կրօնի տարերքը՝ 1840

¹⁾ «Բնար Հայկական, խմբագրեց Մ. Մ. Մխանսարեան, Ս. Պետերբուրգ, 1868, եր. 485—486, 555—562.

²⁾ Տէր-Գաբրիէլի աշակերտն էր ի միջի ալլոց և Միքայէլ Նալբանդեան:

Թւին պատանի Ռափայէլը եկաւ Մոսկւա և մտաւ Լազարեանց ճեմարան: Այս նշանաւոր հաստատութիւնը, որտեղից հայութեան համար այնքան օգտակար դործիչներ են դուրս եկել այս դարում, եղաւ և Պատկանեանի բնածին ընդունակութիւնների առաջին լուրջ կրթարանը: Այստեղ նա ծանօթացաւ ի միջի այլոց հայոց և ռուսաց գրականութեանը և այստեղ երևի առաջին անգամ չղացաւ նրա մէջ պօէզիայի սէրը: 1850 թւին ուսումը նոր աւարտած երիտասարդ Պատկանեանը եկաւ Թիֆլիս, որտեղ այդ ժամանակ զբանւում էր իր հայրը, և ստանձնեց ուսուցչի պաշտօն Ներսիսեան դպրանոցում: Այդ պաշտօնում սակայն նա երկար չը մնաց. ուսման ծարաւը նրան նորից մղեց դէպի հիւսիս: 1852 թւին Պատկանեանին մենք արդէն հանդիպում ենք Գորպատում: Ռուսաստանի այս բուն գերմանական համալսարանական քաղաքը, որի անւան հետ կապւած են մեր մտաւոր անդաստանի անդրանիկ մշակ Աբովեանի և Նազարեանցի անունները, վճռողական նշանակութիւն ունեցաւ և Պատկանեանի գրական գործունէութեան համար:

Քառասնական, յիսնական և վաթսնական թւականներին Գորպատի հայ ուսանողութիւնը, որ մեծ մասամբ Լազարեանց ճեմարանի նախկին սաներից էր բաղկացած, ունէր իր ուրոյն կեանքը: Թւով քիչ, գերմաներէնին անծանօթ և օտար տարրով շրջապատւած երիտասարդները մի բնական պահանջ էին զգում աւելի յաճախ շփուելու իրար հետ: Այն՝ ինչ էէր տալիս նրանց շրջանը, նրանք իրանք էին փորձում ստեղծել: Արծես հնազանդւելով հովմայեցի բանաստեղծի իմաստուն պատուէրին՝ միացնել *utile dulci* (օգտակարն ու հաճելին), բացի դասախօսութիւններին հետևելուց՝ նրանք մի կողմից գերմանացի ուսանողների օրինակով՝ սարքում էին իրանց ընկերական խնջոյքները, իսկ միւս կողմից պարապւում էին այդ խնջոյքների համար երգեր ու բանաստեղծութիւններ յօրինելով: Այդ պարապմունքների հետևանքն այն եղաւ, որ մինչև վաթսնական թւականների միջերբը Գորպատի հայ ուսանողութիւնը արտադրեց մի շարք գրողներ, որոնցից մի քանիսը դարձան մեր նոր գրականութեան ականաւոր ներկայացուցիչ: Հետաքրքրականն այն էէ, թէ ինչ արտադրեցին այդ գրողները, այլ հետաքրքրականն այն նոր հոսանքն է, որ այդ երիտասարդներն առաջին անգամ

մոցրին ռուսահայոց բանաստեղծութեան մէջ: Մինչև յիսնական թւականները ռուսահայոց պօէզիան ամփոփւած էր կեղծ դասական տարազների սեթևեթ նմանողութիւնների կամ վայր ի վերոյ աշուղական ¹⁾ մոխամբազների և հաղերի մէջ: Եթէ տեղ-տեղ երևում էին ճշմարիտ բանաստեղծութեան նշոյլներ, աննկատելի կորչում էին ընդհանուր կեղծիքի Ֆոնի վրայ: Այդ կեղծիքը վերացնելու առաջին փորձերը Դորպատի հայ ուսանողներն արին՝ գերմաներէնից և ռուսերէնից մի քանի ուսանողական երգեր և այլ բանաստեղծութիւններ փոխադրելով: Սրբադործւած աւանդութեան համաձայն՝ այդ փոխադրութիւնները անուամբ էին սկզբում զրափառ լեզուով, բայց երիտասարդներից նրանք, որոնք զուրկ չէին բանաստեղծական հոտառութիւնից՝ շուտով հասկացան թէ որքան անյարմար էր մեռած լեզուով կենդանի մտքեր ու զգացումներ արտայայտելը... Գրափառ զրւածները, ինչպէս՝ օրինակ, Խաչատուր Աւագեանի «Որդիք Հայկայ»-ն և Gaudeamus-ը, Համբարձում Փափազեանի «Զձեզ որդիք Արամեան»-ը, Գրիգոր Աղափիրեանի «Մերթխօսակցիս»-ը շուտ մոռացւեցին: Բայց դրա փոխարէն՝ մեծ ժողովրդականութիւն ստացան երիտասարդների յօրինած աշխարհափառ բանաստեղծութիւնները: Ում չեն յայտնի Դողոխեանի «Միծեռնակը», Միրմանեանի «Հայոց Աղջիկները», Քերովբէ Պատկանեանի «Վերջին վարդն» ու «Ինձ համար չէ»-ն. — այդ երգերը Դորպատի հայ ուսանողների անդրանիկ աշխարհափառ գրւածներին են ²⁾:

Ահա այդ ուսանողական շրջանն էր, որ առաջին նշանաւոր զարկը տուաւ Պատկանեանի տաղանդին: Այստեղի հայ և գերմանական շրջանի ազդեցութեանն է նա պարտական իր՝ սիրոյ, զինու, պանդխտի և հայրենասիրական առաջին երգերը, որ նա սկսեց լոյս ընծայել Պետերբուրգ տեղափոխւելուց յետոյ:

¹⁾ Մեր աշուղներից ամենատաղանդաւորը անտարակոյս Սալաթ-Նովան է, որի երգերը սակաւն չորագուն պարսկական պօէզիայի դրոշմ են կրում:

²⁾ Դորպատի նախկին ուսանող «Մեղու»-ի խմբագիր պ. Սիմէոնեան և եւրոպական մի քանի նշանաւոր բանաստեղծական գրւածների թարգմանիչ պ. Գ. Բարխուդարեան:

Մայրաքաղաքի կեանքը նոր եռանդ ներշնչեց Պատկանեանին: Երեսը դարձնելով այն հայ երիտասարդներից, որոնք պարծենում էին իրանց թեթևասլիկ կրթութիւնով, եւրոպականութեան մի քանի արտաքին ձևերով և անգիր արած ֆրազներով, բացց կատարեալ անտարբերութիւն և նոյն իսկ թեթևամիտ արհամարհանք էին ցոյց տալիս դէպի այն ամենը՝ ինչ հայկական էր, Պատկանեանը աչտեղ կազմեց իր համախոհների մի փոքրիկ խումբը, որի հետ միասին վճռեց տպագրել մի շարք արձակ և ոտանաւոր զրուածներ՝ ընդհանուրին մատչելի լեզուով: Աշխատակից ընկերների անունների և ազգանունների մէջ մոնոդ տառերից յերկուեց հաւաքական կեղծանունը ¹⁾ և 1855 թւին Նօնսոնի տպարանից ի մեծ հաճոյս երիտասարդ հրատարակիչների և հայ ընթերցողների՝ զուրս եկաւ «Գամառ Քաթիպայի արձակ և չափաքերական աշխատութիւնների» առաջին համարը: Գրքոյկը յաջողութիւն ունեցաւ և Պատկանեանը աւելի տաք կսլաւ գործին: Մի տարի չանցած՝ նա լոյս ընծայեց նոյն «աշխատութիւնների» երկրորդ համարը և «Ազգային Երգարան Հայոց» ժողովածուն, որտեղ ի միջի այլոց տպւեց և «Արաքսի Արտասուքը»... Եւ այդ այն ժամանակն էր, երբ դեռ չը կային «Հիւսիսափայլ» և «Կռունկ», երբ ոչոք ոչինչ չը գիտէր Նալբանդեանի, Պռօշեանի և Մելիք-Յակովբեանի մասին. և մի այդպիսի ժամանակ ռուսահայ մի երիտասարդ իր նման մի երկու երեք երիտասարդների հետ՝ «Գամառ Քաթիպա» անւան տակ թաքնւած՝ զուրս է զալիս հասարակութեան առաջ և վստահանում է պառմել ու երգել՝ նրան հասկանալի լեզուով ու նրա սրտին մօտիկ առարկաներից ու զգացումներից:

1858 թւին սկսեց հրատարակւել «Հիւսիսափայլը» և 1860 թւին՝ «Կռունկը»: Աշխատակցելով թէ այնտեղ և թէ այստեղ, Պատկանեանը պահպանեց իր ուղղութեան նոյն ինքնուրոյնութիւնը, որ երևան էր հանել իր առաջին փորձերում: Նա իրան վիրաւորւած զգաց, երբ «Հիւսիսափայլի» խմբագիրը ըստ իր բարեհայեցողու-

¹⁾ Որքան մեղ լալտնի է, «Գամառ Քաթիպա» կեղծանունը առաջացել է Գ. Քանանեանի, Մ. Թիմուրեանի և Ռ. Պատկանեանի անունների առաջին գրերից և ազգանունների առաջին վանկերից:

Թեան ուղղեց ու փոփոխեց նրա Թարգմանած՝ Վիլհելմ Հաուֆի «Ուխտաւորք»-ի լեզուն և ոճը: Բացի դրանից՝ հիմք կայ ենթադրելու որ «Հիւսիսափայլում» նա այնքան էլ սիրով չէր գրում, տեսնելով այդտեղ իր դէմ կանգնած՝ մի վտանգաւոր մրցակից յանձին իր համաքաղաքացի և արւեստակից՝ Կոմս Էմմանուէլի ¹⁾: Կարծեօք՝ այդ է մասամբ պատճառը, որ իր բանաստեղծութիւնների մեծ մասը նա ուղարկում էր «Կռունկի» խմբագրութեան: Բայց Պատկանեանն այդ ժամանակները այնքան վատահ էր իր ուժերի վրայ, որ մինչև անգամ փայփայլում էր ինքնաղլուխ խմբագիր դառնալու միտքը, որ և իրագործեց՝ «Հիւսիսափայլը» խափանւելուց յետոյ: 1864 Թւականը կարելի է համարել Պատկանեանի բանաստեղծական գործունէութեան առաջին շրջանի վերջ. այդ Թւին լոյս տեսաւ նրա բանաստեղծութիւնների առաջին ժողովածուն և այն ժամանակակից մինչև եօթնամեական Թւականների վերջերը Պատկանեանը որպէս բանաստեղծ՝ գրեթէ այլ ևս չէր յայտնւում:

1865 Թւին Պատկանեանը հիմնեց «Հիւսիս» շաբաթագիրը, բայց բաժանորդագրութեան անյաջողութիւնից և նիւթական նեղ դրութիւնից ստիպւած լինելով դադարեցնել՝ կարճ ժամանակից յետոյ տեղափոխեց իր հայրենի քաղաքը և 1867 Թւին բաց արաւ այդտեղ մասնաւոր դպրոց տղայոց կրթութեան համար: Այս-

¹⁾ Նալբանդեանի և Պատկանեանի միջև կար մի խուլ ներքին թշնամութիւն, որի պատճառները մեզ որոշ պատճառներով չեն: Յալոնի է միայն որ Նալբանդեանը իբր առարկութիւն Պատկանեանի «Վարդան Մամիկոնեանի երգին» և «Հալկ և Լիոնին մոռանանք»... հատածին՝ զրեց «Մամիկոնեան Մեծ Վահանի Պատասխանը» և «Հալկ և Տիգրանին վիշենք»... ոտանաւորները: Վերջինը մանաւանդ խիստ է աչքի ընկնում իր կծու ոճով ու դարձաւորութեամբ, աչքուհ սոսկ գաղափարի կռիւ չի երևում, այլ կռիւ Պատկանեանի անձնաւորութեան դէմ: Ուրիշներին թողնելով սրալեզ մեր աչք անդրանիկ երկու բանաստեղծների անձնական թշնամութեան բուն պատճառները, աչքքանը կ'աւելնէ միայն՝ որ այդ տեսակ թշնամութեան օրինակներ չառ կան և ընդհանուր դրականութեան պատմութեան մէջ և այդ տեսակ փաստեր ի հարկէ չեն արգելում ժամանակակիցներին՝ ճանաչել և երախտագիտութեամբ վիշել մրցակիցներից իւրաքանչիւրի արժանիքն ու վաստակները:

տեղ՝ հայրենի Նոր-Նախիջևանում բացւեց բանաստեղծի աչքի առաջ այն ահռելի վիհը, որ եւրոպական կրթութիւնը ձգել էր նրա և նրա խաւար ու նիւթապաշտ հայրենակիցների միջև: Համեստ վարժապետը կեանքի և մահւան կռիւ հրատարակեց աշխարհիս հզօրներին, մի կռիւ՝ որտեղ ինքը բանաստեղծը մարմնացնում էր իր անձի մէջ նոր հայկական սերնդի իդէալները, իսկ իր համաքաղաքացի հակառակորդները՝ հնինը... Այդ կռուում երկու կողմերիցն էլ զրգուռում էին անզուսպ կրքեր թէ խօսքով, թէ գործով և թէ գրչով... Բայց այդ կռից՝ պօէտին, որպէս քնած արծւի՝ սթափեցրեց մի աւելի ընդհանուր նշանակութիւն ունեցող կռիւ...

Եօթանասնական թւականները, հայութեան համար այդ շատ կողմերից նշանաւոր տարիները իրանց անջնջելի կնիքը դրոշմեցին նաև Պատկանեանի գործունէութեան վրայ: Նորից հանդէս գալով ռուսահայոց գրեթէ բոլոր յայտնի պարբերական հրատարակութիւնների էջերում բազմատեսակ ծաւալի և բազմատեսակ բովանդակութեան գրւածներով, բայց աւելի՝ «Փորձ» ամսագրում իր վէպերով և Ազատ երգերով՝ այս շրջանում Պատկանեանը վերջնականապէս որոշեց իր գործունէութեան բնաւորութիւնը, Բախիֆիի հետ զուգընթացաբար անխզելի կերպով կապելով իր անունը հայոց մտաւոր և հասարակական նորագոյն շարժումների պատմութեան հետ:

1881 թւականին Թիֆլիսի հրատարակչական ընկերութեան լոյս ընծայած «Գամառ-Քաթիպայի բանաստեղծութիւնների» նոր ժողովածուով կարելի է լրացած համարել մեր բանաստեղծի գործունէութեան երկրորդ շրջանը ¹⁾: Այնուհետև ութսնական և իննսնական թւականները քիչ բան աւելացրին Պատկանեանի փառքի վրայ: Ճշմարիտ է, 1880 թւից դէս վարելով Նոր-Նախիջևանում իր նախաձեռնութեամբ հիմնած «Արհեստական Դպրոցի» տեսչի պաշտօնը՝ Պատկանեանը շարունակում էր նախկին եռանդով և՛ իր գրական պարապմունքները, բայց այս շրջանում նա նշանաւոր ոչինչ չ'արտադրեց. նոյն իսկ նրա «Տիկին և նաժիշտ» վէպը, Նոր-Նախիջևանի բարբառով գրած մի

¹⁾ «Մանկական երգերը» որ լոյս ընծայեց նոյն ընկերութիւնը 1880 թւին, գուրս կը մնան մեր ուսումնասիրութեան շրջանից:

քանի մանրավէպերը և սակաւթիւ բանաստեղծութիւնները, որ հրատարակեցին «Արձագանք»-ում, Մոսկւայի «Հանդէս»-ում, Պետերբուրգի «Արաքս»-ում և արտասահմանեան լրագիրներում, — ոչինչ նշանաւոր բան չէին ներկայացնում վաթսնական և եօթանասնական թւականների Գամառ-Փաթիպային ճանաչողների համար: Բայց եթէ Պատկանեանի գործունէութեան այս վերջին շրջանը նշանաւոր չեղաւ զրական և հասարակական տեսակէտից, նա նշանաւոր եղաւ բանաստեղծի անձնաւորութեան համար՝ այն մտքով, որ այս շրջանում մամուլի և հասարակութեան մէջ արծարծւեց նրա 35-ամեայ յոբելեանը տօնելու գաղափարը և այս շրջանում ճանապարհորդելով զանազան հայաբնակ քաղաքներ, բանաստեղծը արժանացաւ ամեն տեղ ժողովրդի և երիտասարդութեան բուռն համակրութեան ցոյցերին:

Ութսնական թւականների վերջին տարիներում առաջին անգամ որոշ երևացին այն հիւանդութեան նշանները, որ և իջեցրեց բանաստեղծին գերեզման: Մի քանի անգամ գալով Մոսկւա և խորհրդակցելով այնտեղի յայտնի բժիշկների հետ, Պատկանեանը գտնում էր լոկ ժամանակաւոր թեթեւութիւն: Նրան անհրաժեշտ էր անպայման հանգիստ և ազատութիւն ընտանեկան ¹⁾ հոգսերից, որ սակայն անկարելի էր բազմանդամ ընտանիքով ծանրաբեռնւած, բայց աղքատ հայ տեսչի համար: Ի բնէ համեստ և միւլնոցն ժամանակ հպարտ, նա ոչ միայն ոչոքի ձեռք չէր մեկնում, այլ և աշխատում էր ծածկել իր նիւթական նեղ զրութիւնը նոյն իսկ իր բարեկամներից... Վերջին ժամանակներս գտնւեցին բարեմիտ մարդիկ, որոնք հանդանակութիւն բաց արին հիւանդութեան ճիրաններում տանջւող պօէտի համար, բայց արդէն ուշ էր. օգնութիւնը հասաւ, բայց աւելի ընտանիքին՝ քան պօէտին իրան:

Մի-երկու տարի՝ ամսուայ ամիսներին տարուբերելով Նոր-Նախիջևանից Կիւլովոդսկ և Կիւլովոդսկից Նոր-Նախիջևան, «Արաքսի արտասուքի» երգիչը կնքեց իր մահկանացուն իր

¹⁾ Պատկանեանի ամուսնանալը վերաբերում է վաթսնական թւականներին: Նրա կինը՝ տիկին Օլգա (Հռիփսիմէ) Պատկանեան՝ Արաբացւոյ լեզւի ուսուցիչ Յովհաննէս Ամիրի դուստրն է:

հայրենի քաղաքում այս տարւայ օգոստոսի 22-ին, երեկոցեան ժամի 7-ին:

Թող նրա անմոռանալի յիշատակը չը պղտորի մեր քննական հայեացքը և թող անկեղծ ասենք նրա բանաստեղծական գործունէութեան մասին այն ամէնը, ինչ մեր խելքը և մեր խիղճը վկայում են որ ճշմարիտ է: De mortuis aut verum, aut nihil— ննջեցեալների մասին կամ ճշմարիտը, կամ ոչինչ...

(Վերջը չաջորդ համարում)

Գ Ր Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

ՄԱՌԻ, Նիկ., պրոֆեսոր Հայերենի 'ի համալսարանին Պետերբուրգի.
«Ամառնային ուղևորութիւնից դէպի Հայս»: Նկատողութիւններ և
քաղաքներ հայկական ձեռագրերից: Թարգմ. Ռոմիրիոս Անովեան,
Վիեննա, Միխիթարեան տպ. 1892 թ. ութածալ, 90 էջ, գինն է 1 ֆր.:

Մեր հին գրականութեան ուսում-
նասիրութեան համար ներկայացող
չափ զգաւորութիւնների թւում կա
և ա՛յն մեծ գգնարութիւնը, որ ալ
գրականութեան մի նշանաւոր մասը
դեռ մնում է ձեռագիրներում:

Արդարև մեր հին մատենագիր-
ներից շատերը վաղուց են արգէն
հրատարակւած, նրանցից մի քա-
նիւր մինչև անգամ քննադատաբար
ուսումնասիրւած են, թէև գեռ խըն-
դիր է թէ որքան են համապատաս-
խանում գիտութեան աշխատանք
հանջներին ալ հրատարակութիւ-
ններն ու ուսումնասիրութիւնները,
բայց ալ քիչն էլ չենք կարող ասել
միջնադարեան և նոր հայոց մի շարք
մատենագիրների, թարգմանիչների
ու կոմպիլատորների մասին, որոնց
գրւածները դեռ ընկած են ալ ևս կամ
ա՛յն վանքի մոռացւած անկիւնում և
որոնց մենք կամ անունով ենք լուի
ճանաչում կամ ամենին չենք ճա-

նաչում: Բաւական է միայն լիչել թէ
որքան հարուստ է մեր հին անվա-
ւերականների (ապոկրիֆների) գրա-
կանութիւնը և որքան քիչ բան է
լուս ընծաւած ալ գրականութիւ-
նից և որքան ևս առաւել քիչ բան
ուսումնասիրւած... Կամ վերցրէք
վերջին դարերի ուսմէական գրա-
փառ կամ գրափառախառն ուսմի-
թէն մի շարք արձակ և ոտանաւոր շա-
րադրութիւնները, որոնցով լի են մեր
ձեռագիրները՝ քանի՜ հատ կը գըտ-
նէք ալ շարադրութիւններից ուղա-
գրւած և բանասէրներին մատչելի
տրւած... Մինչդեռ ալ և ալ տեսակ
գրւածների հրատարակութեամբ կա-
րելի էր լանհունա ընդարձակել հետա-
դատութեան շրջանը, լուս տիւեւել քա-
ղաքական, եկեղեցական և գրականու-
թեան պատմութեան շատ մութ կող-
մերի վրա և անսպառ նիւթեր մատա-
կարարելով բազմազան ու բազմաոն-
ոակ կուլտուրական, լեզւաբանական և

աղագրական երևութիւնների համեմատական ուսումնասիրութեան համար:

Սպասելով աւելի բարեպատեհ հանգամանքների, որ մեր գրչագիրների մեծագոյն մասը մոնեն տպագրական մամուլի տակ՝ պէտք է չնորհակալ լինել անօգտակար գործի համար, որ ձեռնարկեց վերջերս Վիեննայի Միութարեան միաբանութիւնը՝ լոյս ընծաւելով եւրոպական զանազան գրադարանների հաւերէն գրչագրաց ցուցակները և գրանով գէթ թեթեակի ծանօթացնելով բանասէրներին գրչագիրների ներքին և արտաքին առանձնաւատկութիւններին: Որքան մանրամասն լինեն աչք տեսակ ցուցակները, այնքան շատ բանասիրական հարցերի բաւարարութիւն կը տան, բայց մանրամասնութիւնը անհրաժեշտ պալման պիտի լինի մանաւանդ ան զեպոստ, երբ գրչագիրը մի դեռ ևս չը տպագրուած երկ է բովանդակում:

Անշուշտ միևնույն տեսակէտն է ունեցել և մեր առաջ գրած գրքոյկի հեղինակ պրոֆ. Ն. Մառը, որ 1890 թւի գարնանը և ամառը Սեան և Էջմիածին եղած ժամանակ պարապել է հաւերէն ձեռագիրների ուսումնասիրութեամբ և նրանց միջից քաղածներն անելով: Հեղինակի գիտական ուղևորութեան գլխաւոր նպատակն է եղել՝ ժողովել նիւթի հալ առակների և առածների մատենագրութիւնից՝ գրականութեան աչք ճիւղի ուսումնասիրութեան նւիրած իր մի մասնագիտական աշխատութեան համար: Սակայն այս գրքոյկի մէջ աչք նիւթերը չեն տեղ գտել, այլ ան մանր նկատողութիւն-

ներն ու քաղածները ¹⁾, որ նա արել է իր «հանդատեան ժամերին» գլխաւոր պարապմունքներից չեւոյն: Ցաւակցաբար հեղինակի նկատողութիւնների ամենահետաքրքրական մասը՝ Խորենացու «Պատմութեան» տպագիր օրինակի և Սարգիս սրբազանի մի ձեռագրի համեմատութիւնը, որ պ. Մառ արել է միաբան Գալուստ Մկրտչեանի էական օգնութեամբ, դուրս է ձգած գրքոյկից: Սակայն այստեղ էլ կան մի քանի հետաքրքրական նկատողութիւններ և քաղածներ, որոնց վրալ արժէ կանգ առնել: Այսպէս է օրինակ՝ Գ. հատաածը՝ Թ ւ ե լ ե ա ճ ե ռ գ ե ռ ի մասին, Գ. Գ ա ջ ե ռ ի և Ա ռ տ ա լ ա զ գ ի մասին, Թ. Յ ո վ ս է վ ի և Ա ս ա ն է թ, Ժ Գ. Պ ե տ ռ ո ս ա ռ ա ք ե ա լ ի եւրազը, Ժ Գ. Ս. Գ ռ ի գ ո ռ ի տ եւ ի լ ը և Հ ո գ ու ու մ ար մ ն ի վ է ճ ը և ա լ ը:

Ձի կարելի ասել, որ պ. Մառի արած քաղածները կարեւոր լինէին և հասկանալի է թէ ինչու ամառնալին ուղևորութեան «երկու երեք ամիսը, ինչպէս նա ինքն է խոստովանում, շատ կարճ ժամանակամիջոց է քանի մի հազար ձեռագրերի հաւածուի հետ ծանօթանալու և բաժն կարեւոր բաները դուրս բերելու համար», և եթէ աչք ճշմարիտ է ընդհանրապէս, մանաւանդ ճշմարիտ է

¹⁾ Աչք նկատողութիւններն ու քաղածները հեղինակը տպագրել է «Записки восточн. отд. имп. русск. археолог. общ.» հրատարակութեան V հատ. էջ 211—241 և VI, 135—228:

անս քաղաճներն նկատմամբ, որ հեղինակը արեւ է ազատ ժամերին: Սակաջ մի բան, որ չի կարելի արդարացնել ոչ ուղեորութեան «ամառնալին» լինելովը, ոչ էլ ժամանակի կարճութեամբ՝ այդ աչն կանխահաս նկատողութիւններն են, որ տեղ տեղ թուլ է տալիս իրան՝ անել պ. Մառը: Այսպէս օրինակ՝ խօսելով թւեւեաց երգերի մասին, պ. Մառը չի հաւանում նախորդ գիտնականների՝ Խորենացու այս խօսքին առած մեկնութիւններին և ինքը թւեւիք բառը չառաջ է բերում («ես չառաջ եմ բերում») թուեւեւ բալից, այս երկու բառերը, ասում է պ. Մառ, հալկական հին քերթողութեան մէջ, ըստ երեսութիւն ունէին առանձին նշանակութիւն և ցոյց էին տալիս ոտանաւոր ջորի-նկու կամ արտասանելու եղանակներից մէկը, բայց թէ նոքա երգելով կարդալուն, ասելուն, թէ պերճասացութեան (déclamation) էին վերաբերում, չեմ կարող ասել...» Խնչ օգուտ այս տեսակ նկատողութիւններից... Կարող ենք հաւատացնել պ. Մառին, որ թուեւեաց երգք տերմինը Խորենացուն է միայն պատկանում և «հալկական հին քերթողութեան մէջ» նա ոչինչ առանձին նշանակութիւն չ'ունէր: Մի և նոյն երգերը, որ Խորենացին անւանում է ուրիշ տեղերում երգք վիպասանաց նա մի տեղում միայն անւանում է երգք թուեւեաց, դրանք միևնոյն՝ Գողթան երգերն են: Ապացուց՝ որ իր պատմութեան երկրորդ դրքում նորից քննադատութիւն անելով Արտաշիսի

և Սաթինիկի մասին՝ նոյն Խորենացին աւելացնում է որ նրանց չարաբերութիւնները չալտնի են Գողթնում երգող վիպասանաց երգերից և այդ միևնոյն երգերն են, որ առաջ Խորենացին անւանեց թւեւեաց երգք: ¹⁾ Արգեօք թւեւիք բառը ինչ մտքով է դործածում Խորենացին... մենք այս խնդրին դեռ կը վերադառնանք: ²⁾ Այս նկատողութեամբ մենք կամեցանք միայն ցոյց տալ՝ թէ ինչպէս պ. Մառը հապճեպով ենթադրութիւններ է անում՝ առանց հիմնաւորապէս ուսումնասիրելու: Մի ուրիշ օրինակ:

Թուեւեաց երգերի էութիւնը չը որոշած, պ. Մառը փորձում է «եօթնոտեան չափով» վերարտադրել ազգերգերից մինը Խորենացու տեքստի հիման վրայ և ահա նա առաջարկում է կարդալ.

«Ճաշ գործեալ Արգաւանայ
Ի պատիւ Արտաշիսի
Խարդաւանակ լեալ նմին
Ի տաճարին վիշապաց...» ³⁾

¹⁾ Հմմտ. Խորենացի, Ա. Լ. և Բ. խթ. Տէս նոյնպէս Պալաւանեանի «Հայոց Գրականութեան Պատմութիւնը»:

²⁾ Փաւստոս մի և նոյն թւեւեաց երգերն ի նկատի ունէր ասելով. («և զլեւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք»...)

³⁾ Խորենացու տեքստում. «Այլ և ճաշ, ատեն, գործեալ Արգաւանայ՝ ի պատիւ Արտաշիսի, և խարդաւանակ լեալ... որտեղ գործեալ և լեալ ձերը կախում ունեն ասեն բալից, էլ ինչպէս կարելի է անարատութեամբ վերարտադրել երգի բուն

Եւ սա անւանում է թելեաց երգ
 եօթնոտեան չափով: Եթէ այդպէս է
 վարում նախնական տեքստերի հետ
 Պետերբուրգի համալսարանի պրոֆ.
 պ. Ն. Մառը, ինչ զարմանք, որ
 վաղն էլ մի ուրիշը դուրս գալ ու
 լըջօրէն ապացուցանի որ Խորենա-
 ցու ամբողջ «Պատմութիւնը» ոչ ալ
 ինչ է, եթէ ոչ եօթնոտեան չափով
 գրած՝ թելեաց երգ... Հաւատացած
 եմ, որ ճշմարտութիւնից աւելի հե-
 ոացած չի լինիլ, քան պ. Մառը:
 Նոյնքան կամաւական է չարգելի
 գիտնականի առաջարկած այն ուղ-
 զագրութիւնը, որ նա մտցնում է
 Արտաշիսի լայտնի անէծքի խօսքերի
 մէջ որ առաջ է բերում Խորենացին:
 Պր. Մառը առաջարկում է ուղղել.

Դու լորս հեծցիս չազատ ի վեր
 'ի Մասիս,

Ձքեզ կալցին քաջք, տարցին
 չազատ 'ի Մասիս,

և իբր թէ այս ուղղագրութեամբ «բո-
 լոր անտեղութիւնները կը վերանան,
 անէծքի իւրաքանչիւր խօսքը իմաստ
 կ'ընդունի և կը բերէ մի ինչ որ նոր
 օրհասական գրութիւն, և մանաւանդ
 թէ կը ստանալ չափ...» (Նոյննք
 մի ըստէ որ այդ բոլորը ճիշտ է,
 բայց ներեցէք, եթէ հարցնենք, ով
 է ձեզ իրաւունք տւել այդպէս աշ-
 ց և բնմոն վարել Խորենացու տեք-
 ստի հետ...)

Պր. Մառը պէտք է խմանալ, որ
 մեր նկատողութիւնները միանգա-
 մա՛ն ըարեմիտ են. «որում շատ տաւ,
 շատ պահանջեցի...» Մենք շատ լու-

խօսքերը, այն էլ «եօթնոտեան
 չափով»:

սեր ունենք պ. Մառի վրա և օգ-
 տւում ենք դէպքից՝ վկայելու որ
 օտարազգի հալագէտների մէջ նա
 միակն է, որ բացի գրափառից՝ գե-
 դեցիկ կարդում և գրում է նաև աշ-
 խարհափառ: Հալագիտութիւնը շատ
 սպասելիք ունի պրոֆ. Քերովէ
 Պատկանեանի արժանաւոր աշակեր-
 տից և արժանաւոր լաջորդից:

«Մուրճ»-ի ընթերցողներին մենք
 աւելի լաւ ընծայ չենք կարող տալ
 պ. Մառի այս գրքոյկից քան հե-
 տեհալ դողարիկ՝ Ժողովրդական ռոմ
 գրած ռոտանաւորը՝ որ նա հանել է
 վերջին դարերի հալ բանաստեղծու-
 թիւնների մի ձեռագիր հաւաքածուից:

Պէտքս աստէք էրադ:

«Պետրոս լերաղ է տեսեր,
 Ելեալ պատմէր Պաւղոսին,
 Փոքրիկ ալի մի տեսալ,
 Փոքրիկ հընձան մի վերալ,
 Փոքրիկ հընձանին վերալ
 Բարակ առուակ մի տեսալ.
 Յալն բարակ առուին վերալ,
 Նոր բարունակ մի տեսալ.
 Նոր բարունակին վերալ
 Ոսկի ողկուղ մի տեսալ.
 Ոսկի ողկուղին վերալ
 Խալտ աղաւնի մի տեսալ:
 Պատասխանեալ Պաւղոսին.
 Պետրոս, երազդ ի բարին.
 Հրեշտակալին է տեսիլդ.
 Զխաբրիկ ալիին որ տեսար՝
 Վերտաղէմ՝ քաղաքն է:
 Զխաբրիկ հընձանն որ տեսար՝
 Սողոմոնի տաճարն է.
 Զբարակ առուն որ տեսար՝
 Դիտ Յորդանան սղբիւրն է.
 Զնոր բարունակ որ տեսար՝

Աստուածածինն սուրբ Կոյնն է.
Զոսկի ողկուցն որ տեսար՝
Իւր միածինն որդինն է:
Զխալստ աղանինն որ տեսար՝

Մըխիթարիչ հոգինն է:
Պետրոս երազող ի բարին.
Հրեշտակալին քոյ տեսիլդ»:
Վահ

ՇԻՐԱԿԵՑԻ.—«Մարօ»: Պատկերներ իրական կեանքից: Ալեքսանդրա-
պոլ, սպ. Սանդեանցի, գինն է 50 կոպէկ:

Երբ վկայասանը ձեռն է առնում գրիչը, նա կամենում է կամ խորը թափանցել մարդու հոգու մէջ և երեան հանել հոգու բոլոր շարժումները, գլխաւորապէս մարդու ներքին աշխարհի հետ դործ ունի աչն հեղինակը, որ պատկանում է վէպի հոգեբանական ուղղութեանը (Դոստոևսկի): Կամ երբեմն վկայասանին հետաքրքրում է բոլորովին ալ բան, նա գրում է բոլորովին ալ գլխաւորութեամբ: Նա ցանկանում կեանքի մէջ իրականացած տեսնել որոշ դադափարներ. նա աչ բանը տնում է վէպի միջոցով. հոգեբանական վերլուծութիւնը ալ ևս առաջին տեղը չէ բռնում: Սա է տենդենցիական վէպի առանձնապատկութիւնը, այս ուղղութեամբ էր գրում մեր Բաֆֆին, այս ուղղութեան է պատկանում և Բելլամին («Ապագայ դար»): Կա և մի ալ ուղղութիւն—հաստորայիտականը (Զոլա). սորա նպատակն է տալ կեանքի նկարագիր, բայց նկարագիր, որ հիմնւած է կեանքի լուրջ ուսումնասիրութեան վերաբ: Սակաւն որ ուղղութեան էլ կողմնակից լինի վկայասանը, եթէ

կամենում է հետաքրքրական և օգտաւետ լինել, նա պէտք է դէմ դնալ գեղարեստի աչն օրէնքներին, առանց որոնց չէ կարող իրականանալ գեղեցկի գաղափարը. ալ օրէնքները սորա կամ նորա քմահաճութիւնը չեն. նորա բոլորում են գեղարեստի էութիւնից, նորա վաւերացրած են հանճարները հրաշալի օրինակներով: Եթէ վկայասանը իրար ետևից շարում է եղբւրլութիւններ, խօսեցնում զործող տնձանց և ալ բոլորը նա տնում է ալեպէս, որ ոչ գէպքերը, ոչ խօսակցութիւնները իրար հետ չեն հետևում, աչ ժամանակ, ի հարկէ, երկասիրութիւնը մատնւած է անհետաքրքրութեան, և հեղինակը ինքն է իր ձեռքով առաջին մահարեր հարւածը տալիս իր գրածքին:

Ազգային մահաբեր հարւած է հասցնում իւր գրածքին և «Մարօ» հեղինակը: Այս պատկերը՝ ոչ մի պատկերութիւն չէ թողնում ընթերցումից լետող. կարգաս չը կարգաս—մի հաշիւ է: Ի՞նչ է նորա անհետաքրքրութեան պատճառը: Պատճառը շատ հասարակ է. Երբ

հեղինակը այս պատկերը գրելու համար ձեռն է առել գրիչը, նա ինքը իւր համար որոշած չէ եղել թէ ինչն է հետաքրքրական այստեղ, ինչ բանի վերաջ հարկաւոր է աւելի ուշադրութիւն դարձնել և ինչ բան պէտք էր բոլորովին թողնել: Կնչեր չէ պատմում հեղինակը այս փոքրիկ գրքովի մէջ (32 էջ). այստեղ կալ նշանդէք, հարսանիք, եղբայր սպանութիւն, ինքնասպանութիւն, նոր հարսանիք...

Մեր ինչին է աչս բոլորը, ինչ է ուզում առել հեղինակը. Այստեղ գործող անձինք շատ կան, — բալց ձրն է ուշադրութեան արժանի. աչստեղ դէպքեր շատ կան, — ձրի վերաջ պէտք է կենդրոնանալ մեր հետաքրքրութիւնը: Ո՛չ մի դէպք, ո՛չ մի անձնաւորութիւն, ո՛չ մի խօսակցութիւն հետաքրքրական չէ աչստեղ: Իդէա չկալ գրածքի մէջ. չեմ ասում խրատ, ալ իդէա, առանց որի ես չեմ կարողանում երևակալել մի գրածք, որ գեղարւեստական արժանաւորութիւն ունենալ: Վերցնենք մի անմեղ բան: Կնթաղրենք, որ բանաստեղծը կամենում է նկարագրել Մասիսը. նա աչխատում է արտապատել աչն տպաւորութիւնը, որ անում է նորա վերաջ աչս լեառը իւր վեհութեամբ և ուրիշ չատկութիւններով. ահա նորա բանաստեղծութեան իդէան: Բալց եթէ նա Մասիսը նկարագրելիս չանկարծ չիչէր թէ ինչպէս երկու կատու մոնդում էին աչդ ժամանակ, աչն բանը, ի հարկէ, ծիծաղալի կը լինէր. մթթէ հարկաւոր էր և կատուների մոնդոցը՝ Մասիսը աւելի լաւ երևակալելու

համար: Ասելս աչն է, որ ամենանմեղ գրածքի մէջ էլ պէտք է արտապատել աչն օրէնքը, որով պալմանաւորում է գեղեցիկ հասկացողութիւնը: Առանց աչս օրէնքի՝ գրածքը կը լինի զանազան եղելութիւնների և խօսքերի տաղտկալի կուտակումն:

«Մարօլի» հեղինակը նախ սկսում է պատմել թէ ինչպէս մի գիւղում ապրում էին երկու բարի մարդիկ: Ընթերցողը սպասում է, թէ հալ գիւղացու նահապետական կեանքի մի լղիլլիա պէտք է կարգալ, բալց պատկերի կիսում ծնողները մոնում են, և հրապարակ են գալիս որղիքը: Առաջ մեռնում է աչդ որղաց մալը, չետոլ հալը՝ զաւակներին երկար խրատելուց չետ: Մարդ, ի հարկէ, չէ ախոսում, որ նոքա մեռան: Մարդիկ են էլի, ապրելին և մեռան: Գողղը իւր «Старосветские помѣшья» իղիլլիալի մէջ նոլնպէս նկարագրում է երկու ծերունիներ, որոնք ապրում են նահապետական խաղաղ և պարզ կեանքով, և եթէ նոքա մեռնում են, ընթերցողը նոլա խղձում է, որովհետեւ նոլան աչնպէս է թւում, թէ նա թաղեց շատ ծանօթ և բարի մարդկանց:

«Մարօլի» մէջ ծերերին թաղելուց չետոլ ընթերցողը չուտով համոզում է, որ հեղինակի խօսքը նոլա մասին չէր. բալց աչն ժամանակ էլ ինչ միտք ունէր գրքովի կէսը նւիրել նոլա: Յետոլ սկսում է մի նոր Փաբուլա: Հալրերը մեռան, նոլա տեղը բունելին որղիքը: Երկու եղբայրներից մէկը բարի է և գեղեցիկ, իսկ միւրը չար և նախան:

ձոտ, ինչպէս Կալէնը: Վերջինս արդէն պառկած է, իսկ միւսը դեռ նոր է ուղում պսակել: Չար եղբայրը նախանձում է, որ եղբայրը պսակւում է գեղեցիկ Մարօլի հետ, որի վերայ նա վաղուց սիրահարւած է:

Հարսանիքի գիշեր է: Չար և Նախանձոտ եղբայրը սպանում է իւր բարի և գեղեցիկ եղբորը, խելաղարւում և վրասխում: Գետոյ նորան կամենում են տանել Սիրիւր, իսկ Նաճանապարհին իրան գցում է գետը և խեղտւում: Անցնում է երկու տարի, Մարօն պսակւում է «Կ. գիւղի բնակիչ Մ. Յ. -ի հետ և 1891 թ. Յուլիսի 17-ին կատարւեցաւ Մարօլի հարսանիքը»: Այդ նոր ամուսինը նույնպէս բարի էր և գեղեցիկ:

Պատկերը վերջանում է: Պատկերը սկսւում է այնպէս և վերջանում այնպէս, որ նորան մարդ կարող է ձգձգել, որքան սիրտը կը տալ, կարելի էր, օրինակ, սկսել եղբայրների պայքարից, կարելի էր նույնպէս, Մարօլի երկրորդ անգամ պսակւելուց ցատոյ, սկսել մանրամասն կերպով նկարագրել շատ բաներ նորա ցետաղայ կեանքից: Մարօն երկրորդ անգամ ամուսնացաւ, և հեղինակը կարծում է, թէ ինչ որ ուզում էր ասել, ասաց:

Ես հաւատացած եմ, որ շատ բաներ, որ նկարագրւած են պատկերի մէջ, կարող են եղած լինել. նոյն իսկ հեղինակը կարող էր նոցա աւանատես եղած լինել, որ ոչ բոլորը, ինչ մենք տեսնում և լսում ենք, կարող է վէպիկի և պատկերի նիւթ դառնալ. դէպքի կամ անձնաւորու-

թեան նկարագրութիւնը պէտք է ներկայացնէ հետաքրքրութիւն կամ հոգեբանական կամ գաղափարի տեսակէտից. առ նազը գրւածքը պէտք է լինի գեղարուեստական ամբողջութիւն:

Եթէ դեղարուեստի այս տարրական ծրէնքներին հաւատարիմ մնար հեղինակը, նա այլ ևս կարեւոր չէր համարել գրքովի երեսին նշանակել «Պատկեր իրական կեանքից»:

Մեզ հարկաւոր չեն այսպիսի ոչ «իրական և ոչ եղբրական վէպեր և պատկերներ», մեզ հարկաւոր են միմիայն գեղեցիկ վէպեր և պատկերներ, որոնց նիւթը լինի իրականութիւնը:—

Այս պատկերի վերջին տողերը կարդալուց ցատոյ, ընթերցողի աչքը կ'ընկնէ անպատճառ հետեւալ տողերի վերայ:—

«Պատրաստ են տպագրութեան համար»:

- 1) Ռեդեորութիւն (և այլն):
- 2) Մշակ, վէպիկ թիւրքահայոց կեանքից:
- 3) Աշոտ երկաթ, պատմ. վէպ:
- 4) Վարդ-Անուշ, պատկեր:
- 5) Մշոյ Ս. Կարապետի վանքը:
- 6) Կարին քաղաք, նկարագրութիւն:
- 7) Երկու եղբայր, պատկեր իրական կեանքից:
- 8) Ոսկի ժամացույց, պատկեր:

Ինչո՞ւ... սա էլ հետաքրքրական է «իրական» պատկերների նման: Թող իմանալ ընթերցողը, որ ծնւում է մի հալ բեղմնաւոր հեղինակ:

Լ. Մ.

ԺՈՂՈՎԱԾՈՒ յօգուտ ռուս սովեալներէ: Մոսկւա, տպար. Մ. Բար-
խուդարեանի, 1892 թ. Տ-աճալ, 244 էջ, տառ № 12, գինն է 1 ռ.

Այս հատորը, որ ամփոփում է
տաան և եօթ գրածքներ, լոյս է
ընծալել Մոսկւայի ուսանող հաշ-
երիտասարդների ձեռքով և նոցա
խի աշխատակցութեամբ, ռուս սո-
վեալների օգտին, հետեւելով նոյն
նպատակով ռուսերէն հրատարակած
ժողովածուներին: Հրատարակու-
թեան նպատակը բարեգործական
լինելով, բնական է որ այս հատորը
չի առաջարկում քննադատների
խիստ քննութեանը, որ ինչ վերա-
բերում է հրատարակութեան գրա-
կան արժէքին: Բայց և այնպէս չենք
կարող առանց առանձին չիշատա-
կութեան թողնել մի գրածք, որը
ոչ միայն ամենամեծ տեղն է բռնում
ժողովածուի մէջ, այլ և զրական ար-
ժէք է ներկայացնում: Դա՝ պ. Նը-
ւանդ Թաղիանոսեանի ուղեորա-
կան նամակներն են «Տպաւորու-
թիւններ Պարսկաստանից» խորա-
գրով, որ լանձնարարում ենք մեր
ընթերցողների չատուկ ուշադրու-

թեանը:

Բերում ենք աչտեղ ժողովածուի
նիւթերի ցանկը.

1) Վ. Հիւզօն և Խաւիան (Թարգ-
մանութ.), 2) Պառաւ Տոնկա (Թարգ-
մանութիւն), 3) Ակն ընդ ական
(Թարգմ.), 4) Մի տեսութիւն Տաճ-
կաստանի մասին (Գլադստոնի), 5)
Տպաւորութիւններ Պարսկաստանից
(Ն. Թաղիանոսեանի), 6) Սերմանա-
նացան (Ա. Մատուրեանի), 7) Ողոր-
մած եղէք (բանաստ. Վ. Հիւզօի),
8) Կռիւ (Մալն Ռիդի), 9) Ֆրանս-
պոլական պատերազմը (Տ. Յով-
հաննիսեանի), 10) Դրօշակակիրը
(Դոդէի), 11) Կոմարի գատաւորի
տեսիլքը (Դոդէի), Խելագար (Զլա-
տովրատսկու), Սով (Ար. Ջարդա-
րեանցի), Անմահական ջուր (Հնդկ-
զրուց), Նոր խօսքեր (Ա. Խատի-
սեանի), Գազէթաչի (Շէէգրինի),
Բաֆֆի (Ն. Նեկրատուլաի):

Ա. Ա.

Նոր ստացւած գրքեր

1) ԱՇԸՂ ՖԻԶԱՀՈՒ Էրզերը: Բ. - Ալեքսանդրապոլ, տպար. Սանդիկանցի, 1892 թ., գինն է 10 կոպէկ:

2) ԼԱՄԱՐՏԻՆ. — «Վիլհելմ Տեյլ»: Թարգմ. Հ. Առաքելեան: Հրատ. «Աղբիւր-Տարազ» հանդէսների: Թիֆլիս, տպարան «Արօր» Նաղարեանի, 1892 թ., գինն է 15 կոպէկ:

3) ՅԱՐՈՒԹԻՆՆԱՆՅ, Խասակ. — «Հայոց գիրը»: Պատկած Սահակ Մեսրոպեան մրցանակաբաշխութեան ամբողջ մրցանակով 1888 թւին: Թիֆլիս, տպ. Շարաձէի, 1892 թ., գինն է 1 ա. 50 կոպէկ:

4) ՉՄՇԿԵԱՆ, Մակար. — «Ծոցի օրացույց 1893 թ.»: Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, գինն է 15 կոպէկ:

5) ՇԻՐԱԿԵՅԻ. — «Երկու եղբայր», պատկեր իրական կեանքից: Գ. Հրատարակ. Ասք. Աւէի: Թիֆլիս, տպարան Արօր Նաղարեանի, 1892 թ., գինն է 15 կոպէկ:

6) «ԺՈՂՈՎԱԾՈՒ, լոգուտ ուստ սովեալները»: Մոսկւա, տպ. Մ. Բարխուդարեանի, գինն է 1 ա.:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Ակնարկ ընկերութիւնների զարգացման պատմութեան վերայ: Հին համ-
քարութիւնները և նոր ընկերութիւնները—Քիֆիխում կազմող զործա-
կատարները և դրապէտների ընկերութիւնները:

Նս զգուշացնում եմ ընթերցողներին, որ այս անգամ քրո-
նիկա սովորական բնաւորութիւնը չի ունենալու. մեզանում սկսում
են հիմնել ընկերութիւններ դասակարգային ինքնօգնութեան վե-
րայ հիմնած. բայց յօդածիս մեծ մասը կը լինի ոչ այնքան նոցա
մասին, որքան նոցա առիթով:

Նթէ միջին դարերը համաքարական կազմակերպութեան դարեր
էին, մեր ժամանակը—ընկերութիւնների դար է:

Համաքարութիւններն էլ մի տեսակ ընկերութիւններ էին, որոն-
ցով ամեն մի դատարգ կազմակերպւած միութիւն էր ներկայաց-
նում, մի միութիւն, որ հոգս էր քաշում դասակարգի նիւթական,
ոգեկան և արհեստի շահերին մասին:

Ինչպէս էին կատարում համաքարութիւնները իրանց այդ կո-
չումը—այդ այտտեղ պատմելու բան չէ. բայց բաւական է միայն
ասել որ նոքա պատմական յայտնի զարգացման շրջանի արգասիք
էին. ինչպէս էին ժամանակները, ժամանակի ոգին—այնպէս էլ դա-
սակարգերի ընկերութիւններն էին և ես ուզում եմ ասել միայն, որ
ընկերութիւններ ունենալու զաղափարը նոր չէ, և որ ինչպէս ժա-
մանակները փոխւում են, ինչպէս փոխւում են աշխատանքի ձևերը—
այնպէս էլ պէտք է փոխւեն ընկերութիւնների ձևերը:

Նոր դարերի մանաւանդ անհատական ազատութեան սկզբունքը,
որի իրականացումը անհրաժեշտ էր դառել միջնադարեան կարգե-
րից դուրս գալու և նորանոր յառաջդիմութիւններ մտցնելու հա-

մար կեանքի մէջ, այդ սկզբունքը, միացած յառաջդիմութեան գաղափարի հետ, միանգամայն անհաշտելի էր հնուց մնացած համքարութիւնների, նոցա հին կանոնադրութիւնների կաշկանդող ոգու հետ: Մարդկանց աշխատանքին նոր կենդանարար շունչ փչելու համար պէտք էր տալալել համքարական կազմակերպութիւնները, ինչպէս որ գիւղական կեանքը վերափոխելու համար պէտք էր վերացնել ճորտութիւնը և ամենը ինչ կապած էր դորա հետ:

Եւ տապալեցին: 1789 թւականի Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը ի միջի ալոց վերացրեց նաև համքարութիւնները, ասելով որ մարդիկ ազատ են աշխատել ինչպէս իրանք ուզում են: Թէև համքարութիւնների դէմ դործը սկսւել էր նաև դորանից առաջ, բայց նոր սկզբունքը բացարձակապէս յայտարարեց մանուսանդ այդ թւականին: Եւրոպայի մնացած երկիրներում համքարական կազմակերպութիւնները նոյնպէս վերացան, բայց արդէն աւելի ուշ, ներկայ դարուս միջոցում:

Մեղանում հին համքարութիւնները մնացել են դեռ ևս գէթ արտաքինոյ, բայց արդէն եւրոպական կեանքը աւելի ու աւելի յետ է մղում նոցա:

Խնդիրը սակայն դորանում չէ: Ազատ անհատական աշխատանքի թագաւորութեան սկզբի տարիներում ոչինչ չկար աւելի ասելի քան դասակարգ խօսքը: Դասակարգ խօսքը շատ էր յիշեցնում հին համքարութիւնները, որոնք յառաջդիմութեան խոչընդոտ էին դառել: Այժմ ալ ևս դասակարգեր չկան, ասում էին նոքա. այժմ կան միայն ազատ մարդիկ, որոնք կարող են պարտաւել ինչով որ ուզեն և ինչպէս որ կ'ուզեն, և ամենքն էլ հաւասար են օրէնքի առաջ: Ել ուրեմն դասակարգս որն է:

Այդ բանն իմանալը կարեւոր է հասկանալու համար նոր ժամանակների ընկերութիւնների զարգացումը: Դասակարգային ոգոսց այնքան վախենում էին, որ սկզբում օտարոտի և ֆեոսակար պէտք է թւար, եթէ միեւնոյն արհեստի ու դիրքի տէր մարդիկ կամենային իրանց դասակարգի ընդհանուր շահերը պաշտպանելու համար՝ ընկերութիւններ կազմել: Չէ որ ընկերութիւն կազմելու համար պէտք է ընդհանուր շահեր ունենալ. իսկ ընդհանուր շահերը մարդկանց միացնում են դասակարգային զգաց-

մուկնքով, որը չէր կարող խրախուսել մի այնպիսի ժամանակ, երբ հին դասակարգերի իշխանութեան դէմ նոր էին յաղթանակ տարել:

Ամեն ինչ աուած էր և հալածւած, ինչ դասակարգային էր, հետեապէս ինչպէս կարող էին խրախուսել նաև ընկերութիւնները, որոնք կարող էին միացնել միեւնոյն գործով, միեւնոյն արհեստով, նիւթական և հասարակական նման գրութեան մէջ գտնուող մարդկանց? Ծրանսիական մեծ յեղափոխութեան ոգուն համապատասխան՝ դասակարգեր չպէտք է գոյութիւն ունենային. ժամանակի ազատամիտ ոգին երեք բան էր միայն ուզում՝ ճանաչել՝ անհատ, ազդ և մարդկութիւն, ատոմներ և տիեզերք: Անհատին ուզում էր տալ ամեն տեսակ ազատութիւններ՝ մտածելու, գրելու, քարոզելու, աշխատելու և այլն, և այդ անհամները պէտք է միանան միայն ընդհանուր ազգային և ընդհանուր մարդկային շահերով: Ուրիշ շահեր նա չէր ուզում ճանաչել:

Իրականութիւնը սակայն այլ բան ցոյց տւեց. նա ցոյց տւեց, որ կեանքում գոյութիւն ունի «կոխ գոյութեան համար», կան ուժեղներ, կան և թույլեր, և որ մարդկանց թոյլ կամ ուժեղ լինելը միայն անհատական, ֆիզիոլոգիական յատկութիւններից չեն յառաջանում, այլ և այն կախումից, որ ունի մարդկային մի գործունէութիւն մի ուրիշ գործունէութիւնից, մի պաշտօն՝ մի ուրիշ պաշտօնից, հետեապէս նոյն կախումը պէտք է ունենան նաև մարդիկ միմեանցից: Արդ, եթէ մի որոշ պաշտօնի մարդիկ, հանգամանքների բերմունքով, կախում ունեն մի ուրիշ պաշտօնի տէր մարդկանցից, չէ՞ թէ առաջինները կը հարստահարւեն երկրորդից, եթէ միջոցներ ձեռք չառնեն այն՝ հասարակական տեսակէտից աւելի թոյլ մարդկանց շահերը պաշտպանելու, նիւթապէս աւելի ապահով կացութեանելու և այդպիսով մի յայտնի չափով նոցա ազատելու համար աւելի ուժեղների կամայականութիւնից:

Շատ էլ որ պնդենք թէ օրէնքի առաջ ամենքը հաւասար են, բայց ով կարող է ուրանալ, որ իրաւունքների հաւասարութիւնը օրէնքի առաջ դեռ չի հաւասարեցնում գործարանական բանւորների դրութիւնը՝ գործատերերի գրութեանը, գործակատարների դրութիւնը՝ վաճառականների դրութեանը և այլն: Ինչից է որ

Պազմուժ են դասակարգեր եթէ ոչ դրութեան հաւասարութիւնից աչն մարդկանց, որոնք նման պարապմունք ունեն:

Ահա ինչու գոյութեան կուի մէջ մարդիկ հարկ են տեսնում միանալ և ընկերութիւններ կազմել՝ ոչ միայն բարձր իղէալական նպատակների համար, այլ և իրանց դասակարգային կարօտութիւնները միահամուռ ոյժերով դարմանելու համար:

Նորագոյն օրէնսդրութիւնները, հալածելով հանդերձ հին ձևի ընկերութիւնները, այժմ պարզ հասկացել են դասակարգային ինքնապաշտպանութեան և ինքնօգնութեան օրինաւորութիւնը: Եւ այժմ Եւրոպայում բազմաթիւ են աչն ընկերութիւնները, որ դրդած են այդ գաղափարից և հիմնած են այդ սկզբունքի վերայ: Առանց այդ ընկերութիւնների՝ ամենաթոյլ դրութեան մէջ գտնուող դասակարգերը կը դառնային փակտիկական ստրուկներ կապիտալով աւելի զօրեղ մարդկանց ձեռքում:

Եւ ահա աչն, ինչ մի հարիւր տարի առաջ խաւարամիտ ճշգրտումների նշան էր համարւում, այժմ նշան է գիտակցութեան, որովհետեւ ճանաչել իրան մի դասակարգի անդամ միւս՝ նման դրութեան մէջ գտնուողների հետ՝ գիտակցութեան յառաջդիմութիւն է. այդ գիտակցութիւնն է որ մարդկանց կարող է խմբել և միևնոյն նպատակներին ծառայեցնել նոցա: Ընկերութիւնները՝ հետեւանք են այդ գիտակցութեան:

Մեղանում այդ գիտակցութիւնը նոյնպէս սկսում է երեւան դալ և միայն պէտք է ուրախանալ այդ երեւոյթին: Ահա կազմուժ է Թիֆլիսում դորձակատարների փոխադարձ վարկի և օգնութեան ընկերութիւն, ահա աշխատում են կազմել հալ զրագէտների, գիտնականների և մանկավարժների օգնութեան ընկերութիւն. վաղը, միւս օր թերեւս լսենք Բաքուի բանւորների փոխադարձ օգնութեան ընկերութեան մասին, և այլն:

Դժբա արթնացած դասակարգային գիտակցութեան արշալոյսի ճաճանչներն են. նոքա կոչւած կը լինեն ոչ թէ մարդկանց պինդ սեղմելու իրանց դասակարգային նեղ շրջանակի մէջ, այլ ընդհակառակը՝ կոչւած կը լինեն թեթեւացնելու աչն տառապանքները, որ մարդիկ քաշում են շնորհիւ իրանց դասակարգի սուղ պայմաններին, հետեւապէս պէտք է օգնեն որ այդ նեղ շրջանակից

մարդիկ հնարաւորութիւն ունենան իրանց միտքը ազատել և մասնակցել տալ աւելի ընդհանուր մարդկային ոգեկան և մտաւոր բարիքներին:

Ես խօսեցի արթնացած գիտակցութեան մասին. որքան միտքաւորական կը լինէր եթէ այդ լիովին ձիշդ լինէր. և ես շտապում եմ մի քայլ յետ անել: Տեղիս գործակատարները տասնուհինգ տարի առաջ, երևի յորդորներով ոչ գործակատարների, մի ընկերութիւն կազմեցին, կանոնադրութիւն մշակեցին որ և հաստատուեց 22-ն նոյեմբերի 1877 թւականի: Ընկերութիւնը կոչւում էր Քիթլիսի գործակատարների Ընկերութիւն փոխադարձ օգնութեան համար: ձիշդ է, կանոնադրութիւնը շատ էլ լավերից էր. բայց եթէ գիտակցութիւն լինէր՝ կարելի էր նորան փոխել: Եւ ինչ, այդ ընկերութիւնը անուշով մի քանի տարի գոյութիւն ունեցաւ, երևի ոչ ոքին չ'օգնեց և 1881 թւականին իւր խղճուկ գոյքն էլ ծախեց ու գոյութիւնը խալաւ կորցրեց, առանց որ և է մէկին ցաւ պատճառելու: Եւ ահա այժմ նորից, սկսած անցեալ 1891 թւականի յուլիսի 7-ից, ջանքեր են անւում նորից հիմնելու գործակատարների մի ընկերութիւն: Արդեօք որքան է յառաջադիմել այդ ժամանակամիջոցում գործակատարների դասակարգը: Գուցէ և յառաջադիմել է, այդ ես չը գիտեմ, բայց արտաքին մի քանի նշաններից դատելով՝ այդ գիտակցութիւնը նորանում այժմ էլ բաւականաչափ ուժեղ է, որպէս զի այդ դասակարգը ինքը իւր հոգսը քաշել գիտենայ: Ներկայ նոյեմբերի 22-ին նշանակւած էր ընդհանուր ժողով, ուր քննեց կանոնադրութեան նախագիծը: Եւ ինչ! Ժողովին ներկայ դրանեցին Քիթլիսի երևի ոչ պակաս քան հազար գործակատարներից ընդամենը երկու տասնեակ հոգի:

Այդ յամենայն դէպս ցոյց է տալիս որ գործակատարների դասակարգը ինքը իւր սեպհական ոյժերով իւր հոգսը քաշել չը գիտէ և որ նա կարօտ է աւելի ինտելիգէնտ շրջանների խորհուրդին և առաջնորդութեան:

ԹԼԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

Մանրամասնութիւններ բարւոքման վարկի մասին: Հոգի բերքը: Փոխա-
տու—խնայողականընկերութիւնները և գիւղական բանկերը Ռուսաստանում:
Զեմստօնների տւած փոխատուութիւնները: Բարւոքման, համախառն ու
քաղաքային վարկի տեսակները Ներդրւում: Ռուս քաղաքների, հա-
մախքների և զեմստօնների դրամական վիճակները: Գլխէն Ուսպենսկի և
նրա կարծիքը ռուս մոսկիկի մասին և ռուս ինտելլիգենցիայի պարտաւո-
րութիւնների մասին: Նոր գրքեր:

«Մուրճ»-ի ընթերցողները գիտեն արդէն բարւոքման վարկի (мелио-
рационный кредит) ծրագրի ¹⁾ մասին: Աւելորդ չենք համարում վերադառ-
նալ այդ կարևոր խնդրին՝ հաղորդելով մի քանի նոր մանրամասնութիւն-
ներ: Այս մանրամասնութիւնները ներկայացնում է իւր աշխատութեան ²⁾
մէջ պ. Բլիօխը, որին լանձնւած էր այս խնդրի ուսումնասիրութիւնը
ներքին գործերի մինիստրութեան կից կազմած և բարձրագոյն հաստատուած
լանձնաժողովի նախագահի կողմից:

Ակսենք համեմատութիւններից:

Ռուսաստանում մի հեկտար ³⁾ հողը տալիս է 8 հեկտոլիտր ցորեն,
մինչդեռ 9 եւրոպական պետութիւններում 16,7 հեկտոլիտր: Գրեթէ կըրկ-
նակի պակաս է ստացւում նաև ռուս դարին և հաճարը, իսկ ռոժը (рожь) երեք
անգամ պակաս է ստացւում: Նոյն իսկ Ֆինլանդիան, որը պակաս բարե-
բեր պէտք է համարել քան Ռուսաստանի մի քանի ներքին նահանգները,
աւելի է արդիւնաբերում:

Մի փութից ստացւել է 1888 թւին.

Ֆինլանդիայում. հաճար 7,1, ցորեն 7,7, գարի 5,7

Ռուսաստանում » 5,6, » 5,2, » 3,5

¹⁾ «Մուրճ» № 7—8, էջ 1183—1186:

²⁾ «Мелиорационный кредитъ и состояніе сельскаго хозяйства въ
Россіи и иностранныхъ государствахъ»—Բարւոքման վարկը և գիւղա-
տնտեսութեան դրութիւնը Ռուսաստանում և օտար պետութիւններում:

³⁾ 16 հեկտար—մօտաւորապէս 15 ռուս դեսեալինալի:

Թող չը կարծւի սակաւն՝ թէ ալս համեմատութիւնից պէտք լինի եղբայրացեալ թէ անհրաժեշտ է Ռուսաստանում էկստենսիւ մշակութիւնից անցնել ինտենսիւ մշակութեան. — ոչ, քանի որ Ռուսաստանում հողը աւելի էժան է և էկստենսիւ մշակութիւնը կարող է աւելի ձեռնտու լինել, քան արւեստական միջոցներով բերրիացնող ինտենսիւ ¹⁾ մշակութիւնը:

Նւրոպայում բարեօրման վարկը գլխաւորապէս ի նկատի ունի մեծ հողագործներին, իսկ Ռուսաստանում դոքա պէտք է լինէին կալւածատէրերը, սակաւն վիճակագրական թւերը դալիս են հաստատելու, որ սոքա իրանց հողերը մեծ մասամբ կապալով են տալիս հողագործի գիւղացիներին և որ առհասարակ գեղջուկների իրանց ձեռքում գտնւած հողերի 80% ալս մուժիկներն են մշակում, իսկ կալւածատէրերի հողերից մշակում է միայն 46%, ալս էլ վերոյիշեալ ձևով: Ասել է թէ վարկից պէտք է օգտւէին գիւղացիները, բայց թէ սոքա չեն կարող օգտւել՝ քանի որ պետութիւնից չնորհւած հողերի արժէքը դեռ անվճար են թողել ամբողջովին կամ մասամբ: Գիւղացին չը պիտի կարողանալ օգտւել նաև ալս դէպքում, երբ նա պոմեշչիկի հողն է մշակում՝ պայմանով առած: Բայց՝ եթէ գիւղացին փողի կարոտութիւն ունի ²⁾ նա տոկոսով պարտք է վերցնում թէ անհատապէս թէ համայնքով, և առ հարիւրի չափը հասնում է երբեմն 40, երբեմն 60 և երբեմն 400! Թէև օրէնքով գիւղացիները իրաւունք չունին գրաւ դնել տէրութիւնից ստացած հողերը, սակաւն դոքա գրաւ են դրած հէնց օրէնքի հակառակ: Նւ գրաւ դնելուց փողը գիւղացիները կապալով են վերցնում հէնց իրանց հողերը վճարելով դեռնատիւնալին 5 ռուբլուց 9 ռուբլի:

Սակաւն չը պէտք է կարծել, որ Ռուսաստանը բոլորովին զուրկ է վարկի աջակիսի հաստատութիւններից, որոնք քիչ թէ շատ օգնէին գիւղացիներին:

Այդ տեսակ հաստատութիւնները Ռուստանում երկու տեսակի են. փոխառութիւնապետական ընկերութիւնները և գիւղական բանկերը:

Առաջին տեսակի հաստատութիւնները շատ էլ վարմար չեն աղքատ գիւղացու համար. ³⁾ այդ հաստատութիւնները ի նկատի ունին գլխաւորապէս փոքր ի շատէ ունեւորներին, որովհետև փոխ ստանալ կարող է միմիայն նա՝ ով որ անդամակցում է ընկերութեանը իւր խնաւորութիւններով: Այս

¹⁾ Էկստենսիւ մշակութիւն հողերի կոչում է եթէ աւելի ուշք է զարձնւում նոր վարելահողերի մշակման, իսկ ինտենսիւ երբ դիմում են արհեստական բերրիացման — աւելի առատ բերք ստանալու համար, առանց նոր վարելահողերի դիմելու, ալ միմիայն ունեցածը պարարտացնելով:

²⁾ «Մուրճ» № 7—8, էջ 1182:

³⁾ Ռուսական ալս հաստատութիւնները ընդօրինակութիւններ են Շուլցե-Գիւլիշի գերմանական հաստատութիւններին: Շուլցե-Գիւլիշը գծագրել էր այդ հաստատութիւնները քաղաք ալ ին բանւորն երի համար:

տեսակ հաստատութիւնները, — որոնց ղեկցուէր մի ռուբլի վճարողը փոխ կարող է ստանալ 1 ռուբլու եռապատիկը — ալսպէս թէ աֆնպէս ենթադրում է անդամի ունեւորութիւնը և իւր տեսակից շատ օգտակար կարող է համարուել: Պսկով դաւառի այս տեսակ ընկերութիւնը, որի անդամների թւումն են դաւառի բնակիչների երեք քառորդը, առ 1 յուն. 1888 փոխ էր տւել 320.000 ռուբլի՝ ունենալով նաև կանխիկ 90.000: Սարատով դաւառի նոյն տեսակ ընկերութիւնը փոխ էր տւել 1882 թ. 250.000 ռ. և անդամների թիւն էր 3.367՝ կէսը բոլոր տնատէրերի: Մի քանիսը այս տեսակ ընկերութիւններից իրանց օգուտներն ից 600 ռուբլուց մինչև 2500 ռ. չտակացրել են ուսումնարանների կառուցման համար:

Բաց որովհետև ռուս մուժիկը ընդհանրապէս չքաւոր է և զուրկ գրադիտութիւնից — ուր մնաց զանազան հաշիւների հասկացողութիւնից — ուստի այդ տեսակ փոխատու-խնայողական ընկերութիւնների թիւը ամբողջ Ռուսաստանում հասնում է միմիայն 836:

Նրկորդ կարգի հաստատութիւնները, այն է գիւղական բանկերը, չարմար հող չը գտնելով իրանց համար՝ մնացել են անգործադրելի և չը նախած որ արդէն 6 տարի անցել է այդ տեսակ հաստատութիւնների կանոնադրութիւնը հրատարակելուց՝ դեռ ոչ մի գիւղական բանկ չէ հիմնւել: Բաց որովհետև վարկի անհրաժեշտութիւնը անհրաժեշտ է եղել — մենք տեսնում ենք Ռուսաստանում վարկի ուրիշ ձևեր: Ալսպէս, զանազան զև մաս առ մաս եր փոխատուութիւններ են տւել զանազան նպատակների համար:

Մենդելինսկի զեմստւոն 1887 թ. փոխ է տւել 5.000 ձիեր առնելու համար ձիազուրկ գիւղացիներին ամեն մի առնելիք ձիուն 25 ռ. հաշւելով: Վեպեզոնի զեմստւոն նոյն նպատակին էր չատկացրել 3.000 ռ.: Մոսկւայի զեմստւոն ապառիկ ծախում է գիւղացիներին՝ пшуты, խոտերի սերմեր և այլն. այս գործին Մոսկւայի զեմստւոն չատկացրել էր վերջին տարիները տասը-տասը հազար ռուբլի: Նոյն ուղղութեամբ և շատ չափով կերպով գործում են Պերմի և Վեատկայի զեմստւոնները: Մի քանի զեմստւոնները չանձն են առել միջնորդի դերը գիւղացիների և երկրագործիքների ծախողների մէջ: Զեմստւոն ստանում է երբեմն 30% միջնորդութիւն ծախողի կողմից, իսկ առնող գիւղացին պարտաւորում է վճարել երկու տարում գործիքի արժէքը:

Ներոսպալում բարուքման վարկը կազմակերպւած է տեսակ տեսակ ձևերով:

Բաւարի ալոում գործում են Ուլֆալենի գործակցական բանկերը (кооперативн. б.), որոնք տալիս են նաև երկարամեալ փոխատուութիւններ նախած նպատակին, թէ տաւար ձեռք բերելու, թէ շինութիւնների կառուցանելու և թէ այլ անտեսական գործերի համար:

Բելգի ալոում գործում են թէև մասնաւոր, բայց պատասխանատու բանկեր, որոնք և բաժիններ են «Նապոլեոնեան գլխաւոր զրամբարի» անւանւած հաստատութեան:

Անգլիան—բարեփոխան վարկի միջոցով չորացրել է ահագին ճանճակին տարածութիւններ, որոնք նստել են մօտ 8 միլ. ֆունտ ստերլինգ! միայն թէ ալդ գումարը ծախսուել է 32 տարւայ ընթացքում աչն է 1846-ից մինչև 1878 թ.:

Բաւարիայում—նշանակւած կալամեն մի վիճակի համար մասնագէտ ինժեին երի պաշտօնը, որը ծանօթանալով իրան չանձնւած վիճակի հետ՝ ծրագրում է աչնպիսի նախագծեր—գիցուք մի կամուրջի շինութեան, մի ջրանցքի, որոնց շրորհիւ տեղացիների թէ հողերի գինը կաւելանար և թէ աւելի դիւրութիւններ և առաւելութիւններ կը ստեղծէր նոյն վիճակի համար: Այդպիսի մի նախագիծ կազմելուց չետոյ ինժեները աշխատում է համոզել հողատէրերին: Եթէ սոքա համաձայնում են մեծամասնութեամբ՝ ալդ ծրագրւած նախագծերը համարւում են հասարակական աշխատութիւններ—ապա ձեռք է բերւում նախագծածի համեմատ անհրաժեշտ գումարը և ձեռնարկւում շինութեան: Եթէ ինժեները սկզբում իւր կողմը ունի փոքրամասնութիւնը՝ նա շարունակում է աչնքսն՝ մինչև որ կարողանում է ձեռք բերել ձախերի առաւելութիւն: Ղէպի իւր կողմը—կատարւում է վեր լիշածը և փոքրամասնութիւնը հպատակւում է:

Վերադառնալով բարեփոխան վարկի ծրագրին՝ աւելացնենք որ ալդ գործին շատ կօղնեն արդէն գոյութիւն ունեցող տնտես-վերականգնութեան բաժինը (агрономический смотритель)—մի պաշտօն, որ շատ զիմաստներ սկսում են հաստատել իրանց մէջ՝ նաև գիւղատնտեսական ընկերութիւնները, որոնց կարելի կը լինի չանձնել թէ նախաձեռնութիւնը անհրաժեշտ և օգտակար բարենորոգութիւնների ծրագրեր կազմելում, թէ վերահսկողութիւնները լինելիք հասարակական շինութիւնների կառուցման և աչն: Մի բան սակայն շատ է աչքի ընկնում և որը կարող կը լինի բաւականաչափ կերպով խանգարել ալդպիսի ձեռնարկութիւնների գլուխ գալը—ընթերցողը չիւում է մեր անցեալ ¹⁾ չօղւածից որ ամեն մի գործի չատկացնելի գումարը՝ տրելու է երեք միլիատրութիւնների (աչն է պետական կալւածների, ներքին դործերի և ֆինանսների միլիտարութիւնների) հաւանութիւնից և վճռից չետոյ: Ռսաց մամուլի մի մասը իրաւացի է նկատում, որ աչս ձեռնարկութիւնը միմիայն շատ ժամանակ և շատ թուղթ կը խլի:

*
* *

Բարեփոխան վարկի հետ ուսաց մամուլը միաժամանակ ղրաղւում է ալ վարկի խնդիրներով: Վոքա են՝ համաչնական և քաղաքաչին վարկը:

¹⁾ «Մուրճ» № 7—8, էջ 1185:

Ռուսաց օրէնքների համաձայն ղեմնութունները և քաղաքները իրաւունք ունին մտնել ընթացիկ ծախսերի վրա աչն գումարները որ իրանք ժողովում են տուրքի ձևով: Սակայն այդ գումարները չեն գոհացնում այն դէպքերում երբ հարկ է լինում մի կամուրջ, մի հիւանդանոց, մի ջրանցք կառուցանելու, կամ մի աղետի դէմ, թէկուզ խոլերայի հետ, կռւելու համար:

Մեծ քաղաքները (Պետերբուրգ, Մոսկւա, Օդեսա, Վարչաւա, Րիգա, Թիֆլիս և մի քանի ուրիշները) թույլտուութիւն ստանալուց չետոյ իրաւունք և հնարաւորութիւն ունին փոխառութիւն անել ի վաճառ հանելով օբլիգացիաներ, բայց միւս մասն քաղաքների և ղեմնութունների անելիք փոխառութիւնները զգար թէ գլուխ գալու լինեն այդ քաղաքների անլաւտութեան պատճառով: Ուստի ռուսաց մամուլը անհրաժեշտ է համարում չատուկ այս նպատակի համար աջակիսի մի հաստատութեան հիմնել որը չատկապէս ծառայէր այդ գործին կամ թէ հէնց եղած բանկերը ի թիւա այլ գործողութիւնների նաև փոխառութիւնների տալին համալնքներին և քաղաքներին:

Կատարելով սոսկ քրոնիկադրրի պաշտօնը—հարկ չը կալ գուրս գալու այս սահմաններից և մտնել հարցի ուսումնասիրութեան մէջ: Այսքանը ասենք միայն որ Ներոպալում այս խնդիրը վաղուց լուծւած է և որ համալնքները ու քաղաքները հեշտութիւնների ունին պարտքեր անելու հանրագումար գործերի համար:

Ներոպան ներկայացնում է բազմաթիւ խրատական և լուսադրող օրինակներ:

Բեռլինում գոյութիւն ունի Crédit Communal (Համալնական վարկի ընկերութիւն) 1860 թ. հաստատւած: Հիմնւելուց նա վճարում էր իւր պարտքերին—5⁰/₁₀, ներկայումս ունի միայն 3⁰/₁₀ օբլիգացիաներ: 1891 թ. հաշիւներից երևում է որ ընկերութիւնը իւր հաստատուելու օրից փոխառութիւն է տուել 1.478 բեռլինական ¹⁾ համալնքներին 142.457.300 ֆրանկ: Փոխառութիւնների մեծամասնութիւնը (2412-ը՝ 2854 ընդհանուր գումարից) եղել են 1000—50.000 ֆրանկի, 232 փոխառութիւն ոչ աւել քան հարիւր հազարի և 210 փոխառութիւն հարիւր հազար ֆրանկից աւել գումարների:

Ընկերութեան զրամագլուխը է 6.610.400—իսկ պահեստինը 7.304.087 ֆրանկ: Ընկերութիւնը բաժանւել է իւր օգուտներից համալնքների մէջ իւր գործունէութեան ժամանակամիջոցում 6.818.762 ֆրանկ իւր դիւրիդնւտ ²⁾:

Ֆրանսիական Crédit foncier հաստատութիւնը իւր գոյութեան ընթացքի 30 տարում (1860—1890) ի վաճառ է հանել 3.011.845.700

¹⁾ Ամբողջ բեռլինական համալնքների թիւը է 2600:

²⁾ Դիւրիդնւտ—չափ, օգուտ:

³⁾ Kommunales Finanzwesen չօղւածը Schönbergs Handbuch'ի մէջ:

Ֆրանկի օրվագրիաներ: Սրա երրորդ մասը—աչն է աւելի քան մի միլիարդ Ֆրանկը փոխ է տրւած դեպարտամենտներին, համաձայնքներին և սինդիկատներին առանց դրաւականի:

Վերջերս այս հաստատութեան հետ, Ֆրանսիայում, սկսել են մրցել ապահովագրութեան ընկերութիւնները և փոխ տալիս համաձայնքներին $4,25\%$ և նոյն իսկ 4% :

Պ. Ռալտցհենշտայն¹⁾ վիճակագրական աղիւսակներից երևում է որ 1886 թ. Ֆրանսիական բոլոր քաղաքային և գիւղական համաձայնքների պարտքը հասնում էր 3.020.000.000 Ֆրանկի որից միմիայն Պարիզի մասը կազմում է 1.777.914.586 Ֆրանկ:

Ի տալական 4925 համաձայնքներ պարտք ունէին առ լուծւոր 1886 թ. 883.138.464 Ֆրանկ:

Գերմանական համաձայնքների պարտքը հասնում էր առ 1890 թ. լուծւորը՝ 177.000.000 մարկի: Բացի այդ նոյն նպատակի են ծառայում 17 գերմանական ակցիոներական բանկեր:

Աւստրիայում միմիայն Bodenkreditanstalt-ը փոխատուութիւններ է տւել առ 91 թիւը 71.592.310 գուլդեն:

Անգլիայում—1886 թիւն արձանագրւած էին 28.401 համաձայնքներ 28 միլիոն բնակիչներով: Սոքա ունէին մուտք չեմ միլ. ֆունտ ստերլինգ, եւք մօտ 54 միլ.: Այդ համաձայնքների ընդհանուր պարտքն էր 1886 թիւն մօտ 182 միլ. ֆունտ ստերլինգ: Վերոյիշեալ թիւերից Լոնդոն քաղաքին վերաբերում են տարեկան եկամուտ 10 միլիոն ֆունտ և պարտք 38 միլ. ֆունտ: Անգլիական բոլոր համաձայնքների պարտքը՝ 182 միլ. ֆունտը բաժանւում է այսպէս. պարտք էր արւած ջրանցքների համար մօտ 32 միլ. ֆունտ, նաւահանդիսանների—մօտ 29 միլ. ֆ., ճանապարհների հաղորդակցութեան բարելաւութեան համար մօտ $28\frac{1}{2}$ միլ. ֆ., ВОДОСТОК-ների համար մօտ $17\frac{3}{4}$ միլ. ֆ., դպրոցների համար մօտ 16 միլ. ֆ., գաղալին լուսաւորութեան համար մօտ $14\frac{1}{2}$ միլ.:

Ամերիկայի նահանգները 1880 թիւն պարտ էին 234 միլ. դոլլար, դքսութիւնները 123 միլ. դոլլար, քաղաքները 700 միլ. դոլլար,—ընդամենը մօտ 2 միլիարդ ռուբլի: Այդ դոմարումն են Վաշինգտոն քաղաքի պարտքը 25 միլ. դոլ., Նիւ-Իօրկինը 91 միլ., Չիկագոնը $12\frac{1}{2}$, Ֆիլադելֆիանը 57 միլ. դոլլար:

Դնենք աւտոեղ մի աղիւսակ¹⁾, որից կերևալ թէ 1886 թիւն ինչքան պարտքեր ունէին եւրոպական մի քանի քաղաքները և թէ ինչ է ընկնում ամեն մի բնակչին.

¹⁾ I. Körösi կաղմածը:

	Բնակչւելիք Բէւը.	Պարտի գումարը.	Ընկում է Տ Բնակչի.
Պարիզ	2.237.213	1.768.653.400	Ֆրանկ 768, ₅₅
Բերլին	1.349.063	217.730.546	» 161, ₃₈
Վիեննա	759.066	136.870.704	» 180, ₃₁
Միլան	361.212	79.585.696	» 220, ₃₂
Կոպենհագեն . .	289.000	41.880.037	» 144, ₉₁
Ֆրանկֆուրտ . .	156.000	53.813.656	» 344, ₉₆
Մաջն գետի վրա			
Վենետիկ . . .	147.347	8.186.926	» 55, ₅₆
Քրիստիանիէ . .	134.036	16.614.341	» 123, ₆₅

Առանց երկարաբանելու նկատենք, որ եղած փոխառութիւնները $2\frac{1}{3}$ — $4\frac{1}{2}$ առ հարկերով են եղած, ուրեմն միջին թւով 3 — $3\frac{1}{2}\%$:

Գալով Ռուսաստանի քաղաքներին՝ մենք տեսնում ենք, որ բոլոր 805 քաղաքների եկամուտը 1889 թ. եղել է մօտ 58.693.038 ռուբլի, իսկ եւքը—57.677.464 ռուբլի:

Ռուսաստանի հինգ քաղաքների (Պետերբուրգ, Մոսկւա, Օդեսա, Վարչաւա և Բիզա) ընդհանուր եկամուտը (25.745,000 ռ.) հաւասար է բոլոր քաղաքների զուամարի 0,44%:

Բոլոր քաղաքների դրամագլուխը առ 1889 թ.—34.006.636 ռ., իսկ պարտքի գումարը էր 34.605.608 ռուբլի:

Դենք աչտեղ մի փոքրիկ աղիւսակ, որից երեւում են Ռուսաստանի գլխաւոր քաղաքների թէ տարեկան եկամուտը, և թէ պարտքը առ 1889 թիւը:

	Եկամուտը	Պարտի գումարը
Ս. Պետերբուրգ . . .	8.102.301 ռ.	2.789.922 ռ.
Մոսկւա	7.625,975 »	5.877.805 »
Օդեսա	3.744.669 »	4.727.466 »
Վարչաւա	3.573.912 »	6.364.498 »
Բիզա	2.791.014 »	1.074.932 »
Կիև	1.558.171 »	671.004 »
Վորոնեժ	309.387 »	1.010.092 »

Անցնելով ալժմ համալսքներին՝ պիտի նկատած, որ հոգսերի ծանրութիւնը Ռուսաստանում գրւած է զեմստւոնների վրա, քանի որ ժողովրդական առողջապահութեան հոգսը այս վերջիններին է լանձնւած: Նւ իրաւ, ալդպէս էլ վկայում են թւերը: 1881 թ. համալսքների ընդհանուր ծախքի 32.185.691 ռ. գումարից մեծագոյն մասը ընկնում էր վարչական ծախքի (административные расходы) բաժնին, այն է 22.517.329 ռ. ի վարձատրութիւն զիւղական կառավարութեան և միմիայն բարեկաւութեան վրա (содержание сельского управления и расходы по благоустрой-

ТВУ) — 9.668.362 ու, մնացորդ գումարը հասնում էր դաշտեր, չորացնելու, հովիւներ վարձատրելու և այլ տնտեսական ծախքերին: Ժողովրդական առողջապահութեան վրա ծախսւած է 46 նահանգներում միմիայն 989.503 ու, որի գրեթէ կէսը՝ 392.242 ու. ծախսել են 12 նահանգներ, ուր չեն մտցրւած զեմստւօնները:

Գիւղական համայնքների ժողովրդական կրթութեան վրա արած ծախքերը = 9,7%, իսկ զեմստւոններինը = 90,3%:

34 նահանգների զեմստւոնների եկամուտը 1885 թվին հասնում էր 43 միլ. ռուբլու, որի 21% (մօտ 9 միլ. ու.) կազմում էին նահանգական տուրքեր և մնացեալ 79% (մօտ 34 միլ. ու.) գաւառական տուրքեր: Ահա աղի աղիւսակը:

Հողերից հարկ	(сборъ)	28.164.543 ու.
Քաղաքային անշարժ կաւքերից	»	2.334.570 »
Գաւառական բնակւած տներից	»	444.275 »
Գործարաններից և առևտրական հիմն.	»	3.417.975 »
Այլ կաւքերից	»	330.373 »
Առևտրական վկայաթղթերից	»	3.584.391 »
Այլ եկամուտներ (մաքսեր, տուգանքներ, անշարժ կաւքերից, զրամագլխներից և այլն)	»	2.215.962 »
Մնացորդներ (остатки и зачеты)	»	2.687.280 »
Հասույթների գումարը. . . .		43.179.733 ու.

Եթէ աւելացնենք այս գումարի վրա 14 նահանգների (область войска д ескаго, Լիֆլանդիան և Էստլանդիան) հասույթները, որոնք միայն առած կազմում են. . . . = 6.988.662 ու.
Նաև Անդրկովկասի և Սիբիրի հասույթները. . . . = 3.670.514 »
Կը ստանանք մի գումար, որ հաւատար կը լինի. . . . 53.838.909 »

Այս աղիւսակի կից զնենք 1885 թվի ծախքի աղիւսակը, որից կը տեսնուի թէ ինչ բանի համար ինչքան է ծախսւում:

Տեղական քաղաքային վարչութեան	վրա	1.496.986 ու.
Գիւղացիական հաստատութիւնների	»	1.380.591 »
Դատատանական	»	4.654.135 »
Զեմստւօի վարչութեան	»	4.125.168 »
Подводная повинность ¹⁾	»	4.618.051 »
Дорожная » ²⁾	»	2.771.860 »

¹⁾ Տէրուական և այլ գործերի համար ձիերով, սաւերով և այլն ծառայելու պարտաւորութիւնը:

²⁾ Ճանապարհներ շինելու պարտաւորութիւնը:

Постоянная	»	1)	»	162.510	»
Ժողովրդական առողջապահութեան և խնամատարութեան }	»		»	11.478.992	»
Ժողովրդական լուսաւորութեան	»		»	6.831.929	»
Զանազան	»		»	4.448.079	»
Զը նախատեսնւած	»		»	988.951	»
զուամար				43.248.089	ռ.

Այսպիսով ղեմստւոները տարեկան ծախսում են մօտ 18 մլլ. ռ. Ժողովրդական առողջապահութեան և ժողովրդական լուսաւորութեան վրա: Վերին աստիճանի հետաքրքրական է նաև թէ ինչ գումարներից է կազմւած 34 նահանգներում ղեմստւոների դրամագլուխը: Սոցա զուամարը առ 1887 թ. հասնում էր 73.186.045 ռ., կազմւած հետեւեալ մասերից:

Նահանգական շտեմարանական դրամագլուխը	14.015.050	ռ.
Դաւառական	»	1.610.464
Դիւղական համալսարանների և մեչւան. դասակարգի 2)	9.558.075	»
Բարեգործ. հաստատութիւնների դրամագլուխը	9.340.439	»
Ժողովրդական լուսաւորութեան	»	2.053.498
Ապահովագրութեան	»	20.100.221
Պահեստի՝ չը նախատեսնւած պիտուքների դրամ.	6.678.136	»

Այստեղ մենք կանգ ենք առնում: Եթէ ընթերցողը ինքը համեմատութիւններ անելու լինի՝ ինքը կը նկատի աչն մեծ տարբերութիւրը, որ կալ եւրոպական համալսարանների և քաղաքների ելեմուտքի մէջ՝ համեմատութեամբ Ռուսաստանին վերաբերեալ թւերին: Եւրոպայում օրէնքը զուգընթաց է եղել կեանքի հետ և հեշտութիւններ է տւել էժանազին վարկի օգնութեամբ բարելաւել քաղաքների և համալսարանների դրութիւնը: Պարոն Հերցենշտայնը, որի գեղեցիկ լօղւածը 3) նիւթ է տւել մեր աչս տողերին, առաջարկել է Մոսկւայի Հոգալին բանկի ներկալ փետր. 2-ի ակցիոնիւրների ընդհանուր ժողովին՝ ա ա լ ե ռ կ ա ռ և կ ա ռ ճ ժ ա մ ա ն ա կ ա մ ի ջ ո ջ ն ե ռ ո վ փ ո խ ա տ ա ռ թ իւ ն ն ե ռ ղ ե մ ս տ ա ռ ն ե ռ ի ն, ք ա ղ ա ք ն ե ռ ի ն, հ ա մ ա լ ն ք ն ե ռ ի ն և հ ա ս ա ռ ա կ ա ն հ ա ս տ ա տ ա ռ թ իւ ն ն ե ռ ի ն—մի չափով սակաւ, որը չը գերազանցէր սոցա ելումուտքի (бюджетъ) 50/0: Պարոնի առաջարկութիւնը ընդունել է նաև Խարկովի Հոգալին բանկը:

1) Զինւորներին ընդունելու պարտաւորութիւնը:

2) Сословно мѣщанскій.

3) „Русская Мысль“ 1892 թ. փետրիս, փետրիս՝ „Кредитъ для земствъ и городовъ“.

*
* *

Ընթերցողները անշուշտ գիտեն նշանաւոր ռուս գրող Գլէք Ուսպենսկու հոգեկան տկարութեան մասին: «Մուրճ»-ը ծանօթացրել է արդէն իւր ընթերցողներին ալս հեղինակի Հոգի իշխանութեան մասին ունեցած կարծիքների հետ: Այդ տաղանդաւոր գրողին աւելի ևս լուսարանելու համար—առաջ ենք բերում նրա գրած քննարկը—որոնք պարզում են հեղինակի հալեացքները ռուս մութիկի վրա և ռուս ինտելլիգենցիայի պարտականութիւնների վրա:

—«Ի՞նչ բանի համար է աճում ահա ալս կաղնին, Նրան քնն օգուտ հարկւր տարի ծծել հողի հիւթերը: Ի՞նչ շահ ունի նա ամեն տարի ծածկւել տերեւերով, լետու նրանց կորցնել, ու վերջի վերջու խողակաղնով կերակրել խողերին: Բոլոր օգուտը և շահը ալս կաղնու կեանքի խակապէս նրանումն է կախնում, որ նա պարզ ի պարզու աճում է, պարզօրէն կանաչում է, հէնց աճուէս, ինքը չը գիտէ ինչու: Նոյնն է և հողագործ—գիւղացու կեանքը. դարեւոր աշխատանք—ահա կեանքը և կեանքի շահը, իսկ արդիւնք՝ դրօ»:

Գիւղացու կեանքը ալսպէս որոշելուց լետու Ուսպենսկին անում է հետեւեալ համեմատութիւնը. «Ինտելլիգենտ պաշտօնեալի կեանքը սակալն ալսքան էլ հէտ չէ. դուք աշխատում էք մինխաւութեան գրասենեակներում կեանքի մի ջոցն եր ձեռք բերելու համար, դուք կատարում էք ձեզ համար մի ապարդիւն գործ... Դուք ալս անում էք կեանքի միջոցների համար, իսկ ձեր մասնաւոր անձի համար ալս ամենը բոլորովին անհարկաւոր բաներ են: Ձեզ համար կեանքը ալս բան է. Սառա Բեռնար¹⁾, Չեմբրիս²⁾, չարգանքներ, պոլիտիկա, աշխիքն մի բոլորովին ուրիշ բան, քան ձեր աշխատանքը: Ձեր երեխայոց, օրինակի համար, պիտի կրթէք (չը փչացնելու համար) ձեր ծառայութեան և հասարակական շահերի ծանօթութիւնից հեռու: Դուք աշխատում էք՝ չուսալով մի ինչ որ է արդիւնքի: Մի խօսքով՝ ձեր կեանքը բաժանւել է խաւերի, որոնց մէջ չկալ կապակցութիւն: Գեպարտամենտում դուք ալս էք, քան տանը կամ թատրօնում: Իսկ գիւղացի հողագործը ամեն տեղ մին է, նա աշխատում է և ապրում է ալս իսկ աշխատանքի ինտերեսներով և ալս իսկ ինտերեսների շրջանում ինքն իրան, առանց վարժապետի կրթում է և նրա երեխան: Ձեր կեանքի արդիւնքը, ենթադրենք բանկալին մի հաստ տետրակ է. իսկ հողագործի բանկալին տետրակը իւր իսկ հետն է—իւր ուրախութիւնների մէջ՝ եթէ որ պարզ է երկինքը (ведро), եթէ որ գարնները լաւ

¹⁾ Ֆրանսիական գրառատիկական նշանաւոր դերասանուհի:

²⁾ Նշանաւոր երգչուհի:

են լուսնում: Ձեզ զբասնեակ է հարկաւոր ձեզ համար, հիւրանոց—հասարակութեան համար, դասատուն—երեխաւոց համար: Եւ ամեն տեղ ալ կերպ է մտածւում և խօսւում և գործւում,—մութիկ հողագործին հարկաւոր է մի խրճիթ, որովհետեւ ամենքը ապրում են մի բանով—հողով, ամենքի աշխատանքը մի է—հողագործականը, ամենքը խօսում և գործում են մի բան—այն ինչ որ կը հրամայի անել մալր հողը»:

Այս խորհրդածութիւնները Ուսպենսկին լուսաբանում է հետեւեալ տողերում. «Եւ խօսում էի անցեալները մի ծեր ծերուկի հետ, որը մեծացրել ու գործի է դրել իւր սրղկերանց, թաղել իւր կնոջը ու հողը լանձնել (գիւղական) հասարակութեանը որովհետեւ գործելու ալ ես ուժ չունէր՝ գնացել էր շրջելու սրբատեղերը: Եւ ինչ էր լինում, մտաբերում աղջ՝ մի ոտով դերեզմանում գտնող ծերուկը 1812 թ. պատերազմի, կամ մի ալ նշանաւոր անցքի փոխաբէն. —հողը և իւր ինքնսուն մէրա (չափ) ցանած ցորենը...»

Ամառուազ վերջն էր և Ուսպենսկին ու նրա խօսակիցը գիւղի փողոցումն էին նստած՝ երբ որ լսեց գեղջկուհիների ուրախ երգեցողութիւնը «Տեսնո՞ւմ ես բիւրը ինչպէս են ճղում—հացը լաւ է եկել Աստուծո՞ւ ողորմութիւնով»:

Իսկ երբ աւելի գիւ ձախեր լսեցին—ծերուկը աւելացրեց. «Երեւի կարտոֆիլն էլ Աստուծ լաւ է տւել»¹⁾:

Խօսելով ինտելլիգենցիայի մասին և չը գտնելով գիւղում աջակիւսի մի գործիչ, որը «իւր շուրերը կեղտոտէր ուրիշի զժբաղդութեան համար» Ուսպենսկին ասում է. «Մութիկը, որը սպանումէր իւր կնոջը, որովհետեւ «սա» խանդարում է նրա արտնին տնտեսութեանը, որ սա թուլ էր, աշխատաւոր չէր, ծուլ էր և թերեւ չար էր—իրաւունք ունէր անտառալին մի տրամաբանութեան համաձայն և հետեւապէս իրան մեղաւոր էլ չէր դրում (սպանութեան գործում): Բայց թէ ինչով է մեղաւոր սպանւածը որ ինքը թուլ է, հիւանդ է, բարոյապէս զժբաղդ է և այլն Ահա այս մէկ ոչ կենդանաբանական, ոչ անտառալին, ալ աստուծալին ճշմարտութիւնն էր մոցնում ժողովրդի միջնավայրը ժողովրդական ինտելլիգենցիան: Նա ոտքի էր կանգնեցնում թուլին... իսկ միշտ օգնում էր և գործով ալս կենդանաբանական ճշմարտութեան չափից դուրս բռն հոսանքի առաջ, նա թուլ չէր տալիս նրա ընդարձակ տարածման և արդիւնքներ էր գնուց նրա առաջ»... Եւ Ուսպենսկին ալ ինտելլիգենցիայի արպարը տեսնում է ժողովրդական Божий угодникъ-ի մէջ—տիպար, որը «իրաւ է հրաժարւում է աշխարհալին հոգսերից, բայց ապրում է աշխարհքի համար, և ոչ թէ թաղ-

1) Երես 609—610, հատոր II:

ւում անտառների խորքերում ու մի սին բարձրանում ու վրան երեսուն տարիներ նստած մնում»¹⁾։

Մի ուրիշ տեղ²⁾ խոսելով ժամանակակից ինտելիգենցիայի մասին, Ուսպենսկին ասում է «Չգիտեմ արդեօք ինտելիգենտ մարդը (ալսինքն ինտելիգենտ նպատակների մարդը և ոչ թէ ինտելիգենտ պաշտօններում վարձով ծառայող մէկը) շուտ ձեռք կը բերի գիւղի համար ոչ լոկ հացի մասին հող տանելու իրաւունքը։ Այս նրա պարտականութիւնն է և ուստի ինտելիգենտ մարդը չունի ուրիշ պարտաւորութիւն։ Անկասկած է որ առաջ նա ալը իրաւունքը պիտի ձեռք բերի և իւր անձի համար»...

«Մի ուսուցիչ, որի կարծիքին ևս համամիտ եմ, բնորոշում է ինտելիգենտ և կուլտուրական մարդկերանց միջև եղած տարբերութիւնը իբրև տարբերութիւն իսկական և կեղծ անդամանդերի մէջ։ Նրան շինծու անդամանդը կարող է հաղարներ արժենալ և առ երես ոչինչով պակաս չը լինել իսկականից—բալց թէ միայն առ երես։ Արեւի է տէր լինել ինտելիգենտ մարդու բոլոր գեղեցիկ չափութիւններին և միևնույն ժամանակ զուրկ լինել ալը անկեղծ չափութիւնների պահանջից, ալսինքն կարելի է ունենալ կուլտուրական վարքերի սիրտ, որը իրան որսալ է տալիս (ենթարկւում է) ամեն մի անճշմարտութեան և միևնույն ժամանակ կուլտուրական սովորութիւնների, կուլտուրական վարժութիւնների ազդեցութեան տակ—երևալ լաջն ու անկեղծ սրտի տէր մարդ։ Ինտելիգենտ մարդը, ընդհանրապէս սրտի անկեղծութեան ստրուկն է, մի մարդ որի մէջ ձգտումի ստեղծ անգամ չի լինիլ մեղմացնել, հանգամանքներին լարմարացնել, կամ աւսպէս ասած խելքի բերել իւր անկեղծութիւնը և ալը պատճառով ալ ու ալն գաղափարով չափշտակած, նա չի կարող ետ կանգնել առանց վախճանի հասցնելու ալը գաղափարի հետևողական (последовательный) մշակութիւնը, թէկուզ ալը վախճանը լինի մահ կամ մի անաղին անձնական զոքաղբութիւն և ալն»³⁾։

Աւ նշանաւոր ուսուցիչի ներկալ անմխիթար դրութիւնը թերևս արդիւնք լինի իւր անկեղծ ինտելիգենտ զգացումների և մտածմունքների, որոնց նա կամեցել է մնալ հաւատարիմ և հետևողական նաև կեանքի մէջ։

* *

Ռուս լիզւով նոր լոյս տեսած գրքերից արձանագրենք՝

1) Բարդականութեան առաջադիմութիւնը, թարգմանութիւն Լեւուշնովից (L'évolution de la morale), Գինը 2 ուրբլի։ Ապագալ էթիկալի

¹⁾ Էջ 613, հատոր II.

²⁾ Էջ 727, » II.

³⁾ Հատոր II. էջ 1058, ծանօթութեան մէջ։

նպատակը, ասում է հեղինակը, պիտի լինի բացառապէս կանոնների բանաձևելը (формулировка) և աշխարհի հակումների ստեղծելը, որոնք համապատասխան լինին հասարակական և անհատական երջանկութեան քանակութեան գումարին, այսինքն ձգտում մարդուս դարձնել ֆիզիկապէս աւելի ուժեղ, բարոյապէս աւելի կատարեալ և մտաւորապէս աւելի զարգացած: Կգալ ժամանակ էր անհատական ու ընտանեկան ետաքրութիւնը տեղ կտալ հոգատարութեան՝ հասարակութեան մասին, երբ միեւնոյն ժամանակ ամեն ոք կապրի լի անփութի կեանքով, ազատ զարգանալով բնութեամբ որոշւած սահմաններում:

2) Պարսկական նամակներ (Lettres persanes) թարգ. Մոնտեսկիոյ՝ ից: Գինը 2 ռ. 50 կ.: Մօտ 200 տարի սրանից առաջ թեթև ոճով գրւած թուռակի այս ծաղրը չի կորցրել նաև այժմ իւր հետաքրքրութիւնը:

Նշանաւոր մտածողի մտքերից առաջ բերենք մի քանիսը:

— Իրաւ է արդեօք որ կանաչք սոսորադրւած են տղամարդկանց բնութեան օրէնքների համեմատ:

— Ոչ, բնութիւնը երբէք չի սահմանել աշխարհի օրէնք. մեր բռնակալութիւնը կանանց վրա— լոկ բռնութիւն է:

— Ո՞ր կառավարութիւնն է ամենախելացի:

— Նթէ մի պետութեան մէջ մեղմ կառավարութեան շնորհիւ բնակիչները նոյնքան հանգիստ են, որքան որ մի ուրիշ երկրում, ուր կառավարութիւնը խստապահանջ է, առաջինը նախադասելի է:

— Այն երկիրներում, ուր պատիժները միջնակարգ են— սրանցից աւելի չեն վախենում քան ուր որ նոքա աւելի ահալի և աւելի սարսափելի են:

3) Նրնկի մարդկանց կենսագրութիւնները: Հրատարակւելիս Ժ. Պաւլենկովի: Նոր լուս են ընծաւած՝ Սպեռանսկու, Կատկովի, Ջիորդանո Բրունոյի, Միլլի, Գլադստոնի, Բոմարշէի, Բերանժէի և Մէլերբերի կենսագրութիւնները:

4) Պատմութիւն ժամանակակից գրականութեան Սպանիայում Հիւբ. բարի, գինն է 2 ռուբլի:

5) Ժողովածու. Ռուսաստանի օտար պետութիւնների հետ կապած զաշնադրութեանց և պալմանագրութեանց — պրոֆ. Մարտենսի, հատոր IX 1710—1801 թիւը:

6) Մառաբոժութեան մասին. կազմեց Պետրոսեան ակադեմիալի պրոֆ. Տուրսկին, գինը 5 կոպէկ:

7) Հեղինակի իրաւունքը— Գ. Շերշենելի: Գրքի հեղինակը մէջ է բերել թէ բազմաթիւ ուսու պրոֆեսորի կարծիքները և թէ մօտ 50 օտար գրողներինը այս խնդրի առիթով՝ թէ առհասարակ հեղինակի իրաւունքը պիտի լինի՝ մշտեղջենաւոր, ժամանակաւոր, թէ կապւած հեղինակի կեանքի հետ:

Պ. Շերշենելի իրարմիքով հեղինակի իրաւունքը ունի գոյքի իրաւունքի բնատրութիւն, իսկ ժամանակամիջոցի համար հեղինակի մահւանից չետոյ 50 տարին չատ ու չատ բաւական է համարում:

8) Մի տարի Ամերիկայում. Կին— բժշկի չիչողութիւններից. Ա. Ն. Պանսկալա:

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՄԻԽԹԱՐ ՏԵՐ-ԱՆԴՐԵԱՍԵԱՆԻ

Գիտնական քրոնիկի բացակայութիւնը մեր թերթերում, Գիտնական Ընկերութիւնները Ֆրանսիայում: Խոլերան և դռքտոր Պետերի հետազոտութիւնները:—Պրոֆ. Պետտենկոֆէրի լողածը և ճորա, Էմմերիխի ու Բուշարի փորձերը խոլերայի վերաբերեալ:—Նոր հացեր՝ ալկոլոնատ և փայտի հաց:—Լլեքորական երկաթուղիների խնդիրը:

Ո՞վ չէ լսել որ XIX դարը կիրառական գիտութիւնների ¹⁾ դար է, — շոգու, էլէկտրականութեան, մեքենաների, ահագին շինութիւնների դար է:

Ձի անցնում մի ամիս, կարելի է ասել մի օր, որ կիրառական գիտութեան այս կամ այն ճիւղում մի՞ շատ կամ քիչ նշանաւոր՝ չաղթութիւն չըլինի տանելիս մարդկութիւնը: Այս դարում այդ առանձնացատկութեան համեմատ, եւրոպական ազգերը ունեն չատկապէս այդ գործին ծառադոջ մասնագիտական պարբերական հրատարակութիւններ և, բացի այդ, շատ ուրիշ, ոչ մասնագիտական, օրգաններ՝ ունեն առանձին բաժիններ այդ գիտութիւններին չատկացրած, ուր հաղորդում են իրանց ընթերցողներին կիրառական գիտութիւնների աշխարհում երեսձ նորութիւնները: Առաջիններից, այն է զուտ մասնագիտական հրատարակութիւններ մենք, հայերս, չենք էլ կարող երազել ունենալ, ի հարկէ, որովհետև ոչ այդ տեսակ օրգաններ կառավարող և նրանց աշխատակցող ձեռնհաս մարդիկ ունենք և ոչ էլ մեր հասարակութիւնը կարիք ունի այդ տեսակի պարբերական մամուլի: Իսկ գոյութիւն ունեցող լրագիրները և մամուլները, մեր կարծիքով, կաբող են և պարտական են բանալ առանձին գիտական (научный) բաժիններ և պարբերաբար հաղորդել ընթերցող հասարակութեան կիրառական գիտութիւնների մէջ մարդկութեան տարած նոր ու նոր չաղթանակները:

¹⁾ Прикладная наука, science appliquée.

Մեր պարբերական մամուլի միջից վերալիշեալ բաժնի բացակայութիւնը մասամբ բացատրուում է նրանով, որ գիտութեան ծառայող հայեր չափ և չափ քիչ են, մասնաւորապէս նորա ալն ճիւղերում, որ մարդկութեան ուղղակի բարօրութեանն են վերաբերում,—ալիւնքն կիրառական գիտութիւններին: Խրոդութիւն է, որ մեծ գիւտերից և ոչ մէկը չէ արած հալի ձեռքով (չոգեմեքենայ, հեռագիր, հեռախօս և ալլն): Եւ բոլորովին զարմանալի չէ ալլ, ալլ ընդհակառակը չափ բնական, որովհետեւ հալը, որ նոր նոր է սկսել մասնակից լինել եւրոպական գիտութեան, բոլորովին չէ էլ խրախուսւած ալլ ասպարիզի վրայ: Ասածս պարզաբանելու համար աւելորդ չեմ համարում առաջ բերել այստեղ թէ ինչպէս են խրախուսուած գիտութիւնները եւրոպայում: Իբրեւ օրինակ առնում ենք Ֆրանսիան, որովհետեւ ալլ բոլորի մեր ձեռքի տակն է «L'année scientifique 1891», որից և քաղում ենք հարկաւոր ֆակտերը:

Ֆրանսիայում կան մօտ 600 գիտական ընկերութիւններ: Այս ընդունենք որ ամեն մի ընկերութիւն տարին 5 նիստ կ'ունենալ և ամեն մի նիստում 3 զեկուցում կը կարդացել,—ալլ կ'անի 9000 զեկուցում և եթէ ալլ թւից 8000-ը մինչև անգամ մի նոր բան պարունակելիս էլ չը լինեն, ալլուամենայնիւ Ֆրանսիան տարին 1000 քալ կ'անի դէպի առաջ գիտութեան մէջ և ալլ դեռ ամենաչափաւոր հալով:—Ֆրանսիան ունի 3 գիտական հաստատութիւն, որոնք թէ նիւթեր են նշանակում գիտական հետազոտութիւններ և շարադրութիւնների համար, թէ մրցանակներ հաստատում և թէ եղածները լատկացնում, քննելով ներկայրած մրցող շարադրութիւնները: Դրանք են 1) Գիտութեանց ձեմարան (Académie des sciences) 2) Ազգային բժշկական ձեմարան (Ac. nationale de Médecine) և 3) Ազգային արեւստները քալալերող ընկերութիւն (Société pour encourager l'Industrie nation.) Սրանցից առաջինը 1890 թւին բալմաթիւ աշխատութիւններ քննելուց լետով վարձատրել է մօտ 30 անձ մօտ 60.000 ֆրանկով: Ալլ պատկառելի դումարը բաժանել է զանազան գիտութիւնների վերաբերեալ աշխատութիւններին ալլպէս՝ 10.000 ֆր.—քիմիալի, 9.200 մեքենաբանութեան, 6.900 բժշկականութեան և ալլն:

Երկրորդ հաստատութիւնը նույն 1890 թւին 19 անձանց տւել է 30.000 ֆրանկից աւել վարձատրութիւն, բժշկականութեան զանազան ճիւղերին վերաբերեալ աշխատութեանց համար:

Երրորդ ընկերութիւնը տւել է 18.000 ֆրանկ: Ուրեմն Ֆրանսիացի գիտնականները 1890 թւին ընթացքում 3 վերալիշեալ ընկերութիւններից հարիւր հալար (100000) ֆրանկից աւել օժանդակութիւն են տալել:

Ֆրանսիայում կալ և մի ալլ հաստատութիւն—«Գիտութիւնները առաջացնելու Ֆրանսիական ընկերութիւն», որ տարէց տարի հարստանում է զանազան կտակներով և աւելի ու աւելի մեծ գումարներ է վճարում ալլ կամ ալլն տեսակ գիտնական աշխատութիւնների, գիւտերի համար և ալլն:

Բացի զբամական օժանդակութիւններէրից ֆրանսիացւո՛ւմ տրուո՛ւմ են և բազմաթիւ ոսկեալ, արծաթեալ և բրոնզեալ մեդալներ: Առ ալժմ հալը ալդ ասպարիդի վրալ չէ խրախուսած և մեզ մնում է հետեւել օտարների արած. ներին, որ և կ'աշխատի անել ալսուհետե «Մործ»-ը, տալով իւր ընթերցողներին զիտական քրոնիկներ, եթէ ոչ ամեն ամիս, գոնէ մի քանի անգամ տարաւ ընթացքում:

*
* *

Քանի որ ընթերցողը խոլէրալի փշատակը մուացութեան տալու բազմալի ղեռ չէ արժանացել, օգտուո՛ւմ ենք զէպքից հաղորդելու նրան ալդ հիւանդութեան վերաբերեալ մի նորութիւն, որ ոչ միայն հասարակ մահկանացուների համար էր անսպասելի, ալ նոյն իսկ չալտնի բժշկապիւնները իրանց խիստ տարօրինակ զրութեան մէջ են զգում, — ալնքան ալդ նորութիւնը չէ համաձայնուո՛ւմ մօտիկ անցեալում նրանց քարոզած մօքերի հետ. սակալն ալնքան ծանրակշիռ ֆակտերի և ապացուցների վրալ է հիմնւած, որ նրա հերքելը — ընդունելուցն էլ աւելի դժւար է: Յալտնի ֆրանսիացի պրոֆ. Պէտէրը ապացուցում է՝ 1) որ ոչինչ զանազանութիւն չը կալ ալսպէս անւանւած «ասիական» (asiatica) և տեղական (nostras) խոլէրի մէջ և 2) որ խոլերը կարող է առաջանալ Եւրոպալում և առանց ասիական միկրոբների միջամտութեան, ալսպէս ասած ինքնաբերալար: Ինչպէս տեսնում էք, ընթերցող, ալս 2 կէտն էլ ուղղակի հակառակ են բժիշկների ամբողջ ամառս քարոզած «ճմարտութիւններին»: Ամեն ամառ, ասում է Պէտէրը, Եւրոպալի մեծ քաքաքներում չալտնում են «խոլէրանման» հիւանդութեան զէպքեր, որոնք սոէպ լինում են ծանր և մահացութեան մեծ տոկոս են տալիս, բալց մենք առանձին նշանակութիւն չենք տալիս ալդ բանին: Սկիզբը հիւանդութիւնը թիթե է լինում, երբ մի քիչ աւելի է ծանրանում, մենք նրան մկրտում ենք «խոլէրինա» կամ «մանկական խոլէր» անունով և ալսպէս հանգստացնում մեր խիղճը: Վերջապէս բանը աւելի է վատանում. հիւանդը մեռնում է բոլորովին խոլէրանման նշաններով: Ալդ էլ ոչինչ, ասում ենք մենք, դա ի սկական խոլէր հօ չէ, — «nostras» է: Մեռնողի համար, ասում է Պէտէրը, հալիւ թէ միսթարական լինի իմանալ «ալն կեանքում», թէ ինքը ոչ թէ ասիական խոլէրից է մեռել, ալ տեղական խոլէրից (nostras): Բացի ալդ ինչով է զանազանւում ալդ «nostras»-ը իսկական խոլէրից: Պրոֆ. Պէտէրը անվիճելի կերպով ապացուցում է որ՝ թէ հիւանդութեան նշաններն են բոլորովին միեւնոյնը և թէ հիւանդի մեռնելուց չետոլ անդամահատութիւնով կարելի է ապացուցել, որ զանազան անդամներում առաջացած փոփոխութիւնները թէ «ասիականի» և տեղականի» զէպքում նոյնն են:

Բացի ալդ «cholera nostras» անւանւած հիւանդութիւնների զէպ-

քում, Պէտէրը ապացուցում է և ստորակէտանման բացիւնների ներկայութիւնը, և ուրիշ մասնագէտներ էլ չեն ուրանում, որ Պէտերի ցոլց տւած ալը ստորակէտները ասիական խողէրի, Կոխի, ստորակէտներն են: Ուրեմն «ասիական» խողէրի միակ զանազանութիւնը «տեղականից» ալն է, որ առաջինը աւելի փոփոխական է, քան վերջինս: Պէտէրի կարծիքով ալը զանազանութիւնը ոչինչ գիտնական հիմք չ'ունի. խողէրը, ասում է նա, «մի» է և եթէ Ասիայում ալը հիւանդութիւնը էպիդէմիական բնակչութիւն ունի, իսկ Եւրոպայում չաճախ անհատական է,—դրա պատճառը ալն է, որ Եւրոպայի առողջապահական դրութիւնը անհամեմատ բարձր է որ և է Հնդկաստանի, Մէշէղի կամ Թէհրանի առողջապահական դրութիւնից, ուր խողէրի թողնը գտնում է ամենաբարեկամ յալմաններ իւր զարգացման համար, իսկ Եւրոպայում, որքան որ չը լինի, էլի չատ անգամ հալածանքի և քաղցի է ենթարկւում: Բայց հէնց որ եւրոպական «nostras» (տեղական) անւանւած խողէրը իւր զարգացման համար բարեկամող պայմաններ է գտնում, իսկոյն ոկոսում է բոլորովին ասիական վարել: Օրինակ Նանտէրի աղաստանաբանում (Պարիզի մօտերքում) ալը ամառս երեւցած էպիդէմիան, որ 2 շաբաթում 51 հիւանդացողներից 49 զո՛ւ տարաւ: Զը նապելով որ նոյն իսկ ամենաստիական խողէրը աւելի կատաղի լինել չէր կարող, բժշկական գիտութեան ներկայացուցիչները բաւականին երկար ժամանակ համառութեամբ պնդում էին որ ալը խողէրը ասիական չէ, ալ տեղական այսինքն եւրոպական, և լետոյ միայն, սիրտները պնդացնելով վճռեցին ալը հիւանդութիւնը պարզապէս խողէր անւանել, առանց «nostras» սրջի, ալն էլ մեծ տհաճութիւնով, որովհետև ալս զէպքում հիւանդութիւնը բերովի չէր, ալ ծագել էր տեղն ու տեղը: Նանտէրի ղէպքը առաջինը չէր ապացուցանում թէ իսկական ասիական անւանւած խողէրը կարող է Եւրոպայումն էլ ծնւել առանց Ասիայից բերւելու: 1884 թւին Տուլոնում, և 1890 թւին Իսպանիայում պատահած զէպքերումն էլ խողէրը ծնւել էր տեղն ու տեղը: Ալս երեք զէպքերումն էլ ֆակտերով ապացուցւած է որ խողէրը բերովի չէ եղած, ալ ծագել է նոյն իսկ տեղում: Ալը զէպքերը հաստատ լինելուց լետոյ պարզ է որ խողէրը ծնւում է և՛ Եւրոպայում, անկախ Հնդկաստանից, դրա համար հարկաւոր են միայն նոյն պայմանները, որ առաջացնում են ալը հիւանդութիւնը Ասիայում: Եւ Պարիզի չրջակայքում պատահած զէպքը ապացուցում է ալը. խողէրին զո՛ւ էին դնում ո՛չ թէ քաղաքի բարեկարգ թաղերի բնակիչները, ալ ալն անբաղանները, որոնք, ջրանցքից զուրկ լինելով, ստիպւած են Սէնգետի ջուրը խմել, որ համարձակ կարող է մրցել Գանգեսի հետ իւր անմաքրութիւնով: Եւ միթէ Կուրի ջրից ազատւած լինելու բաղտը չէր, որ ալս տարի ալըքան զերծ պահեց թիֆլիսցիներին... Վերջապէս ինչով է լաւ Նանտէրը Մէքկայից, հարցնում է Պէտէրը: Դա մի ապաստարան է (asile) որ կառուցւած է 2000 հոգու համար, բայց

ալժմ 4100 հոգի են տեղաւորել ալնտեղ: Նւ ալդ խեղճերի մեծամասնութիւնը ծեր, լինալիդ, թուլ մարդիկ են, որ բացի ալդ զեռ կերակրւում էլ են ալնպէս, որ Աստուած աղատի և ալդ կերակրի վրալ էլ խմում են Սէնի ջուրը...

Ի հարկէ միմի ալն ալդ պալմանները զեռ բաւական չեն խուէր առաջացնելու համար, ալնպէս ալդ տեսակ անկիւններից խուէրը երբէք չէր էլ հեռանալ: Պարզ է որ բացի ալդ հանգամանքներից մի ուրիշ բան էլ է հարկաւոր խուէր առաջացնելու համար, և ալդ բանը պրոֆ. Կոխի գտած «ստորակէտանման» բացիլն է, որ, պ. Պէտէրի ասելով, կարող է առաջանալ Նւրոպալում, առանց Ասիայից բերելու: Մարդու աղիքներում կան մի տեսակ բոլորովին անվնաս բացիլներ (bacillus coli communis), որոնք խուէրալին թուլից (տոկսին) թունաւորւում են, կերպարանափոխւում և ստորակէտի ձև ստանում: Ուրեմն եթէ կան բարեկաջող պալմաններ, որ մարդու օրդանիդմի մէջ առաջացնում են խուէրի թուլ (տոկսին), մարդ հիւանդանում է խուէրով և չետոլ են արգէն առաջ պալիս խեղճ «ստորակէտները», որոնք ոչ միալն բոլորովին անմեղ են ալդ ղէպքում, ալլ նոն իսկ իրանք առաջացել են թունաւորւելով: Պէտէրը չի հերքում, որ ալդ ստորակէտները, մտնելով առողջ մարդու օրդանիդմը, կարող են թունաւորել նրան (որովհետեւ իրանք թիւնաւորւած են), բաց չէ տալիս նրանց ալն մեծ և բացառիկ նշանակութիւնը, որ վերագրում էին նրանց մինչև ալժմ: Բանից դուրս է գալիս, որ մենք ինքներս ենք թունաւորում բոլորովին անվնաս մի բացիլ և ալդպիտով նրան մեղ համար երկիւղալի դարձնում:

Այս մասին խօսած իւր ճառերից մէկը Պէտէրը վերջացնում է հետեւալ նշանաւոր խօսքերով. «Խուէրի պատճառների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս որ ալդ հիւանդութիւնը առաջացնելում ամենանշանաւոր դերը պատկանում է աղքատութեան և հակառակ ջապահական պալմաններին, իսկ սրանից հետևում է հետևեալ բժշկական-սոցիալական եզրակացութիւնը. պալմասացրէք աղքատութիւնը և աւելացրէք առողջապահական պալմանները, որ կարելի է թարգմանել ալնպէս. բաց թողէք, պարոններ, միկրոբների օձիքը և ուշադրութիւններդ մարդկանց վրալ կենդրոնացրէք, տէք հաց և առհասարակ մարդավալել ապրուստ մարդկանց և ալն ժամանակ ալլ ևս հարկաւոր չեն ոչ կարբոնեան թիւ, ոչ սուլէմա և ոչ որանց հարադատները...

*
* *

Անցեալ հոկտեմբեր ամսին Միւնխէնի հռչակաւոր պրոֆեսոր գաղտնի խորհրդատու ֆոն Պետտենկոֆէր մի նշանաւոր փորձ արեց իւր անձի վերալ, որ մեծ ուշադրութիւն դարձրեց իւր վերալ ամենուրեք: Ալդ մասին իւր լօււածը նա տալից «Միւնխէնի բժշկական շաբաթաթերթի»

№ 46-ում (Münchener Medicinische Wochenschrift, Heft 46), որի մի թողաորում արտատպւած քից օգտուում ենք կարեորագոյն կէտերը քաղւածօրէն աւստեղ առաջ բերելու համար:

Պրոֆ. Փոն Պետտենկոֆէրը չափնում է, որ նա դեռ շատ տարիներ առաջ ասել է, թէ խոլերայի էտիօլոգիան (ուսումը հիւանդութիւնների պատճառների մասին) իրան թւացել է, խօսելով ալլերգիական լեզում՝ իբր հաւատարութիւն երեք անգամ մեծութիւնների հետ՝ X, Y և Z: Այլ խօսքերով՝ խոլերան չառաջանում է երեք անգամ պատճառներից, որոնցից առաջինը կը լինի X, երկրորդը Y, երրորդը Z: Ինչպանից առաջինը պէտք է լինի մի չափով սաղմ, երկրորդը կախւած կը լինի տեղից և ժամանակից, (տեղական-ժամանակական տրամադրութիւն) երրորդը կախւած կը լինի մարդու օրգանիսմի անձնական տրամադրութիւնից:

Խոլերայով հիւանդանալու համար, ըստ Պետտենկոֆէրի կարծիքի, պէտք է ալլ երեք պատճառները միաժամանակ դուրսիւն ունենան:

Արդ, ինչ վերաբերում է առաջին պատճառի՝ չափով սաղմին, սա արդէն կարելի է դառնալ համարել. դա ստորակէտ բացիլն է, որ դտաւ Երիւր և որ ալլ պատճառով կոչուում է նաև խոլերայի բացիլ:

Բայց միմիայն խոլերային բացիլը (X) բաւական չէ որ խոլերա առաջացնի: Խնչպէս բոլոր ուրիշ վարակիչ հիւանդութիւնների համար (սիֆիլիս, ծաղիկ և ալլ), նոյնպէս և ալլ մի քանի հիւանդութիւնների համար (աբդոմինալ տիֆ, մալարիա) մեծ դեր է կատարում նաև անձնական տրամադրութիւնը (Z): Ալլ ընդհանրապէս ընդունւած կարծիքն է, և ալլ պատճառով կարծիքը մինչ այժմ ալլ էր, որ ով չը լացած ձեռքերով ստորակէտ բացիլներ չթոնքներին հասցնի կամ ջրի և ալլ կերակրեղէնի միջոցով ստամոքս հասցնի ստորակէտ բացիլները՝ անպատճառ պէտք է խոլերայով հիւանդանալ, եթէ ընդունողը անձնական տրամադրութիւն ունի: (Անձնական տրամադրութիւն ասելով պէտք է հասկանալ ալլ, որ միևնույն բացիլը մէկ մարդու մէջ կարող է բազմանալ, միւսում՝ ոչ):

Ալլ ընդհանրացած կարծիքին դէմ է պրոֆ. Պետտենկոֆէրը, պնդելով, որ բացի ստորակէտ - բացիլից (X) և բացի անձնական տրամադրութիւնից (Z), պէտք է նաև տեղական-ժամանակական պատճառը (Y):

Ինչ է նշանակում տեղական և ժամանակական պատճառ: Ալլ պէտք է ալլպէս հասկանալ Համբուրգում կար խոլերային համաճարակունի. իսկ Միւնխէնում չկար. եթէ անձնականապէս տրամադրութիւն ունեցող մէկը ստորակէտ բացիլներ ընդունէր Համբուրգում, էպիդեմիայի ժամանակ, նա անպատճառ կը հիւանդանար խոլերայով. իսկ եթէ նոյն իսկ անձնականապէս տրամադրի մէկը նոյն բացիլները ընդունէր Միւնխէնում, ուր ալլ ժամանակ էպիդեմիա չկար՝ նա խոլերայով չէր հիւանդանալ, չը նալած

որ ալդ մարդու աղիքներում ահագին քանակութեամբ կը բազմանալին ստորակէտ բացիւնները, բայց որոնք առանց վնաս տալու, մի քանի օրից լետու կ'անկալտանալին:

Ահա ալդ իւր հալեացքը փորձով ապացուցանելու համար, պրոֆ. Պետտենկոֆէր ժստահ կերպով իւր անձի վերաջ փորձ արաւ, Միւնխէնում, նոր տոմարով հոկտեմբերի 7-ին, ընդունելով Համբուրգից բերած թարմ ստորակէտ բացիւններից 1 խորանարդ սանտիմետր, որի մէջ միլլիարդի չափ բացիւններ կալին:

Պետտենկոֆէրը իրան հետեւ պահեց որ և է ալնպիսի բաներ ընդունելուց, որոնք ըսկ Վոխի՝ սպանում են կամ վնասում ստամոքսում բացիւններին, չընդունելով ալնպիսի կերակուր, որ աւելացնում լինի ստամոքսի թթու հիւթը: Նա շարունակեց իւր սովորական կեանքը ուտել-խմելու, քնելու, պարապելու մէջ, և, անկանոնութիւններից դուրս, ոտաց դնալու նկատմամբ, և զրդրոցներ ունենալուց զատ՝ ուրիշ ոչինչ չը նկատեց, շարունակ իրան լաւ զգալով և լաւ ակորժակ պահպանելով: Ալդ անկանոնութիւնները տեղի ունէին հոկտեմբերի 14, իսկ 15-ին ոտաց գնալը արդէն առաջաւ սովորականն էր:

Պրոֆ. Պետտենկոֆէրը իւր լօղածում առաջ է բերում մանրամասն հաշիւը իւր արած դիտողութիւնների իւր անձի վերաջ ալդ ժամանակամիջոցում, որ մի առ մի առաջ բերելը ալստեղ հարկաւոր չենք համարում. իսկ ընդհանուր դրութիւնը արդէն վերը բնորոշեցինք:

Պրոֆ. Պետտենկոֆէրի ընկերներ Պֆէֆֆէր և Ալզէնլոհր նոն միջոցում շարունակ հետադատում էին բացիւնների վիճակը, և գտել էին որ նոքա աղիքներում ահագին չափսերով բազմացել էին, բայց արդէն հոկտեմբերի 16-ին առաւօտեան ժամ 8-ին ալ ևս ոչ մէկ բացիլ չգտան:

«Բակտերիոլոգները, մեծամասնաբար, շարունակում է պրոֆ. Փոն Պետտենկոֆէրը, ինչպէս չափնի է, ընդունում են, որ ստորակէտ-բացիւնները պատճառում են ասիական խոլերան ոչ թէ աղիքից տարածւելով ամբողջ մարմնի մէջ, ալ որ նոքա արտադրում են թոնաւոր մի նիւթ, որ նոքա, բացիւնները, նորից ներս են ընդունում և ապա առաջացնում է խոլերալի նշանները:

«Եւ 8 օրաւ ընթացքում որքան պէտք է թոն արտադրած լինէին ալն բազմապատիկ միլլիարդ բացիւնները իմ աղիքի մէջ, առանց որ ես թունաւորւած լինելու նշուլ անգամ զգացած լինէի, ատում է Պետտենկոֆէր, ու աւելացնում՝ «Դորանից ես եզրակացնում եմ որ ստորակէտ բացիլը ալն կարող է փորլուծութիւն պատճառել, բայց ոչ խոլերա, ոչ եւրոպական և ոչ ասիական»:

Եւ ապա՝

«Համբուրգում իմ փորձը կարելի է որ մահացու հետեանք ունե-

նար, որովհետև ալնետեղ հոկտեմբերի 7-ին 1892, բացի ասիական X-ից (բացիլ), կար նաև բաւականաչափ Համբուրգեան Y (ալսինքն տեղի և ժամանակի պայմաններ), որ իմ մէջ կարող էր գտնուել, ալնպէս որ եթէ X-ը (անձնական տրամադրութիւնը) աւելի քիչ քանակութեամբ լինէր՝ էլի ծանր խոլերա (Brechdurchfall) կը առաջացնէր:

Պրոֆ. Պետտենկոֆէրը հոկտեմբերի 15-ին ազատւած լինելով ստորակէտ-բացիլներէ, նոյն ամսի 17-ին նման փորձ արաւ նոյնպէս Միւնխէնի պրոֆ. Դ-ր Էմմերիխ, որի առողջական դրութիւնը մանրամասն բերւած է պրոֆ. Պետտենկոֆէրի լոյսածում: Նաև պրոֆ. Էմմերիխի աղիքում բացիլները բազմացան, առանց վատ հետևանքներ առաջացնելու, և հոկտեմբերի 29-ին արդէն բացիլները անպատշաճ էին:

«Հիւանդութեան ամբողջ տեղութեան միջոցին ընդհանուր դրութիւնը չը խանդարուց, ակտիւակը մեծ մասամբ շատ լաւ էր: Նա չունեցաւ ամենափոքր ցաւեր անգամ ոչ ստամոքսում, ոչ աղիքում, և ոչ էլ անքէֆութեան որ և է զգացմունք: Տրամադրութիւնը (քէֆը) մեծ մասամբ շատ լաւ էր: Թէև շատ փորլուծութիւնից նա իրան մի փոքր թուլ էր գտնում, բայց նրա դրութիւնը երբեք կասկածելի չեղաւ: Միակ աչքի ընկնող նշաններն էին, բացի փորլուծութիւններից՝ չաճախ զըրզըրոց աղիքում, ձաչնի թեթև հեղումը, և չնչափովի չորութեան զգացմունք: Մէզի քշանալը աչքի ընկնող չէր նոյն իսկ հիւանդութեան զագաթնակէտին»:

Ահա պրոֆ. Պետտենկոֆէրի եզրակացութիւնը:

«Մարդկանց վերաջ արւած ալս երկու փորձերը խօսում են լոգուալն բանի, որ ստորակէտ բացիլը, աղիքում ապրելու, չի արտադրում ասիական խոլերան առաջացնող սպեցիֆիկական թուճը, և ալս երկու փորձերը շատ համաձայն են ալն բանի հետ, ինչ նորերս պրոֆ. Բուշարը (Bouchard) ¹⁾ հաղորդել է ալն փորձերի մասին, որ նա ստորակէտ-բացիլների մաքուր կուտուրանելով և արտաթորութիւններով, մանաւանդ խոլերական հիւանդների մէջով արել է կենդանիների վերաջ: Բուշարը գտել է, որ ճագարները, որոնց մէջ նա մտցրել է խոլերական մարդկանց մէզի և երկամունքի արտաթորութիւնները, ստանում էին մարդկային խոլե, ըսկին համադատասխանող նշանները, բայց որ նոքա չէին հիւանդանում, երբ նրանց մէջ մտցնում էր ստորակէտ-բացիլների միմիայն մաքուր կուտուրաները: Նա դրանից եզրակացնում է թէ ստորակէտ-բացիլները չեն արտադրում խոլերալի թուճը: Ինչ Բուշարը գտել է՝ ճագարների վերաջ, նոյնը սպացուցում է ալս մարդկանց վերաջ:

¹⁾ Les microbes pathogènes էջ 119—130. Observations cliniques et recherches expérimentales sur le choléra.

«Բուշարի փորձերը ցույց են տալիս նաև, որ ստորակէտ բացիլներով արած փորձերը անասունների վերաջ ոչինչ չեն ապացուցանում, որովհետև նոքա պարզ ցույց են տալիս, որ խնկական խոլերային թոնքը անասունների մէջ չի գոյանում, ալլ դոյանում է միայն մարդկային օրգանիսմի մէջ, որից ներմուծելով անասունների մէջ՝ նոն խնկ սուանց բացիլներին՝ նոցա, անասուններին, կարելի է խոլերայով հիւանդացնել:

*
* *

Քիչ վերը խօսելով աղքատութեան մասին, որ «հացի խնդրի» հետ կապ ունի, չենք կարող չը հաղորդել մեր ընթերցողներին մի վերին աստիճանի օգտակար գիւտի մասին, վերաբերեալ հացի պատրաստելուն: Ալէոսֆալիայում մի ոմն դոկտոր Հունդհաուզէն հնարել է մի տեսակ նոր ալլուր—ալէքրոնատ—որ արդէն վաճառւում է Նէլլյարիայում մի հացաւաճառի մօտ (Հարդէր): Ալէքրոնատը պատրաստւում է թեփից, որ մինչև այժմ համարեա ոչինչ իղն չ'ունէր, թէպէտ չափնի էր որ թեփը իւր մէջ բաւականին սպիտակուցալին նիւթեր ունի, բայց թեփի մէջ անմարս լինելով, ոչինչ պրակտիկական նշանակութիւն չունէին իբրեւ սննդարար նիւթ և կորչում էին իղուր: Այժմ Հունդհաուզէնը գործարան է հիմնել և ալլ անմարս թեփը՝ հեշտամարս ալէքրոնատի է վերածում, որ իւր մէջ 80 % սպիտակուցալին նիւթ է պարունակում, մինչդեռ հաւի ձուն միայն 12,5 % խնկ տաւարի միսը—17 % սպիտակուց են պարունակում¹⁾: Ալէքրոնատը, կամ ալլապէս բուսական սպիտակուցը, ճիշտ է, թանգ է ցորենի ալլուրից, բայց անհամեմատ աւելի սննդարար լինելով, նա խնկապէս ձեռնտու է: Ալէքրոնատի և հատարակ ալլուրի խառնուրդից թխած հացը 3 անգամ աւելի սննդարար է հատարակ հացից ու շատ համեղ և ուրեմն սորա մէկ ֆունտը կարող է չաջողութեամբ փոխարինել 3 ֆունտ հատարակ հաց: Ալէքրոնատը արեւտտական հաց պատրաստելու մէջ դժուարութեան առաջին չաջողած քաղն է և ինչ կասկած որ շուտով կը հետեւն երկրորդը, 3-րդը. թէ նոր աղբիւրներ և միջոցներ կը գտնւեն և թէ եղածները կատարելագործւելով և էփանանալով—օրից օր աճող մաքրութեան հացը կ'ապահովեն:

Որպէս զի թերահաւատ ընթերցողը չը կարծի թէ վարդապոնց ցնորքներ են մեր ասածները, կարող ենք նաև հաղորդել բաւարացի դոկտոր Արուզի փաշտէ հացի մասին: Պակտոր Արուզին չաջողել է հեշտամարս և սննդարար կարկանդակներ ստանալ... փաշտից: Խնչպէս չափնի է, փաշտը գլխաւորապէս ցէլլուրիօղ անւանւած նիւթիցն է կազմած, որ իւր քիմիական բաղադրութեամբ մօտ է չաքարին (գլլիւրիդ, խաղիդի չաքար): Եւ ահա

¹⁾ Համեմատէք, ի միջի ալլոց, նաև Ն. Ումրիկեանի լօղածը «Սննդառութիւն և կերակուր», «Մուրճ» 1892 № 7—8, էջ 1133:

Կրողը հնար է գտել այդ ցեղիւկոյը քիմիապէս չաքար դարձնել, որի վրայ աւելացնում է 40% դարու ալիւր, մի քանի անհրաժեշտ աղեր և այդ խառնուրդից պատրաստում է կարկանդակներ (порошок): Այդ կարկանդակները, որ 60% փալտից տոացած նիւթ են պարունակում, մարսւում են կենդանիների ստամոքսում առանց մնացորդի: Առ այժմ Կրողի կարկանդակները միայն կենդանիների համար են բանեցնում, բայց ոչ մի հիմք չ'ունինք կարծելու, որ փալտից ստացած գլիկոլը չէ կարող ժամանակով մարդուն էլ ծառայել իբրև կերակուր:

*
* *

—Մի քանի խօսք էլ երկաթուղալին գնացքերի արագութեան մասին Ներուպալում և Ամերիկայում: Մենք, որ մի 10 տարի առաջ հազիւ 5 օրումն էինք Թիֆլիզից Բագու հասնում, այժմ շատ բաւական ենք որ նոյն տարածութիւնը 18 ժամումն ենք անցնում: Թէպէտ եւրոպական երկաթուղիները միջին արագութիւնը մերերից բաւականին աւել է, բայց ժամանակը աչնքան թանկ է եւրոպացու համար, որ նա այդ արագութիւնով չէ բաւականանում և նոր ունոր միջոցների է դիմում, որ ճանապարհում աւելորդ ռոպէներ չը կորցնի: Ներուպալում և Ամերիկայում արդէն կան երկաթուղալին գծեր, որոնց վրայ գնացքները 90 վերտ են անցնում մի ժամում, բայց, ինչպէս երևում է, եթէ այդ արագութիւնը չոգեշարժ մեքենաների գնացքների համար սահմանակէտ չէ՝ գոնէ շատ մօտ է այդ սահմանին և ահա ինչու գնացքի արագութիւնը աւելացնելու համար օրինակ 2 անգամ, հարկաւոր է շարժող մեքենայի (լոկոմոտիւի) ուժը աւելացնել 3—4 անգամ. այդ պատճառով 90 վերտից արագ սլանալու համար, աչնպիսի ահագին լոկոմոտիւ է հարկաւոր ունենալ, որ արդէն ծանրաբեռնած կը լինի իւր սեփական մեծ քաշով, հարկաւոր վառելիքով ու ջրով և, բացի իւր սեփական հրէշաւոր մարմնից, նա հազիւ է կարող մի փոքրիկ վագոն սըլացնել իւր լետից, ուրեմն, տնտեսական տեսակէտից, ձեռնառու լինել չի կարող: Այդ դէպքում բնականաբար պէտք է դիմել էլէքտրական շարժիչներին, որովհետեւ նոյն ուժի էլէքտրական շարժիչը անհամեմատ աւելի թէթեւ է չողմէքենայից: Սե ահա Պրուսիայի երկաթուղիների կառավարիչներից մէկը—պ. Բորկ—նորերս մի ժողովում արտապատել է աչն կարծիքը, թէ գեւ XIX դարում կը տեսնենք էլէքտրական երկաթուղիներ: Էլէքտրականութիւնը կը պակասեցնի երկաթուղիների ծախքը, որովհետեւ ահագին լոկոմոտիւների փոխարէն կը դորժագրւեն փոքրիկ վագոններ, էլէքտրական շարժիչների համար: Այժմեան 90 վերտը կարելի է մօտ 120-ի հասցնել և այժմեան ծանր գնացքները փոխարինել թեթեւերով, աւելացնելով սակաւ վերջինների թիւը: Պ. Բորկը առաջարկում է պրուսիական երկաթուղիների կառավարութեան զործնականապէս այս

հարցը վճռել, մտցնելով փորձի համար էլէքտրականութիւնը մի փոքրիկ երկաթուղալին ճիւղի վրայ: Այդ փորձը, որ շատ մեծ նշանակութիւն կ'ունենայ, կ'արժենայ ընդամենը, ըստ Բորկի, 60.000 մարկ, որ, նայած հարցի ահագին նշանակութեան,—չնչին է: Իսկ Չիկագօյում բացելիք ցուցահանդիսի վարչութեան արդէն առաջարկել է մի պարոն իւր հնարած էլէքտրական կառքի պրօէկտը: Այդ կառքը չափապէս հնարած է ցուցահանդիսում շրջելու համար: Բացի կառապանից, կառքում տեղաւորւում են 2 հոգի: Կառապանը ըստ պահանջման քշում է կառքը արագ կամ հանդարտ, բոլորովին կանգնեցնում է երբ ալք հարկաւոր է և, եթէ շրջողները ցանկանում են, բացատրութիւններ էլ է տալիս ցուցահանդիսի ալս կամ ալս բաժանմունքի մասին: Եթէ ցուցահանդիսի վարչութիւնը հաւանի ալդ կառքը, պատւիրելու է նորա հնարողին 3000 հատ ցուցահանդիսի համար:

Մոսկւայի էլէքտրական ցուցահանդիսումն էլ մի փոքրիկ էլէքտրական երկաթուղի էր շինւած, որ 5 կոպ. վարձով առանց որոշ նպատակի սիրողներին պարտիզի մի ծաւրից միւսն է տեղափոխում: Աւելի հետաքրքիր է նոյն ցուցահանդիսի «տեղեֆոններ ի դահլիճը». կապերական մեծ թատրոնը (օպերան) միացրած է տեղեֆոններով ալդ դահլիճի հետ և 30 կոպ. վարձով ցուցահանդիսի չաճախորդները կարող են 5 րոպէ դահլիճում նստած պարզ և որոշ լսել մեծ թատրոնի օպերան:

ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԳՐ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ

V

Երաժշտական տեսակետից ներկալ սեղոնի նման մի ձանձրուլթ վաղուց է որ տեղի չէր ունեցել Թիֆլիսում: Իրաւ է, Արտիստական ընկերութիւնը իւր բեմի վրալ տւեց «Ալարմն» և «Յւզենից Սնեզին» օպերաները բաւականաչափ կրճատումներով հանդերձ, իրաւ է—Բանկային թատրոնը ներկայացնում է օպերետներ, բայց աղ լամներ աղքատ հեռու է իսկական երաժշտութիւնից, որ աւելի լաւ է անգամ դրանց չը վիշելը:

Եւ ահա, լանկարծ, երաժշտական ալս սնդուսալի ձանձրուլթի ժամանակ լաւտնում է Թիֆլիսում մի արտակարգ խոշորութեան աստղ: Խօսքս ղեռ բոլորովին ջանել ջութակահար օրիորդ Ալեքսանդրինա Ջանոլլի մասին է, որը, ի ղէպ ասած, ծագումով Թիֆլիսեցի է: Մի հաս աւելթարթում Թիֆլիսի երաժշտական աշխարհը ցնցւեց և իւր ետեից ղէպի թատրոն քարչեց քաղաքի բնակիչների միւս մասը—սչ մասնագէտ երաժշտականը: Այս հանգամանքով է բացատրում, որ տւած առաջին կոնցերտը տեղի ունեցաւ մի տակաւթիւ հասարակութեան առաջ, իսկ մնացեալների ժամանակ—թատրոնի դահլիճը ամբողջապէս լիքն էր: Մարդ ակամալ լիշում է ալս աւելթով Շաշլամեանի ղէպքը: մինչդեռ սրա առաջին կոնցերտին թատրոնը ծալք է ծալք բռնւած էր շնորհիւ լրագիրների հանած ազմուկին, լետազալ կոնցերտները պակաս լաճախորդներ ունեցան. հասարակութիւնը հրասթափւեւ էր իւր լսածից:

Ջանոլլի'ն մի գերազանց վարպետուհի է, վիրտուօզ է: Տեխնիկական ղգւարութիւնները նրա համար գոյութիւն չունին: Միակերպ հեշտութեամբ նա կատարում է Պազանինի'ի ամենաղգւար կոնցերտը, Բացցինի'ի «La Ronde des lutins» («Տնային քաջքերի պարը»), Լաուբ'ի պոլոնեզը, Վիեննական պոլոնեզը և տարանտելլա'ն և ալլն և ալլն: Եւ ալս ամենը նա կատարում է շատ պարզ, շնորհալի, թեթիւ և ղւարթ կերպով:

Ալատեղ անհրաժեշտ է նկատել, որ եթէ ժանրաչին այս պիեսները կատարելու լինին ծանր, խիստ և նուց իսկ չոր կերպով, ինչպէս որ այդ անուամբ էր երկու թէ երեք տարի սրանից առաջ Թիֆլիս եկած Օնդրոֆիչեկ ջութակահարը—էֆֆեկտի մեծ մասը կը կորչի, քանի որ ուրախ կտորը պէտք է զւարթ և ազատ կատարել։ Այս տեսակէտից Չանուլլի'ին կարելի է կատարեալ համարել։ Նրա դէմքի վրա շարունակ անդրադառնում է կատարողը կտոր—պիեսը, աչնպէս որ նուց իսկ մի ոչ-երաժիշտը կարող է նրան հետաւորեալ ըմբռնել։ Սորա հակառակ—աւելի լուրջ պիեսները Չանուլլի'ին շատ էլ չեն լաջողում։ Օրինակի համար Մենդելսոնի կոնցերտը, Չալկովսկու «Sérénade mélancolique»-ը և առհասարակ աչնպիսի պիեսներում, ուր վարպետութիւնը և տեխնիկան տեղ չունին, ալ ուր ուղղակի անհրաժեշտ է, աչնպէս ասած, երգեցիկութիւնը (пѣвучесть)։ Ահա այդ երգեցիկութիւնն է, որ դրեթէ պակասում է Չանուլլի'ին։ Այս է պատճառը որ շատերը տուն էին վերադառնում տարակուսանքի հետ միախառնւած լիութիւն չտալով մի դժգոհութեամբ։ Նա սպասում էր լսել մի խորը սիրտ չուզող ջութակի երգ, և լանկարծ նրա փոխարէն նրան առաջարկում են ամբողջ երեկոյ զանազան վաւախութեան և շնորհալի կտորներ։ Այո, լուրջ երաժշտութիւնը Չանուլլի'ին չի գալիս։ Բայց չը մոռանանք որ նա դեռ 17 տարեկան է և որ նա ալում գնում է կատարելագործւելու համար հաշակաւոր Խոսիսիմի մօտ։ Շատ կարելի է որ ժամանակով նա ձեռք կը բերի և երգահանչիւն (пѣвучищ) տոնը,—աչն ժամանակ նա կը հիացնի ոչ միայն մասնագէտ ջութակահարներին, ալ և ամենքին ընդհանրապէս։

Սակայն եթէ նրան չը լաջողւի ձեռք բերել նաեւ երաժշտութեան լուրջ ժանրը, տեսալը,—աչնու ամենալինիւ նա կը մնալ առաջնակարգ աստղ, որովհետեւ Պապանինի'ի, Վենետակու և ուրիշների զրաւմենի կատարելը տեխնիկական աչն մաքրութեամբ և աչն երաժշտականութեամբ որ կատարում է Չանուլլի'ն—լատով տաղանդի մի գործ է, տաղանդի, որը ներկայումս մի հազագին բան է, մանաւանդ այսքան ջահել անձի համար, և նամանաւանդ որ գեղեցիկ սեռի շարքում Չանուլլին կը բռնի առաջնակարգ տեղ իբրեւ ջութակահարուհի։ Բայց եթէ նա ձեռք բերեց նաեւ տոն ջութակի երգահանութեան մէջ—աչն ժամանակ անկասկած է, որ նա կը լինի առաջնակարգը աշխարհիս բոլոր ջութակահարների թւում։ Սակայն ալդպիսի ֆենոմենները դեռ շատ սակաւաթիւ են աշխարհիս, երեսին. ալդ կարգումն էին մեծ Պապանինի'ն, Վենետակին, իսկ ժամանակակիցներից, մասամբ, Խոսիսիմը։

*
* *

—Թիֆլիսի՝ Նրաժշտական դպրոցը լաւ գիւտ է արել լանձին նոր ջութակահար ուսուցչի—Սոնիշիլինի։ Անտարակոյս, համեմատութիւն անգամ

չի կարող լինել Զանուլի'ի հետ, —բայց թէ Զանուլին մեզ համար ժամանակաւոր մի հիւր է, իբրեւ չուղ թռչնիկ և գուցէ մեզ շուտով էլ թողնի առ միշտ, իսկ պ. Սոլեիշկինը մտադիր է աչտեղ մնալ: Իբրեւ կարտետիստ նա շատ լաւ է և շատ գերազանցում է Թիֆլիսի մի ուրիշ ջութակահարին, աչն է պ. Կուլչինին: Վաղուց է ինչ որ երաժշտական դպրոցը պէտք էր մի լաւ և մշտական ջութակահար հրաւիրէր պ. պ. Գորսկու և Պետտել'ի հեռանալուց փետոյ:

*
* *

—Մօտ օրերս լոյս տեսաւ պ. Էքմալեանի նովաիւրնը ¹⁾: Այս փոքրիկ պիեսը բաւականին մաքուր է հրատարակած: Բովանդակութեամբ նա հեռու չէ վիշեցնելու ամենքին քաջ ծանօթ Շոպէնին:

Յանկանում ենք պ. Էքմալեանին աւելի մեծ ինքնուրույնութիւն իւր չաջորդ գրածքների մէջ: Ինչո՞ւ նա չէ ձեռնարկում արեւելեան եղանակների ուսումնասիրութեան: Չէ որ սա մի շատ շնորհապարտ թեմա է: Ի՞նչպիսի հմտութեամբ և տաղանդով մշակում էր զոցա հանգուցեալ Ղորղանեանը...

¹⁾ Ինչ թող եւ տալիս պ. Էքմալեանի ուշադրութիւնը դարձնել նրա նովաիւրնի ծածկերեսի վրա, ուր ներքեում տպւած է՝ «Chez magasin de musique Mirimanian», որ սխալ ֆրանսերէն է:

ՕՐԷ ՅՕՐ

(ԵՍԵՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՅ)

Մալիս-Նուեմբեր, 1892.

Բանդդ եմ ասում, էլի:

Փոխանակ ընթերցողների հետ ամեն ամիս խօսելու և «Մուրճ»-ի խմբագրի ստորագրած կտրոններով «Մուրճ»-ի հրատարակչից Օրէ-ցօրներին վճարը ստանալու, — որանդից որտեղ հանդէս եկաւ ինչ որ է աննշան, հասարակ աչքով անտեսանելի մի միկրոբ, գլաւեց ամենքի ուշադրութիւնը, դարձաւ նշանաւոր ամեն տեղ, վաչելելով ամեն տեսակ ազատութիւն: Ազատութիւն՝ մտնելու թէ հարստի սպաւտները և թէ մանաւանդ չքաւորների խրճիթները, ազատութիւն՝ գիւղեր և քաղաքներ նւաճելու, ազատութիւն՝ ծովերի, սարերի և անտառման տարածութիւնների վրայով անցնելու, ազատութիւն՝ ամեն տեղ, ամեն բոլորէ, ամեն մէկի վրա — առանց կրօնի և ազգի խտրութեան, ահռելի սարսափ դրեւելու...

Սակայն հասարակութիւններն էլ զրկւած չէին ազատութիւնից անսեռ միկրոբի դէմ կռւելու: Նւ, իրաւ, ամեն մի գիւղ, ամեն մի քաղաք, ամեն մի համայնք — իւր դիտեցած ու լսած ձևով էր մաքառում:

Նաւթառատ Բաքուն առաջինը եղաւ որ անվախ կերպով թշուկ միկրոբին ազատ չաչտարարեց մուտքը Պարսկաստանից ծովի վրայով: (Իրաւ է, մի քիչ տուժեց, բայց թէ ցետոյ իմացւեց որ թշուկները կարող են շատ վտանգաւոր լինել — եթէ դորժում են մեծաքանակ և միահամուռ ուժերով), Բարեխնամ Թիֆլիսը — առաջը կտրեց սանիտարական խմբերով, ձրի թէլատներով, (ոչ թէ թէատրոններով), ձրի ճաշարաններով և այլն:

Մանաւոր անձինք նմանապէս ազատութիւն էին վաչելում կռւելու համար միջոցների ընտրութեան մէջ: Ալսպէս, պ. Նիկողաձէն լրագրական էջերում, ժողովներում կրկնում էր անդադար. «Նւ ոչ մի կաթիլ Գուր

գետի ջրից՝ պ. Ի. Խաչատուրովը շարունակ «դեզինֆեկցիա» էր գոռում։ Պ. Մաստիցիլին — թէչաաններ էր բուսցնում։ Պ. Աբգար Յովհաննիսեանը ամեն տեղ վրա էր հասնում, գոչելով. ես համ Բրուսսալի պատգամաւոր եմ, համ Նզիրպատի, համ Թիֆլիսի չորրորդ սանիտարական խմբի նախագահ...

Կռում էին և օտար պետութիւնների կոնսուլները, ամեն մէկը ջոկ ջոկ սխտեմով։ Պարոն պարսկական կոնսուլը հետևում էր Թիֆլիսում ընդունած սխտեմին, այն է ժամանակաւոր խոլերային բառակներ կառուցանում իւր պետի հպատակների համար, ժողովներ գումարում, բացատրութիւններ տալիս միկրոբի մասին և այլն, իսկ պ. սաճկական կոնսուլը վարում էր բոլորովին այլ սխտեմով։ Ճակատագիրը — ճակատագիր է՝ ում որ վիճակած է խոլերայից մեռնելու նա կը մեռնի, իսկ ում որ ոչ — ոչ — ապա էր սրա նշանաբանը։

Կռւելու ազատութիւն վաչելում էին նաև լրագրերը ու պարբերական մամուլը իրանց աշխատակիցների ձեռքով և սոքա մաքառում էին ընդհանուր թշնամու դէմ, միահամուռ ուժերով, բայց տեսակ տեսակ լօղածներով՝ Ն. Ումիկեանը «Մուրճ»-ում — խօսել երազի դէմ՝ դեզինֆեկցիայի դէմ, Վ. Արծրունին «Մշակ»-ում խօսել երազի դէմ՝ ախտահան միջոցներով, Մ. Զարգարեանցը «Արարատ»-ում — խօսել ի դէմ և պ. Մողեանը Պոլսի «Հալլենիք»-ում — քոլերայի դէմ՝ վարակաջինջ միջոցներով և այլն։ Կալին կոնսուլներ հասնող ախտի դէմ — ի՞նչ է եմ սխալում՝ խաչվառներով և քիսալին մասսաժով։

Ազատութիւնը մերժած չէր նաև բժիշկներին։ Սակայն հին բժիշկներից շատերը, որոնք առաջուց ծանօթ էին անսեռ միկրոբի հետ, այս անգամ, մեծահոգաբար թող տւին իրատասարդ բժիշկներին միկրոբի հետ աւելի մօտուց ծանօթանալը և գործ ունենալը... կեանքի ընկողով։

*
* *

Լրագրերի ասելով բրիտանական պարլամենտի նորընտիր 670 անդամներից ներկա էին գտնւել նորոգւած պարլամենտի առաջին նստին ամենքը — բացի երեք հոգուց, որոնցից մէկը — սաստիկ հիւանդ էր, ուրեմն և անկարող տանից դուրս գալու, երկրորդը Աւստրալիայումն էր ու նոր էր տեղեկացել իւր ընտրութեանը, իսկ երրորդը Հնդկաստանից, որ տեղից արդէն ճանապարհ էր ընկել Անգլիա։

— Ուրեմն, կը հարցնի ընթերցողը։

— Էլ ի՞նչ ուրեմն։ Կարծես թէ մեզանում, հալերիս մօտ, պարտաճանաչութիւնը նոյն աստիճանով չէ՛ զարգացած, կարծես թէ Պոլսի ազգային երեցփոխանական ժողովի անդամները միշտ ներկա էին լինում թէ առաջին և թէ բոլոր միւս ժողովների նստերին առանց դրանով մի ազգային

պարտականութիւնն կատարած համարելու, կարծես թէ անգլլական պարտաճանաչութիւնը չի տիրում նաև մեր բոլոր եկեղեցական ծխական երեցփոխների, բարեգործական և այլ ընկերութիւնների անդամների մէջ:

*
* *

Նոյն լրագրերը վկայում են որ պարլամենտի առաջին նստին Սոլսբերիի մինիստրութիւնը գլորեց առաւելութեամբ 40 ձայների, աչսինքն ճիշդ աչնքան ձայների, որքանով որ Վլադստոնի կուսակցութիւնը գերազանցում էր Սոլսբերիի կուսակիցների թւից:

Բայց թէ ինչ օգուտ, ընթերցող, աչլպիսի չամառ և հաւատարիմ կուսակիցներից, ափսոս չեն մեր կարծեցեալ համախոհները: Յիշում էք աչ տարաւ ապրիլի վեցի պատգամաւորական ընտրութիւնը, երբ մօտ հարիւր ձայնատէրերից ևօթը կիսահոգի համախոհներ կիսեւէին երկուսի և իրանց քւէները տեւէ համ մէկին համ միւսին:

*
* *

Ո՞վ գիտէ մինչև երբ պիտի նաև մեզ անծանօթ մնար վրաց բանաստեղծ Պաշա Վժաւելան, եթէ չը լինէր սրա մի նամակը ոչ բանաստեղծական նիւթի վրա: Վրաց ուսանողներին իւր աղ զրած պատասխան— նամակի մէջ վրաց բանաստեղծը մերժում է վճարել ուսանողական զանաւարանից իւր վերցրած պարտքը և օգտւելով իւր բարեպատեն հանդամանքից խրատում է (երևի, ի հաշիւ իւր պարտքի) իւր արիւնակից ուսանողներին— անուում վերադառնալ հայրենիք և շատանալ հողի հերկումով և և՛ և՛ Տոլստօյ:

Եւ մարդ չը մնաց որ հարձակէր խեղճ բանաստեղծի վրա: Բայց, ինչու:

Նթէ բանաստեղծները վաչելում են licencia poetica, աչսինքն բանաստեղծական աղատութիւն, ապա ուրեմն ինչու Նոյն հիման վրա նոքա չը վաչելեն նաև պարտքազանցութեան աղատութիւնը:

*
* *

Պետերբուրգում հրատարակող «Новое Время» լրագիրը իւր Աստորախանի թղթակցի բերանով աչապէս է (սօսում ¹⁾) աչ քաղաքի կլուբի անդամների մասին. «Նա վստահ եմ որ Աստորախանի կլուբը է աչխարհիս

¹⁾ „Кавказъ“ № 186.

ամենաանբաղաճալարին, ամենաանխնայելիներն և ամենախառնաբեր: Սրա աւելի քան երրորդ մասը բաղկացած է հալերից՝ նշանաւորապէս անկիրթ, սնապաշտ և թուլասիրտ մի ժողովրդից, երրորդակից աւելի են մանր վաճառականները, գործակատարները և ծառայողները և հազիւ մի երրորդականը կազմում լինեն ինտելիգենտ անդամները, ատտիճանաւորները և զինւորականները:

Ապա, ո ուն թղթակցութեան վերջում պատմում է «Մուրճ»-ի ընթերցողներին չալտնի դէպքը «Ուզտ» հալի հետ ¹⁾։ «Նբբոր ամբոխը կրակ էր տալիս հիւանդանոցը ալրեւու համար—մի հալ «Ուզտ» ժողովրդական մականոնումով մէկը մօտենում է ամբոխին և սկսում բռնուն կերպով համոզել որ, կրակ տալով, ամբոխը իւր վրա է առնում մի ծանր մեղք:

—Տղերք, սա էլ է բժշկների կողմը. խորովենք սրան—և մի ակնթարթում նրան դանակոծեցին, կոշիկները հանեցին ու կենդանի կենդանի կրակը խոթեցին: Նւ Ուզտը, իրաւ որ, խորովեց և մեռաւ սարսափելի տանջանքների սէջ):

—Սակաւն, պ. թղթակից, ուր էլք դուք և ձեր ինտելիգենտները—եթէ ոչ Ուզտի օրինակին հետեւելու գոնէ ալ՝ «նշանաւորապէս անկիրթ, սնապաշտ և թուլասիրտ» հալին դադան դառած ամբոխի ձեռքից ազատելու համար:

*
* *

Թիֆլիսում օգոստոսի քսանին յիստ կար մի ժողովի՝ բաղկացած ուսրաւալի անդամներից, սանիտարական խմբերի նախագահներից և բժշկներից:

Պ. Նիկողաձէն առաջարկում է ժողովին ընտրել մի չանձնաժողով ուսումնասիրելու նպատակով թէ 1) համաճարակումի ընթացքը Թիֆլիսում և թէ 2) խոլերային զարգանալու նպատող պայմանները քաղաքիս մի քանի թաղերում: Յանձնաժողովը, պ. Նիկողաձէի ասելով, պիտի կազմուի եւրոպական ձևով և իւր մէջ պարունակի թէ բժիշկներ և թէ ГОРНЫЙ ու ГРАЖДАНСКИЙ ինժինէրներ—լուսարանելու համար վարակած տեղերը СТЪ ГЕОЛОГИЧЕСКОЙ ²⁾ и ГИДРОГРАФИЧЕСКОЙ ³⁾ տեսակէտներից:

Պ. Նիկողաձէի առաջարկը ընդունւում է և զիտնական մասնաժողովի անդամներ են ընտրւում. պ. Նիկողաձէ, պ. Աբգար Յովհաննիսեան, բժիշկ Աղամբանց, բժիշկ Խտամանով, բժիշկ Աւտանդիլով, բժիշկ Ստեպանով, բժիշկ Ռօտինենանց, բժիշկ Ռազամատ, բժիշկ Ռեխտզամեր:

¹⁾ «Մուրճ» № 7—8 էջ 1193:

²⁾ Նրկրաբանական:

³⁾ Զրադրական:

և քաղաքային ինժեներ Տ. Լնֆիաճեանց: Ասել է՝ եթէ բժիշկ, մի ինժեներ և երկու հասարակական գործիչներ, որոնցից մինը—պ. Նիկոլաձէն, իբր քարածխային մի ընկերութեան խոշոր ակցիոներսերից մին—թերևս երկրաբան (геологъ) լինի, իսկ երկրորդը ալն է պ. Ա. Յովհաննիսեանը խոմ ջրագիր է ջրագիր, քանի որ 1881 թվից սկսած ջրագիր է հրատարակում և ամեն տարի նոր սխտեմով:

*
* *

Նշանաւոր «Вѣстникъ Европы» ռուս ամսագիրը իւր 1892 № 5-ում տեղ է տւել պ. Գ. Կիւլպենկեանի գրքի ¹⁾ առիթով մի 8 տողանի գրախօսութեան—որի գրախօս հեղինակը Geórgie ²⁾ ֆրանսերէն բառը թարգմանում «География»:

Այսպիսով բաղմաշատ ռուսահայտակ աշխարհների թիւը մինով ևս աւելացաւ առանց արիւնհեղութեան, առանց պիպլոմատիական բանակցութիւնների Անգլիայի և պետութիւնների երբեակ դաշնակցութեան հետ:

*
* *

Հռչակաւոր պ. Գրիգոր Նիկողոսեանը սոցն տաբւալ չուլիս 24 մեկնում է իւր ձեռքը Պետերբուրգից դէպի Թիֆլիս մի հալ խմբագրին:

Գր. Նիկողոսեանը իւր մեկնած ձեռքերում պահած ունի երկու նամակ, որոնցից մինի նիւթը իւր ասելով («վաղուց է որ կրծում է խիղճը, չը նայելով անձնական պէսպէս մտահոգութիւններին») (խօսքը Գամառ Գաթիպայի ընտանիքը նիւթապէս ապահովելու մասին է): Միւս նամակը է, ալսպէս ասած, մի խոստովանութիւն տանջւած սրտի, չը գնահատւած հրապարակագրողի մի լալտնութիւն, որից քաղում եմ նշանաւոր տողերը:

— Պարոն խմբագրապետ... լրագրի,—ես աշխատակցել եմ Մանդուէի էֆքեար, Մասիս, Հայրենիք, Լոյս, Թերշիմէնի Էֆքեար, Ջերիգէի Շարքիէ, Արևիկեան Մամուլ, Արևելք և ալն (խմա՝ «Մշակ») «Նոր-Գար») թերթերին:

Հիմա գալով ձեզ ընդառաջ կը խնդրէի... մերթ ընդ մերթ գրելիք օգուածներս հիւրասիրէք ձեր թերթի մէջ... մեկնում եմ ձեզ ձեռքս en militaire ³⁾, եթէ կուզէք ընդունել, je suis tout à vous... ⁴⁾:

¹⁾ Անգրիպիկասը և Ապշեռոսեան թերաղղին - ֆրանսերէն լեզուով:

²⁾ ==Վրաստան, ռուսերէն==Грузія:

³⁾ Զինուորականի պէս:

⁴⁾ ==Զերն եմ ամբողջովին:

Պարոն Ա. Յովհաննիսեանը (սրան էր դիմել պ. Նիկողոսեանը) ընդունում է մեկնած ձեռքերի հետ և 2 վիշեալ նամակները և տպագրում նրանց միմիայն օգոստոս 16-ին, աչն էլ խաբւելով գործածւած Ֆրանսիական դարձածներին: Բայց եթէ մի շաբաթով էլ ուշացնէր նամակների տպագրութիւնը՝ (11. Պատկանեանը վախճանւեց օգոստոսի 22-ին) խոմ պ. Նիկողոսեանի ձեռքերը մինչև հիմա էլ կախ ընկած կը մնային Պետերբուրգի ու Թիֆլիսի մէջտեղերքում օդի մէջ:

*
* *

Մալրաքաղաքի բոլոր լրագրերը հեռագրեր տպագրեցին թէ խուերաւին խեղդեցին Բաքում:

Միաժամանակ սրա հետ լուր տարածեց թէ Բաքւի ուպրաւան, աչքի առաջ ունենալով մի կողմից իւր ջանքերը, միւս կողմից ձախաւորներէ բացակայութիւնը, աւելացրեց իւր անդամների ռոճիկը կիսով չափ:

Եւ կային միամիտներ, որոնք շարունակ ապացուցանում էին թէ Բաքւի դուման, լանձին իւր ուպրաւալի, անհեռատես զսնւեց համաճարակումի ժամանակ...

*
* *

Գիգօ Չիչինաձէ հալ է թէ վրացի: Ըստ իս, որ նրան չեմ ճանաչում, եթէ դատելու լինենք կրճատւած Գրիգոր անունից,—հաւանական է, որ Չիչինաձէն հալ լինի:

Իսկ եթէ ուշագրութիւն դարձնենք ձէ վերջաւորութեան վրա, պէտք է ենթադրենք, որ Գիգօն վրացի է:

Համաճարակումի ժամանակ—Չիչինաձէի խնդիրը հանդէս եկաւ չորհիւ Ֆրանսիացի Մուրչէ'ի, որը տարէնը երկու երեք անգամ իւր Ֆրանսերէն լեզուով հրատարակող պատկերազարդ «Աովկասի» մէջ տպեց իբր «Աովկասեան տիպար» Չիչինաձէի պատկերը, լակոնական ստորագրութեամբ՝ վրացի: Վրդոված իշխան Թումանովների («Նովոէ Օբոզրէնիէ») ռուս թերթը նկատեց, որ պատկերը աւելի նման է հալկական տիպարին: Բայց ռուս «Աովկազ» լրագիրը իսկուչ տեղեկութիւններ հաւաքեց ու հաղորդեց որ պատկերը վրացու է, որ աչգ վրացու անունն է Գիգօ Չիչինաձէ, որ սա աչս ինչ արհեստի է և կենում է աչս ինչ տեղը:

Բարեբաղդաբար հարցը սուր կերպարանք չառաւ և չը նպաստեց համաճարակումի զարգանալուն:

Հանաքը դէնը—անձամբ չը ճանաչելով Գիգօ Չիչինաձէին—պատրաստ եմ զրադ գալ որ սոս—եթէ ինտելիգենտ մէկն է—պակաս կը լինի ճանաչում վրաց գրականութիւնը քան առաջին պատահած թիֆլիսեցի

հալը, որը համ վրացերէն պատկերազարդ մանկական հրատարակութիւններ է տալիս վրաց հատարակութեանը, համ ծառայում վրաց բեմին, համ վրացերէն աշուղաչին երգեր երգում ու ջօրինում, համ ամենուրէք պատէհ և անպատէհ մրաւալժամիա բղաւում, համ էլ վրացուց ոչ պակաս Վախէթու կարմիր գինի սպառում և գոտեմարտներ ու ղօչի և աքաղաղի կուհներ սիրում... Ի՞նչու չէ վրացի թիֆլիսեցի հալը:

*
* *

Նրբ որ մի հալ լրագիր ձեռս է ընկնում, ամենից առաջ կարդում եմ չափարարութիւնները և գրեթէ միշտ դրանով շատանում: Այդ բաժնի մէջ մեր լրագրերը իրար չեն կրժոտում, թունդ թունդ բառեր չեն գործածում, հակառակորդի խօսքերը չեն աղաւաղում, մի խօսքով չափարարութիւնների բաժինը կարգին մի բաժին է և բացի այդ, մէջը, երբեմն էլ նորութիւններ են պատահում:

Ամեն անգամ երբ «Մշակ»-ի մէջ կարդում էի Նիկ. Նիկողոսեանի (հարազատ եղբայր հռչակաւոր Գրիգոր Նիկողոսեանի) չափարարութիւնները իւր հնարած համրիչի—հրճւում էի անսահման կերպով և միեւնոջն չափարարութիւնը միեւնոջն համարի մէջ փոխանակ մի անգամի տասը անգամ էի կարդում... Նրբ—յանկարծ, իմացալ թէ «Մշակ»-ի մէջ մի նամակ էլ ունի տպած պ. Նիկ. Նիկողոսեանը իւր համրիչի մասին, ուր ի թիւս ալոյց նա հետեւեալ հաշիւներն է անում (առանց սակաւն իւր համրիչին զիմեւում, թէև, ինչպէս որ այդ կը նկատի ընթերցողը, ցոյց տւած չափի թւերը—սարսափելիներեցն են) «Ռուսաստան ու Պասկաստան 120—130 միլիոն ժողովուրդ ունին և առնւազն 25—30 միլ. համրիչ կծախւի, ուրեմն արտօնատէրը տես քանի տասնեակ միլիոն ռուբլիներ պիտի վաստակէ»: Բայց թէ տասնեակ միլիոն ռուբլիների օգուտը սրանով չի վերջանում—«բացի չիշեալ Ռուսաստան—Պարսկաստանից անտարակոյս (ի՞նչ խօսք կալ) բոլոր տէրութիւնների մէջ էլ կընդունւի, մանաւանդ Անգլիայում, մանաւանդ որ նրանց փողերը և կշիռները բարդ են և ալլն»: Ուրեմն Անգլիան որ ընդունի—տասնեակ միլիոն ռուբլիների օգուտը կը փոխարինւի հարիւր միլիոն ռուբլիների,—իսկ արի տես որ մեր հայերը քնած են ու քնած, մինչդեռ «ալսպիտի մի արդիւնաւոր գործի համար հարկաւոր է միմիայն տասը հազար ռուբլի առաջին անգամից և աւելի ոչինչ»¹⁾:

Ձարմանում եմ որ ոչ մի հալի գլխում չը նստեցին այս միլիոնները... Չեն ուզում հայերը հասկանալ որ հալ էլիստներ զլուխ ունեցաւ համրիչ

¹⁾ «Մշակ» № 118.

հնարելու, բայց չի կարող «գլուխ դնել որ և է կառավարութիւնից արտօնութիւն (պրիվիլեգիա) ձեռք բերելու»:

*
* *

«Արձագանք»-ը, որի երեսը ամենքին չալտնի էր, ցոյց տւեց և իւր պատառը, տպագրելով 12 տարի սրանից առաջ Սիւլիւկից ստացած ու մինչ օրս տպագրութեան համար անյարմար գտնւած «Աստառ»-ը:

*
* *

Տեղական բոլոր ռուս թէ հալ լրագրերը—կոկորդիլոսի արտասուքներ են թափում հալոց թատրոնի անժողովրդական ու դատարկ մնալուն համար:

Ըստ իս գրա ճարը շատ հեշտ է. թող աչտուհետե փոխանակ 12 անդամներից բաղկացած մի կոմիտեի ընտրւի մի նորը 120 անդամներից և ամեն մի ներկայացումի (եթէ թատրոնը դատարկ եղաւ—ինչ խօսք որ դատարկ է լինելու) 120 անդամների ազգականները ու բարեկամները ձրի մուտք ունենան թատրոն ու դահլիճն էլ լիքը կը լինի... աչո, դահլիճը, բայց ոչ կասսան:

*
* *

Հալոց թատրոնական կոմիտէի իրանք իրանց ընտրած անդամները աչնքան ժամանակ վարեցին հալ թատրոնի գործը, մինչև որ իրանց միջից մէկը ներկայացրեց իւր թարգմանած՝ Զուղերմանի «Պատիւը»:

Միմիաչն աչս պիեսի հետ ծանօթանալուց լետոչ—կոմիտեի անդամները վիճաբանութեան ենթարկեցին պատւի խնդիրը և իրարից խռով բաժանեցին:

Թատրոնական «գործը» տանելու պատիւը մնում է աչսօր երկուսի թէ երեքի ձեռքին, երեքի, որոնք ով գիտէ ինչ կերպ ըմբռնեցին Զուղերմանի «Պատիւը»:

*
* *

— Ինչու չէք տարածում «Մուրճ»-ը ձեր շրջանում, հարցնում էր ինձ պատահելիս «Մուրճ»-ի հրատարակիչը:—Սխալում էք եթէ «Մուրճ»-ի վերաբերմամբ որ և է խրախուս էք պատում մեր օրաթերթերից. նոքա զբաղւած են իրար հետ ունեցած ընթացիկ հաշիւներով, ջրմաղութեամբ, ինքնազուլութեամբ, մեղաւոր և անմեղ մտածմունքներով և աչն:

Պր. Հրատարակչի ասածները գլուխս մտան. չէ՞ որ, ասում էի ինձ ու ինձ, բաժանորդների թիւը որ աւելանալ, համ մենք, աշխատակիցներս, աւելի լաւ կը վարձատրւենք, համ էլ գուցէ «Մուրճ»-ը իւր բաժանորդների համար պրեմիաներ նշանակի:

Ինչ և է սկսեցի ամեն տեղ քարոզել:

— Պր. Վերնակտուրեան, (ասացի ես իմ ոչ բարեկամ բալց ծանօթներին մէկին. — որը մի հարուստ ռանտիէ է համարւում և տարէնը 7—8 հազար է մսխում), տարին վերջանալու վրա է, ինչու չէք գրւում «Մուրճ»-ին, ուր ես աշխատակցում եմ:

Աղբեր, ասաց նա ինձ, փող չը կալ, փող, մէկէլ օրը շտապում տարւեցի 500 ռուբլի, երէկ գնացել էի «մամղել Նիտուշին»... Լաւ ասացիր որ տարին վերջանում է. պէտք է Պետերբուրգի անգլիական կլուբին ուղարկեմ անդամաւճարս—գիտես—ես անդամ եմ. սրատահում է երկու-երեք տարին մին անգամ անտեղ եմ լինում ու առանց սրան նրան խնդրելու գնում եմ իբր անդամ, աչտեղ էլ խոմ կլուբի, կրուժոկի և արտիստիքական ընկերութեան անդամ եմ... աղբեր, փող չի մնում, դարտակ է է...

— Ի հարկէ դարտակ կը լինի, ասացի ես տնկելով աչքերս Վերնակտուրեանի դիւին, մինչդեռ ծանօթս երեի թէ իւր քսակի դատարկութեան մասին էր ուզում ակնարկել:

— Եկէք աչս երեկոյ «Նինիշին», ասաց նա ինձ հեռանալով:

— Պարուն Կերուխումեան, ասացի ես Թիֆլիսի հալ վաճառականներին մէկին, ինչի հալ գաղէթ չէք ստանում, մտաւոր զարգացումը մեծ բան է...

— Մեր ինչ խելքի բանն է գաղէթը ու մտաւոր զարգացումը. մերը՝ լաւ կախէթն է, լաւ դօշ, զուրգէլ, օտի պանիր, թարխուն, լօքօ, խորոված, մի լաւ էլ դուդուկ. Գաղէթը մեղանում քնչ կօնի: Գու՛ն էլ արի մեզ մօտ—քիչ բանդդ տեղը դալ—թէ չէ ինչի նման ես դառել:

— Պր. Լրագրապոչեան, ինչու չէք գրւում «Մուրճ»-ին:

— Որովհետեւ, որովհետեւ... ես սկզբունքով հակառակ եմ «Մուրճ»-ին. ամսագիրը պէտք է անպատճառ մի գաշնակից լրագիր ունենալ—իսկ «Մուրճ»-ը համ ամենքին պախարակում է, համ, մին էլ տեսար, սրան ու նրան զովեց. խօմ աղպէս չի կարելի... Նս սկզբունքով դէմ եմ «Մուրճ»-ին:

— Պ. Ինտէլլիգենտեան, ինչու չէք տարածում «Մուրճ»-ը ձեր շրջաններում ու ինքներդ էլ ստանում:

— «Մուրճ»-ը մեզ ոչ մի «անունդ» չի տալիս. մեր լրագրերը մեզ սովորեցրել թունդ թունդ խօսքերի, փողոցալին սրախօտութիւնների, զրուպարտութիւնների, սուտ սուտ լուրերի և առանց աչս բաների մենք ալ ես չենք կարող ապրել. իմ կարգացած լրագիրը կարող է ինչ ուզում է ասել ասի, միայն թէ հակառակորդի տակին չը մնալ. լրագրերը կարգացում են, որովհետեւ թէ առաջնորդներում, թէ թղթակցութիւններում:

րում, թէ լուրերում մի խօսքով ամեն մի տողում և տողամէջերում կան ակնարկութիւններ սրա ու նրա մասին—իսկ «Մուրճ»-ը—այ, օրինակի համար, փոխանակ դպրոցական ռեֆորմ լօղածը գրելու, աւելի լաւ կը լինէր եթէ լրագրերից հովանաւորածներից մէկին պաշտպանէր:—Բայց թէ չէ—ամեն բանից խնդիր էք չինում, իսկ անձնաւորութիւնները չէք չօչափում: Թէ որ ուզում էք «Մուրճ»-ը տարածել—ամեն մի համարում ապեցէք Օրէջօր, աչն էլ առաջնորդդ տեղ:

—Պարոն Դրասէրեան, ակնը ինչու «Մուրճ» չէք ստանում:

—Գիտէք ինչ կապ պէտք է խմբագիրը փոխել. անկեղծ եմ ասում. մի անգամ մի պատմութիւն բերի 800 երեսանոց—մերժեց, միւս անգամ Սպինոզայի մասին մի թարգմանութիւն բերի 600 երեսանոց—մերժեց, երրորդ անգամ «Ապղլմանի թատրոնի անցեալը» բերի 500 երեսանոց—մերժեց, մին անգամ մի տրագիկա բերի սպանութիւններով, թունաւորութիւններով—էլի մերժեց: «Մուրճ»-ը, ասում է, իրան նւիրել է կենսական ալրուղ հարցերին—ասացէք խնդրեմ՝ սպանութիւնը թողնը, թատրոնը, Սպինոզան ալրուղ հարցեր չեն... Ասենք թէ թարգմանութիւններ էին ու քիչ էլ երկար ու ձիգ... Ալղքան մերժումից վատը դուք ուզում էք որ ես «Մուրճ» ստանամ և «ձուից նոր դուրս եկածներին» հում հում լօղածները կարդամ ու փող էլ վճարեմ... հիմա ես պատրաստ ունեմ մի պօէմա, եթէ «Մուրճ»-ը...

—Պարոն Բժականդիրեան, կարծեմ «Մուրճ»-ը ձեզ պէտք է հետաքրքրի...

—Ի՞նչ էք հրամայում, «Մուրճ»-ի նման մի լուսադբօսիկ ուղղադրութեան ամսագիր մենք դեռ չենք ունեցել. ամեն տեղ նորամուծութիւններ, վերը դէն է գցում, վեպերի տեղ հիւն գրում, ասում էլ են թէ երկտառ ու և իւ ձաջնահնչիւնների համար նոր տառեր էլ է ձուլում...

Գրեցէք աչնպէս ինչպէս ամենքն են գրում, աչսինքն համ «Մշակ» ը, համ «Նոր-Գար»-ը, համ «Արձագանք»-ը, համ «Աղբիւր-Տարազ»-ը...

Աւտղիստով, ընթերցող, փոխանակ բաժանորդներ ճարելու, ես լսեցի ձրի խորհուրդներ: Եթէ դուք ես ունիք ձրի խորհուրդ տալու, փոխանակ բաժանորդ գտնելու՝ գրեցէք «Մուրճ»-ին իմ հոսցէով:

*
* *

Ով գիտէ, ընթերցող, վիճակած է ինձ արդեօք քեզ հետ միանալու և տեսնել աչ տարի: Ուստի առաջարկում եմ քեզ աղաւ ժամանակդ դրժածել մի հանելուկ լուծելու, որի չաջող լուծումը թերեւ քեզ իրաւունք կը տալ տղադրել և տարածել Խրիմեանի բոլոր գրածքները:

Աչն ինչ է—որի անունը կապ—ինքը չը կապ...

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃ»-Ի ՆԻՒՐԱՏՈՒՆԵՐ: Ներկայ 1892 թվականի «Մուրճ»-ը նւիրել են՝

- 1) Պպ. Գր. Առաքելեան Շուշու հայոց իգական դպրոցին:
- 2) » Եղբ. Յ. և Ա. Բունեաթեանց, Զաքարթ. հայոց ար. դպրոցին:
- 3) » Բժ. Զալեանց Ղուբալի հայոց ընթերցարանին:
- 4) » Յ. Թամազեանց Ղլլարի հայոց արաբ. դպրոցին:
- 5) Տիկ. Մարիամ Թումանեանց Քարանսարաջ հայոց ար. դպրոցին:
- 6) Պպ. Եղբ. Ժամարեանցներ Շուշու թեմ. Հոգևոր Դպրոցին:
- 7) » » Շուշու Հ. Բար. Ընկ. Ընթերցար.
- 8) Տիկ. Հեղինէ Կրասիլնիկեանց Հայ-գիւղի Հայոց ծխ. դպրոցին:
- 9) » Նատալ. Կրասիլնիկեանց Երևանի հալ զինւոր. 7-դ ռոտային:
- 10) Պպ. Մեղրիկեանց Շուշուերի ժողովարանին:
- 11) » Ալեքս. Մելիք. Աղարեան Ռաշտի Հայոց Ընթերցարանին:
- 12) » Կիր. Մովսիսեանց Հին-Նախիջ. Հ. Բար. Ընկ. Ընթ.
- 13) » Յ. Զալաբեան Հաշտարխանի Հայոց իգ. դպրոցին:
- 14) » Արշամ Զլիլնիկեանց Տրապիզոնի թեմ. առաջնորդարան.

ԽՈՒՆՐԱՅԻՑ վախճանագծերի թիւը, „Хорьковск. Губернск. Вѣдомостѣ“
լրագրի հաշուով եղել է, սկսած խոլերային էպիդեմիայի սկսե-
լուց լուսնիս ամսին մինչ հոկտեմբերի վերջը, ռուսաց կայսե-
րութեան սահմաններում՝ ընդամենը 220,122 հոգի:

«ՓՈՒՆՁ» լրագիրը, որ հրատարակուած է Կ. Պոլսում, տաճկական կառա-
վարութեան վճռով դադարեցրեց և ապա նորից թույլ տրեց
հրատարակելու:

† ԽՈՐԷՆ արքեպիսկոպոս ՆԱՐ ԲԷՅ լանկարձամահ եղաւ Կ. Պոլսում,
նոյեմբերի 16-ին:

† ԳԱՐԵԳԻՆ Կախկոպոս ՍՐԻԱՆՉՏԵԱՆ վախճանեց Կ. Պոլսում՝ ներկայ
նոյեմբերի 17-ին:

ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐ պ. Գ. Վանցեանի լօղւածը, որ տպւեց «Մուրճ» №№
7—8 և 9, քաղւածօրէն արտատպւեց Կ. Պոլսի «Հալսնիք»
լրագրի №№ 286 և 287, տաճկահալ բարբառով:

«ԱՂԲԻԻՐ և ՏԱՐԱԶ» թերթերի դալժմեալ խմբագիր-հրատարակիչ պ. Տիգ-
րան Նազարեանց իւր վերոյիշեալ պարբերական հրատարա-
կութիւնները, սոցա թւում նաև „АВОНСЪ“ ռուս լրագիրը,
կը հրատարակէ աշխատակցութեամբ պ.պ. Գաբրիէլ Միր-
զովեանի և Ստեփան Լխիցեանի: «Աղբիւրի և Տարազ»-ի ժա-
մանակաւոր խմբագիր հաստատուած է Բժ. Գանիէլ Լխիցեան:

Խմբագիր՝ ԱԼԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԳԱՋԱՐԵԱՆՅ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԱՂԲԻԻՐ», ամսագիր մանուկների համար, 11-րդ տարի, ժամանակա-
կառոր խմբագիր բժշ. Դ. Լխիցեան, հրատարակիչ
Տ. Նազարեան:

Տարեկան գինն է 3 ռուբլի:

Հասցէ՝ Тифлисъ, редакция „Агбюръ“.

«ԱՐԱՐԱՏ», կրօնական, բարոյական, պատմակ. բանասիրական և ազ-
գային ամսագիր, 26-դ տարի:

Տարեկան գինն է 4 ռուբլի:

Հասցէ՝ Эчмиадзинъ, въ редак. журнала „Арапатъ“.

«ԱՐԱՔՍ», գրական և գեղարվեստական վեցամսեայ պատկերազարդ
հանդէս 6-դ տարի, հրատ. Ս. Գիւլամիրեանց:

Տարեկան երկու գրքերի գինն է 3 ռուբլի:

Հասցէ՝ С. Петербургъ, Сим. Гуламирянцу.

«ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ», ամսաթերթ, 52-դ տարի, հրատարա-
կութիւն Մխիթարեան միաբանութեան:

Տարեկան գինն է 4 ռուբլի:

Հասցէ՝ Venise (Italie), Rédaction de la Revue „Baz-
mavep“, St. Lazare.

«ՀԱՅՐԵՆԻՔ», օրագիր ազգային, գրական և քաղաքական, 23-դ տարի,
շաբաթը վեց անգամ խմբագիր Արփիար Արփիարեան:

Տարեկան գինն է օտար երկիրների համար 25 ֆր. (10 ռ.):

Հասցէ՝ Constantinople, Galata, ancien local de Ban-
que Imp. Ottomane.

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ», հրատ. Մխիթարեան միաբանութեան, 7-րդ տարի: Խմբագիր՝ Հայր Ռ. Վ. Պարոնէ:

Տարեկան գինն է 4 ռուբլի:

Հասցէ՝ Vienne (Autriche), Rédaction de la Revue Handless, Méchitharistengasse, 4. Вѣнна (Австрія).

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ», հրատ. Յ. Բարխուդար., 2-դ տարի: Տարեկան գինն է 3 ռուբլի:

Հասցէ՝ Тифлисъ, I. Бархударянцу, Николаевск. ул. № 23.

«ՄԱՍԻՍ», հանդէս ազգային, գրական և քաղաքական, հրատ. երեք շաբաթը մի անգամ երկու թերթ մեծութեամբ: Խմբ. Գրիգոր Զոհրապ, տնօրէն Հրանտ Ասատուր:

Տարեկան գինն է օտար երկիրներէ համար 6 Ֆրանկ (կամ 3 ռուբլի):

«ՄՇԱԿ», գրականական և քաղաքական լրագիր, 21-դ տարի, շաբաթը երեք անգամ: Խմբ.-Հարատարակիչ Գ. Արծրունի:

Տարեկան գինն է 10 ռուբլի:

Հասցէ՝ Тифлисъ, въ редакцію „Мшакъ“.

«ՆՈՐ-ԴԱՐ», գրականական և քաղաքական լրագիր, 10-դ տարի, խմբ.-հրատար. Ս. Սպանդարեան:

Տարեկան գինն է 10 ռուբլի:

Հասցէ՝ Тифлисъ, въ редакцію „Норъ-Даръ“.

«ՏԱՐԱԶ», պատկերազարդ շաբաթաթերթ, 5-րդ տարի: Ժամանակաւոր խմբագիր բժ. Դ. Լիսիցեան, հրատարակիչ Տ. Նազարեան:


Տարեկան գինն է 6 ռուբլի:

Հասցէ՝ Тифлисъ, въ редакцію „Агбюръ-Таразъ“.

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“, ռուսերէն լրագիր ամենօրեայ, 10-դ տարի: Խմբ. Վ. Թումանով, հրատ. Կ. Թումանով:

Տարեկան գինն է 10 ռուբլի:

Հասցէ՝ Тифлисъ, въ ред. газ. „Новое Обозрѣніе“.



„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1893 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Բ Ա Յ Ի Ա Մ Է

Տարեկան գինն է 10 ռ.

Բաժանորդագրութեան համար գիմե՛լ՝

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ { Тифлис. Въ редакцію журнала „МУР“.
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Կամ մեր դորձակալութիւններին՝

ԹԻՖԼԻՍ.—Կենտրոնական գրադաճառանոց:

» պ. Յովհաննէս Թումանյ, Սիօնի փողոց № 27:

» պ. Յովհ. Թումանեանցի մօտ, Հրատ. Բնկ. գրասենեակում:

Բարձրագոյն փողոց:

ԲԱՔՈՒ.—պ. Աւետիս Սուլիսեանց, ազգեւոյ „Надежда“ ընկ.:

ՌՈՍՏՈՎ.—ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԻԱՆ.—Եղբ. Պ. Է. Գ. Անանեաններ:

ԲԱԹՈՒՄ.—պ. Սարգիս Մակարեանց (գրատ. Եղբ. Յովհաննէրի):

ՎԱԳԱՐՇԱՊԱՏ.—պ. Ստեփան Արասեանց:

ՄՈՍԿՒԱ.—պ. Վարդան Թումանեանց (Чистые Пруды, д. Тушицына

» պ. Ստեփան Վարդազարեան, Выхожовъ переу., д. Адлеръ.

ՕԴԵՍՍ.—պ. Միքայէլ Մուրադեանց (գրատ. Եղբ. Յովհաննէրի):

ԹԱԻՐԻՉ.—պ. Ասատուր-բէկ Միքայէլեանց:

ՉՄԻԻՐՆԻԱ.—պ. Յ. Տէր-Միրաքեանց (Մեարոյ. փարձարան):

ՄԱՐՍԷՅԼ.—պ. Սիմէն Միրզայեանց: Rue St Jacques № 86:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ.—Ստեփան Վահագեան:

ԵՐԵՒԱՆ.—Աւետիս Աղամիրզեանց:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ գտանւում է Թիֆլիս, Վեհափնեան փողոց, առն № 8: